Ա. ՑԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՍԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. ТЕР-ГЕВОНДЯН

АРАБСКИЕ ЭМИРАТЫ В БАГРАТИДСКОЙ АРМЕНИИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1965

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

A II 36562

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1965

Աշխատության մեջ հայկական, արաբական, բյուզանդական և այլ սկզբնաղբյուրների հիման վրա շարադրված է Բագրատունյաց Հայաստանում հաստատված արաբական ամիրայությունների պատմությունը։ Հանդամանորեն լուսաբանվում են արաբական ամիրայությունների առաջացման նախադրյալների, այդ ամիրայությունների և Հայոց թագավորության փոխհարաբերությունների, ինչպես նաև ամիրայությունների ներքին սոցիալ-տնտեսական կյանքի հարցերը։

Գրքի հավելվածում տրվում են ամիրայությունների տոհմածառերը, Դվին քաղաքի համառոտ ժամանակագրությունը, աղբյուրների ու գրականության ցուցակը։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Բագրատունյաց Հայաստանի արաբական ամիրայությունների ուսումնասիրության հարցը կապված է մի կողմից Հայաստանում արաբական տիրապետության շրջանի և մյուս կողմից՝ Բագրատունյաց թագավորության պատմության հետ։ Ուստի և նրանց պատմության ուսումնասիրության համար որպես հիմք կարող են ծառայել թե մեկ և թե մյուս շրջանների աղբյուրները։ Այստեղ մտնում են մատենագրական (հայկական, արաբական, բյուզանդական և այլն), վիմագրական (հայկական, մասամբ արաբական), դրամագիտական (արաբական) և հնագիտական (Դվինի, Անիի և այլն) նյութերը։

Մատենագրական նյութերի մեջ առաջին տեղը գրավում է, բնականաբար, հայկական, մանավանդ է—ԺԴ դարերի պատմագրությունը։

Մեր նյութերին վերաբերող հնագույն պատմական աղբյուրը Սեբեոսի անվամբ հայտնի է դարի պատմությունն է։ Թեև տարակարծություններ չեն եղել այս Պատմության ժամանակի մասին, բայց նրա հեղինակի անձնավորությունը որոշ կասկածների տեղիք է տվել։ Ըստ Ք. Պատկանյանի[1]*, այս Պատմության առաջին և երկրորդ դպրությունները Սեբեոսինը չեն, իսկ վեր-*

---

[1] «История императора Иракла» СПб, 1862, стр. VI.

Սեբեոսի *եպիսկոպոսի Պատմութիւն, ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան. 1939, էջ իա։*

չերս հայտնվեց նաև այն կարծիքը, թե նրա հեղինակը Սեբեոսը չէ[2]։

Հայաստանում արաբական տիրապետության շրջանի մասին մեր կարևորագույն պատմիչը Ղևոնդ վարդապետն է։ Ըստ Ն. Ակինյանի, ձգել է Կ. Պոլսում և հենց այնտեղ էլ ծանոթացել Օմար իբն-ալ-Փայի և Լեոն Իսավրացու նամակներին, որոնք զետեղված են նրա պատմության մեջ։ Սրանք հավանաբար ունեն որևէ հիմք, բայց ոչ որպես բնագիր շարադրանք[3]։

Թ դարից մեզ չի հասել ոչ մի պատմական երկասիրություն։ Համաշխարհային առաջին պատերազմի օրերին Լիմ անապատից Էջմիածին է բերվում մի ձեռագիր պատմություն, որը որոշ բանասերների կողմից մկրտվում է որպես Շապուհ Բագրատունու գրվածքը[4]։ Սակայն այս տեսակետը իր ժամանակին իրավամբ մերժվեց թե Հայաստանում, թե սփյուռքում[5]։

Արաբական տիրապետության վերջին շրջանի համար կարևորագույն աղբյուր է Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատությունը, որի երևան գալը սերտորեն կապված է Գագիկ Արծրունու ինքնուրույն թագավորության ստեղծելու ձգտումների հետ։ Արծրունյաց Պատմության տվյալները շատ դեպքերում համընկնում են ժամանակակից արաբ պատմիչների հաղորդած տեղեկությունների հետ։ Նրանում ուշադրություն է դարձվում Հայաստանի և հարևան արևելյան երկրների միջև եղած հարաբերությունների վրա, երևի այն պատճառով, որ Վասպուրականը սերտորեն կապված էր մահմեդական երկրների հետ։

Այս երկը քննության է առնվել Բրոսեի[6] կողմից և ապա

---

2 Գ. Արզումյան, *Բանասիրական հետախուզումներ (դիտողություններ Սեբեոսի Պատմության մասին), Բանբեր Մատենադարանի, № 4, 1958, էջ 72։*

3 *Տե՛ս* Ն. Ակինեան, *Ղևոնդ երէց պատմագիր, Հանդէս Ամսօրեայ, 1929։*

4 *Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, հրատ. Գ. Տեր-Մկրտչյան և Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921։*

5 Ն. Ակինեան, *Շապուհ Բագրատունի և իր Պատմութիւնը (մատենագրական հետազոտություններ), Վիեննա, 1922։*

6 M. Brosset, Notice sur l'historien arménien Thoma Ardzrouni. Mél. As., IV, 1862.

մանրամասն Նորայր Բյուզանդացու մոտ[7]։ Վերջինս ապացուցում է, որ սա ունի երկու հեղինակ, մեկը հենց Թովմա Արծրունին է, իսկ մյուսը՝ Անանուն Արծրունի։

Թովմային ժամանակակից և նրա հակառակ ուղղության ներկայացուցիչ է պատմիչ կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին (898—929)։ Ինչպես Թովմա Արծրունու և նրա անանուն շարունակողի մոտ այստեղ ևս ժամանակի քաղաքականությունը իր որոշակի կնիքն է թողել։ Եթե Թովման և մանավանդ իր շարունակողը Արծրունյաց տան ջատագովներն են, ապա Դրասխանակերտցին Բագրատունի թագավորների դատի պաշտպանն է։ Վերջինս սակայն շատ զուսպ է իր արտահայտությունների մեջ, նույնիսկ Գագիկ Արծրունու նկատմամբ։

Ժ դարի երկրորդ կեսում Մրվանյանների և Հայաստանի այլ ամիրայությունների պատմության համար բավական նյութ է տալիս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը։ 1885 թ. լույս տեսավ նրա Պատմության ընտիր հրատարակությունը Ստ. Մալխասյանցի կողմից, որի առթիվ Նորայր Բյուզանդացին գրեց լրացուցիչ ծանոթագրություններ[8]։

«Պատմութիւն Աղուանից»-ը մի ժողովածու է և կարևոր աղբյուր ոչ միայն Աղվանքի, այլև Հայաստանի արևելյան գավառների պատմության համար։ Անցյալ դարի վերջում Հ. Աճառյանի[9] և Հ. Մանանդյանի[10] ուսումնասիրություններում հաստատվեց, որ այս Պատմությունն ունի մի քանի հեղինակներ, որոնցից մեկն է Մովսես Կաղանկատվացին, այն մատենագիրը, որը Ժ դարում խմբագրել է ամբողջ աշխատությունը։ Իսկ սրա շարունակողն էր նույն դարի վերջում ապրող Մովսես

---

7 Ն. Բիւզանդացի, *Թովմա Արծրունի և Անանուն Արծրունի երկու այլ և այլ պատմագիրք են*, Բազմավէպ, 1905։

8 Ն. Բիւզանդացի, *Տեղեկութիւն ի դիրս Պատմութեան Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողիկ կոչեցեալոյ*, Մոսկվա, 1889, արտ. «Գրականական և պատմական հանդես»-ից։

9 Հ. Աճառյան, *Մովսես Կաղանկատուացի, Քննութիւն անոր գրութեան ժամանակին վրայ*, Բազմավէպ, 1897, էջ 370—374։

10 H. Manandian, Beiträge zur albanischen Geschichte, Leipzig, 1897.

Դասխուրանցին։ Սակայն վերջերս Ն. Ակինյանը[11] ցույց տվեց, որ Կաղանկատվացին և Դասխուրանցին նույն անձնավորությունն են, ընդ որում մատենագրի ճիշտ անունն է Մովսես Դասխուրանցի, իսկ Հ. Դոուսեթը այս երկի անգլերեն թարգմանության վրա[12] պարզապես գրում է Մովսես Դասխուրանցու Աղվանից պատմությունը։

Վերջին Բագրատունիների, բյուզանդական տիրապետության և սելջուկյան արշավանքների մասին կարևոր աղբյուր է Արիստակես Լաստիվերտցին, որը փաստորեն շարունակում է Ասողիկի աշխատությունը։

Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրությունը ուշագրավ աղբյուր է Բագրատունյաց թագավորության անիական շրջանի համար, սակայն նրա ժամանակագրության մեջ հաղորդված դեպքերին և թվականներին պետք է քննադատորեն մոտենալ։

ԺԴ դարի հայ պատմիչներից մեր նյութի համար առանձնապես մեծ նշանակություն ունի Վարդան պատմիչի «Պատմութիւն Տիեզերականը», որն իր բովանդակությամբ շատ արժեքավոր է և որպես այդպիսին հաճախ է քննության առնվել[13]։ Վարդանի աղբյուրներն են հայ պատմիչները (որոնց մեջ նաև Վանականը), օտար մատենագիրները և բանավոր աղբյուրներ թե հայկական, թե օտար։ Պետք է ասել, որ Վարդանը հաճախ հաղորդում է այնպիսի փաստեր, որոնք թերևս բանավոր աղբյուրներից բխած լինելու պատճառով մի քիչ աղավաղված են, բայց համապատասխանում են պատմական անցքերին։ Օրինակ, Շադդադյանների ծագման մասին նրա ավանդած այն զրույցը, թե Մամ անունով մի կին գալիս է «ի պարսից» (իմա՝ բուրդ) և հաստատվում Փասիսոսում երեք որդիների հետ,

---

11 Ն. Ակինյան, *Մովսես Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր Պատմութիւն Աղուանից*, Հանդէս ամսօրեայ, 1953, էջ 27—30։

12 The History of the Caucasian Albanians by Movsēs Dasxurančī, trans. by C. J. F. Dowsett, London, 1961.

13 M. Brosset, Analyse critique de la Всеобщая История, St Pb. 1862. Տես նաև նրա տարբեր հրատարակությունների առաջաբանները, մանավանդ ռուսերեն Всеобщая История, Москва, 1861. *Մ. Էմինի առաջաբանը. Հ. Ոսկյան, Յովհաննէս Վանական և իր գրքոյը, Վիեննա, 1922, էջ 37—91։*

որոնք սպանելով Գանձակի ամիրային տիրանում են քաղաքին և այլն, հաստատվում է Մունաջջիմ Բաշու արաբերեն պատմության բնագրի վերջերս լույս տեսած հատվածի տվյալներով, որտեղ, իհարկե, նույնը հաղորդվում է ավելի ճշգրիտ ձևով։

Է—ԺԳ դարերի պատմիչների շարքում կարելի է հիշել նաև այլ կարևոր անուններ, որոնք որոշ չափով օգնում են մեր աշխատության նյութին վերաբերող հարցերի պարզաբանմանը, ինչպես օրինակ, Սամվել Անեցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը և այլն։

Հարկավոր է նշել, որ բացի պատմական աղբյուրներից այս ժամանակաշրջանի ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունի «Հայոց Դատաստանագիրքը»։

Դատաստանագրքի «Նախադրության» մեջ Մխիթար Գոշը իր աշխատության առաջ դալը բացատրում է նրանով, որ պահանջ էր զգացվում պաշտպանվել մահմեդական շրջապատից և դրա համար էլ ստեղծել է մի ինքնուրույն՝ հայկական օրենսգիրք որպեսզի հայ ժողովուրդը երբեք չփորձվեր դիմելու օտար՝ մահմեդական իրավունքի (Շարիաթի) օգնությանը։ Ճիշտ է, որ դատաստանագիրքը ծնունդ է ԺԲ դարի, այնուամենայնիվ նա մեծ նշանակություն ունի Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանի շատ երևույթների պարզաբանման համար։

Մատենագրական աղբյուրների մեջ պետք է հիշել նաև հիշատակարանները։ Թեև դրանց հաղորդած նյութը մեծ մասամբ վերաբերում է ավելի ուշ շրջանին, մանավանդ ուշ միջնադարին, այնուամենայնիվ Բագրատունյաց շրջանի մասին որոշ արժեքավոր նյութ կարող ենք գտնել նաև վաղ շրջանի հիշատակարանների մեջ[14]։

Հայ մատենագրությունից հետո դեռ շատ վաղուց հայագետների ուշադրությունն է գրավել բյուզանդական պատմագրությունը։ Դեռևս ԺԸ դարում Մ. Չամչյանը իր Հայանի Հայոց պատմության մեջ առատ կերպով օգտագործել էր բյուզանդական աղբյուրները։ Մեր նյութի համար մեծ նշանակություն ունեն կայսր-պատմիչ Կոստանդին Է Ծիրանածինի (913—959), երեք աշխատությունները. թեմերի մասին (De thema-

14 Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951։

tibus), արարողությունների մասին (De ceremoniis) և կայսրության կառավարման մասին (De administrando imperio)։

Բյուզանդական պատմիչներից Գեորգիոս Կեդրենոսը կարևոր աղբյուր է Ժ դարի վերջի և ԺԱ դարի առաջին կեսի դեպքերի ուսումնասիրման համար։ Նրա ժամանակագրությունը մի բանաքաղություն է, որտեղ ի շարս այլ աղբյուրների օգտագործված է ԺԱ դարի երկրորդ կեսի ժամանակագիր Սկիլիցեսի երկը։

Ասորի մատենագրությունը մեծ նշանակություն ունի Հայոց պատմության և մատենագրության ուսումնասիրման համար[15], սակայն Բագրատունյաց ժամանակ անկման շրջան էր ապրում։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի համար ասորի պատմագիրներից կարևոր է հիշատակել Դիոնիսիոս Տելլ Մահրացիին[16] և Միքայել Ասորիին։

Միքայել Ասորին (Անտիոքի պատրիարք) գրել է ընդարձակ ժամանակագրություն Ադամից մինչև 1196 թ., որի ասորերեն բնագիրը 1248 թ. Կոստանդին Ա կաթողիկոսի խնդիրքով թարգմանվել է հայերեն, ասորի Իշոիս քահանայի և Վարդան պատմիչի ջանքերով։ Ժամանակագրությունը թարգմանվել է նաև արաբերեն. սակայն թե ասորերեն բնագիրը, թե արաբերեն թարգմանությունը ԺԹ դարում կորած էին համարվում և մնում էր միայն հայերեն թարգմանությունը։

ԺԹ դարի վերջում հայտնաբերվեց Միքայել Ասորու ասորերեն բնագիրը և հրատարակվեց բնագրով ու ֆրանսերեն թարգմանությամբ Շաբոյի կողմից[17]։

---

15 Արժեքավոր են Զ—Է դարերի ասորի պատմիչների (Յովհան Եփեսացի, Զաքարիա Հռետոր և այլն) տեղեկությունները Հայաստանի մասին, որոնք թարգմանաբար հրատարակված են Ն. Պիգուլևսկայայի կողմից Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941.

16 Chronique de Denis de Tell Mahré, publ. et trad. par Chabot, Paris, 1895.

17 Chronique de Michel le Syrien, texte syrien et trad. franc. par J. B. Chabot, I, II, III, Paris, 1900-1910.

Ասորի մատենագիրներից կարելի է հիշել նաև Աբու-լ-Ֆարաջին (Բար-Հեբրեոս), որի աշխատությունը արաբերեն գրված լինելով ինքն էլ դասվում է արաբ պատմիչների շարքը։

Վրաց աղբյուրները հայերի մասին բացառիկ դրության մեջ են շնորհիվ այն ամբողջական թարգմանության, որ տվել է Լ. Մելիքսեթ-Բեկը[18]։ Վրաց աղբյուրների մեջ կարևորագույնն այն ժողովածուն է, որը կոչվում է «Քարթլիս Ցխովրեբա» (Վրաց պատմություն)։ Հրատարակվել է Բրոսսեի կողմից վրացերեն բնագրով և ֆրանսերեն թարգմանությամբ[19]։

Մինչև ԺԹ դարի երկրորդ կեսը Բագրատունյաց պատմության ուսումնասիրման համար որպես հիմնական մատենագրական աղբյուր ծառայում էին միայն հայ և բյուզանդացի պատմիչները, բայց ահա ժամանակի ընթացքում ի հայտ եկան նոր աղբյուրներ, որոնք առատ լույս սփռեցին Հայաստանի Թ—ԺԱ դդ. պատմության վրա։ Դրանք էին արաբ պատմիչներն ու աշխարհագիրները, վիմագիր արձանագրությունները, դրամագիտական տվյալները և մանավանդ հնագիտական պեղումների հարուստ արդյունքները։

Արաբ պատմիչներն ու աշխարհագիրները Հայաստանի արաբական ամիրայությունների պատմության ուսումնասիրման համար առաջնակարգ նշանակություն ունեն։

Արաբական պատմագրությունն իր սկիզբն է առնում Մուհամմադ մարգարեի և առաջին խալիֆաների կռիվների և նվաճողական պատերազմների շուրջը ծագած արաբական ավանդական զրույցներից։ Նրա կազմավորման գործում մեծ դեր է խաղացել նաև պահլավական մատենագրական ժառանգությունը, որի ազդեցությունը բավական մեծ էր արաբ պատմագրության վրա[20]։ Հայտնի է, որ իրանական վիպական զրույցների ժողովածուն «Խվաթայ-նամակը» (նոր պրսկ. Խուդայ-նամե «Տերերի գիրք», որը Ֆիրդուսու Շահնամեի աղբյուրն է)

---

18 «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Ա, Բ, Գ, Երևան, 1934—1955։

19 Histoire de la Géorgie, traduit du georgien par M. Brosset St. Pb., 1849...

20 Х. А. Р. Гибб, Мусульманская историография, в кн. Арабская литература, Москва, 1960, стр. 128—129.

պահլավերենից թարգմանվել է արաբերեն Ը դարում զրադաշտական պարսկի որդի Իբն ալ-Մուկաֆֆայի կողմից։

Այդ տեղեկությունները հիմնականում վերաբերում են արաբների կողմից Հայաստանի նվաճման շրջանին։ Թ դարի սկզբին պատմագիր ալ-Վակիդին, որը մոտիկ հարաբերությունների մեջ էր եղել Բաղդադի արքունիքի հետ (Հարուն ալ-Ռաշիդի և Մամունի օրոք) գրել է Մուհամմադի մղած պայքարի և առաջին խալիֆաների նվաճողական արշավանքների մանրամասն պատմությունը. սակայն նրա աշխատությունների մեծ մասը կորած է։ Նրա գրվածքները իր ժամանակին օգտագործվել են ուրիշ պատմիչների կողմից, որոնց միջոցով էլ մենք իմանում ենք թե ինչ բնույթի տեղեկություններ է նա հաղորդել։ Ասորիքի և Միջագետքի նվաճման մասին պատմելիս նա խոսել է նաև Աղձնիքի, Տուրուբերանի և Բարձր Հայքի նահանգներում արաբների կատարած առաջին արշավանքների մասին։

Հետագայում՝ հավանաբար խաչակրաց արշավանքների ժամանակ, արաբ մատենագրության մեջ առաջ է գալիս Վակիդիի աշխատությունների անունները կրող գրվածքների մի ամբողջ շարք, որոնք նրան են վերագրվել (Ասորիքի նվաճում, Միջագետքի նվաճում և այլն)։ Այս բոլորը դիտության մեջ հայտնի է որպես Կեղծ-Վակիդիի աշխատություններ և հրատարակվել են մի քանի անգամ։ Հայաստանի և Վերին Միջագետքի մասին Կեղծ-Վակիդիի տեղեկությունները առանձին թարգմանվել և քննարկման են ենթարկվել Նիբուրի կողմից[21]։

Հայաստանի արաբական նվաճման մասին կարևորագույն աղբյուրը Ահմադ իբն Յահիա ալ-Բալաղուրիի «Ֆուտուհ ալ-Բուլդան» (Երկրների նվաճում) գիրքն է։ Նա Թ դարի պատմիչ է և մոտիկ հարաբերությունների մեջ էր խալիֆաների արքունիքի հետ, որոնցից մեկի որդու դաստիարակն է եղել։ Կարծվում է, որ նա պարսկական ծագում ուներ։

Մի հոյակապ աշխատություն է նրա «Երկրների նվաճումը» կոչված երկը, որի մեջ շարադրված է արաբական նվաճումների պատմությունը սկսած Մուհամմադի առաջին կռիվներից։

[21] Geschichte der Eroberung der Mesopotamien und Armenien, ed. Niebuhr, Hamburg, 1847.

Հայաստանի (ավելի ճիշտ կլիներ ասել՝ Հայքի, Վիրքի և Աղվանքի) նվաճման պատմությանը մի ամբողջ գլուխ է հատկացված։ Միևնույն ժամանակ նա հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում Ը դարի և Թ դարի առաջին կեսի արաբական Հայաստանում կատարված դեպքերի մասին։

Նրա աշխատության առաջին գիտական հրատարակությունը[22] կատարել է Դե-Գույեն 1866 թ. Լեյդենում (Հոլանդիա), որից հետո կատարվել են այլ հրատարակություններ Արևելքում, թարգմանվել է եվրոպական լեզուներով, իսկ որոշ հատվածներ թարգմանվել են հայերեն Բ. Խալաթյանցի կողմից[23]։

Բալաղուրին ունի նաև մի կենսագրական բառարան՝ «Անսաբ ալ-Աշրաֆ»[24] (Վարք պատվական մարդկանց)։

Նույն դարի նշանավոր պատմիչ է նաև Ահմադ իբն Աբու Յակուբը, որը ծանոթ է որպես «ալ-Յակուբի»։ Նրա նախապապը՝ Ուադիհը 775 թ. եղել է Հայաստանի ոստիկան[25]։

Յակուբին իր երիտասարդությունն անց է կացրել Հայաստանում, ապա ծառայել է Խորասանի տիրակալներ՝ Թահիրյանների մոտ։ Հավանաբար այստեղ էլ նա գրում է իր պատմությունը, որն սկսում է Մուհամմադի ծնունդից և հասցնում մինչև 872 թ.։ Արժեքավոր են նրա տեղեկությունները Հայաստանում արաբական տիրապետության շրջանի վերաբերյալ և որոշ չափով Ջահհաֆյանների մասին։ Հայաստանի մասին որոշ տեղեկություններ հաղորդում է նաև իր աշխարհագրական աշխատության մեջ Քիթաբ ալ-Բուլդան (Երկրների գիրք)[26]։

Նրա պատմության գիտական հրատարակությունը[27] կա-

---

22 Liber expugnationis regionum auctore al Beladsori, ed. M. J. de Goeje, Lugd. Bat , 1866.

23 Բ. Խալաթյանցը հատվածներ է թարգմանել մի քանի արաբ պատմիչներից (Բալաղուրի, Յակուբի, Թաբարի, Իբն Միսքավայհ և Իբն ալ-Ասիր). Տե՛ս Հանդէս ամսօրեայ, 1903—1908։

24 The Ansab al-Ashraf of al-Baladhuri, Jerusalem, 1938.

25 Բոլոր դեպքերում երբ Հայաստանի ոստիկան ենք ասում պետք է հասկանալ՝ Արմինիայի, այսինքն՝ Հայքի, Վիրքի և Աղվանքի ոստիկան, որովհետև միայն Հայաստանի համար ոստիկաններ չեն եղել։

26 Տե՛ս Bibliotheca Geographorum Arabicorum,pars VII, 1892.

27 Ibn Wadhih qui dicitur al Jaqubi Historiae, ed. M. Th. Houtsma, Lugd. Bat., 1883.

տարվել է ըստ Քեմբրիջի մի ձեռագրի։ Հայաստանի վերաբերյալ որոշ հատվածներ թարգմանվել են հայերեն, բացի Բ. Խալաթյանցից նաև Հ. Ա. Ադամյանի ձեռքով[28], իսկ գիտական գրականության մեջ այդ հատվածները հիմնավոր կերպով օգտագործվել են Յ. Մարկվարտի կողմից[29]։

Արաբ մատենագրության զարգացումը Ժ դարում վերընթաց ձևով շարունակվում է։ Այս շրջանում արաբ պատմագրությունը տվեց մի նշանավոր դեմք, որն առաջնակարգ տեղ է գրավում ընդհանրապես մահմեդական պատմագրության մեջ։ Դա Աբու Ջաֆար Մուհամմադ իբն Ջարիր ալ-Թաբարին է, որը ծնվել է հավանաբար 839 թ. Թաբարիստանում (Պարսկաստան)։ Նա ճանապարհորդել է Պարսկաստանում, Միջագետքում, Ասորիքում, Եգիպտոսում, ուսումնասիրել մահմեդական ավանդությունները և ընդհանրապես նրա համար բանավոր աղբյուրները մեծ նշանակություն են ունեցել։ Մահացել է 923 թ.։

Նրա հայտնի աշխատությունն է «Պատմություն մարգարեների և թագավորների» գիրքը[30], որը թեպետև բաղկացած է մի քանի ստվար հատորներից, այնուամենայնիվ, կարծվում է, որ դա լոկ մի փոքր մասն է նրա բուն աշխատության, որը մեզ չի հասել։ Սասանյան շրջանի Պարսկաստանի մասին նրա արժեքավոր տեղեկությունների հիման վրա Ի. Նեոլդեքեն կազմեց իր հայտնի աշխատությունը[31]։ Թաբարին իր նյութի շարադրանքը հասցնում է մինչև 915 թ. և այս հսկայական նյութը նրա մոտ շարադրված է ըստ տարիների, որի պատճառով էլ նրա աշխատությունը գիտության մեջ հայտնի է որպես տարեգրություն։

Նրա հսկայական աշխատությունը փորձել են շարունակել, օրինակ, ալ-ֆարաղանիի կողմից գրված հավելվածը կորել է,

---

28 Եպոուպի արաբ պատմագիրը և հայերը, Բազմավէպ, 1957, 11—12 և 1958, 3—5։

29 J. Markwart, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig, 1903.

30 Annales auctore at Tabari, Lugd. Bat., 1879-1901.

31 Th. Nöldeke, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden, Leyden, 1879.

իսկ ալ-Համադանիինը՝ մասամբ է հասել։ Հայտնի է ալ-Արիբի հավելվածը[32], որը սակայն քիչ բան է ավելացնում Թաբարիի մեծ գործին։ Թաբարիի պատմությունը 963 թ. կրճատված ձևով թարգմանվել է պարսկերեն Սամանյան վեզիր ալ-Բալամիի ձեռքով։ Թաբարին ունի նաև «Կուրանի մեկնությունը», որը արաբ մատենագրության մեջ մեծ տեղ է գրավում։

Բուն Ժ դարի պատմագիր է ալ-Մասուդին, որը ծնվել է հավանաբար Բաղդադում։ Ճանապարհորդել է Պարսկաստանում, Հնդկաստանում մինչև Չինական ծովը և ապա եկել է մինչև Զանզիբար։ Ապա նորից է դարձել դեպի Կասպից ծովի հարավային շրջանները, Ասորիք, Պաղեստին և վերջապես՝ Եգիպտոս, որտեղ և մահացել է 956 թ.[33]։

Նրա անհանգիստ կյանքն արտահայտվում է իր գրական ստեղծագործության մեջ, երբ նա ամեն ինչի մասին ուզում է խոսել, բայց ոչ մի հարցում չի խորանում։ Նա հաճախ առասպելները հիշում է առանց անձնական վերաբերմունքի։ Նկատի ունենալով նրա բազմակողմանիությունը և գրական մեծ վաստակը (նրա աշխատությունների շատ չնչին մասն է մեզ հասել) բանասերները նրան համարում են արաբների Հերոդոտոսը[34]։ Նրա մեծագույն աշխատությունը եղել է «Քիթաբ ախբար ալ-Զամանը» (ժամանակի լուրերի գիրք) բաղկացած 30 հատորներից, որը կորել է։ Որոշ ժամանակ կարծում էին, թե դրա մի օրինակը գտնվում է Կ. Պոլսում, բայց համաշխարհային առաջին պատերազմից հետո արդեն հաստատված է, որ այնտեղ էլ չկա։ Գտնվել է միայն առաջին հատորը Հալեպում և այժմ պահվում է Վիեննայում, որի մեջ նա պատմում է արարչագործության մասին, շարադրում հին Եգիպտոսի ավանդական պատմությունը և այլն։ Այս բազմահատոր աշխատությունից քաղված մի պատմություն է «Քիթաբ ալ-Աուսաթը» (Միջին գիրք), որից նույնպես մի հատոր է մնացել Օքսֆորդի մատենադարանում (ավելի ճիշտը կարծվում է որ դա պետք է լինի)։

---

32 Arib Tabari continuatus, ed. M. J. de Goeje, Lugd. Bat., 1897.

33 C. Brockelmann, Masoudi, Enc. of Islam, III, 403-404.

34 Ph. Hitty, History of the Arabs, p. 391. C. Brockelmann, Geschichte der arabischen Litteratur, I, Weimar, 1898, s. 143-145.

Այս բոլորի ամփոփումն է Մասուդիից մեզ հասած «Մուրուջ ալ-Զահաբը» (Ոսկու մարգագետիններ)[35], որն ավարտել է 947 թ. և վերամշակել է 956 թ.։ Սրանից կան մի քանի գրչագրեր Եվրոպայում և արաբական երկրներում։ Այս աշխատության մեջ, որը պատմա-աշխարհագրական բնույթ է կրում, Հայաստանը համեմատաբար քիչ տեղ է գրավում։ Մասուդին միակ արաբ պատմիչն է, որը անուղղակիորեն տեղեկություն է հեռավոր Ուրարտուի մասին։ Սա իհարկե զարմանալի է և Մասուդիի այդ տեղեկությունը որտեղից էլ որ քաղված լինի, շատ հետաքրքրական է։ Նա պատմում է Ասորեստանի և Հայաստանի թագավորների կոիվների մասին, հիշելով նշանավոր Շամիրամին։ Մասուդին շահեկան տեղեկություններ է հաղորդում Կովկասյան լեռնային շրջանների մասին։

Հայտնի է Փարիզում կատարված հրատարակությունը[36] ֆրանսերեն թարգմանությամբ, որից հետո ունեցել է արևելյան հրատարակություններ։

ԺԱ. դարի պատմագրության մեջ հայտնի է պատմագիր՝ Իբն Միսքավայհը (կամ Միսքավայհ), որը ծագմամբ հավանաբար պարսիկ է և եղել է արքունի շրջանակներին մոտիկ անձնավորություն։

Նրա հայտնի աշխատությունն է «Տաջարիբ ալ-ումամ» (Ազգերի փորձը) պատմական երկը, որի մեջ թեև պատմությունը շարադրված է ի սկզբանէ, սակայն նրա ամենակարևոր մասը Աբբասյան խալիֆայության պատմության հատվածն է, որովհետև սկզբնական մասի համար նրա հիմնական աղբյուրը Թաբարին է։ Մեծ արժեք են ներկայացնում նրա տեղեկությունները Բագրատունյաց շրջանի և մանավանդ Վասպուրականի ու հարևան ամիրայությունների հարաբերությունների մասին։

---

35 Սա բանասիրության մեջ արմատացած ավանդական սխալ թարգմանությունն է։ Պետք է թարգմանվի «ոսկու հանածոյի լվացատեղեր»։
И. Крачковский, Избранные сочинения, IV, стр. 172.

36 Macond, Les prairies d'or. Texte et trad. par C. B. de Meynard et P. de Courteille, Paris, 1861-1877.

Հրատարակվել է նախ լուսատիպ[37] և ապա 1920 թ. Լոնդոնում լույս է տեսել Աբբասյան շրջանին վերաբերող մասերը՝ բնագրով և անգլերեն թարգմանությամբ[38]։

Արաբ պատմագրության մեջ իր բազմաթիվ աշխատություններով հայտնի է Իբն ալ-Ասիրը։ Ծնվել է 1160 թ. Ջազիրայում (Վերին Միջագետք) և մահացել՝ Մոսուլում 1234 թ.։ Նրա բազմաթիվ աշխատությունների մեջ հայտնի է ալ-Քամիլ ֆի-լ-Տարիխ (Կատարյալ պատմություն)։ Այս բազմահատոր աշխատության մեջ նա ի մի է բերել արաբ պատմագրության բոլոր հիմնական տեղեկությունները սկզբից մինչև հիջրի 628 թ. (1231)։ Նյութը շարադրված է ժամանակագրության ձևով, ըստ տարիների։

Իբն ալ-Ասիրը պատմագրության մեջ տալիս է իր բնագավառի մեջ մատենագրական տվյալների մի ճոխ հավաքածու։ Նրա մոտ կարելի է գտնել արաբների՝ Հայաստանի վերաբերյալ տեղեկությունների մի ամբողջական պատկեր։

Նրա գիտական հրատարակությունը կատարված է Թորնբերգի կողմից[39], իսկ արաբական երկրներում ունեցել է սովորական հրատարակություններ[40]։

Մանազկերտի Կայսրների և ընդհանրապես հարավ-արևմտյան Հայաստանի մասին հետաքրքրական տեղեկություններ կարելի է գտնել նաև մի շարք մանր հեղինակների (ալ-Ֆարիկի, Իբն Զաֆիր, ալ-Զահարի մոտ[41], որոնց մեջ կուզենայինք նշել ԺԲ դարի պատմիչ ալ-Ֆարիկիին։ Սա ծնվել է, ինչպես մականունից երևում է, Աղձնիքի Միափարիկին (Մուփարդին կամ Նիրիկերտ) քաղաքում, ճանապարհորդել է Հայաստանում և եղել վրաց Դավիթ Շինարարի արքունիքում։

A 36562

---

37 The Tajarib al-Umam or History of Ibn Miskawayh reprod. in facs. by Leone Caetani, Leyden-London, 1909-1917.

38 H. F. Amedroz and D. S. Margoliouth, The Eclipse of the Abbasid Caliphate, London, 1920-1921

39 Ibn al-Athiri Chronicon quod perfectissimum inscribitur, ed. C. J. Tornberg, Lugd.Bat., 1851-1876.

40 Պետք է նշել, որ գրեթե բոլոր արաբ մատենագիրների լավագույն հրատարակությունները կատարվել են Եվրոպայում, իսկ արաբական երկրներում մեծ մասամբ վերահրատարակություններ են կատարվել։

41 Sayf al-Daulah, ed. par M. Canard, Paris, 1930.

2—62

ԳՐԱԴԱՐԱՆ

Գրել է «Միաֆարիկինի պատմություն», որը դեռ ձեռագիր վիճակում մնում է Անգլիայում (Օքսֆորդում)։ Նրանից որոշ հատվածներ հրատարակել են Ամեդրոզը[42], Մ. Կանարը[43], Գ. Ծերեթելին[44], իսկ Մինորսկին Անդրկովկասի վերաբերյալ հատվածների բովանդակությունը շարադրել է մի հոդվածի մեջ[45] և ապա օգտագործել նաև իր նորագույն աշխատությունների մեջ[46]։ Վերջերս լույս տեսավ Մրվանյանների վերաբերյալ հատվածը[47]։

Մեզ հետաքրքրող արաբ պատմիչների գրվածքների շարքում կուզենայինք նշել նաև մի պատմական աշխատության անունը, որը առաջնակարգ նշանակություն ունի մեր նյութի համար։ Դա ԺԷ դարի պատմիչ Մունաջջիմ Բաշիի (Մյունեջջիմ Բաշը) «Ջամի ադ-Դուվալ» (Պետությունների հավաքածո պատմություն կամ Տիեզերական պատմություն) աշխատությունն է։ Սա գրված է արաբերեն և մինչև օրս ձեռագիր վիճակում մնում է Կ. Պոլսում։ Այս հսկայական աշխատությունից երկու փոքր հատված վերջերս հրատարակեց Վ. Մինորսկին մեկը՝ Շադդադյանների[48], մյուսը Շիրվանի մասին[49]։

Այսօր գիտական աշխարհը իր տրամադրության տակ ունի Մունաջջիմ Բաշիի այս ընդարձակ աշխատության լոկ թուրքերեն ամփոփ թարգմանությունը, կատարված ԺԸ դարում Ահմեդ Նեդիմի կողմից և հրատարակված մի դար հետո[50]։

Մունաջջիմ Բաշիի աշխատությունը խայտաբղետ բովանդակություն ունի և ինքը՝ հեղինակը նշում է, որ այն կազմելու

---

[42] History of Damascus by Ibn al-Qalanisi, ed. by H. F. Amedroz, Beyrouth, 1908, p. 369-375.

[43] Sayi al Daulah, p. 70-78

[44] Г. Церетели, Арабская хрестоматия, Тбилиси, 1949, стр 68-75

[45] Caucasica in the History of Mayyafariqin, BSOAS, 1949, XIII

[46] Studies in Caucasian History, London, 1953, p. 80, 91, 97.

[47] Tarikh al-Fariqi, al-Qahira, 1959.

[48] Studies (arab.), I-18.

[49] A History of Sharvan and Darband, Cambridge, 1958.

[50] Սահայիֆ ալ-Ախբար, Կ. Պոլիս, 1858։ Տե՛ս նրա մի հատվածի հայերեն թարգմանությունը՝ Համառոտ պատմության Հայոց, թարգմանեց արաբերենէ Գալուստ Թիրեաբեան, Կ. Պոլիս, 1879։

համար օգտագործել է տարբեր աղբյուրներ, որոնք երեք մասի են բաժանվում՝ արաբական, պարսկական և թուրքական աղբյուրներ։

Թուրքերեն հրատարակության առաջաբանում նրա արաբական աղբյուրների մեջ հիշվում է մի ֆակիհի (կրոնավորի) գրվածքը «Պատմություն Շիրվանի և Դերբենդի» շարադրված հավանաբար ԺԱ դարի վերջում կամ ԺԲ դարի սկզբում, որը հենց այն կորած աղբյուրն է, որից օգտվել է Մունաջջիմ Բաշին իր վերոհիշյալ հրատարակված հատվածների շարադրման համար։ Նկատի ունենալով, որ վերոհիշյալ ֆակիհի աշխատությունը կորած է, ուստի Մունաջջիմ Բաշիի այս հատվածները (Մինորսկու կողմից հրատարակված) սկզբնաղբյուրի արժեք են ներկայացնում։ Համեմատելով այդ հատվածները, նրա աշխատության թուրքերեն ամփոփ թարգմանության համապատասխան հատվածների հետ մեծ տարբերություն ենք նկատում, որովհետև թուրքերենը Ահմեդ Նեղիմի կողմից շատ է կրճատված։

Մունաջջիմ Բաշիի թուրքերեն գրված աղբյուրներից է Երևիա Չելեպի Քեոմյուրջյանի Համառոտ Հայոց Պատմությունը[51], որը նա թարգմանել է թուրքերեն և այս վերջինիս հիման վրա Մունաջջիմ Բաշին շարադրել է իր գրքում հայոց պատմության դեպքերը՝ Հայկից մինչև Լևոն վերջինը։ Ահա այս հատվածը հետագայում հայերեն թարգմանել է Գ. Թիրեաբյանը։

Արաբ մատենագրության մեջ պատմագրությանը հավասար նշանակություն ունի աշխարհագրությունը։ Արաբական աշխարհագրությունը որպես ուսումնասիրման նյութ ընդգրկում է ոչ միայն արաբական աշխարհը, այլև ամբողջ մահմեդական Արևելքը և նույնիսկ արաբներին ծանոթ ամբողջ միջնադարյան աշխարհը (արևմուտքից Եվրոպան, իսկ արևելքից՝ Չինաստանը)։

Արաբների համար աշխարհագրական գրականությունն ուներ երկակի նշանակություն՝ գիտական և գործնական։ Գիտական տեսակետից աշխարհագրությունը նրանց մոտ հարում էր հշգրիտ գիտություններին։

51 Ա. Տեր-Գևոնդյան. Երևիա Չելեպին որպես Մունաջջիմ Բաշիի աղբյուրներից մեկը. Տեղեկագիր (հաս. գիտ.), 1960, 7—8, էջ 143—151։

Գործնական տեսակետից արաբների համար աշխարհագրությունը պետական նշանակություն ուներ։ Դա մի միջոց էր արաբական ծավալապաշտ պետությունը խոր կերպով ուսումնասիրելու համար։ Աշխարհագիրները առաջին հերթին նկարագրում էին կայսրության բոլոր ճանապարհները, հիշելով տարբեր քաղաքների միջև ընկած հեռավորությունը։ Սա շատ կարևոր էր արաբական «փոստային» գերատեսչության համար, որի գլխավոր դերն էր լրտեսել բոլոր կուսակալների (ոստիկանների) գործունեությունը և անհապաղ հաղորդել խալիֆային։ Բացի սրանից, աշխարհագիրները որոնցից շատերը նախկին պետական պաշտոնյաներ էին (ոմանք փոստի), իրենց մատյանների մեջ պետեղում էին նաև խալիֆայության տարբեր նահանգների հարկերի ցուցակը։ Այս հողի վրա առաջացան այն աշխատությունները, որոնք կոչվում էին հարկերի մատյաններ (Քիթաբ ալ-խարաջ)[52]։

Ժ դարը արաբական աշխարհագրական գրականության դասական շրջանն է, երբ «Ճանապարհների և երկրների» նկարագրությունը կատարելագործվում է քարտեզագրությամբ։ Այս բոլորի հիման վրա ԺԲ—ԺԳ դարերում, սկսում են երևան գալ աշխարհագրական ճոխ բառարաններ։ Մեմլուքյան շրջանի Եգիպտոսում (1250—1517) գրված հանրագիտարանները արաբական աշխարհագրական գրականության վերջին մեծ նվաճումն էին, որից հետո, նա, ինչպես նաև ամբողջ արաբական գրականությունը, լճացման մի շրջան ապրեց օսմանյան տիրապետության օրոք։

Արաբների առաջին մեծ աշխարհագիրը Թ դարում Աբու-լ-Կասիմ Ուբայդ Ալլահ իբն Աբդ Ալլահ իբն Խորդադբեհն էր։ Մոդամամբ պարսիկ և զրադաշտականի թոռ այս աշխարհագիրը ծնվել է մոտավորապես 820 թ. իսկ նրա հայրը՝ Թաբարիստանի (Կասպից ծովի հարավում) կառավարիչն էր։ Նա ալ-Մուտամիդ խալիֆայի (870—892) արքունիքին մոտիկ անձնավորություն էր և շատ հատկանշական է, որ մի ժամանակ եղել է ալ-Ջիբալ (հյուսիսային Իրան՝ Քուրդիստան) նահանգի

---

[52] A. Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, I, 1875, s. 356-379.

փոստի պետ և հետևաբար հրաշալի կերպով ծանոթ էր խալիֆայության աշխարհագրությանը[53]: Մասուդին իր մատյանի (Քիթաբ ալ-մասալիք ու ալ-մամալիք) մեջ նկարագրում է խալիֆայության բոլոր երկրները, մեջ բերելով ճանապարհների մանրամասն նկարագրությունը: Նա հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում Իրանի՝ իր հայրենիքի մասին: Սասանյան շրջանի մասին խոսելիս հիշում է Իրանի հետ կապված շատ երկրների թագավորների տիտղոսները, որոնց մեջ և Բուզուրգ Արմանիան Շահը, այսինքն՝ թագավոր Հայոց Մեծաց (Արշակունիների տիտղոսը)[54]:

Իբն Խորդադբեհի աշխարհագրությունը հավասար արժեք է թե աշխարհագրության, թե պատմության համար, որովհետև հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է պաշտոնական շատ փաստաթղթեր: Նրանցից հետո եկող արաբ մատենագիրները մեծ չափով օգտվել են նրանից:

Ժ դարը արաբ աշխարհագրական գրականության ոսկե դարն է, երբ արաբ նշանավոր աշխարհագիրների մի ամբողջ ընտանի (ալ-Բալխի, ալ-Իսթախրի, իբն Հաուկալ և ալ-Մուկադդասի) ստեղծեց արաբական աշխարհագրության դասական դպրոցը[55]: Վերջին երեքը ուշագրավ են նրանով, որ իրենց աշխատությունների մեջ կարևոր տեղեկություններ են տալիս Հայաստանի մասին:

Իսթախրին ծագմամբ պարսիկ է և ծնվել է Միջին Իրանում: Նա շատ էր ճանապարհորդել Միջին Ասիայում, Պարսկաստանում, Արաբիայում, Ասորիքում և Եգիպտոսում: Նրա աշխատությունը կոչվում է «Քիթաբ մասալիք ալ-մամալիք» (Գիրք թագավորությունների ճանապարհի), որի մեջ նկարագրում է միայն մահմեդական երկրները՝ Հնդկաց օվկիանոսից մինչև Մաղրիբ:

Աբու-լ-կասիմ իբն Հաուկալ ալ-Նիսիբին արաբ է, և ինչպես երևում է անունից, ծնվել է Մծբինում (Նիսիբին): Մի ժամա-

---

[53] П. Булгаков, Книга путей и государств, Палестинский Сборник, в. 3 (66), 1958, стр. 127-137.

[54] Bibliotheca Geographorum Arabicorum, IV, 17.

[55] Hudud al-Alam, London, 1937 Barthold' s' preface, 15-23.

նակ ապրել է Բաղդադում, ապա ճանապարհորդել է շատ երկրներում, մանավանդ Հյուսիսային Աֆրիկայում և Իսպանիայում: Արաբագետներից ոմանք նրա անվերջ դեգերումների շարժառիթը համարում են այն, որ նա հավանաբար եղել է կամ Ֆաթիմյանների կամ էլ Աբբասյանների լրտեսը Իսպանիայում, որի Օմայան տիրակալները բաժանվել էին արևելյան խալիֆայությունից և առանձին խալիֆայություն էին հիմնել Կորդովա մայրաքաղաքով:

Նրա աշխատությունը հրատարակվել է դե-Գույեյի մատենաշարում փարիզյան ձեռագրի հիման վրա, սակայն 1938 թ. արևելագետ Կրամերսը Կ. Պոսի մի հին ձեռագրից (գր. 1086 թ.) հրատարակեց նրա բնագիրը[56]:

Նրա աշխատության մեջ մեծ տեղ են գրավում քարտեզները, որոնք ժ դարի արաբ աշխարհագրության մեջ մեծ զարգացման հասան: Նրանց ամբողջականությունը բանասիրական գրականության մեջ ծանոթ է «Մահմեդական երկրների աշխարհացույց» (Իսլամի տալաս) անվամբ:

Իբն Հաուկալի մոտ Հայաստանը Ադրբանքի և Ատրպատականի հետ տրված է մի գլխում: Արժեքավոր են նրա հաղորդած տեղեկությունները Բագրատունյաց շրջանի տնտեսական վիճակի մասին: Ընդ որում նրա ուշադրության կենտրոնը Դվինն է, որպես Հայաստանի իսկական մայրաքաղաք: Նա խոսում է Սմբատ Ա-ի և Սաջյանների միջև պայքարի մասին և թեպետ ինքը մահմեդական է, սակայն որպես չեզոք անձնավորություն, մեղադրում է Սաջյան Յուսուֆին, որին համարում է Ալլահի դեմ մեղանչող:

Ժ դարի դասական դպրոցի վերջին մեծ ներկայացուցիչ ալ-Մուկադդասին ինչպես մականունից երևում է, Երուսաղեմցի է (Բայտ ալ-Մուկադդաս): Նա ծնվել է 946—947 թթ. և ճանապարհորդել է գրեթե ամբողջ մահմեդական աշխարհում: Եղել է նաև Հայաստանում և մանավանդ Դվինում, ուր մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում: Մահացել է 1000 թ.:

---

[56] Opus geographicum auctore Ibn Hauqal, ed. J. H. Kramers, Lugd. Bat., 1938.

Այս երկար ճանապարհորդությունների արդյունքն է հանդիսանում նրա «Լավագույն բաժանումը երկրների (կլիմաների) ճանաչման համար» գիրքը: Այս աշխատությունն այնքան արժեքավոր է, որ որոշ գիտնականներ նրան համարում են բոլոր ժամանակների մեծագույն աշխարհագիրը[57]:

Նրա մատյանն ունի նաև թերություններ, որոնք սակայն արժեքով շատ ցածր են բուն աշխատությունից: Ինչպես դասական դպրոցի մյուս աշխարհագիրները, նա ևս նկարագրում է միայն մահմեդական աշխարհը, սակայն նրա մեջ մտցնելով Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը: Այդ աշխարհագիրների գիտակցության մեջ այս վերջին քրիստոնյա երկրները թեպետ և փաստորեն բաժանված էին մահմեդական խալիֆայությունից, սակայն ձևականորեն դեռ համարվում էին մահմեդական աշխարհի մի մասը:

Ժ դարի մատենագիր է նաև Աբու-Դուլաֆը, որը երկար ճանապարհորդել է: Ունի երկու ճանապարհորդական գրվածքներ, որոնցից երկրորդի մեջ նկարագրում է Իրանը, Ատրպատականը և Հայաստանը: Այս երկրորդ գրվածքի բնագիրը հրատարակվեց վերջերս Կահիրեում Վ. Մինորսկու կողմից[58]: Որոշ բանասերներ կասկած են հայտնում Աբու Դուլաֆի հաղորդած փաստերի հավաստիության մասին, սակայն նորագույն ուսումնասիրությունները չունեն այս թերահավատ վերաբերմունքը նրա նկատմամբ[59]:

Եվրոպական գիտության մեջ մեծ հռչակ է վայելում ԺԲ դարի աշխարհագիր ալ-Իդրիսին: Ալ-Իդրիսին, իհարկե, որոշ արժեք ունի արաբ աշխարհագրության մեջ, սակայն նրա իսկական արժանիքները չեն համապատասխանում նրա վայելած հռչակին: Ալ-Իդրիսին սերում է հին ազնվական տնից, որն իշխել է Մարոկկոյում Թ—Ժ դարերում: Նա ծնվել է 1110 թ. և սա-

---

[57] **Н. Крачковский.** Избранные Сочинения, IV, 210.

[58] Abou Dulaf Misar Ibn Muhalhil's travels in Iran, ed. by V. Minorsky, Cairo, 1955. *Տե՛ս* Вторая записка Абу Дулафа, М., 1960.

[59] **Н. Крачковский.** Вторая записка Абу Дулафа в географическом словаре Йакута Азербайджан, Армения, Иран, Избранные сочинения, 1, 280-292.

վորել Կորդովայում և ինչպես իր գրվածքից է երևում, ճանապարհորդել է Ֆրանսիայում, Անգլիայում և Փոքր Ասիայում:

Հետաքրքրական է այն միջավայրը, որտեղ նա ստեղծագործել է: Նա ապրել է Սիկիլիայում, որը մոտ երկու դար գրաված է արաբների ձեռքում, ապա անցել (ԺԱ դ.) նորմանական թագավորներին: Այստեղ արաբասեր Ռոժեր Բ թագավորի մոտ Պալերմոյում է անց կացնում ալ-Իդրիսին իր կյանքի 16 տարիները: Մահացել է 1165 թ.: Հենց Պալերմոյում էլ նա գրել է իր հայտնի աշխատությունը՝ «Խոնջացածի զվարճությունը հորիզոններ ճեղքելու մեջ», որի մեկենասն է եղել արաբական մշակույթի սիրահար վերոհիշյալ Ռոժեր թագավորը: Սիկիլիա կղզին այդ ժամանակ հանդիպման կետն էր մի կողմից արաբական մշակույթի, մյուս կողմից լատինական՝ կաթոլիկ աշխարհի: Նույն թագավորի պատվերով ալ-Իդրիսին կազմում է մի արծաթյա կլոր քարտեզ, որի վրա նկարում է իր ժամանակվա աշխարհը: Սա հետագայում կորել է մի ապստամբության ժամանակ: Ալ-Իդրիսին ունեցել է նաև թղթի վրա նկարված քարտեզներ: Նրա աշխատությունը մեզ հասել է մի քանի գրչագրերով, որոնք ցրված են տարբեր վայրերում: Շատ արժեքավոր են նրա տեղեկությունները Արևմտյան Եվրոպայի մասին:

Դժբախտաբար մինչև օրս դեռ չկա ալ-Իդրիսիի գրքի արաբերեն բնագրի ամբողջական հրատարակությունը: 1591 թ. Հռոմում լույս տեսավ նրա աշխատության ուշ շրջանի (ԺԶ դ.) մի համառոտ խմբագրությունը: Սրանից կատարված լատիներեն թարգմանությունը լույս տեսավ Փարիզում 1619 թ., իսկ ամբողջ աշխատության ֆրանսերեն թարգմանությունը հրատարակվել է Նապոլեոնի եգիպտական արշավանքի մասնակից Ա. Ժոբերի կողմից երկու հատորով[60]: Ալ-Իդրիսիի քարտեզների հիման վրա գերմանացի արարագետ Կ. Միլլերը հրատարակեց արաբական միջնադարյան քարտեզների Ատլաս[61]:

Արաբական աշխարհագրության մեծագույն գեմքերից է Յակուտ ալ-Համավի ալ-Ռումին, որը ծագմամբ հույն էր: Նա

---

[60] P. A. Jaubert, Géographie d' Edrisi I, II, Paris, 1836-1840.

[61] Mappae Arabicae von K. Miller, Stuttgart, 1926.

բերվել էր Փոքր Ասիայից որպես ստրուկ և ծախվել մի համացի (հմեսիացի) արաբ վաճառականի։ Նրա տերը հոգ տարավ, որ նա ստանա լավ կրթություն և նրա մահվանից հետո Յակուտը դարձավ ազատ և սկսեց ճանապարհորդությունների մի ամբողջ շարք՝ Եգիպտոս, Պարսկաստան և Միջին Ասիա։

Ասվում է, որ մի օր Մերվում արաբական ինչ-որ անվան մասին վիճելու ժամանակ աշխարհագրական լիակատար բառարան կազմելու միտքը հղացավ։ Մոնղոլական արշավանքները նրան ստիպեցին հեռանալ դեպի արաբական աշխարհը, որտեղ և նա գրեց իր նշանավոր Մուջամ ալ-Բուլդանը «Երկրների բառարանը»[62]։ Սա տեղանունների լոկ այբբենական բառարան չէ։ Նախ տրվում է տեղանունը, հիշվում նրա ձայնանիշերը (արաբերենում ձայնանիշերը փոխարինում են ձայնավորներին) և ապա գալիս են պատմա-աշխարհագրական հարուստ տեղեկությունները։ Ի հակադրություն դասական դպրոցի աշխարհագիրների, նա չի սահմանափակվում միայն մահմեդական աշխարհով, այլ ընդգրկում է նաև իր ժամանակվա ամբողջ ծանոթ աշխարհը։ Նրան որպես աղբյուր են ծառայում ոչ միայն պատմական և աշխարհագրական աշխատությունները, այլև նույնիսկ բանաստեղծությունները։ «Երկրների բառարանը» մի համապարփակ հանրագիտարան է, որը հիմնականում ի մի է բերում արար մատենագրության պատմա-աշխարհագրական գրեթե բոլոր տեղեկությունները ամբողջ աշխարհի մասին։

Հայաստանի մասին Յակուտի տեղեկությունները հարուստ են և ընդգրկում են թե Մեծ Հայքը, թե Կիլիկիան։ Ինչպես մյուս արաբ աշխարհագետները, նա ևս խոսում է գլխավորապես Հարավային Հայաստանի մասին, որը համեմատաբար ավելի սերտ կապեր ուներ արաբական աշխարհի հետ։

Հայաստանը արաբ աշխարհագիրների մոտ մտնում է «Արմինիա» ընդհանուր հասկացության մեջ, որը բաղկացած էր բուն Հայաստանից, Արևելյան Վրաստանից (Քարթլի) և Աղվանքից։ Ամբողջությամբ վերցրած Արմինիան արաբ մատե-

---

[62] Jacut' s Geographisches Wörterbuch, hrsg. von F. Wüstenfeld, 6 Bde, Leipzig, 1924.

նագիրների մոտ բաժանվում էր կամ երեք մասի՝ ըստ այդ երկրներում ապրող երեք գլխավոր ժողովուրդների, կամ էլ (ինչպես մեծ մասամբ արվում էր) չորս մասի՝ առաջինը Աղվանքն էր, երկրորդը՝ Վիրքը, իսկ երրորդը և չորրորդը՝ Մեծ Հայքի արևելյան և արևմտյան մասերը։ Այս վերջին բաժանումն արաբների մոտ մնացել էր որպես հիշողություն նախարաբական շրջանում (Զ—Է դդ.) տիրապետող գրությունից։ Ընդհանրապես Արմինիան և Ատրպատականը արաբ աշխարհագիրների մոտ հանդես են գալիս միասին՝ մի գլխի տակ։ Սա էլ գալիս է Սասանյան ժամանակաշրջանից (Զ դ.), երբ Հայքը, Վիրքը, Աղվանքը և Ատրպատականը (ինչպես նաև մի քանի փոքր մերձկասպյան շրջաններ) կազմում էին ընդհանուր վարչատարածական միավոր՝ Քուստի Կասկոհ։

Արաբ աշխարհագրական գրականությունը մահմեդական ծննդի ժամանակաշրջանից գրավեցին եվրոպացի արևելագետների ուշադրությունը, բայց նրանք գիտական լուրջ ուսումնասիրություններ ունեցան միայն ԺԹ դարում։ Առանձնապես հիշատակության արժանի է հոլանդացի արաբագետ Դե-Գույեյի հրատարակած «Արաբ աշխարհագիրների մատենաշարը» ութ հատորից բաղկացած։

Արաբ աշխարհագրական գրականությունը մահմեդական այլ ժողովուրդների համար մի օրինակելի նմուշ հանդիսացավ իրենց մոտ համանման գրականություն զարգացնելու համար։ Պարսկական աշխարհագրությունը թե սկզբունքներով, թե բովանդակությամբ գտնվում էր արաբական ազդեցության տակ։ Նույնը կարելի է ասել նաև թուրքական աշխարհագրության մասին։

Թեպետ և շատ պարսիկներ առաջնակարգ դեր խաղացին արաբական մատենագրության մեջ որպես աշխարհագիրներ և մանավանդ որպես պատմիչներ, այնուամենայնիվ նրանց ստեղծագործությունները վերջին հաշվով մտնում են արաբական գրականության մեջ։ Բուն պարսկալեզու պատմագրությունը զարգանում է հիմնականում ԺԱ դարից հետո և այս պատճառով Բագրատունյաց շրջանի մասին քիչ տեղեկություններ կարելի է քաղել պարսիկ մատենագիրներից։

Հետաքրքրական է Նասիրի Խոսրովի կամ Խուսրաուի (ԺԱ դ.) «Սաֆարնամեն» (Գիրք ճանապարհորդությունների) աշխատության[63] մեջ հարավային Հայաստանին վերաբերող հատվածը: Նասիրի Խոսրովը պարսիկ մատենագրության մեջ ծանոթ է որպես բանաստեղծ, որի կրոնա-բարոյական բովանդակությամբ չափածո աշխատությունները արևելագիտության մեջ լավ հայտնի են: Նա հարել է շիիների իսմայիլական ազանդին և համարվում է իր ժամանակի պարսիկ մեծ մատենագիրներից: Սաֆարնամեն հեղինակի անձնական ճանապարհորդությունների ժամանակ անցած ուղու նկարագրությունն է, որը նա կատարել է 1046 թ.: Արաբական աշխարհագրության ազդեցության տակ է գտնվում Ժ դարի պարսիկ անանուն աշխարհագրի Հուդուդ ալ-Ալամ (Աշխարհի սահմանները) աշխատությունը: Սրա միակ ձեռագիրը հայտնաբերվել է 1892 թ. Տումանսկու կողմից և 1930-ին Վ. Բարթոլդի կողմից հրատարակվել է լուսատիպ մի օրինակ[64]: Իսկ 1937 թ. Ի. Մինորսկին Լոնդոնում հրատարակեց նրա անգլերեն թարգմանությունը ճոխ ծանոթագրություններով:

Նկատի ունենալով քրդական տարրի դերը Հայաստանում հաստատված օտար ամիրայությունների պատմության մեջ, մեր նյութի համար որոշ նշանակություն ունի Շերեֆնամեն կոչված պարսկերեն աշխատությունը, որի հեղինակն է Բաղեշի քուրդ ամիրա Շերեֆ ադ-Դինը (ԺԶ դ.): Այս գրվածքը քրդերի հնագույն պատմության միակ աղբյուրն է և ի մի է բերում քրդերի մասին եղած բազմաթիվ տեղեկություններ: Պարսկերեն բնագիրը հրատարակվել է Պետերբուրգում Վ. Վելիամինով-Զերնովի կողմից[65] և ապա թարգմանվել ֆրանսերեն՝ Ֆ. Շարմուայի ձեռքով[66]:

---

[63] Nasiri Khusraw, Safarnameh, Berlin, 1923.

[64] „Худуд ал-Алам", рукопись Туманского, Ленинград, 1930 Hudud al-Alam, the regions of the World, trans. and explained by V. Minorsky, London, 1937.

[65] Scheref-Nameh ou Histoire des Kourdes, t. 1, 2, par V.Veliaminof Zernof, St. Pb., 1862.

[66] Cheref-Nameh ou fastes de la nation Kourde, trad. par F.B. Charmoy, t. I, II, St. Pb., 1870-1875.

* * *

Մատենագրական նյութերի մեջ են մտնում նաև դիվանական վավերագրերը, սակայն հայկական միջնադարի պատմությանը վերաբերող դիվանական նյութերը քիչ են։ Բազմաթիվ բաղաքներ շրջելուց հետո վերջապես Անիում հաստատված Բագրատունյաց արքունիքը դիվանագիտական սերտ կապերի մեջ էր Բյուզանդիայի և խալիֆայության հետ և այդ հարաբերություններին առնչվող փաստաթղթերը, իհարկե, կուտակված էին Անիի արքունի դիվանում։ Դժբախտաբար վերջինս ամբողջովին կորած է և մեզ հասել են միայն նրանց մասին հիշատակումներ կամ էլ հակիրճ մեջբերումներ ժամանակակից պատմիչների մոտ։

Եթե հրովարտակներից և թղթերից մեզ հասել են (անուղղակիորեն) դոնե պատառիկներ, ապա այս շրջանի կալվածագրերը ամբողջովին ոչնչացվել են։ Բազում հիշատակումներ կան այն մասին, թե Բագրատունի թագավորները այս կամ այն իշխանին կամ վանքին նվիրել են բերդեր, գյուղեր, գավառներ և այլն, բայց այս բոլորից մեզ ոչ մի փաստաթուղթ չի հասել։ Մաղարթա վանքին վերաբերող անվավեր փաստաթղթերը, ըստ որոնց Աշոտ Գ-ը այդ վանքին նվիրում է ամբողջ գավառներ, ոչ մի գաղափար չեն կարող տալ Բագրատունյաց ժամանակաշրջանի կալվածագրերի մասին։

Սակայն պետք է հատուկ կերպով նշել, որ այդ ժամանակաշրջանում կալվածագրերի դեր էին կատարում վիմագիր արձանագրությունները, որոնք ավելի դիմացկուն էին քան որևէ այլ փաստաթուղթ։

Հայկական վիմագիր արձանագրությունները հրատարակված են մեծ մասամբ մեր վանքերին նվիրված ուսումնասիրությունների մեջ[67]։ Արձանագրությունների ամբողջական ժողովածու հրատարակելու մի թերավարտ փորձ է Կ. Կոստանյանի «Վիմական տարեգիրը»[68]։ Հայկական արձանագրությունների

67 Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփղիս, նաև Ղ. Ալիշանի պատմա-աշխարհագրական աշխատությունները (Այրարատ, Սիսական, Շիրակ) և այլն։

68 Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, Ս. Պբ, 1913։

նման ամբողջական ժողովածուն սկսեց հրատարակվել միայն վերջերս Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից և արդեն լույս տեսավ այդ լիակատար ժողովածուի մի հատորը[69]։

Հայաստանում գտնվել են նաև արաբական արձանագրություններ, որոնք թվով շատ չեն, բայց որոշ արժեք ունեն։ Դրանցից հնագույններն են՝ Զվարթնոցի երեք արձանագրությունները[70], գրված հենց արաբական տիրապետության շրջանում։ Այս երեք արձանագրություններն էլ գրված են Ը—Թ դդ. պատահական արաբ անձնավորությունների կողմից որպես մաղթանք։ Կա գրողի անունը և գրվելու թվականը։

Դվինի պեղումների ժամանակ գտնվել են մի քանի քարի բեկորներ, վրան արաբերեն գրություններով, որոնք մեծ մասամբ կցկտուր բառերից են բաղկացած։ Միայն գրերի ձևը ենթադրել է տալիս, որ դրանք վաղ շրջանին են պատկանում։ Դվինում հայտնաբերվել են և այժմ Պատմության թանգարանում են պահվում նաև ուշ շրջանի (ԺԱ—ԺԳ դդ.) զարդ-արձանագրություններ գաջի վրա, որոնք իրենց բովանդակությամբ մաղթանքներ են հավանաբար շենքի տիրոջ հասցեին։ Առայժմ, երկարատև պեղումներից հետո, այսքանն է հայտնաբերված, սակայն դեռ պետք է հուսալ, որ հետագայում պեղումները ամբողջական և արժեքավոր արձանագրություններ ի հայտ կբերեն։

Եզակի կարելի է համարել Աշոտ Ա. Բագրատունու արաբերեն կնիքը[71], որը մի քանի տարի առաջ հայտնաբերվեց Հյուսիսային Կովկասում։ Նկատի ունենալով, որ Բագրատունյաց շրջանից ոչ մի դիվանական փաստաթուղթ մեզ չի հասել, այս կնիքի հայտնաբերումն ունի բացառիկ նշանակություն։

Արաբական հնագույն ամբողջական արձանագրություններ-

---

69 «Դվին հայ վիմագրության», պրակ 2, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1960։

70 Մեսրոպ վրդ. Տեր Մովսիսեան. Էջմիածին և Հայոց հնագույն եկեղեցիները, Ազգագրական հանդես. 1907, XV։

71 **В. Крачковская.** Печать Багратида Ашота с арабской надписью, Крат. сообщ. Инст. ист. мат. культ., в. XII 1946.

ը, որոնք հայտնաբերվել են մինչև այսօր, Բագրատունյաց թուլացման շրջանում Աղձնիքի և Ապահունյաց գավառներին տիրացող քուրդ Մրվանյանների թողած արձանագրություններն են, հրատարակված Վան Բերշեմի կողմից[72]: Անիում կա Քուֆի տառերով գրված մի արաբերեն արձանագրություն (1072) Մանուչեի մզկիթի վրա, որտեղ հիշվում են Մանուչեն և սելջուկյան սուլթանը[73]:

Բագրատունյաց թագավորները չեն ունեցել իրենց դրամները, այլ բավարարվել են Դվինում և այլուր թողարկված արաբական, ինչպես նաև Բյուզանդիայից եկած դրամներով: Դվինում արաբական տիրապետության ժամանակ գործող փողերանոցը իր գոյությունը շարունակեց նաև առաջին Բագրատունիների ժամանակ: Մեզ հասած վերջին դվինյան դրամը կրում է 330 թ. (941—942)[74]:

ԺԹ դարի սկզբին նշանավոր դրամագետ Խ. Ֆրեհնի արաբական դրամներին նվիրված իր բազմաթիվ աշխատությունների մեջ քննության է առնում նաև Դվինում կտրված դրամները: Ռ. Ֆասմերը դրամագիտական տվյալները մեծ չափով օգտագործեց հայոց պատմության հարցերի պարզաբանման համար: Այս դրամների որոնումները և ուսումնասիրությունները մինչև օրս շարունակվում են:

Բագրատունյաց Հայաստանի պատմության ուսումնասիրման համար մեծ նշանակություն ունեն հնագիտական պեղումները: ԺԹ դարի վերջում Ն. Մառի և Հ. Օրբելու կողմից սկսված պեղումները Անիում շատ բան հայտնաբերեցին: Դուրս բերվեցին կենցաղային նշանակություն ունեցող բազմաթիվ իրեր: Պեղումները, որոնք սկսել էին դեռ 1892 թ., տևեցին երկար տարիներ և նրանց արդյունքները հրատարակվեցին Ն. Մառի, Հ. Օրբելու և Վ. Բարթոլդի կողմից գրքույկների ձևով՝ «Անույ շարք» անվան տակ: Հետագայում Մառը օգտագործելով այդ

---

[72] Max van Berchem, Materiaux pour l' epigraphie et l'histoire musulmanes du Diyar Bekr. v. Strzygowsky, Amida, Heidelberg, 1910.

[73] Պ. Ալիշան, Շիրակ, էջ 56։

[74] А. Быков, Дайсам ибн Ибрахим ал-Курди и его монеты Эпиграфика Востока, х, 1955, стр. 14-37.

պեղումների արդյունքները և մատենագրական տվյալները դրեց իր ընդարձակ աշխատությունը՝ «Անի»[75]։

Դվինը նույնպես սկսեց պեղվել Ն. Մառի կողմից 1899 թ., բայց վերջինս շուտով թողեց այն և աշխատանքի լծվեց միայն Անիում։ Դվինը մասնակիորեն պեղվեց նաև խաչիկ վարդապետ Դաղյանի կողմից, սակայն շուտով նորից լքվեց։ 1937 թ. Դվինի պեղումները վերսկսեցին Ս. Տեր-Ավետիսյանի գլխավորությամբ, բայց վերահաս պատերազմը նորից ընդհատեց հնագիտական աշխատանքները։ Պատերազմից հետո 1946 թ. սկսվեցին Դվինի կանոնավոր պեղումները, որոնք մինչև օրս շարունակվում են Կ. Ղաֆադարյանի ղեկավարությամբ[76]։

Հնագիտական պեղումների տված նյութը մեծ լույս է սփռում միջնադարյան քաղաքների զարգացման և նրանց կենցաղի հարցերի վրա, մի բան, որը դժվար է և մերթ նույնիսկ անհնարին, ձեռք բերել սոսկ մատենագրական տեղեկությունների կամ թեկուզ մանրանկարչական տվյալների հիման վրա։

2. ՀԱՐՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ-արաբական պատմական և բանասիրական հարցերից մի քանիսը ուսումնասիրման առարկա դարձան անցյալ դարի սկզբից։ Դեռ ԺԸ դարում Մ. Չամչյանն իր եռահատոր աշխատության մեջ մի ամբողջ գլուխ էր հատկացրել արաբական տիրապետության շրջանին (ժամանակ իշխանության ոստիկանաց)[77]։ Այս գլուխը շարադրված է հիմնականում հայ պատմիչների հաղորդած տվյալների հիման վրա, որոշ լրացումներ կատարելով բյուզանդական աղբյուրներից։ Ղ. Ինճիճյանը նույնպես «Հնախօսութիւն» եռահատոր աշխատության մեջ կանգ է առել հայոց պատմության այդ շրջանի հարցերի վրա ինչպես օրինակ՝ Հայաստանում արաբ գաղթականությունների հաստատումը, արաբական արշավանքները և նրանց տիրապետության ժամանակ ծագած ապստամբությունները և այլն[78]։

---

75 Н. Марр, Ани, Ленинград, 1934.

76 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952։

77 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 376—453։

78 Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, Ա, 319—325, 422—449, Գ. 228—231, 323—325։

ԺԹ դարի սկզբին Պետերբուրգում հայտնի դրամագետ Ֆրենը Արևելյան խալիֆայության դրամներին նվիրված իր բազմաթիվ ուսումնասիրություններում[79], ի շարս այլ դրամների քննության էր առել նաև Հայաստանում թողարկված արաբական դրամները, որոնք կրում էին ոստիկանների անունները։ Ահա այս երեք գիտնականների (Չամչյան, Ինճիճյան, Ֆրեն) աշխատությունների, ինչպես նաև արաբ և հայ պատմիչների որոշ տվյալների հիման վրա գերմանացի հայագետ Հ. Պետերմանը կազմեց Հայաստանի արաբական շրջանին նվիրված առաջին աշխատությունը[80], որի մեջ տվեց արաբ ոստիկանների մի փոքրիկ ցուցակ։

ԺԹ դարում հայագետների կողմից եղան նաև արաբական աղբյուրների ուսումնասիրման և օգտագործման փորձեր։ Ղ. Ալիշանը, որն ընդհանրապես իր պատմա-աշխարհագրական հայտնի աշխատությունների մեջ հաճախ է բերում տեղանունների կամ անձնանունների արաբական ձևերը, ունի մի փոքրիկ աշխատություն Աբուսահլ հայի մասին[81], որը ԺԴ դարի հայազգի արաբագիր պատմիչ Աբու Սալիհն է։

Նրանից որոշ ժամանակ առաջ, լույս էր տեսել նաև Աստվածատուր Տեր-Հովհաննիսյանի արաբերենից կատարած մի թարգմանությունը՝ ԺԵ դ. արաբ հեղինակ Արաբշահի գրած Լենկթիմուրի և նրա հաջորդների պատմությունը[82]։

ԺԹ դարում արաբ աղբյուրները հայագիտական տեսանկյունից օգտագործելու ևս մի քանի օրինակներ կան։ Օրինակ, որոշ նշանակություն ունի Դ՚Օհսոնի «Կովկասի ժողովուրդնե-

---

79 C. Fraehn, Recensio Numorum Muhammedanorum, Petropoli, 1826.

80 J. H. Petermann, De Ostikanis Arabicis Armeniae Gubernatoribus, Berolini, 1840.

Տե՛ս հայերեն թարգմանությունը, Հայոց ոստիկաններուն վրա, «Արևակ», 1859, էջ 16, 40, 73։

81 Աբուսահլ հայ. Պատմութիւն եկեղեցեաց և վանորէից Եգիպտոսի, Վենետիկ, 1895։

82 Պատմութիւն Լենկ Թիմուրայ թարգմանեաց ի տաճիկ բնագրէ Ա. Վրդ. Տեր Յովհաննիսեանց, Երուսաղեմ, 1873։ Նույն հեղինակն ունի նաև Երուսաղեմի երկհատոր պատմությունը, որտեղ մեջ են բերված Երուսաղեմի մի շարք արաբական արձանագրություններ։

ը»[83] գիրքը, բայց ամենից ավելի հիշատակման արժանի են Մորթմանի արաբ պատմիչներից քաղած հատվածները[84]։

Հայ-արաբական մատենագրական հարցերով զբաղվել է Վիեննայի Մխիթարյաններից Ղ. Հովնանյանը[85], որն այդ հարցին մոտեցել է միջին հայերենով գրված գրականության հետ առնչվող հարցերի պարզաբանման տեսանկյունից, քննության առնելով արաբերենից հայերեն թարգմանությունների հարցը[86]։

Առաջին ուսումնասիրությունը, որն այս տեսակետից լուրջ արժեք է ներկայացնում, Մ. Ղազարյանի Հայաստանի արաբական տիրապետության շրջանի մասին աշխատությունն է[87]։ Պետերմանի փոքրիկ աշխատությունից հետո սա առաջին գիտական երկն է, որի մեջ հավասար չափով ուսումնասիրվել են թե հայ, թե արաբ պատմագրությունը Հայաստանի է—թ դարերի պատմությունը շարադրելու համար։ Այս աշխատության մեջ առաջին անգամ հաջող կերպով զուգորդված են հայ (Սեբեոս, Ղևոնդ, Դրասխանակերտցի, Թովմա և այլն) և արաբ պատմիչների (Բալազուրի, Թաբարի, Յակուբի, Իբն ալ-Ասիր...) ու աշխարհագիրների (Իբն Խուրդադբեհ, Իբն ալ-Ֆակիհ, Իբն Հաուկալ, Յակուտ և այլն) բազմաթիվ տեղեկությունները. Օգտագործելով ԺԹ դարում կուտակված հայագիտական նյութերը հեղինակին հաջողվել է տալ գիտական բարձրարժեք ուսումնասիրություն։

Ամիրայությունների առաջացման հարցը կապված է Հայաստանում արաբ (և ընդհանրապես օտար) գաղթականության հաստատման երևույթի հետ։ Դեռ ԺԹ դարի առաջին կեսին Ղ. Ինճիճյանը իր Հնախոսության մեջ «Օտար ժողովուրդ

---

83 D' Ohsson, Les peuples du Caucase, Paris, 1828.

84 Մորթման, Հատուածք պատմութեան Հայաստանի, քաղեալք յարաբացի պատմագրաց, թարգմանեաց ի հայ Կ. Իփիճեան, Կ. Պոլիս, 1874։

85 Ղ. Յովնանեան. Հնատպտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Ա. Վիեննա, 1897։

86 Նա զբաղվել է նաև արաբերենով և կազմել է արաբերենի բերականություն, տե՛ս «Յուշարձան», Վիեննա, էջ 33։

87 M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903.

ինչ ի Հայաստան» ենթագլխի տակ հիշում է Մեծ Հայքում հաստատված հետևյալ արաբ ցեղերին՝ Կայսիկը, Ութմանիկը, Զուրարիկ և Համտուն։ Սակայն արաբ գաղթականությունների հարցը միայն մեր դարի սկզբին ուսումնասիրության նյութ դարձավ Հ. Թոփչյանի և Հ. Մարկվարտի կողմից։

Հ. Թոփչյանի՝ «Հայաստանի ներքին վիճակը Աշոտ Ա-ի իշխանության տակ»[88] աշխատությունը նվիրված է Հայաստանի Թ դարի պատմությանը։ Իհարկե, ամիրայությունների հարցը այստեղ քննարկման է առնված ի միջի այլոց, այնուամենայնիվ Թոփչյանը մի ընդհանուր ամփոփ ակնարկ է տալիս այս նյութի մասին։

Առաջին հեղինակը, որի մոտ Հայաստանի արաբ ամիրայությունների հարցը այս կամ այն չափով քննարկման է ենթարկված, դա Յ. Մարկվարտն է։ Բագրատունիների պատմությանը նվիրված իր ուսումնասիրություններից մեկում[89] նա շարադրում է Հայաստանում Թ դարի առաջին կիսում երևան եկած Ջահհաֆյանների ամփոփ պատմությունը։ Այս վերջինների մասին դեռ իր ժամանակին գրել է Մ. Բրոսենը՝ հենվելով Թովմա Արծրունու տեղեկությունների վրա։ Բայց Մարկվարտի գործի արժեքն այն է, որ նա կարողացավ հայ պատմիչներին զուգահեռ ներգրավել նաև արաբ պատմիչների (գլխավորապես Յակուբիի) թեկուզ համառոտ տեղեկությունները։

Պատմական հարցերի ուսումնասիրմանը զուգընթաց ԺԹ դարի վերջին և մեր դարի սկզբին առաջ է տարվում նաև մատենագրական կապերի ուսումնասիրման գործը։ Այստեղ առաջին հերթին նկատի ունենք Ն. Մարի արժեքավոր աշխատությունները նվիրված Ագաթանգեղոսի արաբական խմբագրությանը[90], Վարդան Այդեկցու առակների արաբերեն թարգ-

---

88 H. Thoptschian, Die inneren Zustände von Armenien unter Aschot I, Berlin, 1904.

89 J. Markwart, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig, 1903. *Այստեղ մի ամբողջ գլուխ կա Բագրատունիների մասին, որը թարգմանված է հայերեն «Բագրատունեաց ծագումը». թարգմ. Հ. Մ. Հապոգեան, Վիեննա, 1913։*

90 **Н. Марр**, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием, СПб. 1905.

մանությանը[91] և այլն։ Այս նույն տարիներին է, որ ուսումնասիրվում է նաև հայերենի արաբական փոխառությունների հարցը Հ. Հյուբշմանի[92] կողմից։

Արաբ պատմիչների տեղեկությունների մեծ նշանակությունը պահանջ է առաջացնում տալ նրանց հայերեն թարգմանությունը և ահա այս տարիներին «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում լույս է տեսնում Բ. Խալաթյանցի կողմից թարգմանված արաբ պատմիչներից հատվածներ[93], իսկ Կարաուլովը քաղվածաբար հրատարակում է արաբ աշխարհագիրներից Կովկասի վերաբերյալ նյութերը՝ բնագրով և ռուսերեն թարգմանությամբ[94]։

Մեր նյութի համար հետաքրքրական են Վան Բերշեմի կողմից հրատարակված Նփրկերտի և այլ քաղաքների արաբական արձանագրությունները, որոնք լույս են սփռում Մրվանյան ամիրայության պատմության վրա։

Փարիզում 1919 թ. լույս տեսած Ժ. Լոռանի աշխատությունը՝ «Հայաստանը Բյուզանդիայի և արաբների միջև»[95] Հայաստանի արաբական շրջանի պատմությանը նվիրված առաջին մեծածավալ ուսումնասիրությունն էր, որը շատ ավելի ընդարձակ է, քան Ղազարյանի վերոհիշյալ աշխատությունը։ Հետաքրքրքրական է նրա վերջին հատվածը Աղձնիքի (Նփրկերտի) տերերի՝ Շայբանիների և այլ ամիրաների մասին։

Բագրատունյաց ժամանակաշրջանի օտար ամիրայությունների հարցի քննարկմանը բավական մոտենում է, Մարկվարտի՝ «Հարավային Հայաստանը և Տիգրիսի ակունքը»[96] երկը։ Իհարկե, այս աշխատության մեջ Մարկվարտի ուսումնասիրության հիմնական առարկան Հարավային Հայաստանն է, հնագույն ժամանակներից մինչև մոտավորապես ԺԲ դարը, բայց

91 Н. Марр. Сборники притч Вардана, СПб, 1899.

92 H. Hübschmann, Die semitischen Lehnwörter im Altarmenischen, ZDMG, 1892, s. 226-228.

93 «Հանդէս Ամսօրեայ», 1903—1908։ Նաև առանձին գրքույկով՝ Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919։

94 Н. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, СМОМПК, XXIX, XXXI, XXXII, XXXVIII

95 J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919.

96 J. Markwart. Südarmenien und die Tigrissquellen. Wien. 1930

նկատի ունենալով, որ Հայաստանում ամիրայությունները ծագեցին մեծ մասամբ Հարավային Հայաստանում, նա անխուսափելիորեն անդրադառնում է Բագրատունյաց շրջանի ամիրայությունների պատմությանը:

Բագրատունյաց թագավորության, ընդ որում, նաև արաբական ամիրայությունների պատմության խորը ուսումնասիրման համար կարևոր են Հ. Մանանդյանի[97] և մասամբ Հ. Զորյանի[98] աշխատությունները: Քաղաքների արագ զարգացումը Բագրատունյաց շրջանի հատկանշական երևույթներից էր և Թ—ԺԱ դդ. Հայաստանի ներքին կյանքի ուսումնասիրման համար անհրաժեշտ է շարադրել Հայաստանի քաղաքների վիճակը, որը գտնում ենք Հ. Մանանդյանի[99] և Բ. Առաքելյանի մոտ[100]:

Իրենց առաջացման սկզբնական շրջանում Հայաստանի արաբական ամիրայությունները պայքարում էին խալիֆայության դեմ չդադարելով միևնույն ժամանակ հայ նախարարական տների դեմ պայքարելուց: Հարցը այս հակախալիֆայական կենտրոնախույս պայքարի տեսանկյունից է ուսումնասիրում Պ. Ժուկին[101], որը այն վերցնում է որպես ամբողջ Անդրկովկասին հատուկ ընդհանուր երևույթ: Հայաստանի արաբական շրջանի պատմության ուսումնասիրման համար կա-

---

97 Հ. Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստան, Մանր հետազոտություններ, Երևան, 1932: Նույնի՝ Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Երևան, 1939:

98 Հ. Զորյան, Արաբների հարկային բաղաքականությունը ֆեոդալական Հայաստանում, Երևանի համալսարանի Տեղեկագիր, 1927, № 2, 3:

99 Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11 դդ., Երևան, 1940: Я. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1954.

100 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1958: Հայ-արաբական ամիրայությունների քաղաքներից հատուկ ուսումնասիրման առարկա է դարձել Դվինը, որի մասին եղած աշխատություններից պետք է հիշել երկուսը՝ А. Шахназарян, Двин, Ереван, 1940, և Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952:

101 И Жузе, Мутагаллибы в Закавказье в IX-X веках. Материалы по истории Грузии и Кавказа, вып. III, Тифлис, 1937.

բևոր նշանակություն ունեն նաև Հ. Նալբանդյանի աշխատությունները[102]։

Հետպատերազմյան շրջանում Հայաստանի ամիրայությունների հարցի ուսումնասիրմանը նպաստող նյութ ենք գտնում Վ. Մինորսկու և Մ. Կանարի աշխատությունների մեջ։ Առաջինի «Ուսումնասիրություններ Կովկասյան պատմության մեջ»[103] աշխատությունը նվիրված է Շադդադյան տան պատմությանը, որը տիրեց Դվինում, Գանձակում և վերջապես Անիում։ Մ. Կանարի «Ջազիրայի և Ասորիքի Համդանյանների հարստության պատմությունը» աշխատությունը[104] քննարկման է առնում Աղձնիքում և այլուր իշխող Համդանյանների գործունեությունը, որոնք մի ժամանակ գրավեցին նույնիսկ Ատրհունիքը և Կայսրիների այլ կալվածները։ Այս մասին Մ. Կանարն ունի մի բովանդակալից հոդված, որը հրատարակել էր դեռ 1948 թ.[105]։

Հայ-արաբական ամիրայությունների հարավ-արևմտյան խումբը (Մանազկերտ և այլն) սերտորեն կապված լինելով Բյուզանդիայի հետ, չի վրիպել բյուզանդագետների ուշադրությունից (Վ. Վասիլև[106] և Է. Հոնիգման[107]), որոնց աշխատություններում հատվածներ կան այս հարցին վերաբերող։

Վերոհիշյալ բոլոր աշխատությունները օգնելով հանդերձ Հայաստանի ամիրայությունների հարցի ուսումնասիրմանը, այնուամենայնիվ, երբեք նպատակ չեն ունեցել ամբողջովին

---

102 Հ. Նալբանդյան, Արարների հարկային քաղաքականությունը Հայաստանում, «Տեղեկագիր» (հասարակ. գիտ.), № 12, 1954։ Նույնի, Արարաց ոստիկանները Հայաստանում, «Տեղեկագիր» (հասարակ. գիտ.), № 8, 1956։

103 V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953.

104 M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides de Jazirah et de Syrie, Alger, 1951.

105 Idem, Les Hamdanides et l' Armenie, Annales de l' Inst. d'Et. Or., Alger, 1948, VII.

106 А. Васильев, Византия и Арабы, I.II, СПб, 1900-1902 Տես նույնի ֆրանսերեն նոր մշակված հրատարակությունը։ A. A. Vasiliev, Byzance et les Arabes, t. I(reimprimé en 1959), t. II, II partie, Bruxelles, 1959.

107 E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935.

զբաղվելու Հայաստանում հաստատված արաբական ամիրայությունների պատմության մանրամասն շարադրմամբ, և Բագրատունյաց շրջանի այս օտար ամիրայությունների հարցը միշտ էլ մնացել է թերի մշակված։ Սրա պատճառը հենց այն է, որ դա ոչ զուտ հայագիտական հարց է, ոչ էլ զուտ արաբագիտական, իսկ դրա հետևանքով ոչ հայագետներն են պետք եղած ուշադրությունը նվիրել այս հարցին, ոչ էլ արաբագետները։

Արաբական խալիֆայության պատմությունն ուսումնասիրողները (Գ. Վայլ, Վ. Մյուիր, Վելհաուզեն, Կ. Հյուար, Ա. Մյուլլեր և այլն) միշտ էլ անտեսել են այդ ամիրայություններին, որովհետև դրանք Թ դարի կեսից քաղաքականապես կտրվեցին արաբական (կամ ավելի ճիշտ կլիներ ասել՝ մահմեդական) աշխարհից և հիմնականում կապված էին Հայկական լեռնաշխարհի հետ։ Հարավ-արևմտյան Հայաստանի ամիրայությունները (Մանազկերտ և այլն) նախ՝ Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի ժամանակ մաս էին կազմում Թագավորության, իսկ հետո ընկան բյուզանդական ազդեցության տակ և վերջապես միացվեցին կայսրությանը։ Ինչ վերաբերում է Դվինին, ապա դա փաստորեն մի կուվախնձոր էր հայոց Թագավորների և Ատրպատականի ամիրաների միջև։

Նույն ձևով են մոտեցել այս հարցին նաև հայագետները, որոնք Բագրատունյաց պատմության ուսումնասիրման ժամանակ հիմնականում ուշադրություն են դարձրել Հայոց Թագավորության այն նահանգների վրա, որտեղ տիրել են հայ իշխանական տներ (Այրարատ, Գուգարք, Սյունիք, Արցախ, Վասպուրական, Մոկք, Տարոն և այլն), իսկ օտար ամիրաների ձեռքում գտնվող գավառները նրանց բոլորի ուշադրությունից վրիպել են։

Ներկա աշխատության պատրաստմանը մեծ չափով նպաստեցին մի շարք արաբական աղբյուրների հրատարակումը վերջին տարիներում։ Դրանց մեջ առաջին հերթին պետք է հիշել երկուսին. Համդանյան Սայֆ ալ-Դաուլային վերաբերող բոլոր հատվածների ժողովածուն[108], քաղված արաբ պատմիչ-

[108] M. Canard, Recueil des textes relatifs a Sayf ad Daulah, Paris, 1930.

ներից (ալ-Ֆարիկի, իբն Զաֆիր, Միսքաուայհ և այլն) և Մունաջջիմ Բաշիի մի հատվածի բնագրի հրատարակումը[109]։ Առաջինը, որը լույս ընծայվեց Մ. Կանարի կողմից, բավական թարմ նյութ է տալիս Հայաստանի հարավ-արևմտյան ամիրայությունների (Կայսիկների և այլն) պատմության համար, իսկ երկրորդը (հրատարակիչ Վ. Մինորսկի) բոլորովին նոր տեղեկություններ է հաղորդում Դվինում Ժ և ԺԱ դարերում կատարված իրադարձությունների մասին։

Սույն աշխատության մեջ մեր նպատակն է շարադրել Բագրատունյաց Հայաստանի պատմության չպարզաբանված հարցերից մեկը՝ Մեծ Հայքում հաստատված, բայց Հայոց թագավորության հետ քաղաքականապես թույլ կապված օտար (արաբական) ամիրայությունների պատմությունը։ Այս նյութի մշակումը, լույս կսփռի ոչ միայն Բագրատունյաց ներքին պատմության վրա, այլև կօգնի պարզաբանելու Բագրատունյաց թագավորության և այլ պետությունների, ինչպես խալիֆայության երկրների ու Բյուզանդիայի հետ փոխհարաբերությունների հարցը։

---

109 V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953.

ԳԼՈՒԽ Ա

ԱՌԱՋԻՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՅԱՅՈՒՄԸ ՄԵԾ ՀԱՅՔՈՒՄ

1. ԱՐԱԲԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում արաբական տիրապետության շրջանն ունի առանձնահատուկ դեր, որոնցով նա տարբերվում է նախորդ պարսկա-բյուզանդական շրջանից։

Հայաստանի նկատմամբ Սասանյանների և Բյուզանդիայի քաղաքականությանը բնորոշ էր այլևայլ կապերով (կրոնական և այլն) երկիրը իրենց հետ կապելու ձգտում։ Այդ դարաշրջանում որևէ օտար տարր (պարսիկ կամ հույն) Հայաստան պարթևցնելու հարց չկար։ Ճիշտ է, Բյուզանդիան (Մավրիկ կայսեր օրոք)[1] Հայաստանի ռազմիկ տարրը տեղափոխում էր Բալկաններ նրան մասնակից դարձնելու իր ռազմական գործողություններին, սակայն այս քաղաքականության նպատակը Մեծ Հայքի որևէ մի գավառում հայ տարրի թուլացումը չէր և ինչ-որ օտար գանգվածի բնակեցումը։

Արաբական կայսրությունը՝ խալիֆայությունը, այլ պայմաններում և այլ ձևով էր առաջացել ու կազմավորվել քան Բյուզանդիան կամ Սասանյան կայսրությունը։ Մի հարվածով Արաբները նվաճեցին ամբողջ Սասանյան կայսրությունը և բյուզանդական նահանգների մեծ մասը։ Այս նվաճված երկրը-

---

[1] Սեբեոս, էջ 49։

ներում, որոնցից շատերը ոչ կրոնով, ոչ էլ լեզվով կապված չէին Արաբիայի հետ, արագ կերպով տարածվեցին իսլամն ու արաբները։

Ը դարում արաբական լայնածավալ խալիֆայության դրեթե բոլոր նահանգներում պաշտոնապես տիրապետող էր իսլամը։ Վարչականորեն կազմավորված նահանգներում արաբական տարրի հաստատման հետ տարածվել էին իսլամն ու արաբերենը, որոնք նպաստում էին նոր կայսրության միասնականության ամրապնդմանը։

Սակայն բոլոր արաբական նահանգների մեջ կար մեկը, որը խիստ կերպով տարբերվում էր մյուսներից, դա Արմինիան[2] էր, որն ընդգրկում էր երեք քրիստոնյա երկրներ՝ Հայաստան, Վրաստան և Աղվանք։ Ճիշտ է, խալիֆայության մյուս նահանգներում իսլամը միանգամից չտարածվեց և մի հարվածով չոչնչացրեց տեղական կրոնները, այնուամենայնիվ, գոնե ձևականորեն Ը և մանավանդ Թ դարերում իսլամը գերիշխող էր և ոչ մի տեղական կրոն կամ լեզու բացարձակ կերպով տիրապետող չէր իր նահանգում։ Օրինակ, Պարսկաստանում թեև կենդանի էր զրադաշտականությունը, բայց նրանց մոգպետը պաշտոնապես ճանաչված չէր։ Նույնիսկ Ասորիքի և Եգիպտոսի պատրիարքները լոկ տեղական համայնքների պետեր էին, որովհետև այդ երկրներում արդեն հաստատվել էին արաբական բազմամարդ գաղթեր և իսլամը արագընթաց տարածվում էր։ Իսկ տեղական լեզուները (ասորերեն, զպտիերեն) աստիճանաբար փոխարինվում էին արաբերենով և բավական է միայն ասել, որ թե Եգիպտոսի զպտիների, թե Ասորիների մոտ արդեն Թ դարում արաբերենը եկեղեցական մատենագրության լեզու էր։

Այլ էր դրությունը Արմինիա ոստիկանության մեջ[3], որտեղ Հայոց կաթողիկոսը փաստորեն քաղաքական դեմք էր և ոչ թե փոքրամասնություն կազմող մի կրոնական համայնքի պետ։ Այստեղ հայ նախարարները կարող էին բարձր դիրքերի հաս-

[2] Արմինիա ոստիկանությունը բաժանված էր չորս մասի, Ա՝ Աղվանք, Բ՝ Վիրք, իսկ Գ և Դ Արմինիաները, ընդգրկում էին Հայաստանի արևելյան և արևմտյան մասերը։

[3] M. Ghazarian, Armenien, 61-64.

նել (իշխան Հայոց, սպարապետ) առանց կրոնափոխ լինելու։ Այլ ոստիկանությունների մեջ քրիստոնյա իշխանը կարող էր բարձր դիրքի հասնել որպես բացառություն և այն էլ մեծ մասամբ կրոնափոխ լինելու գնով։

Ահա այս վիճակը անհանդուրժելի էր խալիֆայության և մանավանդ Աբբասյանների համար և պայքարը դրա դեմ Հայաստանում արաբների քաղաքականության մեջ պետք է կարևոր տեղ գրավեր։

Օմայանները որոշ խստություններ գործադրեցին, սակայն նրանց ձեռնարկումները արմատական ոչինչ չփոխեցին Հայաստանում։ Իրերի նմանօրինակ վիճակը պայմանավորված էր որոշ ազդակներով։ Մինչև է դարի վերջը, արաբական խալիֆայության ներհակ ուժերի միջև կատաղի դոտեմարտ էր գնում և արաբական առաջին արշավանքները (640, 642 և 650 թթ.)[4] ոչ թե նվաճողական, այլ սոսկ անկազմակերպ ասպատակություններ էին։ Միայն 654 թ. արշավանքն էր, որ կարելի է նվաճողական համարել և պատահական չէ, որ արաբ պատմագրությունը միայն այս արշավանքն է հանգամանորեն հիշատակում[5], իսկ երեք նախորդ արշավանքները մեզ ծանոթ են հիմնականում հայ աղբյուրների շնորհիվ[6]։ Արաբների համար Հայաստանը այդ օրվանից համարվում էր նվաճված, սակայն փաստորեն ամբողջ է դարում երկիրը վայելում էր մի այնպիսի ինքնուրույնություն, որի նմանը նա չէր ունեցել Արշակունյաց անկումից հետո։

է դարում, երբ Հայաստանը այս կամ այն չափով գտնվում էր արաբական ազդեցության ոլորտում, Հայաստանի և խալիֆայության փոխհարաբերությունները մեծ մասամբ հիմնված էին 652 թ. Մուավիայի և Թեոդորոս Ռշտունու միջև կնքված պայմանագրի վրա, ըստ որում Հայաստանը պարտավոր էր մի թեթև հարկ վճարել խալիֆայությանը և միևնույն ժամանակ կարիք եղած դեպքում օգնական զորք ուղարկել արաբնե-

4 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հատ. Բ, էջ 200—201։

5 Beladsori, 197-200.

6 Արաբ պատմիչների մեջ միայն ալ-Վակիդին է (Թ դար) նկարագրել արաբների առաջին արշավանքը Հայաստան, սակայն նրա գործը մեզ չի հասել։

ին։ Սակայն այստեղ հետաքրքրականը հետևյալն է. «...և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս և ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ...»[7]։ Սա նշանակում է, որ է դարում խալիֆայությունը Հայաստանում չուներ ոչ մի ներկայացուցիչ լինի դա կառավարիչ, թե ռազմիկ։

Այս նպաստավոր դրությունը փոխվեց Օմայան խալիֆա Աբդ ալ-Մալիքի (685—705) օրոք, երբ Աբդ Ալլահ իբն ալ-Զուբայրի հուժկու ապստամբության ճնշման հետևանքով արաբական պետությունը կայուն վիճակ ստացավ և վերջնականապես կազմավորվեց։ Արաբական զորքերը խալիֆայի եղբոր՝ Մուհամմադ իբն Մրվանի գլխավորությամբ արշավեցին Հայաստան և ամբողջովին նվաճեցին այն[8]։ Օմայանների իշխանության այս շրջանում էր, որ վերջնականապես ձևավորվեց Արմինիա ոստիկանությունը, որպես արաբական նահանգ, իր մեջ ընդգրկելով Հայաստանը, Վիրքն ու Աղվանքը։ Ը դարի առաջին կեսում Հայաստանի կարևորագույն քաղաքներում արաբական կայազորներ հաստատվեցին, որոնց նպատակն էր ոչ միայն երկիրը հպատակ վիճակում պահել, այլև պահպանել ռազմագիտական նշանակություն ունեցող որոշ կետեր, ինչպես, օրինակ, Կարնո քաղաքը, որը Բյուզանդիայի դեմ պայքարի կարևորագույն հենակետերից էր։ Նորակազմ ոստիկանության մայրաքաղաքը Դվինն էր, որտեղ և նստում էր արաբ ոստիկանը իր կայազորի ընտանիքների հետ, մի բան, որի մասին ակնարկում է Ղևոնդ պատմիչը[9]։

---

[7] Սեբեոս, *էջ 141։*

Բացի այս գաշնագրից, արաբները գրեթե նույն տարիներին (654) կնքված ապահովության ուխտ ունեին Դվինի բնակիչների հետ. «Սա է գիրը Հարիր իբն Մասլամայի, Դվինի քրիստոնյաներին, զրադաշտականներին ու հրեաներին, ներկաներին ու բացականերին (այն մասին), որ ապահովեցի ձեր անձերը, փողերը, եկեղեցիներն ու տաճարները և քաղաքի պարիսպները։ Դուք գտնվում եք ապահովության մեջ և մեկ պարտք է պահել այս ուխտը այնքան ժամանակ, որ դուք էլ այն կպահեք և կվճարեք գլխահարկ ու հողահարկ։ Վկա է Ալլահը, իսկ նա բավական է որպես վկա։ Beladsori, 200.

[8] Beladsori, 205.

[9] *Խոսելով 774—775 թթ. ապստամբության մասին ասում է, որ Դվինի արաբները «արք և կանայք» խուճապի էին մատնվել,* Ղևոնդ, *էջ 141։*

Այսուհանդերձ, Օմայանների օրոք (թե առաջին, թե երկրորդ շրջանում) Հայաստանի ներքին ինքնուրույնության դեմ պայքարը չուներ այն խիստ բնույթը, որ նա ստացավ Աբբասյանների օրոք: Օմայանների խալիֆայությունը արաբական էր, այնտեղ տիրողը արաբ տարրն էր, իսկ ոչ-արաբը թեկուզ և ընդուներ մահմեդականությունը, քաղաքական կյանքին դժվարությամբ կարող էր մասնակցել: Քրիստոնյա Հայաստանը կամ ընդհանրապես քրիստոնյա Արմինիան Օմայանների աչքում խորթ էր միայն որպես ոչ-արաբ, իսկ այս տեսակետից խորթ էին նաև բազմաթիվ այլ նահանգներ, այնպես որ Հայաստանը հատուկ պայքարի թիրախ չէր կարող դառնալ: Իհարկե, սա չի նշանակում, որ Օմայանները բարյացակամ էին Հայաստանի նկատմամբ: Օրինակ, 705 թ. նախարարների կոտորածը այդ չի ցույց տալիս. այնուամենայնիվ, դա ուներ սոսկ պատժիչ նպատակներ և չէր հետապնդում որևէ հեռավոր ծրագիր:

Դրությունն արմատապես փոխվեց Աբբասյանների օրոք: Պարսիկ տարրը, որը վճռական դեր էր խաղացել Օմայանների կործանման գործում, արդեն արաբների հետ սկսեց մասնակցել քաղաքական կյանքին: Այլևս չկար տարբերություն արաբի և ոչ-արաբի միջև, եթե վերջինս մահմեդական էր:

Աբբասյան համամահմեդական խալիֆայությունը հենց սկզբից կտրուկ միջոցների դիմեց հայ նախարարական ուժերի ջլատման համար: Առաջին Աբբասյանը՝ Աբու-լ-Աբբասը, որի մականունն էր Սաֆֆահ (Արյունարբու), արյան մեջ խեղդեց հայերի 747—750 թթ. ապստամբությունը[10]:

Նրա հաջորդի՝ Աբու Ջաֆար ալ-Մանսուրի իշխանության տարիները ծանր էին Հայաստանի համար: Այդ ժամանակ հարկերը Հայաստանում հասան առասպելական չափերի[11] և որպես այս անտանելի վիճակի ուղղակի հետևանք սկիզբ ա-

---

10 Ղևոնդ, էջ 127։
Մանանդյան. Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, (Քննական տեսություն, հտ. Բ, Բ) էջ 213—215։

11 Ղևոնդ էջ 127, 135։ Հ. Նալբանդյան, Արաբների հարկային քաղաքականությունը, էջ 79—81։

ւավ մի հուժկու ապստամբություն, որը մեծագույնն էր արաբների իշխանության շրջանում Հայաստանում ծագած բազմաթիվ շարժումների մեջ։

Արմենիայի կառավարիչ Հասան իբն Կահթաբան չէր կարող իր ունեցած ուժերով պայքարել ապստամբների դեմ և ահա նրան օգնության եկավ Ամր իբն Իսմայիլ զորավարը խորասանյան 30 հազար զորքով[12]։ Բագրևանդի վճռական ճակատամարտում ապստամբները կատաղի դիմադրություն ցույց տալուց հետո պարտվեցին և նրանց հետ ընկան նաև զեկավարները՝ Մուշեղ Մամիկոնյանն ու Սմբատ Բագրատունին[13]։

Ինչպես ապստամբությունը, այնպես էլ նրա ճնշումը ցնցեց ամբողջ Մեծ Հայքը։ Դա ունեցավ որոշակի հետևանքներ.

1. Մամիկոնյան տունը վերջնականապես կորցրեց իր առաջնակարգ դիրքը Հայաստանի քաղաքական կյանքում։ Նա կորցրեց իր կալվածները և միայն մնացորդները ապստամբան դառն Բյուզանդիայում և Հայաստանի այլ գավառներում։ Մամիկոնյանների քայքայման հետ բազմաթիվ իշխանական տներ լքելով իրենց գավառները գաղթեցին Բյուզանդիա[14]։

2. Մամիկոնյան տան ոչնչացման հետևանքով Հարավ-արևմտյան Հայաստանի գավառներում մնացին միայն մանր իշխանական տներ, որոնք ի վիճակի չէին ընդդիմանալու որևէ ներխուժման, ուստի ճանապարհը բաց էր արաբ գաղթականների առաջ, որոնք ներխուժեցին Հայաստանի Հարավ-արևմտյան գավառները։

2. ԱՐԱԲԱ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՈՏԻ (ՍՈՒԼՈՒԻ)

Հայաստանի արաբական շրջանի պատմության վրա վճռական ազդեցություն ունեցավ Արմենիա կուսակալության սահմանային հենակետ լինելու հանգամանքը։

Նվաճելով Բյուզանդիայի արևելյան նահանգները, արաբները թեև կանգ առան Տավրոսյան լեռնաշղթայի առջև, սա-

[12] Beladsori, 210.
[13] Ղևոնդ, էջ 150։
[14] Ա. Ալպոյաճյան, Պատմության հայ գաղթականության, Ա., էջ 226—234։

կայն երկու հզոր պետությունների միջև ոչ մի որոշակի սահման չգծվեց։ Մոտավորապես երեք հարյուր տարի գոյություն ունեցավ սահմանային ամրությունների մի երկար գոտի (արաբ. Իկլիմ ալ-սուղուր), որի բերդերն ու քաղաքները անընդհատ ձեռից ձեռք էին անցնում։ Դրանք տարածվում էին Տարսոնից մինչև Կարնս քաղաք և ըստ արաբական աղբյուրների, ընդգրկում էին երկու հիմնական շրջան՝ Ասորիքի սահմանային ամրությունների գոտին (ալ-Սուղուր-ալ-Շամիյյա) և Վերին Միջագետքի սահմանային ամրությունների գոտին (ալ-Սուղուր ալ-ջազարիյյա)[15]։ Վերջինիս էր հարում նաև Մեծ Հայքի սահմանային ամրությունների շրջանը։ Խալիֆայության համար սահմանային գոտին ուներ որոշ վարչական ինքնուրույնություն, որը հստակություն ստացավ Աբբասյանների օրոք, երբ Ասորիքի սահմանային գոտում կազմավորվեց Ավասիմ կոչված միավորը՝ Մանբիջ և Անտիոք (արաբ. Անթաքիա) կենտրոններով[16]։

Այս սահմանային գոտու շրջանում տեղի ունեցած երկարատև արյունահեղությունների մանրամասնությունները շարադրված են միջնադարյան արաբ և բյուզանդացի (ինչպես նաև հայ) պատմիչների մոտ։ Ընդհանուր գծերով դրանք ունեցել են մի քանի կարևոր շրջաններ։

Է դարում և Ը դարի առաջին քառորդում արաբներն անընդհատ առաջընթացի մեջ էին։ Ասորիքը նվաճելուց հետո Խալիդ իբն ալ-Վալիդ զորավարը գրավեց նաև Կիլիկիայի քաղաքները, իսկ Վերին Միջագետքի կողմից Իյադ իբն Ղանմը ուղարկեց Հաբիբ իբն Մասլամային (Հայաստանի ապագա նվաճողին), որը տիրացավ Մեծ Հայքի մերձեփրատյան քաղաքներին[17]։ Մուավիան նույնիսկ հարձակում գործեց Կ. Պոլսի վրա սակայն անհաջող[18]։

Թեև Է դարի երկրորդ կեսում Աբդ Ալլահ իբն ալ-Զուբայրի ապստամբության ժամանակ արաբները մի քիչ նահանջեցին,

---

[15] E. Honigmann, al-Thughūr, Enc. of Islam, IV, 738-739.

[16] Streck, al-Awāsim, Enc. of Islam, I, 515-516.

[17] Beladsori, 184.

[18] Կ. Պոլսի վրա կատարված հարձակումների մասին հիշատակում կա նաև հայկական աղբյուրներում։ Տե՛ս Սեբեոս, էջ 147—149։

սակայն Ը դարի սկզբին նրանք ավելի ուժգին գրոհով առաջ խաղացին, մանավանդ որ Աբդ ալ-Մալիք խալիֆայի օրոք Հայաստանը վերջնականապես նվաճվել էր։ Վալիդ (Հայ. Վլիթ) խալիֆայի օրոք (705—715) նրա եղբայրը Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքը անցավ Տավրոսյան լեռնաշղթան և հասավ մինչև Կ. Պոլիս։ Բյուզանդիայի նոր կայսր Լևոն Գ Իսավրացին հետ մղեց այդ վտանգավոր հարձակումը և նրա հիմնած կայսերական տունը ընդհանրապես դիմադարձ եղավ արաբների հանդուգն ասպատակություններին[19]։

Կոստանդին Կոպրոնիմոս կայսրը (741—775) կարողացավ օգտվել Օմայանների անկման տարիների խառնակ դրությունից, և գրավեց Կիլիկիայի ու մերձեփրատյան շրջանների բազմաթիվ բերդեր ու քաղաքներ, ինչպես օրինակ, Մարաշը, Մելիտինեն, Կարնո քաղաքը և այլն[20]։

Այստեղ հետաքրքրականն այն է, որ այս սահմանային շրջանում արաբները միշտ հետամուտ էին կառուցելու բերդեր և քաղաքներ, իսկ հույները միայն հարձակվում, կործանում և նահանջում էին, այնպես որ արաբ պատմիչը փոխանակ ասելու, որ հույները հարձակվեցին և գրավեցին, պարզապես ասում է՝ կործանեցին, իսկ արաբների վերադարձի մասին առանց խոսք ասելու նշում է, որ վերականգնեցին։ Հույների նպատակն էր լոկ ստեղծել մի ավերակ չեզոք գոտի, որը նրանց կանջատեր և կմեկուսացներ վտանգավոր ախոյանից, իսկ արաբները ձգտում էին այդ շրջանում իրենց կառուցած բերդերն ու ամրոցները Բյուզանդիայի դեմ մշտական հարձակումների կայաններ դարձնել։

Աբբասյանների օրոք արաբները ներխուժեցին Տավրոսյան լեռնաշղթայից այն կողմ։ Մանսուր խալիֆայի հրամանով վերակառուցվեցին Կոստանդին Կոպրոնիմոսի ավերած բերդերը, իսկ Ռաշիդի և Մամունի օրոք ամենամյա ամառային հարձակումները (արաբ. Սայիֆա) սովորական երևույթ դարձան։ 838 թ. Մուտասիմի հարձակումը Ամորիոնի (արաբ. Ամմուրիյ-

---

[10] А. А. Васильев, Византия и арабы за время Аморийской династии, стр. 14-20.

[20] Beladsori, 186, 189, 199.

յա)[21] վրա և նրա կործանումը, արաբների վերջին ռազմական մեծ միջոցառումն էր Փոքր Ասիայում։

Մակեդոնական (հայկական) հարստության ժամանակ (867—1025) Բյուզանդիան ինքն սկսեց նեղել արաբներին և մեկ դար հետո արդեն թե Կիլիկիան, թե մերձեփրատյան շրջանները բյուզանդացիների ձեռքն անցան։

Ասորիքի սահմանային ամրություններով գոտին ընդգրկում էր[22] մոտավորապես Կիլիկիան։ Այստեղ կարևորագույն քաղաքը Տարսոնն էր (արաբ. Թարսուս) Կիդնոս գետի վրա, որն ուներ կրկնակի պարիսպներ և մեծաքանակ արաբ կայազոր։ Տարսոնի դիմաց Տավրոսյան լեռնաշղթան ճեղքում էր մի լեռնանցք (Դրունք Կիլիկիոյ), որի վրայով անցնում էր Կիլիկիայից Կ. Պոլիս գնացող մայրուղին։ Սարոս գետի (Սիհուն արաբ. Սայհան) վրա գտնվում էր Ադանա քաղաքը, իսկ Կիլիկիայի մեծագույն գետի Պիրամոսի (Ջիհուն արաբ. Ջայհան) հովտում տեղավորված էին արաբների կարևորագույն բազմաթիվ ամրություններ, ինչպես օրինակ, Մոփսուեստիան (Մամեստիա արաբ. Մասիսա) դաշտային մասում, իսկ գետի հյուսիս՝ Անազարբան (արաբ. Այն Զարբա), Հարունիյյա (Հարուն ալ-Ռաշիդի կողմից հիմնադրված) և Գերմանիկեն (Մարաշ)։ Վերջինս թեև ենթարկվում էր Ասորիքի սահմանային շրջանին, սակայն որոշ պատմիչներ (օր. Բալազուրին)[23], այն դնում են Վերին Միջագետքի ամրությունների շրջանում։

Վերին Միջագետքի (Ջազիրա) ամրությունների գոտին[24] ընդգրկում էր նախկին բյուզանդական Ցրբոդ Հայքը, ինչպես նաև Սամոսատի մերձակա որոշ մերձեփրատյան շրջաններ։ Այստեղ գլխավոր քաղաքը Մելիտինեն էր (արաբ. Մալաթիա), որը գտնվում էր Եփրատի վտակ Կուբակիր գետի վրա։ Նույն գետի վրա մի քիչ վերև գտնվում էր Տերենտե (արաբ. Թարանդա) ամրոցը, իսկ Մելիտինեից հարավ կային Սոզոպետրա

[21] G. Le Strange, The lands of the Eastern Caliphate, Cambridge, 1930, p. 134-135.

[22] E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches, s. 39-43.

[23] Beladsori, 188-189.

[24] G. Le Strange, The Lands of the Eastern Caliphate, 115-123.

(արաբ. Զիբաթրա) և Հիսն Մանսուր բերդերը։ Վերջինիս հիմնադիրն էր արաբական Կայս խոշոր ցեղից Մանսուր անվամբ մի զորավար։ Դեպի արևմուտք ընկած էին Բեհեսնան և Հադաս ամրոցը (հուն. Ադատա)։ Հադասի դիմացը գտնվում է այն լեռնանցքը, որը արաբների մոտ ծանոթ էր նույն անվամբ։

Վերին Միջագետքի սահմանային գոտու հետ սերտորեն կապված էին Մեծ Հայքի արևմտյան այն գավառները, որոնք երկու հզոր պետությունների միջև արյունահեղ գոտեմարտի թատերաբեմ հանդիսացան։ Դրանք էին Բարձր Հայքի արևմտյան գավառները (Մուզուր, Եկեղեաց, Դարանաղի և այլն) և մանավանդ Արածանիից հյուսիս (օրինակ՝ Դեգիք) և հարավ (Անձիտ և այլն) գտնվող գավառները, որոնք նախկինում Չորրորդ Հայքի մասն էին կազմում։ Այս գավառներում արաբական հարձակումները հասնում էին մինչև Կամախ (արաբ. Քամախ), որի ճակատագիրը խիստ հետաքրքրական է։ Ըստ Բալազուրիի վկայության[25] է դարի կեսից մինչև Թ դարի կեսը Կամախի բերդը տասն անգամ հաջորդաբար գրավվեց արաբների և ապա հույների կողմից։ Ռազմական տեսակետից նույն դերն էին կատարում նաև Արմինիա կուսակալության մաս կազմող մի քանի քաղաքներ։ Այստեղ պետք է հիշել Շիմշաթը (Արշամաշատ), Խարբերդը (արաբ. Հիսն Զիյադ), ինչպես նաև Կարնո քաղաքը (արաբ. Կալիկալա)[26], որը հյուսիսում վերջին ռազմական կայանն էր Բյուզանդիայի դեմ մղված պայքարում։

Արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու[27] հետ սերտորեն կապված էին պավլիկյան շարժման կենտրոնները։ Հետաքրքրական է նշել, որ այս աղանդն ուսումնասիրողներից Ե. Լիպշիցը պավլիկյան շարժման ընդգրկած վայրերը թվարկելիս հիշում է ինն անուն (Արմենիակոն, Կոլո-

---

[25] Beladsori, 184-185.

[26] Ibn Hauqal, II, 343.

[27] Արաբա-բյուզանդական սահմանային գոտու բազմաթիվ տեղանուններ հիշվում են բյուզանդական դյուցազնավեպի՝ «Դիգենիս Ակրիտաս»-ի մեջ, որովհետև նրա հերոսների գործողություններից շատերը սերտորեն կապված են այս շրջանների հետ։ Տե՛ս Дигенис Акрит, пер. А. Я. Сыркина, Москва, 1950, стр. 9, 17. 21, 76.

նիա, Պիսիդիայի Անտիոք, Ամորիոն, Մելիտինե, Տեվրիկե, Սամոսատ, Մոփսուեստիա և Թրակիա)[28], որոնցից Մելիտինե, Տեվրիկե, Սամոսատ և Մոփսուեստիա անմիջականորեն գտնվում էին արաբա-բյուզանդական սահմանային գոտում, իսկ Կոլոնիան ու Ամորիոնը ենթակա էին արաբների ասպատակություններին։ Թ դարում պավլիկյաններն ավելի մոտեցան արաբական սահմանին։ Նրանց առաջնորդ Կարբեասը հիմնեց Տեվրիկե ամրոցը, Եփրատից ոչ հեռու, պաշտպանվելու համար կայսրության հալածանքներից։ Մելիտինեի մոտ էին գտնվում նաև պավլիկյանների մյուս երկու հայտնի կենտրոնները՝ Արգավանն ու Ամարան։

Անընդհատ պատերազմները մեծ վնաս հասցրեցին արաբա-բյուզանդական սահմանային գոտու ազգաբնակչությանը (հայեր, ասորիներ և այլն), որոնց փոխարեն խալիֆայությունը բերեց նոր տարրեր՝ արաբներից և այլ ժողովուրդներից, ինչպես օրինակ, թուրքական և նույնիսկ հնդկական ցեղերից (Զութ)։ Ըստ Բալազորու[29] է դարում Արդ Ալլահ իբն ալ-Զուբայրի ապստամբության ժամանակ, երբ արաբները Մելիտինեն թողել էին հույների ձեռքը, քաղաքը լցվեց հայերով, որոնք երկար ժամանակ այն իրենց ձեռքում պահեցին։ Խալիֆայության բերած բոլոր ռազմիկ տարրերի մեջ առաջին հերթին աչքի էին ընկնում Կայս ցեղի արաբները, որոնք հոծ զանգվածներով տեղավորված էին Հարեան Ջազիրայում և վճռական դեր խաղացին հակաբյուզանդական պայքարում։

Արաբա-բյուզանդական երեքհարյուրամյա պատերազմները վճռական նշանակություն ունեցան Հայաստանի ճակատագրի վրա, քանի որ նա Բյուզանդիայի դեմ ռազմական կարևորագույն պատվարներից մեկն էր։ Բյուզանդիայի սահմանի վրա գտնվող արաբական նահանգները երեքն էին՝ Ասորիքը (ավելի ճիշտ՝ նրա հյուսիսային մասը—Կիննասրինը), Վերին Միջագետքը (Ջազիրան) և Հայաստանը (այսինքն Արմինիան),

---

[28] Е. Э. Лишин, Павликианское движение в Византии в VIII и первой половине IX вв., Византийский Временник, V, 1952, стр. 62-63.

[29] Beladsori, 185.

Սակայն Արմինիան ռազմական կարևորագույն հենակետ էր նաև խազարների հարձակումների դիմաց։ Խազարական հզոր պետությունը, որը մի ժամանակ (Զ դարում) սպառնում էր Սասանյան Իրանին, է—Ը դարերում խալիֆայությանը ստիպում էր իր ուժերի մի մասը կենտրոնացնել Աղվանքում և նրա հյուսիսում գտնվող Դերբենդի (արաբ. Բաբ ալ-Աբվաբ) շրջանում[30]։

Ահա այս ռազմական բացառիկ նշանակությունը, որն ուներ Արմինիա նահանգը Բյուզանդիայի, ինչպես նաև խազարների դեմ մղված պայքարում արաբական խալիֆայության համար առավել ևս այժմեական և հրամայական դարձրեց երկիրը արաբ ռազմիկ տարրով բնակեցնելու հարցը։ Պատահական չէ, որ արաբական ցեղերը հաստատվեցին Հայաստանի այն գավառներում, որոնք մոտ էին բյուզանդական սահմանին և այսպես կոչված «Զորրորդ Արմինիայի» մասն էին կազմում։

3. ԱՐԱԲԱԿԱՆ ՑԵՂԵՐԸ ՎԵՐԻՆ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ։ ՇԱՅԲԱՆԻՆԵՐԸ

Վերին Միջագետքը կամ ինչպես արաբներն էին կոչում Ջազիրան (կղզի) արաբական շրջանում վճռական ազդեցություն ունեցավ Հայաստանում քաղաքական կյանքի զարգացման ընթացքի վրա։ Դեռ Դ դարի վերջից (387 թ. դաշնագրով) Մեծ Հայքի թագավորությունից խլվել և Միջագետքին էին միացվել երկու հայկական նահանգներ՝ Աղձնիքն ու Կորճայքը[31]։ Ուստի Վերին Միջագետքի նվաճումը փաստորեն սկիզբ կդներ հենց Մեծ Հայքի նվաճմանը։ 639—640 թթ. Իյադ իբն Ղանմի արաբ զորավարը Ասորիքի կողմից մտավ Միջագետք և գրավեց Ռակկա (Կալինիկում) քաղաքը, ապա ուղղվեց դեպի Եդեսիա։ Իրար հետևից ընկան Մծբինը, Դարան, Տուր Աբդին և մյուս քաղաքները[32]։ Ամիդն ու Նփրկերտը ընկան առանց դի-

30 J. H. Kramers, Les Khazars, Analecta Orientalia. I. Leiden, 1954 М. И. Артамонов, История Хазар, Ленинград, 1962, стр. 202-226, 241-246.

31 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության համար. Բ, մասն Ա, էջ 240։

32 Chronique de Denys de Tell-Mahre, IV, publ. par Chabot, Paris, 1895, p. 6.

մարդության և, այսպիսով, արաբները ոտք դրեցին Մեծ Հայքի սահմանները։ Ինչպես երևում է Իյադին ենթարկվեցին նաև Կորճայքի Կորդուք և Տմորիք գավառները, իսկ Անձևացյաց իշխանը (Սահիբ ալ-Ջաուազան) հնազանդություն հայտնեց նրան[33]։

640 թ. Իյադը Բաղեշի Զորա պահակ լեռնանցքով մտավ Հայաստան և ասպատակեց մինչև Դվին։ Վերին Միջագետքի նվաճմանը մասնակցում էր նաև Հայաստանի ապագա նվաճող Հաբիբ իբն Մասլաման, որը Սուլայմ ցեղից Սաֆուան իբն Մուաթթալի հետ բարձրացավ Եփրատի հոսանքն ի վեր մինչև Կամախ։

Վերին Միջագետքի նվաճմանը անմիջապես հաջորդեց նրա բնակեցումը արաբական ցեղերով։ Ստորին Միջագետքը, որն արաբների մոտ կոչվում էր Իրաք, նախքան նվաճումները լցվել էր արաբական վաշկատուն ցեղերով։ Դեռ Գ դարում Եփրատի հովտում տեղավորվել էին հարավային խմբին[34] պատկանող Լախմ և Տաննուխ ցեղերը։ Իսլամի երևան գալու նախօրեին Իրաքում բացի նրանցից տեղ էին գրավել նաև հյուսիսային խմբի Ռաբիա ենթախմբին պատկանող Տաղլիբ և Բաքր ցեղերը։ Իսլամի տարածման և արաբական առաջին նվաճումների տարիներին Բաքր բազմամարդ ցեղը և մանավանդ նրա Շայբան ստորաբաժանումը մեծապես նպաստեց խալիֆայության հաջող առաջընթացին, մինչդեռ Տաղլիբ ցեղը մնաց քրիստոնյա։

Նվաճումների ալիքը շարժեց Տաղլիբ և Բաքր ցեղերին, որոնք մտան Վերին Միջագետք։ Տաղլիբը հաստատվեց Մուսուլի շրջանում, որը կոչվեց Դիար (երկիր, տուն) Ռաբիա, իսկ Բաքրը[35] (մանավանդ Շայբանը) ուղղվեց դեպի Տիգրիսի վերին հոսանքը և տեղավորվեց Ամիդի շուրջը տիրելով հայկական Աղձնիք նահանգին։ Բաքր ցեղի անվամբ այս կողմերը

---

33 Beladsori, 176.

34 Արաբական ցեղերը բաժանվում էին երկու մեծ խմբի՝ հարավային կամ Եմենի և հյուսիսային։ Հյուսիսայինն ուներ երկու ենթախումբ՝ Ռաբիա և Մուդար։ Ռաբիան ուներ Բաքր և Տաղլիբ մեծ ցեղերը, իսկ Մուդարի մեջ էր կայս մեծ ցեղը, որի մի ստորաբաժանումն էր Սուլայմը։

35 W. Caskel, Bakr b. Wa'il, Enc. de l'Islam' nouv. ed., I, 992-994.

կոչվեցին Դիար Բաքր, որով մինչև այժմ կոչվում է Ամիդ քաղաքը (Դիարբեքիր)։ Վերին Միջագետքի այն մասը, որը ծանոթ էր Միջագետք Ասորվոց կամ Օսրոյենե անվամբ բնակեցվեց մի այլ արաբական մեծ ցեղի՝ Կայսի (ավելի ճիշտ է Կայս-այլան) կողմից, որի բաղկացուցիչ ցեղերը այստեղ հասան Պաղեստինի ու Ասորիքի ճանապարհով։ Իսլամի երևան գալուն և տարածմանը զուգընթաց Կայս ցեղախումբը (կամ մեծ ցեղը) ուղղվեց դեպի հյուսիս, սակայն Ասորիքում նրա միայն փոքր մասը մնաց, իսկ հոծ զանգվածը անցավ Եփրատը։ Նրա գրաված հողերը Վերին Միջագետքում կոչվեցին Դիար Մուդար[36], քանի որ Կայսը պատկանում էր Մուդար ենթախմբին։

Կայս ցեղերն անվերջ ընդհարումների մեջ էին Ասորիքում հաստատված արաբական ցեղերի հետ, որոնք մեծ մասամբ հարավային (Եմենի) խմբին էին պատկանում և առաջին հերթին Քալբ ցեղի հետ։ Այս միջցեղային ընդհարումները ճակատագրական նշանակություն ունեցան օսմանյան շրջանի պատմության վրա, քանի որ օսմանյան խալիֆաները հենվում էին մերթ Քալբի, մերթ էլ Կայսի վրա[37]։

Արաբական ցեղերի հաստատումով տեղական տարրը չանհետացավ կամ էլ արաբները մի անգամից բնակչության ջախջախիչ մեծամասնությունը չկազմեցին, այլ պարզապես տիրապետող տարր դարձան։ Ջազիրայի ազգաբնակչությունը խայտարղետ էր և բացի արաբներից կային նաև ասորիներ, հայեր, քրդեր, հրեաներ և այլն։ Արաբ տարրի ուժեղացմանը նպաստեց տեղական ասորի ազգաբնակչության արաբացումը։ Նրա մի մասը ընդունեց իսլամը, սակայն արաբերենն էր, որ մեծագույն նվաճումներ էր կատարում։ Թ դարում արաբերենը Վերին Միջագետքում խոսակցական լեզու դառնալուց հետո մտել էր նույնիսկ ասորի եկեղեցական մատենագրության մեջ։ Օրինակ, քաղկեդոնիկ ասորի քարոզիչ Թեոդորոս Աբու Կուրրան, երբ եկավ Հայաստան, հակոբիկ ասորիները նրա դեմ ուղարկեցին Նանա սարկավագին, որը Թեոդորոսին չեղոքացնելուց հետո Բագարատ Բագրատունու խնդրանքով գրեց Հով-

---

36 G. Le Strange, The Lands of the Eastern Caliphate, 101-108.

37 Ա. Մյուլեր, История ислама, II, 114-116.

հանում Ավեստարանի արարերեն մեկնությունը, որը հետո հայերեն թարգմանվեց[38]։

Արաբական տիրապետության տակ Ջազիրան հանդես էր գալիս որպես խալիֆայության բաղկացուցիչ կուսակալություններից (կամ նահանգներից) մեկը։ Նա բաղկացած էր երեք մասերից՝ Դիար Ռաբիա, Դիար Մուդար և Դիար Բաքր։ Դիար Ռաբիան ընդգրկում էր Տիգրիսի միջին հոսանքը և հյուսիսից սահմանակից էր Հայաստանին, քանի որ նրա մեջ էին մտնում Կորճայքի որոշ գավառները (Կորդուք, Տմորիք և այլն)։ Նրա կենտրոնն էր Մուսուլ քաղաքը, որը միաժամանակ ամբողջ Ջազիրայի մայրաքաղաքն էր։ Դիար Մուդարը ընդգրկում էր Եփրատի միջին հոսանքը Կիրկեսիոնից մինչև Սամոսատ, իր մեջ ունենալով Եդեսիա, Խառան և այլ քաղաքներ։

Ջազիրայի երրորդ մասը՝ Դիար Բաքրը մյուսներից ավելի սերտ էր կապված Հայաստանի հետ։ Նրա վարչական կենտրոնը Ամիդ քաղաքը Հայաստանից եկած մթերքների կարևոր կայան էր և նույնիսկ քաղաքի չորս դարպասներից մեկը (հյուսիսայինը) կոչվում էր Հայոց դուռ (Բաբ ալ-Արման[39]) Աղձնիքի Նփրկերտ քաղաքը արաբների մոտ կոչվում էր Մայաֆարիկին։ Աղձնիքի կարևոր քաղաքներից էին Արզնը և Բաղեշը։ Դիար Բաքրի սահմանների մեջ էին մտնում մանր քաղաքներ Անհիլ (հայ. Անկղ) և Հանի Նփրկերտից արևմուտք, իսկ Սղերդ և Խիզան գետի արևելք։ Տիգրիսից հարավ գտնվում էր Հիսն Քայֆան (հուն. Կիֆա)։

Դիար Բաքրում իշխում էր Շայբան ցեղը, որի ամիրաները կարևոր դեր խաղացին ոչ միայն Ջազիրայի, այլև Արմինիայի և Ատրպատականի քաղաքական կյանքում։ Դեռ իսլամի երևան գալու ժամանակ այս ռազմունակ ցեղի առաջնորդ Մուսաննա իբն Հարիսան[40] նպաստեց արաբական զենքի հաջողությանը Իրաքում։ Ընդհանրապես հարևան ցեղերի վրա կատարած ասպատակություններով հայտնի այս ցեղը, աստիճանաբար

---

38 Ն. Ակինեան, Մատենագրական հետազոտութիւններ, Վիեննա, 1922, էջ 115—163։

39 Le Strange. The Lands of the Eastern Caliphate, p 109.

40 А. Мюллер. История ислама, 1, стр. 251.

բարձրանալով Տիգրիսի հոսանքն ի վեր, հասավ մինչև Աղձնիք, որից հետո հյուսիս-արևմուտքում արդեն սկսվում էր Վերին Միջագետքի սահմանային ամրությունների գոտին, որի մեջ Դիար Բաքրին մերձավոր շրջանը նույնիսկ կոչվում էր Դիար Բաքրյան սահմանային ամրությունների գոտի (ալ-սուղուր ալ-Բաքրիյյա)[41]։ Վերջինս հասնում էր մինչև Ծովք լեռը և Տլուք (արաբ. Դլուք)։

Այս ամիրայական տնից նշանավոր էր Մաան իբն Զաիդա ալ-Շայբանին[42], որը Օմայանների վերջին օրերին կռվել էր Աբբասյանների դեմ։ Աբբասյանների օրոք փրկելով Մանսուր խալիֆայի կյանքը նորից դիրքի տիրացավ և նշանակվեց Եմենի կառավարիչ, մի պաշտոն, որը վարեց նաև նրա որդին՝ Զաիդան։

Շայբանի ամիրաներից առաջինը, որ Արմինիայում կառավարիչ նշանակվեց Մաանի եղբորորդի Եզիդ իբն Մազյադ իբն Զայիդա ալ-Շայբանին[43] էր, որը Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք (786—809) երկու անգամ այս պաշտոնին նշանակվեց։ Դա այն ժամանակաշրջանն էր, երբ խալիֆայությունը Հայաստանի նկատմամբ խիստ քաղաքականություն էր վարում և բացի դրանից ձգտում էր ամեն կերպ երկիրը բնակեցնել արաբ տարրով։ Եզիդի (արաբ. Յազիդ) կառավարչության առաջին շրջանի (787—788) համար Յակուբին[44] վկայում է, որ սա Ռաբիա ցեղախմբից (հավանաբար հենց Բաքր, այսինքն Շայբան ցեղից) այնքան արաբ բնակեցրեց Արմինիայում, որ նրանք արդեն մեծամասնություն կազմեցին։ Այդ գաղթականները հաստատվեցին հավանաբար ոչ թե Հայաստանում, այլ Շիրվանում, որտեղ Եզիդի հետնորդներն իրենց ժառանգական իշխանությունը հաստատեցին Թ դարում։ Դրասխանակերտցու վկայությամբ[45] նա Հայաստանում խիստ վերաբերմունք ցուցաբերեց նույնիսկ կողոպտելով վանքերի եկեղեցական սպաս-

---

41 Honigmann, Ostgrenze, 43.

42 K. V. Zettersteen, Mān ibn Zāida. Enc of Islam. III, 225.

43 Ibn Challikan, III, 297. Նրա մասին մի մենագրություն լույս տեսավ Բեյրութում 1961 թ.։ Al-Djumard ghurrat al-arab Yazid ibn Mazyad.

44 Jaqubi, II, 515.

45 Դրասխանակերտցի, էջ 61—62։

ները։ Նրա խստության մասին է վկայում նաև արաբ պատմիչը։

Արմինիայից հեռացվելուց հետո Եզիդը ուղարկվեց իր ցեղակից ալ-Վալիդ իբն Թարիք ալ-Շայբանիի ապստամբությունը ճնշելու։ Վերջինս Մծբինի կողմերում ապստամբների մի մեծ զորք էր հավաքել և որոշ նեղություն պատճառեց խալիֆայի զորքերին, սակայն Եզիդը համառ պայքարում կարողացավ սպանել իր ապստամբ ցեղակցին[46]։

Երրորդ անգամ Եզիդը կառավարիչ նշանակվեց 799 թ., երբ խաղարները հարձակվել էին և նրա իշխանության տակ էին ոչ միայն Արմինիան, այլև Ատրպատականը[47], նա հաջողությամբ նա մղեց խաղարներին։

Եզիդի մահվանից հետո (801) հաջորդեց որդին՝ Ասադը, որը միաժամանակ նաև Մուսուլի կառավարիչ էր և ապա մյուս որդին՝ Մուհամմադը (802—803)։ Վերջինս տիրելով Շիրվանի Շամախի ամրոցին, ամրացավ այդ նահանգում և արդեն Ադվանքի արևելյան մասը նրանց համար դարձավ մի ժառանգական կալված։

Ամին խալիֆայի օրոք (809—813) Ասադ իբն Եզիդ իբն Մազյադը նշանակվեց Արմինիայի կառավարիչ, երբ Վրաստանում ապստամբել էին արաբ մուտաղալլիբներ (ապստամբներ) Յահիա իբն Սաիդը (Քաուբար ալ-Սուբհ) և Իսմայիլ իբն Շուայբը։ Ասադը սրանց նախ ձերբակալեց, ապա բաց թողեց, որի պատճառով էլ հեռացվեց պաշտոնից[48]։

Եզիդի երրորդ որդին՝ Խալիդը չորս անգամ Արմինիայի կառավարիչ էր նշանակվել[49]։ Առաջին անգամ նա այդ պաշտոնին նշանակվեց Մամուն խալիֆայի իշխանության (813—833) առաջին տարում։ Այս շրջանում նա շատ մեղմ էր վարվում նախարարների հետ և նրանց հետ անձամբ բարեկամական հարաբերությունների մեջ լինելով ընծաներ էր վերցնում։ Իր կառավարչության երկրորդ շրջանում (828—832) նա պայքարեց

---

46 Ibn Challikan, III, 103.

47 Zambaur, 177.

48 Jaqubi, II, 528.

49 Հ. Նալբանդյան, Արաբ ոստիկանները Հայաստանում, «Տեղեկագիր» (Հասարակ. գիտ.), 1956, 8, էջ 117—121։

Արմինիայում գլուխ բարձրացրած ըմբոստ ուժերի դեմ, Վրաստանում հնազանդեցրեց Մուհամմադ իբն Ատտաբին, իսկ Հայաստանում՝ Սևադա իբն Աբդ ալ-Համիդին, ինչպես նաև Նախճավանում՝ Եզիդ իբն Հիսնին[50]: Նա ահ ու սարսափ էր թե տեղական ժողովուրդների, թե տեղում հաստատված արաբ ըմբոստ տարրերի (մուտաղալլիբ) համար:

Մուտասիմ խալիֆայի օրոք (833—842) խալիդը երրորդ անգամ նշանակվեց Արմինիայի կառավարիչ (841), բայց որովհետև հենց նրա գալուստը երկրում ապստամբություն առաջացրեց, ուստի խալիֆան նրան անմիջապես ետ կանչեց: Չորրորդ անգամ նշանակվեց (842—845) Վասիկ խալիֆայի կողմից և այս անգամ արդեն եկավ մի բանակով և զսպեց ապստամբ մահմեդական տարրերին: Թաղվել է Դվինում[51]:

Նրան հաջորդեց որդին Մուհամմադը (845—849), որը հրով ու սրով նվաճեց երկիրը և կռվեց Տփղիսի ամիրա Իսհակ իբն Իսմայիլի ու ծանարների դեմ:

Շայբանիները սերտորեն կապված էին Արմինիայի հետ, ոչ միայն Աղձնիքի իրենց կալվածների շնորհիվ, այլև Շիրվանի տիրույթների պատճառով, որոնք արդեն հենց Արմինիայի մեջ էին: Մուհամմադի եղբայրը Հայսամը որպես Շիրվանի տեր արդեն կրում էր Շիրվանշահ անունը[52] և նրա հետնորդները ժառանգաբար իշխեցին Շիրվանում և պատմության մեջ հայտնի են որպես Մազյադիների հարստություն: Արաբական իշխանության թուլացումից (861) հետո նրանք իշխեցին որպես անկախ ամիրաներ մինչև 1027 թ., երբ նրանց փոխարինեցին Շիրվանում Քեսրանիները:

Մուհամմադ իբն Խալիդը, ինչպես երևում է, մնացել էր Դիար Բաքրի տիրույթներում և Բուղայի արշավանքից հետո (857) նորից է նշանակվում Արմինիայի կառավարիչ: Նրա երրորդ անգամ (878) այս պաշտոնին նշանակվելու մասին Թովմա Արծրունին որոշ տեղեկություններ է տալիս: Սա թեև փորձեց Ապահունիքի կայսիկ Աբու-լ-Վարդի և այլոց հետ դաշ-

---

50 Jaqubi, II 565.

51 Minorsky, A History of Sharvan, (arab).

52 Zambaur, 183-184.

նակցած մեջտեղից վերացնել Աշոտ իշխանաց իշխանին, բայց հաջողություն չգտավ և Աշոտի կողմից վտարվեց Հայաստանից[53]։ Մուհամմադ իբն Խալիդը վերջին Շայբանի ամիրան էր, որ Հայաստանում կառավարչի պաշտոն վարեց։

Թ դարի կեսերին Դիար Բաքրում երևան եկավ Շայբանի ամիրաների մի նոր ճյուղ, որն իշխեց մինչև հաջորդ դարի սկզբները։ Դրանցից լավ հայտնի է Իսա իբն ալ-Շայխը, որը նշանավոր դեմք էր խալիֆայության մեջ։ Սա նախ Ասորիքի (Շամ) կառավարիչ էր, ապա խալիֆայի կողմից պաշտոնանկ արվեց և ուղարկվեց Արմինիա։ Թեև սկզբում դիմադրեց, բայց պարտություն կրելով ստիպված դնաց Արմինիա[54]։

Ըստ իբն ալ-Ասիրի, նա իշխում էր Արմինիայում և Դիար Բաքրում։ Նա պաշտոնավարել է նախքան իր ցեղակցի Մուհամմադ իբն Խալիդի երրորդ անգամ պաշտոնի անցնելը (870-ական թվ.)։

Նրա որդին Ահմադը ոանձգություններ ցուցաբերեց թե իրենց հարևան Արղնի Զուրարա ընտանիքի և թե նույնիսկ Հայոց նորակազմ թագավորության նկատմամբ, սակայն նրա որդին Մուհամմադն արդեն խիստ պարտություն կրեց խալիֆայից, որից հետո Շայբանիները կորցրեցին ոչ միայն իրենց կարևոր քաղաքական դիրքը, այլև մեծ չափով Դիար Բաքրի կալվածները[55]։

4. ԱՐԱԲՆԵՐԻ ԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆ։ ՍՈՒԼԱՅՄ ՑԵՂԸ

Մեծ Հայքի առաջին նահանգը, որտեղ արաբները հաստատվեցին որպես բնակիչներ, Աղձնիքն էր, ուր արաբ տարրը տիրապետող էր և մեծ թվով հաստատվել էր քաղաքներում, ինչպես օրինակ՝ Նիրիկերտում, Ամիդում, Արզնում և Բաղեշում։ Սակայն ինչպես աղբյուրների վկայությունից երևում է, Շայբան ցեղը կամ ընդհանրապես Ռաբիայի ցեղերից որևէ մեկը զանգվածաբար չէր հաստատվել Հայկական Տավրոսից այս

---

53 Թովմա, էջ 218—222։

54 Ibn al-Athir, VII, 164-165.

55 Isa b. al-Shaikh, Enc. of Islam, II, 527.

կողմ։ Անցնելով Ջորա պահակ լեռնանցքից Շայբանիները տիրել էին միայն Դատվանին՝ Վանա լճի ափին[56]։

Հայաստանում արաբական ցեղերի հաստատումը ունել ռազմական և քաղաքական նպատակներ։ Դա ոչ միայն հնազանդ վիճակում կպահեր Արմինիան, այլև մանավանդ ռազմական առաջնակարգ նշանակություն կունենար Բյուզանդիայի և խազարների դեմ պայքարի համար։ Ռազմական հաջող արշավանքների համար բացի արաբ զորքերից Արմինիայում անհրաժեշտ էր նաև արաբ ռազմունակ ցեղերի ներկայությունը, որոնք հարկ եղած դեպքում կարող էին անմիջապես օգնության հասնել թարմ ուժերով։

Եթե մինչև Ը դարի վերջերը Հայաստանում արաբ տարրը դեռ չէր հաստատվել, դրա պատճառն այն էր, որ Բյուզանդիային սահմանամերձ մյուս երկու նահանգներում (Ասորիք և Ջազիրա) արդեն է դարից արաբական ցեղերը ոտք էին դրել։ Սակայն ժամանակի ընթացքում երևաց, որ Հայաստանում եւ հարկավոր է ունենալ արաբների որոշ զանգված, մանավանդ 774—775 թթ. հուժկու ապստամբությունից հետո։

Խազարների դեմ հաջող ինքնապաշտպանության կազմակերպման համար խալիֆայությունը արաբական ցեղեր էր տեղափոխել Աղվանքի որոշ մասերը և մանավանդ Դերբենդ որտեղ մեծ թվով արարներ էին հաստատվել արաբական տիրապետության հենց սկզբնական շրջանից[57]։

Սակայն Բյուզանդիայի դեմ մղված պայքարի համար արաբական ցեղերը հաստատվեցին բուն Հայաստանի հողի վրա։ Շատ հատկանշական է, որ Հայաստանում հաստատվեց հենց Սուլայմ ցեղը, որը արաբա-բյուզանդական սահմանային գոտում մղված մարտերում վճռական մասնակցություն ուներ և տեղափոխվեց Հայաստանի հենց այն գավառները, որոնք սահմանամերձ էին Բյուզանդիային՝ Բաղեշից մինչև Կարնո քաղաք։

Արաբական նվաճումների սկզբից Սուլայմ ցեղը գործոն մասնակցություն ունեցավ Մեծ Հայքի արևմտյան նահանգնե-

---

56 Թովմա, էջ 218։

57 Beladsori, 207.

ում Բյուզանդիայի դեմ մղված կռիվներում։ Վերին Միջագետքի նվաճման ժամանակ Իյադ իբն Ղանմը Հաբիբ իբն Մասլամային և Սաֆուան իբն Մուաթթալ ալ-Սուլամիին ուղարկեց Եփրատն ի վեր բյուզանդական զորքերին հետ մղելու համար։ Նրանք գրավեցին Շիմշաթը, ապա բարձրացան մինչև Կամախ, որը չկարողացան նվաճել ոչ Հաբիբը, ոչ էլ Սաֆուանը, բայց մի ուրիշ Սուլամի՝ Ումայր իբն ալ-Հուբաբը կարողացավ գրավել Կամախը[58]։

Օմայանների օրոք հիշվում է Մանսուր իբն Ջաուանան Կայս ցեղից, որի անվամբ կոչվում էր Մելիտինեից հարավ գտնվող Հիսն Մանսուր ամրոցը։ Բալազուրին վկայում է, որ Կոստանդին Կոպրոնիմոսի մեծ հարձակման ժամանակ Կամախը գտնվում էր Սուլայմ ցեղից մի զորավարի ձեռքում[59]։

Աբբասյանների օրոք, երբ արաբների հարձակումները կատաղի բնույթ ստացան, Արմինիայում որպես կառավարիչ հայտնի դարձավ Եզիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին, որի ընտանիքից մի քանի հոգի ժառանգաբար այդ պաշտոնը վարեցին։ Ըստ Բալազուրիի, նրա մայրը Սիսականի Պատրիկի դուստրն էր, որին Մուհամմադ իբն Մրվանի արշավանքի ժամանակ գերեվարել էին[60]։ *Եզիդը վերազրավեց Կարնո քաղաքը, որը Կոստանդին Կոպրոնիմոսը նվաճել էր և հայ բնակիչներին պարտավորեցրեց իր տեղավորած արաբ ռազմիկների նյութական կարիքների հոգը տանել*[61]։ *Սրա ժամանակ Հայոց իշխան նշանակվեց Սահակ Բագրատունին։ Եզիդը, որը երեք անգամ նշանակվեց Արմինիայի ոստիկան (752—754, 759—770 և 775—780) խալիֆաների դեմ պայքարի լավագույն կազմակերպիչներից էր։ Բացի Արմինիայից, նա կառավարել էր նաև Ջազիրան։*

Ը դարի վերջին տարիների համար Յակուբին հիշում է Եզիդի երկու որդիներին, որոնք հաջորդաբար իշխեցին Արմինիայում՝ Խալիդ իբն Եզիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին (794) և Ա-Հ-

---

58 Beladsori, 184.
59 Beladsori, 186.
60 Beladsori, 205.
61 Ղևոնդ, էջ 130։

մադ իբն Եզիդ իբն Ուսայդ ալ-Սուլամին (796—797)[62]։ Վերջինիս որդին՝ Աբդ ալ-Ալա իբն Ահմադ ալ-Սուլամին երկու անգամ իշխեց Արմինիայում (825—826 և 829) և արաբ պատմիչի կողմից որակվում է որպես անկարող կառավարիչ[63]։ Այս Աբդ ալ-Ալայի որդին Յակազանը մասնակցում էր Բյուզանդիայի դեմ մղվող պատերազմին և Զիբաթրայի (Սոդոպետրա) առջև մղվող մարտերում վիրավորվեց[64]։

Սակայն բացի Եզիդ իբն Ուսայդի ընտանիքից Արմինիայում կառավարչի պաշտոն էին վարել նաև Սուլայմ ցեղի այլ անդամներ։ Մեկ ծանոթ է Յուսուֆ իբն Ռաշիդ ալ-Սուլամին (787), որը նպաստեց արաբական ցեղերի Հայաստան կատարած գաղթին[65]։ Սուլայմ ցեղից էին համարվում նաև Ջահհաֆյանները, որոնց մասին մանրամասն կտեսնենք իր տեղում։

Սուլայմ ցեղից արաբ ոստիկանները բնականաբար պիտի նպաստեին իրենց ցեղակիցների Հայաստան ներթափանցմանը։ Դժբախտաբար հայ պատմիչները Ը դարի վերջում Հայաստան բերված արաբ գաղթականությունների մասին շատ քիչ են խոսում։ Այս գաղթի մասին արժեքավոր տվյալներ է հաղորդում Թ դարի արաբ պատմիչ և աշխարհագիր Յակուբին։ Նա Հայաստանի ոստիկան Ուադիհի ընտանիքից էր և Հայաստանի արաբ գաղթականների հարցը նրան պետք է հետաքրքրած լիներ նամանավանդ այն տեսակետից, որ ինքը անձամբ եղել էր Հայաստանում։

Գաղթի հոսանքը սկսվում է Հարուն ալ-Ռաշիդի օրոք (786—809)։ Արաբ պատմիչը խոսելով Հայաստանի մասին հետևյալն է հաղորդում. «Ապա Ռաշիդը (ոստիկան) նշանակեց Յուսուֆ իբն Ռաշիդ ալ-Սուլամիին՝ Խուզայմա իբն Խազիմի փոխարեն։ Սա (այս) երկիրը տեղափոխեց նիզարի մարդկանց և (մինչ այդ) եմենցիներն էին Արմինիայում մեծամասնություն կազմում, իսկ Յուսուֆի օրոք շատացան նիզարիները։ Ապա (Հարուն ալ-Ռաշիդը) նշանակեց Եզիդ իբն Մազիադ իբն Զաիդա ալ-Շայբանիին և սա ամեն կողմից այս-

[62] Jaqubi, II, 515-516.
[63] Jaqubi, II, 565.
[64] Beladsori, 192.
[65] Jaqubi, II, 515.

տեղ բերեց Մարիա (ցեղերին) այնքան (շատ), որ նրանք այս-օր մեծամասնություն են կազմում և երկիրը զսպեց ամենախիստ կերպով, այնպես որ ոչ ոք չէր հանդգնի շարժվել։

Դրանից հետո եկավ Աբդ ալ-Քարիր իբն Աբդ ալ-Համիդը, որը Զայիդ իբն ալ-Խաթթաբ ալ-Ադավիի տոհմից էր, որի բնակավայրը Խաուանն էր։ Սա Դիար Մուդարի մարդկանց բազմությամբ եկավ շորս ամիս միայն մնաց և հեռացավ»[66]։

Յակուբիի այս խոսքերից երևում է, որ Արմինիա էին բերվել առաջին հերթին հարավային՝ Եմենի ցեղերը։ Թեև հայտնի չէ թե նրանք Արմինիայի ո՞ր մասում էին տեղավորվել, բայց հավանական է, որ Հայաստանում ևս մի փոքրաթիվ եմենցի գաղթականություն եղած լիներ։ Հյուսիսային և հարավային ցեղերի միջև դարավոր թշնամությունը շարունակվում էր նաև Արմինիայի հողի վրա այն աստիճանի, որ կառավարիչ Եզիդ իբն Մազիադ ալ-Շայբանին ստիպված եղավ նիզարիներին և եմենցիներին իրար հետ հաշտեցնել։

Հենց Հարուն ալ-Ռաշիդի օրոք հյուսիսային խմբի ցեղերը տիրապետող դիրք էին գրավել Հայաստանի արաբ գաղթականության մեջ։ Ինչպես տեսանք, Հյուսիսային ցեղային խմբի ստորաբաժանումներից են Մուդար և Ռաբիա ցեղախմբերը, իսկ Մուդար ցեղախմբի մի ճյուղն էր Կայս-այլանը, որի մի ցեղն էր Սուլայմը[67]։ Հյուսիսային և հարավային ցեղախմբերի միջև գոյություն ունեցող կատաղի առեղծությունն այն աստիճանի ուժեղ ու խորն էր, որ Հայաստանում կայսի ցեղերի հաստատվելուց հետո եմենի փոքրաթիվ գաղթականության նույնիսկ հետքը չի մնում[68]։

Աղձնիքը, որը Զազիրա ստանիկանության մասն էր կազմում, դարձավ այն կամուրջը, որով հյուսիս-արաբական տարրերը մտան Մեծ Հայք։ Նախ ինքը՝ Աղձնիքը լցվել էր Շայբանիներով, որոնք Բաքր ցեղից էին (Ռաբիա ցեղախմբից) և ապա

---

[66] Jaqubi, II, 515.

[67] Sulaim b. Mansur, Enc. of Islam, III, 518.

68 Հետաքրքրական է նշել, որ Հյուսիսային խմբից էր նաև Մեքքայում տիրող Կուրայշ ցեղը, որից սերել էր հենց Մուհամմադ մարգարեն, և երբ վերջինիս Մեքքայում հալածեցին, նա ապաստան գտավ Մադինայի արաբների մոտ, որոնք հարավային ծագում ունեին։

նույն Աղձնիքի վրայով Կայս-այլան ճյուղի Սուլայմ ցեղի մի հատվածը (կայսիկներ) եկավ և հաստատվեց Վանա լճի շրջակա գավառներում։ Սուլայմ նշանավոր ցեղը[69] նախքան իսլամը ապրում էր Մեքքայի և Մադինայի միջև ընկած տարածության մեջ և է դարի նվաճումների ժամանակաշրջանում դուրս գալով տարածվեց դեպի Միջագետք, Հյուսիսային Աֆրիկա և այլուր։

Ի մի ամփոփելով մեր տվյալները, տեսնում ենք, որ Հայաստանում կամ մերձակայքում հաստատված արաբական ցեղերի տոհմաբանությունը հետևյալ պատկերն ունի.

Հայտնի չէ թե հարավային ծագում ունեցող ցեղերից (Ղասան, Լախմ, Տաննուխ, Քալբ և այլն), ո՞ր մեկին էին պատկանում Հայաստանում (կամ Արմինիայի այլ մասերում) նախապես հաստատված առաջին գաղթականները, որոնք հավանաբար պետք է Ասորիքից եկած լինեին։

Հյուսիսային ցեղերի երկու ցեղախմբերից (Ռաբիա և Մուդար) էլ գաղթականություններ կային Մեծ Հայքում։

1. Ռաբիայի սատրարածանումը հանդիսացող Ռայլն ուներ երկու ցեղ՝ Բաքր և Տաղլիբ։ Բաքրից սերող Շայբանը գրաղեցրել էր բուն Աղձնիքը։ Հավանաբար նույն Բաքր ցեղից էին նաև Արզնում հաստատված Ջուրարիկները։ Դիար Ռաբիայում (Հյուսիսային Միջագետք) ապրող Տաղլիբ ցեղից էին սերում Համդանյանները, որոնք Ժ դարում Մուսուլի շրջանում հիմնեցին իրենց հայտնի իշխանությունը։

2. Մուդար ցեղախումբն ընդգրկում էր Կայս-այլան ճյուղը, ինչպես նաև ուրիշներ, որոնց մեջ կարելի է հիշել Կուրայշը (Ֆիհր) Մուհամմադ մարգարեի ցեղը։ Կայս-այլանի ցեղերից էր Սուլայմը (ածականը կլինի՝ ալ-Սուլամի), որի մի հատվածն էին այն արաբները, որոնք հայ պատմիչների մոտ հայտնի էին կայսիկ անվամբ։ Կարծվում է, որ նույն այս Սուլայմ ցեղից էին նաև Ջահֆյաններն ու Ութմանիկները[70]։

Արաբ իլան ցեղերը բերվեցին Հայաստան ոչ միայն հատուկ ծրագրով (Բյուզանդիայի դեմ պայքարը և այլն), այլև

---

[69] F. Wüstenfeld, Register zu den genealogischen Tabellen, Gottingen, 1853, s. 427-430.

[70] M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides, p. 472.

որոշ ուղղությամբ։ Դրանք տեղավորվեցին Հայաստանի այն հատվածում, որն արաբ աշխարհագիրների մոտ ծանոթ էր որպես Չորրորդ Արմինիա[71]։ Թ դարի աշխարհագիր Իբն Խորդադբեհը հետևյալ կերպ է նկարագրում այս հատվածը. «Չորրորդ Արմինիան է՝ Շիմշաթը, Խիլաթը, Կալիկալան, Արջիշը և Բաջունայսը»[72]։ Դրանք բոլորն էլ այնպիսի քաղաքներ էին, որոնք արաբա-բյուզանդական պատերազմների մեջ ռազմավարական մեծ նշանակություն ունեին և բնակեցված էին արաբ զորքերով։ Շիմշաթն ու Կարնը քաղաքը գրեթե սահմանային գոտու մեջ էին, իսկ Խլաթը, Արճեշը և Մանազկերտը (Բաջունայս<Բահունիս, Ապահունիս) բնակեցված լինելով ռազմիկ ցեղերով, սահմանային շրջանի նեռում մի պահեստային գոտի էին կազմում, որտեղից թարմ ուժերը հոսում էին դեպի սահմանը։

Արաբական ցեղերի Հայաստանում հաստատմանը մեծապես նպաստեց հայ նախարարական ուժերի զանգվածային արտագաղթը։ Տնտեսական, քաղաքական և այլ պատճառներով թե նախարարները, թե ռամիկ ժողովուրդը նախընտրում էին անցնել բյուզանդական հողը[73], հանդուրժելով նույնիսկ կրոնական (քաղկեդոնական) հալածանքները։

Գաղթականական հոսանքը գնում էր ոչ միայն դեպի արևմուտք, այլ նույնիսկ դեպի հյուսիս-արևմուտք՝ Եգերաց աշխարհը (Արևմտյան Վրաստան)։

Այսպես, 703 թ. «պատատմրության ճնշումից հետո, ըստ Ղևոնդի, Սմբատ Բագրատունին և նրա հետ գնվող նախարարները «գնացեալ մեկնեցան յաշխարհէս և անցեալ խնդրեցին ի թագաւորէն Յունաց քաղաք բնակութեան և դադարս խաշանց իւրեանց»[74]։ Ճիշտ է, Աբդ ալ-Ազիզ (706—709) ոստիկանը նրանց գրեց հրովարտակ «դառնալ յիւրեանցական աշխարհս»[75], այնուամենայնիվ, բնորոշը արաբական շրջանի համար ընդհանրապես, արտագաղթն էր դեպի արևմուտք։

---

71 M. Ghazarian, Armenien, 69-70.

72 Bibl. Geogr. Arab., VI, 122.

73 Ղևոնդ, էջ 168—169։

74 Նույն տեղում, էջ 35։

75 Նույն տեղում, էջ 35—36։

Արտագաղթի մի օրինակ էր նաև 747—750 թթ. ապստամբության ժամանակ Կարնո քաղաքի և այլ մերձեփրատյան շրջանների հայոց դիմումը Բյուզանդիային՝ անցնելու համար կայսրության հողերը[76]։ Վերջինս հայերին օգտագործում էր որպես ռազմիկ տարբ տարբեր վայրերում իր մղած պատերազմների ժամանակ։

Աբբասյանների օրոք ծանր հարկային վիճակը էլ ավելի արագացրեց հայերի գաղթը. շատերը ուղղակի լքում էին իրենց կալվածները, որպեսզի ազատվեին արաբական լծից։ Ղևոնդը պարզ կերպով գրում է. «Եւ բազումք ինքնակամութեամբ թողուին զհօտս և զանդեայս և զնային փախստական...»[77]։

Արտագաղթի ամենաուժեղ հոսանքն սկիզբ առավ 774—775 թթ. ապստամբության ձախողումից հետո, և փոխվեց Հայաստանի ամբողջ քաղաքական պատկերը։ Որոշ նախարարական տներ, որոնք դարեր շարունակ երկրի քաղաքական կյանքում վճռական դեր էին խաղացել, ինչպես օրինակ, Մամիկոնյանները կամ Կամսարականները, մի անգամից անհետացան։ Վարդան պատմիչը հայտնում է, որ Գնունիները, որոնք ապրում էին Աղիովիտ գավառում, դիմում են Աշոտ Մսակերին, որպեսզի իրենց փրկի Վանա լճի հյուսիսային գավառներում տարածված արաբների ձեռքից։ Աշոտը հաղար հոգով գալիս է Աղիովիտ և ամբողջ Գնունի ցեղը հավաքելով գաղթեցնում է Տայք[78]։ Ինչպես կտեսնենք, նրանց հողերն անցան Ութմանիկ արաբներին[79]։

Այսպիսին էր դրությունը Ը դարի վերջին, երբ Հայաստանը գտնվում էր նոր փոփոխությունների նախօրեին։ 774—775 թթ. ապստամբության ղեկավար Մուշեղ Մամիկոնյանը թողել էր չորս դուստր և երկու տղա։ Այս աղջիկներից մեկի հետ ամուսնացավ Ջահհաֆ անվամբ մի անձնավորություն, որի տունը այս շրջանի պատմության մեջ որոշ դեր խաղաց։

---

76 Ալպոյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան, էջ 231։

77 Ղևոնդ, էջ 168։

78 Վարդան, էջ 106։

79 Թովմա, էջ 247։

Անծանոթ մահմեդականի հետ Մամիկոնյան տան դստեր ամուսնանալը ցույց է տալիս, թե ինչ աստիճանի էր քայքայվել այդ հզոր նախարարական տունը: Վարդան պատմիչը փորձում է բացատրել այդ գործարքի իսկական դրդապատճառները: Քայքայված Մամիկոնյանների դուստրը (անունը չի հիշում) «...եհ զինքն յամուսնութիւն Ջահասդի ումեմն իսմայելացւոյ ի թիկունս առնելով զնա»[80]: Դժվար է ասել, թե ինչ աստիճանի ազդեցիկ մարդ կարող էր լինել այդ Ջահհաֆը, որ Մամիկոնյանների մնացորդները ուզում էին նրան որպես թիկունք ունենալ: Ինչ վերաբերում է վերջինիս ձգտումներին, ապա այդ մասին էլ Վարդանը ակնարկում է, թե «խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին»[81]: Պարզ է, որ այսպիսի մի իշխանական տան դստեր հետ ամուսնանալը Ջահհաֆի համար մի լավ առիթ էր հափշտակելու Մամիկոնյանների կալվածները, քանի որ ավատական կալվածատիրություն ժառանգական էր: Թեև նա հիմնականում զենքի զորությամբ էր իր նպատակն իրագործում, այնուամենայնիվ օրինավոր հիմքը նրան անհրաժեշտ էր:

Ջահհաֆի բնատանիքն, ամենայն հավանականությամբ, Հայաստան էր բերվել Հարուն ալ-Ռաշիդի օրոք տեղի ունեցած պատերազմի ժամանակ:

Ջահհաֆյաններին ժամանակով ամենամոտիկ հայ պատմիչը՝ Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ Ջահհաֆը «ի պարսիկ տոհմէ»[82] էր: Սա որոշ հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ նրանք դուցե քրդական ծագում ունեցած լինեին: Դժբախտաբար քրդերի պատմության այդ ժամանակաշրջանի մասին մեր տեղեկություններն այնքան կցկտուր են, որ հնարավոր չէ ճշտել, թե արդյոք կարո՞ղ էին քրդերը Ը—Թ դարերում որևէ աշխուժություն ցուցաբերած լինել Հայաստանի

80 Վարդան, էջ 105:

81 Նույն տեղում:

82 Բրոսեն ուզում է ասել «ի կայսերական», որը հնարավոր չէ: M. Brosset, Histoire de la Siounie, 1,101 Անհասկանալի է նաև Օրբելյանի մոտ «ի կայսերական տոհմէ» արտահայտությունը:

հարավային նահանգներում։ Անհասկանալի է Ողվանից պատմության մեջ հիշատակված Աւարանշան[83] մականունը մի ուրիշ Ջահհաֆյանի՝ Սեադայի մասին։ Վերջինիս նույն մականունով կոչում է նաև Ստեփանոս Օրբելյանը, որի մոտ Սեադան Մրվան[84] անվամբ է հանդես գալիս։ Թե Ողվանից պատմության մեջ, թե Օրբելյանի մոտ միտում կա այս «Աւարանշան» բառը որպես հայերեն բառ ստուգաբանելու։ Օրինակ, Օրբելյանը Սեադայի կատարած ավազակային ասպատակությունները հիշելուց հետո, ավելացնում է «որոյ անունն իսկ աւարանշան ճանաչիւր», այն ստուգաբանելով հայերեն ավար և նշան բառերով։ Սակայն դրաբարում այսպիսի բառ գոյություն չի ունեցել և հավանաբար աւարանշանը Սեադային կամ գուցե նրա ընտանիքին վերաբերող մի անուն էր, որը արաբական չի կարող եղած լինել, այլ թերևս իրանական ծագում կարող է ունենալ[85]։

Համենայն դեպս հայ պատմիչները մեծ մասամբ նրանց տաճիկ կամ իսմայելացի են համարել և բացի սրանից, Յակուբին նրանցից մեկին նույնիսկ սուլամի[86] է կոչում (այսինքն կայսրի)։ Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ Ջահհաֆյանները գուցե ոչ-արաբական ծագում ունեին, բայց արաբացած լինելով հանդես էին գալիս նույնիսկ որպես սուլամի, կապված լինելով կայսրի տան հետ։

Առաջին Ջահհաֆը քաղաքական ասպարեզ եկավ Հարուն ալ-Ռաշիդի մահվանից հետո և ինչպես ասվեց, ամուսնացած էր Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ։ Ձգտելով տիրանալ ամբողջ երկրին, նա անխուսափելիորեն բախվեց խալիֆայության ներկայացուցիչների հետ։ Թ դարի սկիզբը շատ հարմար ժամանակ էր նմանօրինակ շարժումների համար, որովհետև խա-

83 Պատմութիւն Ողուանից, էջ 263։

84 Պատմութիւն տանն Սիսական, էջ 158։

85 Ատրպատականում խուռամյան շարժման հիմնադիր Ջավիդան իբն Սահլի մասին խոսելիս Միքայել Ասորին հիշում է քուրդաններին, որոնք գուցե քրդերի հետ ինչ-որ կապ ունենային, սակայն այդ մասին հստակորեն ոչինչ չի կարելի ասել։ Տես՝ Մարկվարտ, Հայ Բագրատունեաց հիւղագրութիւնը, էջ 57—61։

86 Jaqubi, II, 510.

լիֆայի մահվանից հետո պետությունը ծանր դրության մատնվեց, նրա երկու որդիների (Ամինի և Մամունի) միջև մղված պայքարի հետևանքով[87]։

Հայաստանը դեռ նույնիսկ Հարուն ալ-Ռաշիդի օրոք, ամբողջովին հանդիստ վիճակում չէր։ Յակուբին վկայում է, որ այդ ժամանակ Աղվանքում հանդես եկավ մի ապստամբ՝ Աբու Մուսլիմ ալ-Շարին, որի դեմ երկար պայքար մղեցին Արմինիայի ոստիկանները։ Սա նույնիսկ հարձակվեց Դվինի վրա, չորս ամիս պաշարեց այն (794) և ապա հեռացավ[88]։

Թ դարի սկզբին Մեծ Հայքում քաղաքական ներքին կայունություն չկար, շարքից դուրս էին եկել Մամիկոնյանները և բազմաթիվ այլ նախարարական տներ և խախտվել էր հավասարակշռությունը։ Հայտնի չէր թե ինչ ճակատագիր էր սպասում հին նախարարական տներից իրենց գոյությունը շարունակող Բագրատունիներին, Արծրունիներին և Սյունեցիներին։ Երկրում հայտնվել էին նոր ուժեր, ինչպես Շայբանիները և ապա Ջահհաֆյանները և փաստորեն Թ դարի առաջին կեսը կատաղի պայքարի շրջան էր Մեծ Հայքում նոր գոյավիճակ ստեղծելու համար։

Հենց սկզբից Ջահհաֆի դեմ դուրս եկավ Բաղրևանդի ճակատամարտում զոհված Սմբատ Բագրատունու որդին՝ Աշոտ Մսակերը։ Սա զգույշ և մտածված ծրագրով կարողացավ կարճ ժամանակվա ընթացքում մեծ ազդեցություն ձեռք բերել։ Փոխանակ Ջահհաֆի նման խալիֆայության և այլոց դեմ բացահայտ պայքարի դուրս գալու, նա առանց աղմուկի յուրացրեց բազմաթիվ դավառներ։ Նախ տիրացավ Մամիկոնյանների վաղեմի կալված Տարոնին, ապա քայքայված Կամսարականներից գնեց (գանձագին) Շիրակ և Արշարունիք դավառները և ապարանքը Բագրատունիների հինավուրց կենտրոն Դարույնքից տեղափոխեց Արշարունիք դավառը[89]։ Այսպիսով, նա դարձավ Հայաստանի մեծագույն հողատեր նախարարը և շու-

---

[87] W. Muir, The Caliphate, its rise, decline and fall, London, 1891, p. 484-491.

[88] Jaqubi, II, 516.

[89] Ասողիկ, էջ 106։

տով նշանակվեց Հայոց իշխան։ Սակայն թե Տարոնում, թե Արշարունիքում Աշոտը բախվեց Ջահհաֆի ուժերի հետ և հաղթեց նրանց[90]։

Աշոտ Մսակերից պարտություն կրելով և չկարողանալով Հայաստանի ոչ մի գավառում հաստատվել Ջահհաֆը արկածախնդրության դիմեց։ Իր որդու Աբդ ալ-Մալիքի հետ նա հարձակվեց Դվին մայրաքաղաքի վրա և այն գրավեց։ Այդ ժամանակ Դվինը դադարել էր ոստիկանի մշտական նստավայր լինելուց և Արմինիայի ոստիկանները միայն ժամանակ առ ժամանակ գալիս էին Դվին, որպես հիմնական նստավայր ունենալով Պարտավը։ Դվինի գրավումը ապստամբների կողմից անչափորեն բարդացրեց քաղաքական վիճակը Արմինիայում, որովհետև Ջահհաֆյանները երկրի սիրտը հանդիսացող քաղաքն իրենց ձեռքը գցելով սպառնում էին ոստիկանի իշխանությանը։ Սակայն քաղաքական դրությունը դեռ չէր կայունացել խալիֆայության մեջ և իշխանությունը նոր գրաված Մամուն խալիֆան նախընտրեց ժամանակավորապես զիջել և նույնիսկ Աբդ ալ-Մալիքին ոստիկան նշանակեց[91]։ Սա, իհարկե, չէր կարող խնդրի լուծում համարվել, որովհետև պատահաբար իշխանության գլուխ անցած Ջահհաֆյանները դեմ էին ոչ միայն հայ նախարարներին, այլև բուն խալիֆայությանը։ Եվ իրոք, նրանց իշխանությունը Դվինում միայն մի քանի ամիս տևեց, որովհետև շուտով Մամունը նոր ոստիկան նշանակեց Թահիր իբն Մուհամմադ ալ-Սանանիին, որի դեմ հանդես եկավ Աբդ ալ-Մալիքը որպես ապստամբ։ Վերջինս նույնիսկ պաշարեց նոր կառավարչին նրա նստավայր Պարտավում, բայց պարտվեց և ապահովության ուխտ (արաբ. աման) ստանալով հպատակվեց նոր ոստիկանին[92]։

Աբդ ալ-Մալիքին տրված ապահովության ուխտը իհարկե չէր կարող գոհացնել Բագրատունիներին, որոնք իրենց վտանգավոր ոսոխից բոլորովին էլ չէին ազատվել։ Դեռ նախքան պարտությունը Աբդ ալ-Մալիքը իր հինգ հազար մարդուց բաղ-

---

90 Վարդան, էջ 105։

91 Jaqubi, II, 540.

92 Jaqubi, II 562

կոչած (հավանաբար մասամբ Հայաստանի արարներից), զորքն ուղարկեց Տարոն Աշոտ Մսակերի դեմ։ Վերջինս նրանցից երեք հազար մարդու կոտորեց և մեծ ավար վերցրեց[93]։ Այսքանով չբավարարված նրա եղբայրը՝ Շապուհը եկավ ասպատակելու Դվինի շրջակայքը։ Այս դեպքերը տեղի էին ունենում այն ժամանակ, երբ Աբդ ալ-Մալիքը ապահովության ուխտ ստանալով քաշվել էր Դվին։ Աբդ ալ-Մալիքը, որը դեռ որոշ իշխանություն էր վայելում Դվինում, զորք ուղարկեց Շապուհի դեմ, սակայն այս բանն արդեն Դվինում ներքին ապրստամբության առիթ տվեց։ «Այլ և քաղաքացիքն,— գրում է Վարդանը,— դիմեալք ի վերայ Աբդլ մելիքին սպանին զնա և ածին ի դուռն քաղաքին»[94]։ Նմանօրինակ վերաբերմունքը ապահովության ուխտ ստացած մի անձնավորության նկատմամբ այլ պայմաններում կարող էր խալիֆայության կողմից դիտվել որպես ըմբոստ քայլ և նույնիսկ ոտնձգություն ասիականի իշխանության դեմ, սակայն նույն պայմանները, որոնք մղեցին խալիֆաներին զգույշ վարվել Ջահհաֆյանների հետ, նպաստեցին նաև Բագրատունիների համարձակ գործողությունների հաջող ընթացքին։ Այս գործողությունները փաստորեն նշանավորում էին Բագրատունիների հաղթանակը իրենց ամենավտանգավոր ոսոխներից մեկի՝ Ջահհաֆյանների դեմ, որոնք ըստ Վարդանի «չքոտեցան և կորեան ի միջոյ»[95]։

Դժվար է ճշտել թե որտե՞ղ էր Ջահհաֆյանների տան հիմնական կենտրոնը[96]։ Նրանք ավելի շատ նման էին թափառական բախտախնդիրների և երևան էին գալիս ամեն մի գավառում կամ քաղաքում, որտեղ կային իշխանությունը հափշտակելու նպաստավոր պայմաններ, ինչպես օրինակ, Տարոնում, Արշարունիքում կամ Դվինում։ Հետաքրքրական է նշել, որ Աբդ

93 Վարդան, էջ 107։

94 Նույն տեղում։ Աղվանից Պատմության մեջ կա հետևյալը՝ «Աբդլ մելիք Ջահարայ որդի սրով սատակիւր»։ Տե՛ս «Արարատ», 1897 էջ 162, նաև C. Dowsett, A neglected passage in the history of the Caucasian albanians, BSOAS. XIX, 3, 1957.

95 Վարդան, էջ 107։

96 Ոմանք համոզված են, թե Մանազկերտում է՝ J. Laurent, L' Arménie entre Byzance et l' Islam, 322-326.

ալ-Մալիքի անվամբ մեկ հասել է երկու դրամ հիջրայի 196 և 197 թթ. (մ. թ. 811—812 և 812—813), որոնք թողարկված են Ապահունիքում, հավանաբար Մանազկերտում: Դրամի վրա փողերանոցի վայրը կոչվում է «Բաջունայսի (Բահունիս, Ապահունիս) հանք»[97]: Նույն փողերանոցից կան մի քանի դրամներ թողարկված Թ դարի առաջին երեք տասնամյակների ընթացքում: Դժվար է պնդել, որ այդ ժամանակ որևէ արար գաղթականություն էր հաստատվել Մանազկերտում. պետական փողերանոցի առկայությունը բավարար փաստ չէ այդպիսի ենթադրության համար, մանավանդ որ Թովմա Արծրունին խոսելով Թ դարի երևնական թվականների մասին հիշում է ոմն Սմբատ Ապահունի իշխանի անունը[98]: Արար գաղթականներ կարող էին հաստատված լինել Ապահունիքի որևէ մի մասում կամ հարևան գավառում, բայց ոչ որպես միակ տիրող տարր:

Ուշագրավ երևույթ է Ջահհաֆյանների կողմից Դվինը գրավելու փորձը: Ը դարի վերջին քառորդում Դվինը դադարել էր Արմինիայի ոստիկանի միակ նստավայրը լինելուց և գլխավոր նստավայրը դարձել էր Պարտավը: Այդ հարցի մասին պատմական գրականության մեջ հայտնվել են երկու տարբեր կարծիքներ, որոնք ուղղման կարիք են զգում: Անցյալում, նույնիսկ մինչև Բագրատունյաց թագավորության ձևավորումը Արմինիայի մայրաքաղաքը համարել են Դվինը (Մ. Չամչյան, Մ. Ղազարյան և այլն)[99]: Այս կարծիքն, իհարկե, հենվում էր այն բանի վրա, որ հայ պատմիչները Դվինի մասին միշտ խոսում են որպես մայրաքաղաքի: Սրան հակառակ, վերջին երկու երեք տասնամյակների ընթացքում սովետական պատմագրության մեջ արմատացել է մի նոր կարծիք[100], ըստ որի Դվինը 774—775 թթ. ապստամբությունից հետո վերջնականապես դադարից մայրաքաղաք լինելուց և այդ դերը ամբողջապես անցավ Պարտավին, իսկ ինքը դարձավ մի գավառական քաղաք, որ-

---

97 Тизенгаузен, Монеты Восточного Халифата, стр. 338.

98 Թովմա, էջ 185—186:

99 «Պատմութիւն հայոց», Դ, էջ 447: M Ghazarian, Armenien, 71.

100 «История СССР», Москва, 1939, ч. IV, гл. 2.
«Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1956, էջ 173:

տեղ նույնիսկ կարող էին նստել տեղական կառավարիչներ։ Այս կարծիքը թեև պարունակում է որոշ ճշմարտություն, այնուամենայնիվ չափազանցված է, որովհետև Դվինն այդ ապստամբությունից հետո դադարեց ոչ թե ընդհանրապես մայրաքաղաք լինելուց, այլ՝ միակ մայրաքաղաքը լինելուց և Պարտավի կողքին նա միշտ էլ մնաց որպես Արմինիայի երկու մայրաքաղաքներից մեկը[101]։

Պարտավը դեռ Օմայանների ժամանակ որոշ նշանակություն ուներ իրրև խալիֆաների դեմ մղվող կատաղի պայքարի ռազմական կենտրոն։ Աբբասյանների իշխանության հենց սկզբնական շրջանից արդեն սկսել էին դրամներ թողարկել Պարտավի փողերանոցում[102]։ Նրանց օրոր խալիֆաների դեմ պայքարն[103] էլ ավելի ուժեղացավ և Պարտավը այն աստիճանի մեծ նշանակություն ստացավ, որ Թ դարում արդեն դարձավ Արմինիայի երկու խոշոր առևտրական կենտրոններից մեկը։ Պարտավի նստավայր դառնալու մասին առաջին անգամ ակնարկում է Ղևոնդը, ըստ որի Սուլայման ոստիկանը (788—790) նստում էր Պարտավում[104]։ Նման ակնարկ կա նաև Ազվանից Պատմության մեջ, որտեղ Ը դարի երկրորդ կեսի մասին խոսելիս հիշվում է, որ հայերը վարչական գործերով դիմում էին Պարտավ[105]։ Այսուամենայնիվ հայ և արաբ պատմիչների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դվինը երբեք չդադարեց Արմինիայի ոստիկանի նստավայր լինելուց։ Նախ այնտեղ էր դեռ գտնվում փողերանոցը, որտեղ թողարկված դրամներից մեզ հասել են մինչև Ժ դարի կեսերը հասնող նմուշներ[106]։ Բացի սրանից, Ժ դարի արաբ աշխարհագրագետների կողմից հիշատակվում է, որ Դվինում Ժ դարում կար

---

101 Ա. Тер-Геонджян, К вопросу о возникновении Двинского эмирата, 133-136. Տես նաև J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam. 178

102 Լ. Ташчян, Средневековая Барда в период расцвета, стр 53. Е. Пахомов, монеты Барды, стр. 68.

103 J. Kramers, Les Khazars. Analecta Orientalia, I, Leiden, 1954, pp. 130-143.

104 Ղևոնդ, էջ 166։

105 «Պատմութիւն Աղուանից», էջ 262։

106 А. Быков, Дайсам Ибн Ибрахим, стр. 14-19.

ոստիկանի ապարանք, որն ըստ Իբն Հաուկալի[107] այնպիսին էր, ինչպես օրինակ, Պարտավի ոստիկանական ապարանքը Ադվանքում կամ էլ Արդաբիլինը՝ Ատրպատականում։ Այդ ապարանքը, որը գտնվում էր Դվինի միջնաբերդում, նրանց կողմից հիշատակվում է ոչ թե որպես անցյալի մի հուշարձան, այլ որպես գործող կենտրոն, որտեղ մինչև Թ դարի վերջերը ոստիկան էր նստում։

Կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ երբ Պարտավը հիմնական նստավայր դարձավ, Դվինը որոշ չափով լքված վիճակում գտնվեց և ամեն մի արկածախնդիր կարող էր երազել այնտեղ հաստատվելու մասին։ Նմանօրինակ փորձ կատարեցին Ջահհաֆն ու իր որդին՝ Աբդ ալ-Մալիքը։ Այս երկուսի կողմից Դվինի գրավումը Հայոց հինավուրց մայրաքաղաքը ավատական տիրույթի վերածելու առաջին լուրջ փորձն էր, որը ձախողվեց։ Ոստիկանի նստավայր Դվինը ոչ միայն չէր կարող ավատական տիրույթի վերածվել, այլև այնտեղ չկար և չէր կարող լինել նույնիսկ ամբողջ Արմինիայի ոստիկանի որևէ տեղական ներկայացուցիչը, ինչպիսին էր, օրինակ Տփղիսի ամիրան։

Դեռ նախքան Ջահհաֆյանները, Դվինին տիրելու մի անհաջող փորձ կատարեց, ինչպես տեսանք, մի ուրիշ արկածախնդիր՝ Աբու Մուսլիմ ալ-Շարին, որը թեև չորս ամիս պաշարեց քաղաքը, սակայն նույնիսկ չկարողացավ գրավել այն։

Առաջին Ջահհաֆյանների պարտությունը չխաղաղացրեց երկիրը։ Շուտով Հայաստանի հարևան Ատրպատականում ծայր առավ Բաբեկի շարժումը, որն ուժգնորեն ցնցեց խալիֆայությունը։ Խալիֆայության անտանելի լծի դեմ ընդվզող այս շարժման ղեկավար Բաբեկը մինչև իր մահը (837)՝ մոտավորապես քսան տարի արաբական զորքերը լարված վիճակում պահեց[108]։ Հարևան երկրում բռնկված այս շարժումը Հայաստանի քաղաքական կյանքի վրա ազդեց թե ուղղակիորեն, թե անուղղակի ճանապարհով, որովհետև Բաբեկը մերթ

---

[107] Ibn Hauqal, II, 342.

[108] G. Sourdel, Bābak, Enc. de l' Islam. nouv. éd., I. 867.

ռազմական դաշինքի[109], մերթ էլ ընդհարումների[110] մեջ էր Արցախի և Սյունիքի հայ նախարարների հետ։ Սակայն այս շարժման թողած անուղղակի ազդեցությունը շատ մեծ էր, նկատի ունենալով, որ այն մի առիթ էր ամբողջ Արմենիան բաղաքական շարժումների թատերաբեմ դառնալու համար։

Այս ժամանակ հանդես եկավ մի նոր Ջահհաֆյան՝ Սևադան, որին Յակուբին անվանում է Սավադա իբն Աբդ ալ-Համիդ ալ-Ջահհաֆի[111]։ Այստեղ Ջահհաֆի անունը դառնում է արդեն մականուն, այնինչ նրա նախորդը (հոր եղբորորդին)՝ Աբդ ալ-Մալիքը, նույն արաբ պատմիչի մոտ ցեղային անունով կոչված է Աբդ ալ-Մալիք իբն ալ-Ջահհաֆ ալ-Սուլամի։ Այս Սևադան Ջահհաֆի եղբորորդին էր։

Շատ հատկանշական է հայ պատմիչների իրարից տարբեր վերաբերմունքը նրա նկատմամբ։ Հովհաննես Դրասխանակերտցին[112] և Վարդանը[113], օրինակ, լոկ շարադրում են տեղի ունեցած դեպքերը և փաստերը։ Սրան հակառակ ստույգ պատմիչ Ստեփանոս Օրբելյանը[114] և Ադվանից Պատմությունը նրա անունը հիշելիս անմիջապես ավելացնում են ստորանշան մականունը և միաժամանակ այն ստուգաբանում որպես ավազակ։ Սա պատահական չէ, որովհետև Բագրատունյաց հետ սերտորեն կապված Դրասխանակերտցին կարիք չուներ հայհոյելու մի անձնավորության, որի հետ Բագրատունիները նույնիսկ դաշինքի և խնամիության կապեր ունեին, իսկ ընդհակառակը՝ Սյունիքի և մերձակայքի բնակչությունը, որը ենթարկվել էր նրա ավազակային ասպատակություններին չէր կարող անտարբեր լինել։

Բագրատունիների դաշինքը ապստամբ Սևադայի հետ, ընդդեմ խալիֆայության, արդյունք էր պարզապես Բաբեկի շարժման առաջ բերած խառնաշփոթության։ Այս շրջանում հայ նախարարներն այնքան համարձակ էին դարձել, որ նույն-

109 «Պատմութիւն Ադուանից», էջ 263—264։

110 Օրբելեան, էջ 159։

111 Jaqubi II, 561.

112 Դրասխանակերտցի, էջ 144—146։

113 Վարդան, էջ 108։

114 Օրբելեան, էջ 158։

իսկ հարկերն ըստ ցանկության էին վճարում։ Այս դոյավիճակը հստակ կերպով արտահայտում է նույն դարի արաբ պատմիչ Բալաղուրին, ըստ որի «Արմինիայի նախարարները (բաթրիկներ), որոնք նստած էին իրենց գավառներում հպատակվում էին կատավարիչներին այնքան ժամանակ, քանի որ սրանք ուժեղ էին, բայց երբ մի քիչ թույլ լինեին նրան հրապարակորեն հայհոյում էին և արհամարհում հրամանները»[115]։ Այս խոսքերը վերաբերում են Թ դարի սկզբին։

Առաջին Ջահհաֆը Մամիկոնյան իշխանուհու հետ էր ամուսնացել, իսկ Սևադան կնության վերցրեց Արուսյակ Բագրատունուն։ Հայտնի է, որ իր գործունեության ամենավաղ շրջանում Սևադան բախվել էր Աշոտ Մսակերի և նրա՝ Շապուհի հետ[116], որոնք Ջահհաֆին և որդուն ջախջախելուց հետո չէին կարող հանդուրժել որ մի նոր թշնամի պլուս բարձրացներ։ Սակայն Աշոտի մահվանից հետո սպարապետ դարձած որդին՝ Սմբատը, նկատի ունենալով քաղաքական նոր իրադրությունը, նոր դիրք գրավեց։ Եթե Աշոտ Մսակերը Թ դարի առաջին քառորդում զգույշ քաղաքականություն վարելով խալիֆայության նկատմամբ և նույնիսկ օգտագործելով նրա ուժերը ջախջախեց Ջահհաֆին, ապա Սմբատ Բագրատունու օրոք, խալիֆայությունը Բաբեկի շարժմամբ արդեն այնքան էր կլանված, որ թվում էր թե այլևս ի վիճակի չէր լինի Արմինիայի հանդարտեցման համար վճռական քայլերի դիմելու։ Ապստամբության դադարով ժամանակավորապես ազատվել էին նաև Սյունյաց իշխանները, իսկ Արծրունիները ինչպես երևում է չեզոք դիրք ընդունեցին։

Ամենահետաքրքրականն այն է, որ հայ պատմիչը Սևադայի մասին խոսելիս չի պատմում թե ինչպիսի ճանապարհով նա բարձր դիրքի հասավ, այլ միանգամից նրա մասին խոսում է որպես Հայաստանում տիրապետող դիրք ունեցող մի անձնավորության։ Ըստ նրա, Հայաստան է գալիս Հալ ոստիկանը փոքրաթիվ գնդով և հաստատվում Դվին քաղաքում, բայց ահա նրա դեմ է դուրս գալիս Սևադան, որ «ի ձեռն այնորիկ

---

115 Beladsori, 210-211.

116 Վարդան, էջ 108։

դյոլով մասն երկրիս բռնակալեալ անպհականաբար իմն տիրէր»[117]։ Այստեղ ոչ մի ակնարկություն չկա ցույց տալու համար, թե որտե՞ղ էր տիրում Սևադան և արդյոք նրա ուժը իր տիրած կալվածների ընդարձակության մեջ էր թե բարձր պաշտոն ուներ։ Եթե հավատանք Վարդանի խոսքերին, թե Սմբատ Բագրատունին սպարապետության պաշտոնը նրանից էր ստացել պետք է ենթադրել, որ նա ոստիկանին հավատար մարդ էր։ Իր գործունեության սկզբում նա ուներ չորս հազար մարդ և հաղթել էր նույնիսկ Աշոտ Մսակերին ու եղբորը՝ Շապուհին։ Հավանական է, որ Սևադայի ձեռքի տակ եղած զորքը ժամանակի ընթացքում էլ ավելի մեծացած լիներ և հենց դա էլ կարող էր լինել այն հենարանը, որի վրա նա հենվում էր իր արկածներով լի գործունեության ընթացքում։

Ուշագրավն այն է, որ Շայբանիները այս բոլոր իրադարձությունների ժամանակ իրենց հին քաղաքականությունը չփոխեցին, որն էր՝ խալիֆայության նկատմամբ անսահման հավատարմությունը և պատահական չէր, որ խալիֆաները այնքան վստահություն ունեին նրանց նկատմամբ։ Բավական է միայն նշել, որ Արմինիայի ոստիկանության պաշտոնը ընդհանրապես ենթակա էր փոփոխությունների[118] և ոստիկանների մեծ մասը տարբեր ընտանիքներից էին, այնպես որ նոր ոստիկանը հնի հետ ազգակցական կապ չէր ունենում։ Սակայն եղան որոշ բացառություններ, որոնց մեջ առաջին հերթին պետք է նշել Շայբանիներին։ Սրանք մինչև Աբբասյան տիրապետության վերջը Հայաստանում ժառանգաբար իշխեցին և մի հարյուրամյակի ընթացքում խալիֆաները ոստիկանության պաշտոնը 13 անգամ Շայբանիներին վստահեցին, ընդ որում որոշ Շայբանիներ մի քանի անգամ իշխեցին։

Թ դարի առաջին կեսի բարդ իրադրության մեջ խալիֆայության շահերի արտահայտիչը Շայբանի Խալիդ իբն Եզիդ իբն Մազյադն էր, որը հայ մատենագիրների մոտ ծանոթ է Հոլ (Հալ) անունով։ Սրա օրոք տեղի ունեցավ Կավակերտի

117 Դրասխանակերտցի, էջ 145։

118 Օրինակ, Աբբասյանների 134 տարիների իշխանության ընթացքում Արմինիայում 85 անգամ ոստիկանի փոփոխություն տեղի ունեցավ։ Տե՛ս Նալբանդյան, արաբ. ոստիկ., էջ 119—124։

ճակատամարտը, որտեղ ոստիկանի և ապստամբների ուժերը ընդհարվեցին։ Այս դեպքերի աղբյուր Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ նոր ոստիկան Հոլը հենց որ եկավ Հայաստան Սևադան «ընդվզեալ և խանդացեալ ընդ ոստիկանին Հօլայ»[119] նրա դեմ մեծաթիվ զորք դուրս բերեց։ Դրանք ոչ միայն իր գնդերն էին, այլև հայ նախարարական գնդերը Սմբատ սպարապետի և Սյունյաց Սահակ իշխանի գլխավորությամբ։ Խալիֆայության վիճակն այնքան խռովահույզ էր, որ ոստիկանը բոլորովին կողմնակից չէր զենքի զորությամբ հարցեր լուծելու և որպես պատգամաբեր ուղարկեց Դավիթ կաթողիկոսին համոզելու ապստամբներին, թե իզուր են դիմում այդպիսի հանդուգն քայլերի, կարծելով թե ինքն աչք ունի նրանց կալվածներին[120]։ Ապստամբները չհրաժարվեցին իրենց ձեռնարկած քայլից և ոստիկանը զինելով երկու հազար մարդ Դվինից ուղղվեց դեպի հյուսիս, Հրազդանի ափով մինչև Կավակերտ կոչված դաստակերտը, որտեղ և թշնամի բանակները ընդհարվեցին։ Կռվի ելքը ճակատագրական եղավ ապստամբների համար և նրանց պարտությունը ջախջախիչ էր։ Սյունյաց Սահակն սպանվեց, իսկ Սմբատն ու Սևադան փախան։ Սմբատը ապաստանեց իր կալվածները, իսկ Սևադան փախավ Սյունիք, որտեղ ավազակությամբ էր զբաղվում[121]։ Ըստ Աղվանից Պատմության նա հաստատվեց Ծղուկ գավառի Շաղաս գյուղում, որտեղից իր ասպատակություններով մեծապես նեղում էր Սյունյաց իշխաններին։ Վերջապես նրանց իշխաններից Վասակը դիմեց Բաբեկին և նրա օգնությամբ հեռացրեց Սևադային։

Յակուբին այլ ձևով է պատմում այս դեպքերը[122]։ Ըստ նրան, Մամունը Արմինիայի և Ատրպատականի ոստիկան էր նշանակել Իսա իբն Մուհամմադին, որը ցանկանալով խաղաղեցնել երկիրը, ապստամբ Սևադային առաջարկեց Արմինիայի ոստիկանությունը, հավանաբար իրեն պահելով ընդհանուր

119 Դրասխանակերտցի, էջ 145։

120 Նույն տեղում։

121 «Պատմութիւն Աղուանից», էջ 263։ Պատմիչն այս դեպքերը դնում է հայոց 270 (821—822) թթ., որը հավանական չի թվում։

122 Jaqubi, II, 564.

հրամանատարությունը: Սակայն Սեադան, բան նրան, «մերժեց և (համաձայնեց) միայն պատերազմի»: Անհասկանալի է, թե ինչու Սեադան մերժեց նմանօրինակ առաջարկը: Կարելի է միայն ենթադրել, որ նա զուցե վստահություն չուներ դրա անկեղծության վրա: Սեադայի մերժման վրա Իսան հարձակվեց և հաղթեց նրան:

Այսպես Դրասխանակերտցու և Յակուբիի պատմած դեպքերը իրարից տարբերվում են հիմնականում նրանով, որ մեկի մոտ որպես ասիական Հալն է (=Խալիդ) հանդես գալիս, իսկ մյուսի մոտ՝ Իսան: Այս բանը պետք է թյուրիմացության արդյունք համարել, որովհետև հավանական է, որ այդ դեպքերը Դրասխանակերտցու մոտ ավելի ճիշտ պարզաբանված լինեին, մանավանդ որ հենց ինքը Յակուբին մի քիչ հետո հիշում է, որ Խալիդ իբն Եզիդը գալով Հայաստան խլաթում ապահովության ուխտ (արաբ. աման) տվեց Սեադային, որը նրան եկել էր ընդառաջ: Հավանական է նաև ենթադրել, որ Սեադան կարող էր երկու անգամ ապստամբած լինել՝ առաջին Իսայի օրոք (820—823), ապա Խալիդի ժամանակ (829—832) նախ ապահովության ուխտ ընդունելով և ապա երկրորդ անգամ պարտվելով Կավակերտի մոտ, թեպետ և սա էլ լրիվ հստակություն չի մտցնում: Այս դեպքերից հետո Սեադան քաշվեց Վանա լճի հյուսիս-արևմտյան գավառները իր ցեղակիցների մոտ, որտեղ նա մնաց մինչև իր մահը: Յուսուֆ ասիականի ժամանակ (851—852) նա դեռ կենդանի էր[123]:

Սեադայի առաջ բերած շարժումը Հայաստանում թեև մեծ չափով օգտվեց Ատրպատականում Բաբեկի զեկավարած շարժման ազդեցությունից, այնուամենայնիվ, այդ երկու ապստամբների միջև ոչ միայն որևէ կապ չկար, այլև ինչպես տեսանք, Սյունյաց իշխանի առաջարկով, Բաբեկը պատրաստ էր կռվելու Սեադայի դեմ:

Կարևոր է նշել, որ Սեադան էլ իր նախորդների նման ձգտում էր դեպի Դվին, որովհետև միայն այն ձևով ձգելուց հետո է, որ նա կկարողանար ամբողջ Հայաստանն իր իշխանության տակ վերցնել: Պատահական չէ, որ նա հասել էր մինչև Կավա-

---

[123] Tabari, III, 1409.

կերտ, որտեղից նա կարող էր հեշտորեն արշավել դեպի Դվին։

Թ դարի 20-ական թվականներին Սևադան միակը չէր, որ խռովություն էր բարձրացրել, որովհետև ինչպես Յակուբին է հիշում, խալիֆում Սևադային ընդունելուց հետո խալիֆ ոստիկանը շարժվեց դեպի Նախճավան, որտեղ ըմբոստացել էր Եզիդ իբն Հիմնը[124], բայց հենց որ խալիֆը մոտեցավ Նախճավանին, վերջինս փախավ հյուսիս։

Վարդանը վկայում է, որ այս տարիներին Սյունիքում հայտնվել էր ևս մի Ջահհաֆյան՝ Արլհերթը (Արու-լ-Հարիս) «ոմն ի տանէն Ջահասպայ», որը շորս հազարանոց զորքով տապատակեց Սյունիքը, բայց Բարկեն Սյունին հաղթեց և փախցրեց նրան[125]։

6. ԲՈՒՂԱՅԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Այս դեպքերից հետո որոշ ժամանակ Ջահհաֆյանները քաղաքական ասպարեզում չերևացին։ Նրանք հիմնականում ջախջախվել էին և քաղաքական կյանքում փայլում էին հաղթական Բագրատունիները։ Թ դարի 30-ական և 40-ական թվականներին, այսինքն մոտավորապես Մութասիմ (833—842) և Վասիկ բիլլահ (842—847) խալիֆաների օրոք Հայաստանը որոշ չափով վերականգնել էր այն վիճակը, որն ուներ արաբական տիրապետության դեռ սկզբնական շրջանում (է դար), այսինքն երկիրը ձևականորեն ենթարկվում էր արաբական խալիֆայության, վճարելով տարեկան հարկը, բայց փաստորեն իշխանությունը գտնվում էր հայ նախարարների ձեռքում։ Երեք մեծ նախարարական տներ՝ Բագրատունիները, Արծրունիները և Սյունիները երկրի փաստական տերերն էին։ Աշոտ Մսակերի ավագ որդին Բագարատը իշխում էր Տարոնում և միևնույն ժամանակ Հայաստանի իշխանաց իշխանն էր (արաբ. Բաթրիկ ալ-բաթարիկա)[126], ապա նույն Աշոտի մյուս որդին՝ Սմբատը Հայոց սպարապետն էր և իշխում էր Շիրակում, իսկ Վասպուրականում տիրում էր Աշոտ Արծրունին։

---

124 Jaqubi, II, 565.

125 Վարդան, էջ 109։

126 Ibn al-Athir, VII, 38.

Այս շրջանում Հայաստանն իրոք օգտվեց քաղաքական այն իրադրությունից, որը հետևանք էր Բաբեկի շարժման։ Թեև 837 թ. Մութասիմի զորավար Աֆշինը վերջապես կարողացավ ոչնչացնել Բաբեկին, սակայն այդ հաղթանակը ձեռք բերվեց այնպիսի զոհողությունների գնով, որ խալիֆայությունն ի վիճակի չէր այլևս որևէ նոր պայքարի ձեռնարկելու։ Մութասիմի թուլական հաջորդը՝ Վասիկը նույնիսկ փորձ չարեց ամրապնդելու խալիֆայության դիրքերը նահանգներում։

Դարի կեսին գահն անցավ Ջաֆար ալ-Մուտավաքքիլ ալա Ալլահին (847—861), որին հայ պատմիչները Ջափր[127] են անվանում։ Սա ամենակտրուկ և դաժան միջոցների դիմեց խալիֆայության միասնականությունն ամրապնդելու համար։ Մամուն խալիֆայի օրոք ծավալված գրական մտավորական շարժումը, որը թարգմանությունների շնորհիվ ստացված էր հունական փիլիսոփայական մտքի նվաճումներով, նոր խալիֆայի կատաղի հալածանքին արժանացավ, քանի որ այդ մտավոր շարժման մեջ նա տեսնում էր իսլամին՝ հետևաբար և խալիֆայությանն սպառնացող վտանգ։ Քրիստոնյաների և հրեաների դեմ հալածանքը հիմնականում Մուտավաքքիլի օրոք էր սկսվել, որովհետև նախքան այդ նրանք որոշ հալածանքի էին ենթարկվել միայն Օմայան Օմար Բ-ի (715—717) օրոք և խալիֆայության մեջ ընդհանրապես շեշտված հալածանքի քաղաքականություն չէր կիրառվել։

Սա Հայաստան ուղարկեց մի նոր ոստիկանի՝ Աբու Սաիդին (հայ. Աբուսեթ), որն իր զորաբաժնի հետ եկավ հավաքելու Հայաստանի հարկերը[128]։ Իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին ուղարկեց մի պատգամավորություն ընծաներով ծանրաբեռնված։ Պատգամավորությունը պետք է հարկը հանձներ Աբու Սաիդին և դրանով իսկ թույլ չտար, որ նրա հարկահանները գավառից գավառ շրջեին։ Երկրի ներքին ինքնավարությունը պահպանելու համար ցույց տրված այս դիմադրությունը մի լուռ ապստամբություն էր և Աբու Սաիդն զգալով դրության լրջությունը չուզեց իր ճանապարհը շարունակել մինչև Դվին կամ Պարտավ և նահանջեց։ Հայաստանից հեռա-

127 Թովմա, էջ 106։

128 Թովմա, էջ 107։

նալով նա իր հետ տարել էր Հայաստանի արաբների բողոքի նամակներն ուղղված հայ նախարարների դեմ[129]։

Նախքան Հայաստանից հեռանալը Աբու Սաիդը երկու հոգու հանձնարարել էր զբաղվել ըմբոստ գավառները (Տարոն և Վասպուրական) ճնշելու գործով մինչև իր վերադարձը։ Դրանցից մեկը Արզնի տեր Մուսա իբն Զուրարան էր, մյուսը՝ Ալա Ծովափին[130]։

Հայտնի չէ թե Զուրարայի ընտանիքը ե՞րբ հաստատվեց Աղձնիքում և ինչպի՞սի հարաբերության մեջ էր նույն նահանգում իշխող Շայբանիների հետ։ Կարելի է ենթադրել, որ նրանք Շայբանիների նման Բաքր ցեղից էին սերում։ Նրանց մեջ առաջինը հիշվում է Մուսան, որն ամուսնացած էր Բագարատի քրոջ հետ։ Սրա մասին մի քանի տեղեկություններ տալիս է Թովմա Արծրունին Աբուսեթի նա գնալու կապակցությամբ. «Բայց ի գնալ մեծ հազարապետին (իմա՝ Աբուսեթի—Ա. Տ. Ղ) յարքունիս՝ հաւատաց զվերակացութիւնն աշխարհիս Հայոց և հարկս արքունի ի ձեռս Մուսէյի ումեմն որդւոյ Զօրահայի հագարացւոյ որ տիրէր յայնժամ Արզնայ և ներքոյ կողմանն Աղձնեաց մերձ ի սահմանս Տարունոյ»[131]։ Մուսա որդի Զօրահայի (արաբ. Մուսա իբն Զուրարա)[132] անվանը քիչ ենք հանդիպում պատմիչների մոտ։ Թե Թովմա Արծրունին, թե Բալազուրին նրա անունը հիշում են նույն ձևով, այսինքն անուն և հայրանուն առանց որևէ տոհմանվան։ Նա այնքան հաջողություն է ունենում, որ ամբողջ Արմինիայի ոստիկանի հաջորդ է նշանակվում, այսինքն Թովմայի խոսքերով ասած, Հայոց աշխարհի «վերակացու», որը պետք է զբաղվեր հարկերի հարցերով։ Սակայն նկատի ունենալով, որ արքունի հարկը Բագարատն արդեն ուղարկել էր Աբու Սաիդի միջոցով, ապա ակներև է, որ վերջինիս կողմից Մուսային վստահված էր հարկերի անվան տակ հայ նախարարների և առաջին հերթին Բագարատ Բագրատունու դեմ պայքարելու դերը։ Բնական է, որ Մուսան,

---

129 Նույն տեղում, էջ 108։

130 Թովմա, էջ 108։

131 Նույն տեղում։

132 Beladsori, 212.

որպես Տարոնին սահմանակից ավատատեր կարող էր վեճեր ունենալ Բագրատի հետ։

Իրոք, Մուսան Աղձնիքի կողմից մտավ Տարոն և սկսեց հարձակումը Բագրատի վրա, իսկ Ատրպատականի կողմից սկսեց Վասպուրականն ասպատակել Ալա Ծովափին։ Վերջինիս մասին հիշում են արաբ պատմիչները որպես Ալա իբն Ահմադ ալ-Ազդի, իսկ Ծովափին՝ Սավաֆի անվան աղավաղումն է[133]։

Սրա շահատակությունները Վասպուրականում գրգռեցին Արծրունի Աշոտին, որը տեսնելով թե զուր է խոսել հաշտության մասին, հարձակվեց և ջախջախեց Ալայի զորքերը։ Ալան մի քանի հոգով ապաստանեց Բերկրիի կողմերը Ութմանիկների մոտ[134]։ Թովման մեծ ոգևորությամբ է նկարագրում այս հաղթանակը, որն արդեն բացահայտ ապստամբության սկիզբն էր։ Լսելով որ այդ ժամանակ Բագրատը նեղ դրության մեջ է, Աշոտը շտապեց Տարոն, որտեղ Մուսայի զորամասերը կանգ էին առել Մշո դաշտում։ Աշոտի և Բագրատի միացյալ ուժերը ջախջախեցին Մուսային և հալածեցին մինչև Բաղեշ, որտեղ և կանգ առան ընդառաջելով Բագրատի քրոջ, այսինքն Մուսայի կնոջ ազերբանքին։ Աղձնիքում Աշոտի և Բագրատի զորքերը տեղական արաբ դաղթականների մեջ կոտորած կազմակերպեցին, որոնք դիմեցին խալիֆային օգնություն հայցելու[135]։

Այս ժամանակ էր, որ Աբու Սաիդը թարմ ուժերով եկավ Հայաստան, բայց ճանապարհին մեռավ և զորքի գլուխն անցավ որդին՝ Յուսուֆը, որը Ուրմիո լճի կողմից առաջին հերթին շարժվեց Վասպուրականի վրա, որովհետև այս շարժման մեջ հիմնական դեմքերից մեկը Աշոտ Արծրունին էր[136]։ Աշոտը կարողացավ Յուսուֆին հմայել ընծաներով, որոնք տարել էր նրա մայրը՝ Հռիփսիմե տիկինը, որպեսզի հրաժարվի ասպատակություններից։ Յուսուֆն անցավ Տարոն և այնտեղ խաթում խարեությամբ ձերբակալեց Բագրատին և ուղարկեց Սամարա։ Այս բանն ահիթ ավեց խութեցիների հայտնի հարձակմանը.

---

133 Beladsori, 211. Tabari, III, 1584. J. Markwart, Südarmenien, 361.

134 Թովմա, էջ 111—112։

135 Նույն տեղում, էջ 113։

136 Նույն տեղում, էջ 107։

որի ժամանակ Յուսուֆն սպանվեց[137]։ Մուսա իբն Զուրարայի և Ալա Ծովափիի ջախջախումից հետո Յուսուֆի սպանությունն արդեն բոլորովին զրդռեց Մուտավաքքիլին, որը լուրջ պատրաստությամբ Հայաստան ուղարկեց Բուղա զորավարին։ Հայերի ապստամբությունը և Բուղայի արշավանքը արաբ պատմագրության մեջ որոշակի ուշադրության է արժանացել և բազմաթիվ արաբ մատենագիրներ անդրադառնում են այս հարցին։ Թե հայ, թե արաբ պատմիչների վկայությամբ, Բուղայի արշավանքը արագ ուժասպառ արեց երկիրը և այլևս ապստամբության ոչ մի հնար չմնաց։ Այստեղ պետք է հատկապես ընդգծել, որ եթե Ջահհաֆյանների ջախջախումից ու Բագրատունիների հաղթանակից հետո հայ նախարարները որոշ ինքնավարություն ձեռք բերելով կարողացել էին մեծ չափով խեղդել արաբ տարրը Հայաստանում, ապա Բուղայի արշավանքը արաբներին հնարավորություն տվեց առիթից օգտվելու և նորից աշխուժություն ցուցաբերելու։ Այս մասին են վկայում Թովմայի խոսքերը, երբ նկարագրելով Բուղայի արշավանքը ասում է «և ընդ նմա տաճիկք Հայաստանեայց որ բնակեալ էին ի կողմանս կողմանս աշխարհին առաջնորդէին Բուհայի ի մուտ և ելս աշխարհիս»[138]։ Այստեղ Արծրունյաց պատմիչը հավանաբար ակնարկում է Ջահհաֆյանների մնացորդներին, որոնք արդեն խիստ թուլացել էին։ Թաբարին վկայում է, որ Բուղայի գալուց առաջ Սնադա իբն Աբդ ալ-Համիդ ալ-Ջահհաֆին, որը դեռ ողջ էր, հայ իշխաններից իմանալով Յուսուֆ ոստիկանի (851—852) դեմ եղած տրամադրությունների մասին, նրան խորհուրդ է տալիս հեռանալ Հայաստանից[139]։

Այդ ժամանակ ոգևորված էին ոչ միայն տեղում հաստատված արաբները, այլև Հայաստան արշավող արաբ զորքերը, որոնց տրամադրությունների լավագույն արտահայտությունն է Թովմայի կողմից հաղորդված զրույցը, թե Հայաստան արշավող զորքի հրամանատար՝ Յուսուֆին խալիֆան ոգևորել

137 Beladsori, 211-212.
138 Թովմա, էջ 131։
139 Tabari, III, 1409.

խոսքեր է ասում և ի միջի այլոց խոստանում է «քեզ և զաւակի քում տաց զերկիրն զայն ի ժառանգութիւն»[140]»։ Այստեղ հստակ կերպով երևում է Աբբասյանների նոր միջոցառումը Հայաստանում արաբական տիրապետությունը ամրապնդելու համար։ Օմայանների օրոք Արմինիա ոստիկանության մեջ չկար ոստիկանների ժառանգական իշխանություն և դժվար է գտնել երկու ոստիկան միևնույն ընտանիքից[141]։ Աբբասյանները թեև չհրաժարվեցին այդ սկզբունքից, այսուհանդերձ որոշ ամիրայական տների համար նրանք բացառություն արեցին, ինչպես օրինակ, Շայբանիներին և Սուլամիներին։ Ահա այսպիսի մի բացառություն կարծես արվելու էր նաև Մարվազիներին, որոնցից արդեն երկու հոգի՝ հայր և որդի իրար հաջորդեցին ժառանգաբար, սակայն Յուսուֆի սպանությունը խանգարեց դրա իրագործումը։ Արմինիայի ժառանգական ոստիկանությունը կապված էր նաև Մեծ Հայքում որոշ գավառների ժառանգական հոդատիրության հետ։ Օրինակ, Շայբանիների տիրույթները Աղձնիքում նպաստեցին Արմինիայում նրանց բարձր պաշտոնի տիրանալուն, և մյուս կողմից, Սուլամիների ոստիկան դառնալը նպաստեց Սուլամի ցեղի Հայաստանում հաստատվելուն և Ապահունիքում ու այլուր աստիճանաբար տիրապետող դիրք ձեռք բերելուն։

Բուղան Հայաստանից հեռացավ 855 թ.։ Գերի էին տարվել բոլոր նշանավոր նախարարները և թվում էր թե արաբ զաղթականների համար եկել էր առիթից օգտվելու ժամանակը։ Տեղացի արաբները ամեն կերպ նպաստեցին Բուղայի զորքի հաջող առաջխաղացմանը, իրենց հերթին մեծացնելով իրենց կալվածները։ Բուղայի հեռանալու նախօրեին, երբ Վասպուրականում գլուխ էր բարձրացրել Գուրգեն Ապուսելճը նրա դեմ գնացող արաբ զորքին միացան «քաղաքացիքն Բերկրոյ որ Ութմանիկքն կոչին»[142]։ Ութմանիկ (այսինքն օսմանի) կոչված արաբ ցեղը հաստատվել էր Վանա լճի հյուսիս-արևելյան ծայրում հավանաբար Հարուն ալ-Ռաշիդի օրոք տեղի ունեցած մեկ ծա-

140 Թովմա, էջ 116։

141 J. Laurent, L' Arménie entre Byzance et l' Islam. 338-340. Հ. Նալբանդյան, Արաբ. ոստիկանները, էջ 106—111։

142 Թովմա, էջ 197։

նոթ գաղթականության ընթացքում. այդ ցեղը Գնունիների ձեռքից նվաճեց Բերկրին[143]։ Վասպուրականի իշխանների պարտությունը նրանց համար մի նպաստավոր առիթ էր և նրանք տարածվեցին մինչև Ամյուկ բերդը (Վանից դեպի հյուսիս), և հասան Վարագ։

Բուղայի արշավանքի կարևոր հետևանքներից էր արաբական ամիրաների տիրույթների ընդարձակումը Հայաստանում։ Այսպես, բացի վերոհիշյալ Ութմանիկներից իրենց կալվածքներն ընդարձակեցին նաև Շայբանիներն ու Սուլամիները։ Արզնում տիրող Մուսա իբն Զուրարան, որը Յուսուֆի հետ ունեցած հակառակության պատճառով անցել էր հայոց կողմը, Բուղայի կողմից անմիջապես ձերբակալվեց[144]։ Նրա կալվածների մի մասն անցավ Շայբանիներին, որոնք ավելի առաջ գնալով հասան մինչև Վանա լճի ափերը՝ Դատվան։ Սակայն ամենից ավելի ուշագրավը Սուլամիների կողմից Ապահունիքի տիրանալն է, որը պետք է այդ ժամանակ տեղի ունեցած լիներ։

Ըստ Թովմայի վկայության, Բուղայի հետ եկել էր որոշ արաբ գաղթականություն։ Խոսելով Վասպուրականի անտերնչության մասին, նա ասում է. «սկսան այնուհետև աներկիւղ համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երևսաց երկրիս ամենայն ազգքն տաճկաց որ ելեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց և ձեռնամուխ եղեն բաժանել զերկիրն յինքեանս. և արկանէին վիճակս և լարս ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս»[145]։ Այս գաղթականները, որոնք եկել էին ընտանիքներով հանդերձ, իրենց միջև բաժանում էին անտերնչության մատնված երկիրը տիրանալով նաև բերդերին։ Այստեղ խոսքը վերաբերում է ոչ այնքան նոր գաղթականների ներհոսմանը (որը թվով փոքր պետք է եղած լիներ) ինչքան նախկինում հաստատված ցեղերի տիրույթների ընդարձակմանը։ Այս վերջիններից պետք է հիշել Սուլայմ ցեղի արաբներին, որոնք օգտվելով խառն իրադրությունից տիրացան Մանազկերտին։

---

143 Նույն տեղում, էջ 247։

144 Beladsori, 211-212.

145 Թովմա, էջ 151—152։

Այսպիսի նպաստավոր իրադրության մեջ էր, որ նորից հանդես եկավ մի նոր Ջահհաֆյան արկածախնդիր՝ Սևադայի որդին Ջահհաֆը։ Հայտնի չէ թե երբ մեռավ Սևադան կամ թե մինչ այդ որտեղ էր և ինչով էր զբաղված կրտսեր Ջահհաֆը։ Նա հանդես եկավ այնպիսի մի ժամանակ, երբ թվում էր թե երկրում անտերություն էր և ահա այն ինչ չհաջողվեց իր նախնիներին, կարծես թե կարող էր հաջողվել կրտսեր Ջահհաֆին։ Բայց սա էլ իր հերթին բախվեց Բագրատունիների հետ և այս անգամ արդեն Ջահհաֆյանները ընդմիշտ հեռացան ասպարեզից։

Կրտսեր Ջահհաֆը հանդես եկավ այն ժամանակ, երբ Բուղայի կողմից գերի տարված Սմբատ սպարապետին հաջորդած որդին՝ Աշոտը, եղբոր Աբասի հետ միասին, ստիպանարար վերականգնել էր Բագրատունիների խախտված դիրքերը Հայաստանի քաղաքական կյանքում։ Սրա մասին խոսում է Ասողիկը, ասա որի 3ԺԲ թվականին (863), այսինքն Աշոտի իշխանաց իշխան նշանակվելուց հետո, Շահապը (իմա՝ Ջահհաֆը) Սևադայի որդին «գայ յերկիրս Հայոց»[146]։ Արդյոք Ասողիկի խոսքերից պետք է եզրակացնել, որ սա ուրիշ տեղից եկավ Հայաստան։ Հավանական է, որ Ջահհաֆյանների մնացորդները պարտությունից հետո ապաստան գտած լինեին որևէ հարևան երկրում՝ ինչպես օրինակ, Ատրպատականում կամ Աղձնիքում։ Ջահհաֆը գալիս էր մեծ զորքով (ամբոխասաստ զօրու), որը նրան կարող էր տալ միայն որևէ հզոր իշխան։ Նրա զորքի ուժի մասին է վկայում այն փաստը, որ Աբաս սպարապետը նրան ջախջախելու համար հարձակվեց քառասուն հազար զորքով։ Ջահհաֆը հասավ մինչև Արշարունիք գավառը, որտեղ Աբասը ոչնչացրեց նրա ամբողջ զորքը և այնպիսի կոտորած կազմակերպեց, որ Ջահհաֆը 36 հոգով հազիվ փախավ (իսկ Շահապայ ԻՁ արամբք մաղապուր պրծեալ՝ անցեալ գնայր ամօթալից)[147]։ Մոտավորապես այդ ժամանակ (865)[148] հիշվում է Ջահհաֆ իբն Սևադան, որպես Մելիտինեում արաբ զորքի

---

146 Ասողիկ, էջ 110։

147 Նույն տեղում։

148 Tabari, III, 1606.

հրամանատար, ուր նա դիմել էր հավանաբար իր բախտը փորձելու։

Այսպիսով, Ջահհաֆյաններն ընդմիշտ անհետացան, չկարողանալով մոտ կես դար տևող իրենց պայքարով որևէ կայուն իշխանություն ստեղծել, սակայն նրանք նախադրյալներ ստեղծեցին Հայաստանում նոր արաբական ամիրայությունների գոյացման և առաջին հերթին իրենց մերձավոր Կայսիկ տան քաղաքական ասպարեզ մտնելու համար։

7. ԱՐԱԲ ԱՄԻՐԱՆԵՐԻ ՀԱՐՄԱՐՎԵԼԸ ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ

Արաբական ցեղերի ռազմիկ վերնախավը (ցեղապետներ և այլն) դուրս գալով արաբական թերակղզուց հաստատվեցին այնպիսի երկրներում, որոնց տնտեսական վիճակը և հասարակական կառուցվածքը արմատապես տարբերվում էր իրենցից։ Արաբիայի անապատներում[149] ռազմիկ ցեղերը ունեին գործունեության որոշակի շրջանակ, որտեղ և թափառում էին զբաղվելով սոսկ անասնապահությամբ։ Պարզ է, որ այսպիսի պայմաններում երկրագործությունն ու արհեստները նախնական շրջանակներից այն կողմ չէին կարող անցնել, այն էլ գլխավորապես Եմենում և մի քանի այլ մասերում։

Ցեղը արաբական հասարակության մեջ մի կարևոր միավոր էր, նա էր հիմնական բջիջը, որի շուրջը զարգանում էր թե քաղաքական, թե հասարակական կյանքը։ Տոհմական արյունակցական կապերը որոշիչ դեր ունեին արտաքի կյանքում, որովհետև ցեղն իր անդամներից պահանջում էր մոլեռանդ հավատարմություն։ Ցեղը հպատակվում էր իր ցեղապետին, որը շեշտված նահապետական գծեր ուներ և ընտրվում էր տվյալ ցեղում տիրապետող դիրք ունեցող ընտանիքից։

Դրությունն արմատապես փոխվեց, երբ իսլամի դրոշի տակ արաբական ցեղերը հոծ խմբերով դուրս հոսեցին չոր անապատներից դեպի Միջագետքի ու Եգիպտոսի բարեբեր հովիտ-

---

[149] Djazirat al-'Arab, Enc. of Isl., I, p. 543-546.
Ph. Hitty, History of the Arabs, p. 23-29.

ները և դեռ ավելի առաջ գնալով Արևելքում հասան մինչև Ինդոսի հովիտը, իսկ Արևմուտքում՝ Իսպանիա։

Արշավանքներն սկսելուց հետո մոտ մեկ դար արաբական ցեղերը[150] զբաղված էին սոսկ ռազմական գործողություններով, ուստի և իրենց գրաված երկրներում հաստատվելու և հողեր ձեռք բերելու ուժեղ ձգտում դեռ չցուցաբերեցին։ Մարգարեին հաջորդող առաջին չորս խալիֆաների, ինչպես նաև որոշ չափով Օմայանների օրոք արաբները բավարարվում էին նվաճված երկրներից հարկեր վերցնելով, ընդ որում քրիստոնյաներից (և ընդհանրապես ոչ մահմեդականներից) գանձում էին թե հողահարկ, թե գլխահարկ։

Նվաճումներն իրենց գագաթնակետին հասան Օմայան խալիֆաներ Աբդ ալ-Մալիքի և նրա որդու Վալիդի (հայ. Վլիթ) իշխանության տարիներին (685—715), երբ գրավվեցին Միջին Ասիան, Ինդոսի հովիտը և Իսպանիան։ Ը դարի երկրորդ քառորդում նվաճումների շրջանը հիմնականում վերջ էր դրել և արաբ ռազմիկ ցեղապետներն ու զորավարները, որոնք այլևայլ երկրներում բարձր դիրքերի էին հասել, միայն սահմանամերձ շրջաններում էր որ դեռ ղենքը ցած չէին դրել, այն էլ Բյուզանդիային սահմանակից նահանգներում։

Խալիֆայության նահանգներում արաբական տարբեր ցեղեր էին հաստատվել։ Ասորիքում հարավային՝ Եմենի ցեղերն էին, իսկ Ջազիրայում՝ Եփրատի միջին մասում հաստատվել էին հյուսիսային ցեղախմբին պատկանող Կայս-այլան ցեղերը (որոնց մի մասը հետագայում անցավ մինչև Հայաստան)։ Քանի դեռ շարունակվում էին նվաճողական պատերազմները արաբական ցեղերի ռազմունակ ոգին միշտ բարձր էր, բայց վերջին Օմայանների օրոք՝ մանավանդ Ը դարի երկրորդ քառորդում, աստիճանաբար ամրանում էր նվաճած երկրներում վերջնականապես հաստատվելու տրամադրությունը, կալվածներ ձեռք բերելու ձգտումը։

Նվաճումների սկզբնական շրջանում խալիֆաները ամեն կերպ ջանում էին խանգարել արաբներին արաբական թերակղզուց դուրս կալվածների տիրանալուն։ Օմար խալիֆան

---

[150] Al-'Arab, Enc, of Isl., I, p. 527-529.

(634—644) Նույնիսկ հրամանով արգելեց այդ, համոզված լինելով, որ եթե արաբը կալվածների տիրանա, նրա մարտական ոգին կթուլանա և նույնիսկ կենթարկվի տեղական բարքերին[151]։

Սակայն հնարավոր չեղավ կասեցնել իրերի զարգացման բնական ընթացքը և ահա նվաճումների շրջանի վերջավորությունը դարձավ մի նոր շրջանի սկիզբը, երբ արաբական ցեղերի վերնախավը սկսեց մերձենալ տեղական վերնախավին։ Մեծ մասամբ այս երևույթը հատուկ է արբասյան շրջանին և մի արմատական բեկում առաջացրեց արաբների հասարակական կառուցվածքի մեջ։

Այն երկրները, որտեղ արաբական ցեղերը հաստատվել էին արդեն մի քանի դար է որ թևակոխել էին հասարակության զարգացման ավատական շրջանը և բնականաբար արաբ նվաճողները ոչ միայն պիտի ազդեին այլև ավելի շատ պիտի ազդվեին այն երկրներից, որ նվաճել էին։

Սկսվեց արաբ ռազմիկ վերնախավի ավատականացման շրջանը, որը տարբեր երկրներում տարբեր ձևերով արտահայտվեց։ Այժմյան արաբական երկրներում արաբ ռազմիկ վերնախավը մեծ չափով իր ձեռքն էր վերցրել երկրի հողային տարածությունները, կազմելով այդ երկրների հողատեր դասակարգը, իսկ այլ երկրներում, ինչպես Իրանում, տեղական ազնվականությունը իր դիրքերը չզիջեց նոր նվաճողներին։ Պարսիկ ազնվականությունը ընդունեց մահմեդականությունը, նույնիսկ որոշ ժամանակ արաբերենը պարսիկների համար գրական լեզու դարձավ, բայց արաբ ամիրաներին երբեք չհաջողվեց հողային մեծ տարածություններ ձեռք բերել Իրանում կամ էլ դուրս մղել պարսիկ հողատերերին։

Ինչպես ասվեց, խալիֆայության կազմավորման սկզբնական շրջանում, խալիֆաները համաձայն չէին որ արաբ ռազմիկ տարրը հողային տարածություններ ձեռք բերի, նույնիսկ նահանգների կառավարիչները այնքան արագ էին փոխվում, որ ամեն մեկը հազիվ մի քանի տարի էր մնում։ Կառավարիչները նշանակվում էին տարբեր ընտանիքներից, որպեսզի

---

151 Ph. Hitty, History of the Arabs, p. 169-173.

միևնույն ընտանիքի անդամները ժառանգաբար իշխելով իրենց իշխած երկրների նկատմամբ հավակնություններ չունեցին։ Եգիպտոսում 640—869 թթ., այսինքն ավելի քան երկու դար տևող ժամանակաշրջանում, իրար հաջորդեցին հարյուրից ավելի կառավարիչներ[152], իսկ Իսպանիայում (Անդալուս) Օմայանների իշխանության տարիներին (711—756) իշխեցին 20 կառավարիչներ[153]։ Հայաստանում Օմայանների իշխանության մոտ կես դար տևող ժամանակաշրջանում փոխվեցին 23 ոստիկաններ[154], որոնք ընդհանրապես իրար հետ աղգակցական կապեր չունեին։

Աբբասյանների օրոք այս քաղաքականությունը որոշ չափով փոխվեց։ Նախկին ցեղապետներն ու զորապետները արդեն կապվել էին հողի հետ, որի վրա ժառանգաբար իշխում էին։ Նույնիսկ ոստիկանների նշանակումը փոքր չափով դարձավ ժառանգական, ինչպես, օրինակ, Արմինիայում Շայբանի և Սուլամի ամիրայական տների մեջ, որոնք մեծ թվով ոստիկաններ տվեցին։ Այնուամենայնիվ, ոստիկաններին արագ փոխելու քաղաքականությունը էլ ավելի ուժգնությամբ կիրառվեց։ Աբբասյանների իշխանության 130 տարիների ընթացքում Արմինիայում մոտավորապես 85 անգամ ոստիկան փոխվեց[155], որովհետև սա մի միջոցառում էր անջատողական ձգտումների առաջն առնելու համար։

Աբբասյանների ժամանակ Հայաստանի որոշ շրջաններում հաստատված արաբական ցեղերը տարբեր միջավայրում էին գտնվում, քան նրանք, ովքեր Միջագետքում կամ Ասորիքում էին հաստատված։ Այստեղ Հայաստանում նրանք քանակի տեսակետից փոքրամասնություն էին կազմում, թեև վայելում էին երկրի իշխողների հովանավորությունը։ Ուստի պարզ է, որ նրանք չէին կարող կարճ ժամանակում երկրի տերերը դառնալ, այնպես ինչպես պատահել էր Ասորիքում և Միջագետքում։

---

152 S. Lane-Poole, A History of Egypt in the Middle Ages, London 1901, p. 45-58.

153 E. Levi Provencal, al-Andalus, Enc. de l' Islam, nouv. ed., I, 508.

154 Հ. Նալբանդյան, *Արաբ ոստիկանները*, էջ 106—111։

155 *Նույն տեղում*, էջ 111—124։

Շայբանիները հեշտությամբ տիրացել էին Աղձնիքին և սա արդյունք էր ընդհանրապես Ասորիքի և Միջագետքի հեշտ նվաճվելուն, որովհետև Աղձնիքը այդ ժամանակ Վերին Միջագետքի մասն էր կազմում: Նրանք դեռ այնքան էլ կարիք չէին զգում հարմարվելու հայկական նախարարական միջավայրին, թեև Արմինիա ոստիկանությունը նրանց ձգտումների և գործունեության հիմնական ասպարեզներից էր:

Այսպես չեղավ, սակայն, Ջահհաֆյանների և Զուրարայի տան հետ: Ամենից ավելի ճկունություն ցուցաբերեցին Ջահհաֆը և նրա հաջորդները, որոնք ամեն միջոցի դիմեցին Հայաստանում որևէ արդյունքի հասնելու համար: Եթե Շայբանիները կամ ուրիշները հարմարվել էին այնքանով, որ ենթարկվել էին ավատական ընդունված կարգերին, իրենց հերթին դառնալով ժառանգաբար իշխող ավատատերեր, ապա Ջահհաֆյանները ձգտեցին նույնիսկ խնամիական կապերով մերձենալ հայ նախարարական տների հետ՝ օգտվելու համար նրանց ժառանգական իրավունքներից: Ջահհաֆը հենց ամուսնության միջոցով էր, որ ուզում էր Մամիկոնյանների տան վրա իրավունքներ ունենալ: Կործանվող Մամիկոնյանների դստեր հետ ամուսնանալը նրան կարող էր Տարոնի, Տայքի և այլ կալվածների ժառանգության հավակնորդ դարձնել: Սակայն, տեսնելով դրա անզորությունը, նրա եղբորորդին՝ Սևադան ամուսնացավ ոչ թե թուլացող մի ընտանիքի դստեր, այլ արագորեն հզորացող Բագրատունիներից Արուսյակ իշխանուհու հետ և լավ հարաբերությունների մեջ էր հայ նախարարների հետ: Պարզ է, որ խնամիական կապերը ենթադրում էին նաև հայ նախարարների բարքերի յուրացում, որն անխուսափելի էր Ջահհաֆյանների գործունեության հաջողության համար: Ցեղային միջավայրից դուրս գալով Ջահհաֆյանները ընկել էին զուտ հայկական նախարարական միջավայրի մեջ, ուստի պարզ է, որ վերջինիս ազդեցությունը նրանց վրա պետք է մեծ եղած լիներ:

Մերձեցման և հարմարվելու նույն ձգտումը նկատվում է նաև Արզնի և Բաղեշի տեր Զուրարայի որդի Մուսայի մոտ: Սա արդեն ամուսնացել էր Բագրատունիներից Հզորագույնի՝ Բագարատի քրոջ հետ, որի տիրույթները սահմանակից էին իր

կալվածներին։ Լինելով այսպիսի հզոր իշխանի փեսան, նա կարող էր ապահով զգալ որևէ ոտնձգությունից թեկուզ Արծրունիների կողմից (որոնք հետագայում Ժ դարի սկզբին Գագիկի օրոք Վանա լճի հարավային կողմերից ասպատակեցին նրանց վերջին ժառանգորդների հողերը)։ Սակայն այս խնամիությունը արգելք չհանդիսացավ որ Մուսան պայքարեր հենց իր աներորդու դեմ և պարտությունից հետո դարձյալ իր կնոջ միջամտությամբ էր, որ Բաղեշ քաղաքը ազատվեց հայերի վրեժխնդրությունից։

Հետագայում Մուսայի որդին Աբու-լ-Մաղրան, որը մոր կողմից հայ էր, ամուսնացել էր Արծրունի իշխանուհու հետ և այնքան էր «հայացել», որ նույնիսկ թաքուն ընդունել էր քրիստոնեությունը։ Աբու-լ-Մաղրան փեսայանալով Արծրունիներին, գրեթե ենթակա էր դարձել նրանց։ Երբ Արծրունյաց մեծ իշխանները կռվի մեջ էին լինում, Արզնի տիրոջ զորքը մասնակցում էր նրանց հետ։

Զուրարիկների այս մերձեցումը հայ նախարարական տների հետ արդյունք էր ոչ թե նրանց ունեցած հավակնությունների (ինչպես Ջահհաֆյանների մոտ), այլ պարզապես ինքնապաշտպանության մի միջոց էր։ Նրանց անմիջական հարևան Շայբանիների սպառնալիքն այնքան ուժեղ էր, որ Զուրարիկները բնականաբար պաշտպանություն էին որոնում հայ նախարարական տների մոտ և հենց Շայբանիներն էին, որ ինչպես կտեսնենք, ոչնչացրեցին նրանց իշխանությունը տիրանալով նրանց բոլոր կալվածներին։

Կարևոր է ընդգծել, որ մերձեցման այս տրամադրությունները[156] արաբ ամիրաների մոտ առկա էին միայն Ը դարի վերջին և Թ դարում, իսկ հետագայում, ինչպես կտեսնենք, Մանազկերտի կայսրիները այսպիսի տրամադրություններ չցուցաբերեցին, որը և պետք է բացատրել նրանց ապրած ժամանակի պայմաններով։ Վերջիններս ժամանակակից լինելով

156 Բալազուրին վկայում է, որ Աբբասյանների շրջանում Արմինիայի նշանավոր կառավարիչ Եզիդ իբն Ուսայդ ալ-Սուլամիի մայրը Սիսականի պատրիկի դուստրն էր, սակայն սա խնամիական կապ չի կարելի համարել, որովհետև նրան պարզապես առևանգել էին Մուհամմադ իբն Մրվանի նվաճողական արշավանքների ժամանակ։ Beladsori, 205.

Բագրատունյաց թագավորության, իհարկե, չէին կարող ունենալ այնպիսի հավակնություններ, ինչպիսին ունեին Ջահհաֆյանները, այլ ապրում էին ինչքան կարելի է մեկուսացած հայ նախարարական շրջանակներից և կապված էին մեծ մասամբ Աղձնիքի Շայբանիների և Համդանյանների հետ։ Ճիշտ է, նրանք ինչպես նաև Բերկրիի Ութմանիկները որոշ հարաբերության մեջ էին հայ նախարարների, մանավանդ Արծրունիների և Բագրատունիների (թե Անիի, թե Տարոնի) հետ, այնուամենայնիվ, նրանք չունեցան այնպիսի սերտ կապեր, ինչպիսին ունեին Ջահհաֆյանները կամ ուրիշները։

Հայ նախարարների հետ մերձեցման ձգտումները ավելի ուժեղ ձևով արտահայտվեցին նաև հետագայում, բրդական տարրի ներթափանցման ժամանակ, որի մասին խոսվելու է իր տեղում։

—

Սակայն տեղական ավատական կարգերին ենթարկվելու մեծագույն նշանը այն անջատողական ձգտումներն էին, որ տեղում հաստատված արաբ ամիրաները ցուցաբերեցին Թ դարի առաջին կեսում։ Արմինիայում հաստատված արաբ տարրը երկսայրի սուր էր խալիֆայության համար։ Տեղական տարրը (հայեր, վրացիներ, աղվաններ) հպատակ և հնազանդ պահելու համար նա հավատարիմ հենարան էր և մանավանդ հույների և խազարների հարձակումներից պաշտպանվելու համար հուսալի պատվար եղավ։ Սակայն դառնալով հողատեր ամիրաներ արաբ զորավարներն էլ սկսեցին առիթը բաց չթողնել խալիֆայության հետ իրենց կապերը խզելու և անկախ բռնավորներ (արաբ. մուտաղալլիբ tagh allaba նվաճեց, տիրեց, հաղթեց՝ բայից) դառնալու համար[157]։

Խռովությունների բույն էր Դերբենդը, որը դեռ Օմայանների ժամանակ բնակեցված էր արաբներով, իսկ խալիֆաները ջանում էին ամեն կերպ գոհացնել Դերբենդի արաբ ռազմիկներին[158], քանի որ խազարների դեմ ռազմագիտական կենսական նշանակություն ուներ այդ վայրը։

---

[157] **И. К. Жузе**, Мутагаллибы в Закавказье в IX-X вв., К истории феодализма в Закавказье. Материалы по истории Грузии и Кавказа, вып. III, Тбилиси, 1937, стр. 199, 210.

[158] **Beladsori**, 207.

Արաբների պաղեստինի կայսրությունը Հարուն ալ-Ռաշիդի օրոք (790-ական թվականներին) Արմենիայում ծայր առավ պարսիկ Աբու Մուսլիմ ալ-Շարիի ապստամբությունը[159]։ Սա պայքեց հարկահան Աբու Սարահի սպանությունից հետո, որը տեղի էր ունեցել Պարտավում և բավական անհանգստություն պատճառեց արաբ կառավարիչներին։ Ինչպես տեսանք, Շարին նույնիսկ մի քանի ամիս պաշարեց Դվինը։ Խալիդ իբն Եզիդ իբն Ուսայդ ալ-Սուլամի ոստիկանը և նրա զորավար Աբդ ալ-Մալիք ալ-Հարաշին պարտություն կրեցին Շարիից։ Նույն բախտը վիճակվեց նաև Խալիդի հաջորդին։ Միաժամանակ Ատրպատականում ապստամբվել էր Մուհալհիլ ալ-Տամիմին և ահա Հարուն ալ-Ռաշիդն Եզիդ իբն Մազյադ ալ-Շայբանիին 10 հազար զորքով ուղարկեց Շարիի դեմ, իսկ Ատրպատականի ապստամբի դեմ՝ Յահիա ալ-Հարաշիին 12 հազար զորքով։ Վերջինս Ատրպատականը հանդարտեցնելուց հետո եկավ և միացավ Եզիդին։ Հենց այդ ժամանակ մեռավ Շարին, իսկ նրա հաջորդ Մաքին իբն Մուսա ալ-Բալյականին գերի բռնվեց և ուղարկվեց Բաղդադ։

Բաբեկի ապստամբությունը թեև իր էությամբ տեղական իրանական տարրի ընդվզումն էր խալիֆայության ճնշման և իսլամի դեմ, սակայն ըստ ամենայնի նպաստեց Արմենիայում թե հայ ու աղվան նախարարների դիրքերի ամրապնդմանը, թե արաբ բռնավորների (մուտաղալլիբների) աշխուժացմանը։ Եղավ այնպիսի դեպք, երբ նույնիսկ արաբ կառավարիչը միացավ նրան։ Օրինակ, Արմենիայի և Ատրպատականի կառավարիչ Հաթիմ իբն Հարսամա իբն Այանը, որը դեռ նոր էր տեղ հասել, երբ լսեց հոր սպանման լուրը, անմիջապես հարաբերություն մեջ մտավ Բաբեկի և հայ նախարարների հետ ապստամբություն պատրաստելու համար, բայց շուտով վախճանվեց[160]։

Հայաստանում, ինչպես տեսանք, ծնունդ առավ Ջահհաֆի և նրա հետևորդների ապստամբությունը, իսկ Վրաստանում՝ Մուհամմադ իբն Ատտաբի շարժումը[161] (820-ական թվական-

[159] Jaqubi, II, 515-516.

[160] Jaqubi, II, 563.

[161] Jaqubi, II, 565

ներին)։ Վերջինիս դեմ անզոր գտնվեց արաբ պատավարիչ Աբդ ալ-Ալա իբն Ահմադ ալ-Սուլամին, ուստի Մամուն խալիֆան ուղարկեց Խալիդ իբն Եզիդ իբն Մազյադ ալ-Շայբանիին, որը հնազանդեցրեց Մուհամմադ իբն Ատտարին։ Սրանից որոշ ժամանակ անց Տփղիսում դրության տերը դարձավ Իսհակ իբն Իսմաիլը, որը Արմինիայի կառավարչի տեղակալն էր Ջուրզանում (Վիրք)։ Հիշյալ Խալիդի որդին՝ Մուհամմադ իբն Խալիդ ալ-Շայբանին սրա դեմ կռվեց, սակայն առանց հաջողության։ Իսհակ իբն Իսմայիլին գլխատեց Բուղան իր հայտնի արշավանքի ժամանակ[162]։

Հետաքրքրական է նշել, որ այս բոլոր ապստամբությունների ժամանակ Շայբանի ամիրաները հավատարիմ մնացին Աբբասյան խալիֆաներին։ Արմինիայում, Ատրպատականում և Ջազիրայում բարձր պաշտոնների տիրանալով նրանք հանդես էին գալիս նույնիսկ ճնշողի դերում։

Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում հաստատված արաբ բռնավորների ընդվզումները, որպես հակախալիֆայական շարժումներ, թվում է, թե պետք է նպաստավոր լիներ այդ երկրների համար, սակայն իրենց էությամբ դրանք մեծ վնասներ հասցրեցին այդ երեք երկրներին և նոր բարդությունների սկիզբը դրեցին։ Արմինիայում բուն դրած արաբ բռնավորների նպատակն էր խորը արմատներ գցել իրենց հաստատված նահանգներում և նույնիսկ խալիֆայության թուլացումից հետո նրանք երկար ժամանակ մնացին կազմելով ինքնուրույն ամիրայություններ և խանգարելով Հայոց, Վրաց և Աղվանից թագավորությունների ամրապնդմանն ու հզորացմանը։

---

[162] Beladsori, 212.

ԳԼՈՒԽ Բ

ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

1. ԿԱՅՍԻԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԱՆԱԶԿԵՐՏՈՒՄ ԱՇՈՏ Ա-Ի ՕՐՈՔ

Հայաստանում հաստատված արաբ տարրը, որը Թ դարի առաջին կեսում չէր կարողացել ոչ մի կայուն իշխանություն հիմնել, Բուղայի արշավանքից հետո արդեն տեր դարձավ ամբողջ գավառների և քաղաքների։ Ամենից ավելի օգտվեց Սուլայմ ցեղին պատկանող Մանազկերտի ամիրայական տունը (հայկական աղբյուրներում պարզապես՝ Կայսիկ), որը Թ դարի 60-ական թվականներին արդեն Ապահունիքի տերն էր։ Նրանք հավանաբար գաղթել էին Հայաստան դեռ Ը դարի վերջին՝ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք, սակայն Մանազկերտին տիրացան միայն Բուղայի արշավանքի և հայ նախարարների գերության ժամանակ։ Թեպետ և դժվար է ընդունել սրանց և Ջահհաֆյանների որոշ բանասերների կողմից ընդունված նույնացումը[1]*, այնուամենայնիվ, անժխտելի է, որ Ջահհաֆյանները Սուլայմ ցեղի հետ սերտ կապ ունեին։*

Նրանց նույնացման կարծիքի դեմ է խոսում հենց այն փաստը, որ եթե 860-ական թվականներին Աշոտ Բագրատունին խիստ պայքար էր մղում վերջին Ջահհաֆի դեմ, ապա

[1] J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, p. 322-326.

ՀԱՐԱՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ Ժ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ



Ըստ Է. Հոնիգմանի և Ս. Երեմյանի քարտեզների

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԿԱԴԵՄԻԱ

գրեթե նույն ժամանակ նա ճանաչել էր Աբու-լ-Վարդ Կայսիկի ժառանգական իշխանությունը Մանազկերտի վրա։

Աբու-լ-Վարդի՝ Աշոտի կողմից ճանաչման մասին է խոսում Ժ դարում Կոստանդին Ծիրանածինը։ Ըստ նրա, Աշոտ իշխանաց իշխանը, որը տիրում էր Արևելքի բոլոր կողմերին, Աբու-լ-Վարդին տվեց Խլաթ, Արճեշ և Բերկրի քաղաքները[2]։ Ծիրանածինը դիտակցորեն աղավաղում է որոշ փաստեր[3], հետագայում լատարվածը ավելի վաղ շրջանին վերագրելով։ Օրինակ, հաստատ դիտենք, որ Բերկրի քաղաքը Աշոտ Ա-ի և նույնիսկ Սմբատ Ա-ի օրոք դեռ պատկանում էր Ուռեմանիկներին, սակայն բյուզանդացի պատմիչը այն ևս մտցնում է Աշոտի կողմից Կայսիկներին տրված քաղաքների մեջ, որովհետև Ժ դարում Կայսիկները Բյուզանդիային որոշ չափով ենթակա էին դարձել, ուստի ինչքան շատ քաղաքներ Աշոտ Ա-ն իր կամքով և օրինավոր կերպով վերջիններիս տված լիներ, այնքան ավելի ձեռնտու էր բյուզանդական դիվանագիտությանը։

Ծիրանածնի կողմից հաղորդված Աբու-լ-Վարդի անվան հունական ձևը («Ապելբարտ»)[4] Կ. Մարկվարտն ուղում էր կարդալ որպես արաբական Աբդ-ալ-Բառ[5] անվան աղավաղումը։ Սակայն արաբական աղբյուրներում մենք հանդիպում ենք մի ուրիշ կայսիկ ամիրա Աբու-լ-Վարդի[6], որի անունը Ծիրանածնի մոտ դարձյալ նույն ձևով է հաղորդված[7]։ Հավանաբար Մարկվարտին թյուրիմացության մեջ էր գցել Թովմա Արծրունու Ապլբառ ձևը, սակայն այժմ արդեն ամեն կասկածից վեր է, որ այդ ամիրայի անունը Աբու-լ-Վարդ էր[8], մանավանդ որ այսպես ենք գտնում նաև Նարեկացու մոտ (Ապլվարդ)[9]։

Թովմա Արծրունին Մանազկերտի ամիրաներին կոչում է «մանաւազեան»[10], նկատի ունենալով որ այդ գավառի հին տե-

---

[2] Const. Porph., De adm. imp. c. 44, p. 199.
[3] M. Canard, Les Hamdanides et l' Arménie, p. 82.
[4] Const. Porph., De adm. imp. c. 44, p. 198.
[5] J. Markwart, Südarmenien, s. 501.
[6] Ibn Miskawayh, II, 201 Ibn al-Athir, VIII, 180.
[7] Const. Porph., De adm. imp., c. 44, p. 201.
[8] M. Canard, Histoire de la dynastie des Hamdanides, p. 174.
[9] «Գիրք թղթոց», էջ 198։
[10] Թովմա, էջ 246։

բերը մանավազյան իշխաններին էին և նույնիսկ Ապահունիքը կոչվում էր «Մանաւազեան նահանգ»։

Հայագիտական ժամանակակից այն գրականության մեջ, որտեղ քննության է առնված Թոնդրակյանների սկզբնավորման հարցը, Աբու-լ-Վարդը և նրա ժամանակը որոշ վեճի առարկա են դարձել։ Այստեղ խնդրո առարկան Գրիգոր Նարեկացու Թոնդրակյանների մասին գրած «Թղթի» մեջ Աբու-լ-Վարդին հասկացրած մի բանի տողերն են։ Թոնդրակյանների մասին նա ասում է. «...կոտորեալսն ի սրոյ՝ վրիժախնդիր հեթանոս ամիրային Ապլվարդայ, որ արդարև գաւազան սրբատմբտութեան ի ձեռին Տեառն Յիսուսի»[11], ապա ասորև ավելացնում է, որ այս ամիրան սպանել էր Թոնդրակյանների նախնիներին (քանզի և այն հզաւր այր... որ զանիծեալ զնախնիս նոցա խայտառակամահ սատակեաց...)։ Սմբատ Զարեհավանցուն սպանելիս ամիրան ասում է, որ Քրիստոս երեք օրից հարություն առավ, ուստի եթե դու իրոք «Քրիստոս» ես, ապա թող քեզ էլ սպանեմ և թաղեմ, և դու ևս կենդանացիր, թեկուզ 30 օրում։ Նարեկացին թե Զարեհավանցուն, թե Աբու-լ-Վարդին համարում է մոլորյալներ (Արդ նա մերձ էր և դրացի դաւանացողացն մոլեգնութեան...), քանի որ երկուսն էլ թշնամի էին հայ եկեղեցուն։

Ժխտելով Բ. Սարգիսյանի այն սխալ կարծիքը, թե Նարեկացու հիշած «Ապլվարդ»-ը կարող էր լինել Ժ դարում ապրած Աբու-լ-Հայջան կամ Աբու-Դուլաֆը (Ապու Տլուլի)[12], Ա. Հովհաննիսյանը իրավացիորեն գտնում է, որ սա հենց առաջին կայսրի Աբու-լ-Վարդն է[13]։ Սակայն իր հերթին ենթադրելով, որ Սմբատ Զարեհավանցին երևան էր եկել Թ դարի առաջին կեսին Աբու-լ-Վարդի իշխանության սկիզբը տեղափոխում է 830-ական թվականները։ Ինչպես տեսանք, այս Կայսրի ամիրան մոտավորապես 860-ական թվականներին էր, որ տիրեց Ապահունիքին ու Մանազկերտին և որոշ ուժի տեր («Հզօր

11 «Գիրք Թղթոց», էջ 498, 500։

12 Բ. Սարգսեան, Ուսումնասիրութիւն մանիքեա-պաւղիկեան Թոնդրակեցիների աղանդին, Վենետիկ, 1893, էջ 69, 71, 110։

13 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երևան, 1957, էջ 341։

այր») դարձավ միայն հետագայում, ուստի ճիշտ չէր լինի նրան տանել Բուղայի արշավանքի թեկուզ նախօրեն, երբ դեռ կենդանի էր նույնիսկ Սեադան:

Նույն հարցին անդրադարձող Ս. Պողոսյանը Ժ դարի ապրող մյուս Աբու-լ-Վարդին բերում է մինչև այդ դարի սկիզբը[14], բոլորովին զանց առնելով երկու Ապու-լ-վարդերի միջև ընկած մյուս Կայսիկների նույնիսկ գոյությունը, որոնց մասին հանգամանորեն խոսում է Միրանածինը: Նրան թվում է, թե Թ դարում ապրող առաջին կայսիկի անունը Ապլբաս է, իսկ Ժ դարում ապրող վերջին կայսիկը՝ Աբի-լ-Վարդ է կոչվում: Արաբերենում Աբի ձևը Աբու-ի (հայր) սեռական հոլովն է և իրականում երկու կայսիկների անունն էլ Աբու-լ-Վարդ է եղել:

Հատկանշական է, որ Թոնդրակյան ապանդի հիմնադիրը՝ Սմբատը ծագմամբ Այրարատի Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղից[15] էր, բայց ապաստան էր գտել կայսիկ ամիրայի տիրույթների մեջ, Ապահունյաց գավառի Թոնդրակ գյուղում: Բագրատունիների կալվածը հանդիսացող Ծաղկոտն գավառը ըստ երևույթին հարմար վայր չէր հայ եկեղեցու դեմ ուղղված այս հերձվածի գործունեության համար, իսկ մահմեդական ամիրայի տիրույթների մեջ Սմբատ Զարեհավանցին կարող էր որոշ չափով ապահով լինել իր հակառակորդների հալածանքներից: Սակայն Գրիգոր Նարեկացու այս վկայությունից տեսնում ենք, որ Ապահունիքում ապաստանելը նույնպես էժան չէր նստել նոր աղանդի հիմնադրին: Եթե գուցե հայկական գավառներում հերձվածի պայքարի թիրախը ավատական վերնախավն էր, այսինքն շարժումն ուներ դասակարգային բնույթ, ապա Կայսիկների կալվածների վրա դասակարգային հակամարտությունն անխուսափելիորեն միահյուսվում էր օտար նվաճողների դեմ ուղղված ազատագրական պայքարի հետ: Ապահունիքի ժողովրդի համար Կայսիկ Աբու-լ-Վարդի իշխանությունը կրկնակի լուծ էր, որովհետև նա ոչ միայն շահագործող էր, այլև օտար նվաճող: Ուստի պատահական չէ, որ նա

14 Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13 դարերում, Երևան, 1956, էջ 367—370:

15 Ասողիկ, էջ 160:

արյան մեջ խեղդեց Զարեհավանցու շարժումը։ Այս նույն երևույթը նկատում ենք նաև Պավլիկյանների մոտ, որոնք զուտ բյուզանդական հողի վրա հակամարտության մեջ էին միայն տիրող խավի դեմ, իսկ սահմանամերձ շրջաններում նրանց շարժումն ուներ նաև որոշ հակաարաբական ազատագրական բնույթ։

Հետագայում Ժ դարում, երբ թոնդրակյան շարժումն[16] ավելի ուժեղ թափ ստացավ, ինչպես հայտնի է դարձյալ Հայաստանի արաբական ամիրայություններն էին, որ այս աղանդի գործունեության ասպարեզ հանդիսացան։

2. ԱՇՈՏ Ա-Ի ԵՎ ՄԵՆ ՀԱՅՔԻ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում իր իշխանությունն ամրապնդելու համար Աշոտ Ա-ը խնամիական կապերով իր հետ կապեց Արծրունյաց և Սյունյաց գահերից իշխաններին։ Նա զգույշ քաղաքականություն վարեց նաև Մանազկերտի կայսիների հետ[17], որոնք Բագրատունիներից, Արծրունիներից և Սյունիներից հետո որոշ նշանակություն ունեցող ավատատերեր էին Հայաստանում։ Նրանց դեմ որևէ թշնամական բացահայտ գործողություն կարող էր գրգռել Աբբասյաններին, որոնք թեև թուլացած էին, սակայն դեռ որոշ անախորժություն կարող էին պատճառել Բագրատունիներին։

Աշոտ Բագրատունու իշխանությունն այնքան էր ամրապնդվել, որ նրան արդեն երկրում թագավոր էին կոչում[18], որովհետև նա իրոք վայելում էր թագավորական շատ իրավունքներ։ Իհարկե, ձևականորեն հարկը դեռ մուծվում էր Բաղդադի խալիֆաներին, բայց նույնիսկ արաբ ոստիկանների ներկայությունը Արմինիա ոստիկանության մեջ արդեն մեծ մասամբ իր նշանակությունը կորցրել էր։ Այս շրջանի ոստիկանների ցուցակի մեջ անկանոնությունները[19] արդյունք էին հենց այն բա-

16 Լաստիվերտցի. էջ 150։

17 H. Thoptschian, Die inneren Zustände, 14-22.

18 Б. Аракелян, Гарни, 1, стр. 84—87.

19 Հ. Նալբանդյան. Արաբ ոստիկանները..., էջ 122—124։

նի, որ վերջիններս միշտ չէ որ գալիս էին Հայաստան, և եթե գալիս էին, ապա բավարարվում էին հավաքված հարկերը վերցնելով և Բաղդադ տեղափոխելով[20]։

Աշոտ Ա-ն այս դարի 60-ական թվականներին հաստատեց այնպիսի կարգեր և որոշեց Բագրատունի տիրակալի և ավատատեր իշխանների միջև այնպիսի փոխհարաբերություններ, որոնք տևեցին մինչև Սմբատ Ա-ի պարտությունը և մահը, այսինքն՝ մոտավորապես կես դար։ Մութավաքիլ խալիֆայի սպանության և պետության թուլացման առիթից օգտվելով, գերեվարված նախարարները վերադարձել էին իրենց գավառները և շատերը նորից տիրացել իրենց կալվածներին։ Աշոտ Բագրատունին արդեն վերջնականապես հաստատեց իր տան գերիշխող իրավունքները Հայաստանի բոլոր մնացյալ ավատատերերի վրա[21], մի իրավունք, որը մի ժամանակ վայելում էին Արշակունիները։ Այս իրավունքները Բագրատունիները վայելում էին դեռ նույնիսկ դարի սկզբին, երբ Աբբասյանները Աշոտ Մսակերին և մանավանդ նրա որդուն՝ Բագարատին ճանաչել էին որպես գահերեց իշխաններ տալով վերջինիս նույնիսկ իշխանաց իշխան (Բաթրիկ ալ-Բաթարիկա)[22] տիտղոսը։ Սակայն Աշոտի օրոք Բագրատունիների նկատմամբ կախյալ դրության մեջ մնացին ոչ միայն հայ նախարարները, այլև արաբ ամիրաները, որոնք արդեն Հայաստանի հիմնական ավատատերերից էին համարվում։ Դրանք հետևյալներն էին՝ Մանազկերտի Կայսիկները, Բերկրիի Ութմանիկները և մասամբ Կարնո քաղաքի ամիրաները։ Ըստ Ծիրանածնի Աշոտ Բագրատունուն էին ենթակա նաև Հերի և Սալմաստի մանր ամիրայությունները[23]։

Գալով Դվինին և Ոստան գավառին, ապա պետք է ասել, որ Բագրատունիների քաղաքականությունն այստեղ այլ էր։ Նրանք քաջ գիտեին, որ Հայաստանում գերիշխող դիրք ձեռք բերելու համար անհրաժեշտ էր տիրանալ երկրի կարևորագույն

---

[20] H. Thoptsch'an, Die innere Zustände, 22-25.
A. Daghbaschean, Gründung des Bagratidenreiches, 81-82.
[21] H. Thoptschian, Die innere Zustände, 25-26.
[22] Tabari, III, 1408.
[23] Const. Porph., De adm. imp., c. 44, p. 199.

բաղաքին, առանց որի ստիպված կլիներին սահմանափակվել Շիրակ-Արշարունիքի իրենց կենտրոնական տիրույթներով։ Ոստիկանների առավել հաղվագյուտ հաճախումների պատճառով Դվինի անտերունչությունն էլ ավելի էր շեշտվել։ Ոստան գավառը փաստորեն լրիվ անտեր վիճակում էր և Բագրատունիները ժամանակի ընթացքում առանց արգելքի տիրացան Ոստանին։ Այստեղ Աշոտը կարիք չուներ բախվելու որևէ մահմեդական ամիրայի շահերի հետ և այսպիսով, Բագրատունյաց տիրույթները Այրարատի մյուս գավառների հետ ընդգրկեցին նաև Ոստանը։

Աշոտ Ա-ի ժամանակ Դվինի գոյավիճակի մասին երբեմն թյուր կարծիքներ են հայտնվում։ Այսպես, օրինակ, հայ ժողովրդի պատմության դասագրքում, ասվում է, որ «Դվին քաղաքի էմիրը ևս ճանաչեց Աշոտի իշխանությունը և հարկը տալիս էր նրան»[24]։ Այս կարծիքի դեմ են հենց արաբ մատենագիր Իբն Հաուկալի խոսքերը, որոնք ի դեպ Կարաուլովի մոտ սխալ են թարգմանված։ Իբն Հաուկալը գրում է[25]. «(Դվինը) պատկանում էր հին ժամանակներում Սինբաթ իբն Աշոթին բոլոր հայերի թագավորին և նրա նախնիներին և այդպես էլ նա մնաց նրանց մեծամեծների ձեռքում»։ Կարաուլովի մոտ թարգմանված է հետևյալ ձևով. «и находился во власти знатных из числа его жителей.»[26]։ Ստացվում է, այնպես, որ քաղաքը գտնվել է ոչ թե ընդհանրապես հայոց մեծամեծների, այլ՝ քաղաքի մեծամեծների ձեռքում։ Այս փոքրիկ հատվածի ռուսերեն թարգմանությունը գտնում ենք նաև Վասիլևսկու մի հոդվածի մեջ[27] արաբագետ Վ. Ռոզենի կողմից կատարված, որը նույնպես հաստատում է մեր ասածը։

Աշոտ Բագրատունու իշխանության տարիներին (862—890) Դվինում չկար ոչ մի տեղական ամիրայություն։ Այդպիսի վա-

---

24 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1956, էջ 179։

25 Ibn Hauqal, II, 343

26 Н. Караулов, сведения арабских писателей, СМОМПК XXXVIII, стр. 92.

27 В. Васильевский, Советы и рассказы византийского боярина XI в., стр. 63.

ճառաշահ քաղաքը և վարչական կարևոր կենտրոնը կարող էր պատկանել միայն երկրի տիրողին, որովհետև Դվինին տիրելը և ամբողջ երկրին տիրելը որոշ իմաստով իրար հետ պայմանավորված էին։ Կարաուլովի սխալ թարգմանությունը առիթ է տվել կարծելու, որ այստեղ խոսքը վերաբերում է Դվինի երիցանուն կամ քաղաքային վարչության[28]։

Սակայն հայտնի չէ, թե Աշոտ Բագրատունին ում էր նշանակել Դվինի քաղաքապետ՝ արա՞ր թե հայ իշխանի։ Նրա ժամանակ արաբ քաղաքապետներ կային, օրինակ, Կարնո քաղաքում, որոնցից երկուսը մեզ հայտնի են՝ Բշիր և Զիքրի[29]։

Թովմա Արծրունին պատմում է, որ մոտավորապես Աշոտ Բագրատունու սպարապետության տարիներին (855—862) Վասպուրականի իշխաններից Գուրգեն Ապուսալիքը ուզենալով հետու մնալ տեղական երկպառակություններից փորձում է անցնել արևմուտք և մտնել բյուզանդացոց ծառայության մեջ, սակայն ճանապարհին Կարնո քաղաքում նա բռնվում է վերոհիշյալ երկու քաղաքապետների կողմից և հանձնվում Աշոտին։ Վերջինս թեև ուզում է փրկել հայ իշխանին, բայց դեռ ինքը հեղինակություն չունենալով, մանավանդ որ գերի վիճակում էր նաև իր հայրը, խոհեմություն է համարում Գուրգենին հանձնել արաբներին։ Թեև այս ժամանակ Կարնո քաղաքը ուղղակիորեն չէր ենթարկվում Բագրատունիներին, սակայն հետագայում արդեն նրա քաղաքապետները մասամբ ենթակա էին թե Աշոտ Ա-ին, թե Սմբատ Ա-ին[30]։

Գերված հայ նախարարների վերադարձը նոր երկպառակությունների սկիզբ դրեց։ Գերի տարված ավատատերերի հողերը անցել էին կամ այլ տեղական իշխանների կամ էլ արաբ ամիրաներին։ Վասպուրականի հայտնի իշխան Աշոտ Արծրունու գերի տարվելուց հետո Վասպուրականին տիրել էր Գուրգեն Ապուսալիքը, սակայն Աշոտի որդու՝ Դերենիկի վերադարձից հետո նա սահմանափակվեց Անձևացյաց գավառի իշխանությամբ[31]։

---

28 А. Шахназарян, Ibid, стр. 106.

29 Թովմա, էջ 203։

30 Դրասխանակերտցի, էջ 203։ Ibn Hauqal, II, 343.

31 Թովմա, էջ 233։

Բագարատ Բագրատունու և Աշոտ Արծրունու գերության ժամանակ արաբ ամիրաները նույնպես տիրացել էին նոր հողերի։ Բագրատունիների Տարոնի կալվածներին մաս կազմող Խլաթը (և հավանաբար Արծկեն) ատրճանաբար ընկավ Կայսիկների ձեռքը, իսկ Շայբանիները ընդարձակելով իրենց տիրույթները հասան մինչև Վանա լճի ափը՝ Դատվան[32]։

Բուղայի արշավանքը և Շայբանիների հզորացումը տարբեր ազդեցություն ունեցան Արզնի Զուրարիկների վրա։ Թեև Մուսա իբն Զուրարան սկզբում փորձեց պայքարել իր աներորդու՝ Բագարատ Բագրատունու դեմ[33], սակայն շուտով նա հարեց հայ իշխաններին և Բուղայի կողմից շղթայակապ տարվեց Սամարա։ Իբն ալ-Ասիրն այսպես է նկարագրում Զուրարիկների ջարդը. «Եվ խաղաց գնաց (Բուղան) Մոսուլ և Ջազիրա և սկսեց Արզնով, որտեղ Մուսա իբն Զուրարան էր։ Սրա եղբայրներն էին Իսմաիլը, Սուլայմանը, Ահմադը, Իսան, Մուհամմադը և Հարունը։ Տարավ Բուղան Մուսա իբն Զուրարային Մուտավաքքիլի մոտ և նրան ամբաստանեց Յուսուֆի սպանության մեջ։ Ապա կոտորեց նրանցից երեսուն հազարի և շատերին գերեվարեց ու ծախեց»[34]։

Մուսայի սպանությունից հետո որդին Աբու-լ-Մաղրան (հիշվում է նաև որպես Աբու-լ-մուիզզ), որը Դրասխանակերտցու մոտ կոչվում է Ապլմախրա[35], վախենալով հարևան Շայբանիների հզորացումից ամուսնանում է Արծրունի մի իշխանուհու հետ, մանավանդ որ հենց իր մայրը հայուհի էր։ Շայբանիները այդ ժամանակ տիրացել էին Բաղնշին, որը Մուսայի տիրույթն էր և հասել էին մինչև Դատվան։ Աբու-լ-Մաղրան վարչականորեն ենթակա էր, իհարկե, Իսա իբն ալ-Շայխին և մասնակցում էր նրա մղած կռիվներին։ Այսպես, երբ Իսհակ իբն Կունդաջիկը պայքարի մեջ էր Մոսուլի տիրոջ Իսհակ իբն Այյուբի հետ և վերջինս օգնության կանչեց Իսային և Աբու-լ-Մաղրային երկուսն էլ գնացին օգնության։ Սակայն

32 Նույն տեղում, էջ 218։

33 Նույն տեղում, էջ 108։

34 Ibn al-Athir, VII, 30.

35 Դրասխանակերտցի, էջ 218։

Մոսուլի տերը պարտվեց և Իսան ու Արզնի տերն ստիպված եղան Իբն Կունդաջիկին առաջարկել 200 հազար ոսկեդրամ (դինար), որպեսզի հաստատվեն իրենց տիրույթներում, որովհետև Իբն Կունդաջիկը նշանակվել էր Ջազիրայի և Արմինիայի ոստիկան (879)։ Նոր ոստիկանը սկզբում չպատասխանեց, բայց երբ նրանք զենքի դիմեցին նա բավարարեց նրանց պահանջները[36]։

Եթե մի կողմից Արզնի տերը կապված էր Շայբանիների հետ, ապա մյուս կողմից՝ նա սերտ կապի մեջ էր Արծրունիների հետ, որոնց նա «փեսայացեալ» էր[37]։ Ըստ Թովմայի,, Գուրգեն Ապուսելճի ազդեցությանը ենթարկվել էին Տարոնը, Անձևացիքը և Արզնը[38]։ Հավանաբար հենց այս տարիներին է, որ Արզնի տերը խնամիացել էր Արծրունիների հետ։ Արզնը երբեք Արծրունիների ուշադրությունից չի վրիպել և հենց իրենց անվան սուրբարանությունը նրանք կապում էին այդ քաղաքի անվան հետ (Արզն>Արծն>Արծրունի)[39]։ Հետագայում, երբ Աշոտ Արծրունին վերադարձավ գերությունից և պայքար սկսեց Գուրգեն Ապուսելճի դեմ, Աբու-լ-Մաղրան Արծրունիների հետ մասնակցում էր այդ պայքարին։ Օրինակ, երբ պաշարվեց Անձևացյաց Կանգուար ամրոցը պաշարողների մեջ էր նաև Արզնի զորքը[40]։

Սակայն Թ դարի երկրորդ կեսի համար Զուրարիկները բացառություն էին կազմում որպես հայ նախարարական տների հետ մերձեցման կողմնակիցներ։ Օրինակ, Բերկրիի Ութմանիկները Բուղայի արշավանքներին գործոն մասնակցություն ունենալուց բացի, սկսեցին ոտնձգություններ անել հայ նախարարների դեմ։ Բացի Բերկրիից, նրանք տիրացել էին նաև Ամյուկ ամրոցին և հասել մինչև Վարագ սարը։ Սա մի սպառնալիք էր արդեն Արծրունիների համար և ահա Վասպուրականի իշխաններից Ռստոմ Վարաժնունու սպանությունը Ութմանիկների ձեռքով առիթ է դառնում Աշոտ Արծրունու միջամտու-

36 Ibn al-Athir, VII, 232.

37 Դրասխանակերտցի, էջ 218։

38 Թովմա, էջ 208։

39 Նույն տեղում, էջ 44։

40 Նույն տեղում, էջ 213։

թյանը[41]։ Արծրունիները, որոնք նախկինում համեմատաբար փոքր տիրույթներ ունեին, այս շրջանում ընդարձակել էին իրենց կալվածները, յուրացնելով, օրինակ, Ռշտունիքը և ամուր տեղադրվել էին Վանա լճի ափին, որտեղ Վանը, Ոստանը և Աղթամարը նրանց կարևոր կենտրոնները դարձան։ Բայց այստեղ՝ Վանա լճի ափին, նրանց ընդարձակմանը խանգարում էին Ութմանիկները և Աշոտ Արծրունին անմիջապես հարձակման անցավ նրանց Ամյուկ բերդի վրա։ Չկարողանալով անառիկ ամրոցը գրավել նա բավարարվեց Վարագ սարի գրավմամբ, որը, իհարկե, նույնպես ռազմական նշանակություն ուներ։

Դեռ Աշոտ Բագրատունու սպարապետության շրջանում, երբ Բուղան նոր էր հեռացել Հայաստանից, Արծրունյաց իշխանները տեղում հաստատված արաբ տարրից ազատվելու միջոցներ էին ձեռք առնում։ Թովման հաղորդում է, որ Գուրգեն Ապուսելճը սկսեց շրջել Վասպուրականի բոլոր գավառները, որտեղ Բուղայի ձեռքով արաբներ էին հաստատված և բոլորին ոչնչացրեց («եւ սկսաւ շրջել կարգաւ ընդ բոլոր աշխարհս, յորում բնակեալ էին Տաճիկքն, որ մնային ի սմա ըստ հրամանին Բուխայի։ Եւ առնէր հարուածս մեծամեծս այլազգեացն...)[42]։ Ահա այս քաղաքականությունն էր շարունակում Աշոտ Արծրունին։

Սակայն տեղական ավատատերերի միջև այս փոքրիկ ընդհարումներն իրենց վրա հրավիրեցին օրվա ոստիկանի ուշադրությունը, որն այդ ժամանակ (870—877) Իսա իբն ալ-Շայխն էր՝ Շայբանի տնից։ Որպես խալիֆայի ներկայացուցիչ նա կարող էր այնքան էլ չանհանգստանալ Ամյուկ ամրոցի համար մղված պայքարով, բայց քանի որ ինքն էլ Հայաստանում տիրույթներ ուներ, չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ Արծրունիները հարձակողական քաղաքականություն վարեին Վանա լճի շուրջը հաստատված արաբ ամիրաներից որևէ մեկի դեմ, որոնցից էր նաև հենց ինքը։ Իրենց շահերը վտանգված տեսնելով Հայաստանում հաստատված արաբ ամիրաները

41 Թովմա, էջ 214։

42 Նույն տեղում, էջ 196—197։

ընդհանուր ճակատ կազմեցին Արծրունիների դեմ։ Ըստ Թովմա Արծրունու Իսային (հայ. Յիսէ որդի Շահի) զրկել էին մանավաղյան պետը՝ Կայսիկ Աբու-լ-Վարդը և Ութմանիկները։ Իսան 15 հազարանոց զորք հավաքելով հասավ Վասպուրական և Աքաղայու կատար բլրի մոտ բանակ դրեց։ Սակայն նկատի ունենալով, որ Աշոտը միայն երկու հազար զորք ուներ, Արծրունի իշխանները դիմեցին ոստիկանին և խաղաղություն առաջարկեցին, խոստանալով որ կտան պատանդներ և հարկը կվճարեն, բայց թույլ չեն տա որ նա մտնի Վասպուրական։ Վանում այս հաշտությունը կնքելուց հետո Իսան հեռացավ Պարտավ[43]։

Շայբանիների և Կայսիկների խմբավորումը չէր կարող հանդուրժել որ Արծրունիներն ու Բագրատունիները տիրապետող դիրք գրավեին և նույնիսկ սպառնային իրենց կալվածներին։ Թեև Հայաստանը դեռ խալիֆայության ենթակա էր, բայց տեղական ամիրաները Աբբասյաններից այլևս ուղղակիորեն ոչ մի սպասելիք չէին կարող ունենալ և պետք է իրենց սեփական ուժերով պայքարեին հայ նախարարների դեմ։ Իսան ձեռնամուխ եղավ իր հարաբերությունները չվատացրեց հայ նախարարների հետ, մանավանդ երբ իր տեղակալը Պարտավում՝ Մուհամմադ ալ-Յամանին (հայ. Յամանիկ) ապստամբվեց նա Աշոտ Բագրատունու օգնությամբ 13 ամիս պաշարեց քաղաքը, բայց չկարողանալով գրավել նախընտրեց քաշվել Ասորիք, որի ոստիկանն էր նշանակված[44]։

Յամանիկը փորձեց առիթից օգտվել և առաջարկեց հայ նախարարներին իրեն ընդունել որպես ոստիկան, սակայն վերջիններս ինչ-ինչ պատճառներով նախընտրեցին խալիֆայից խնդրել, որ ոստիկան լինի նույն Շայբանի տնից՝ Մուհամմադ իբն Խալիդը, որն արդեն երկու անգամ ոստիկան էր եղել Արմինիայում։ Պարզ է, որ նոր Շայբանի ոստիկանի նշանակման գործում վճռական դեր խաղաց Աշոտ Բագրատունին, բայց ահա հենց նրա դեմ է, որ գործում է առաջին օրվանից Մուհամմադ իբն Խալիդը։

---

43 Թովմա, էջ 216։

44 Նույն տեղում, էջ 218։

Այս դեպքերը շատ լավ են նկարագրված Թովմա Արծրունու մոտ[45]։ Ըստ նրա, հայ նախարարները Յամանիկից զգուշացել էին, որովհետև նրա իսկական նպատակն էր եղել մեջտեղից վերացնել հայ նախարարներին «մանաւանդ զնախագահնստեալն զԱշոտ իշխանաց իշխան»։ Սակայն հենց առաջին օրվանից, երբ նոր ոստիկանը ոտք դրեց Հայաստան, ձգտեց իրագործել այն, ինչը հայ նախարարները Յամանիկից էին կասկածում։ Մուհամմադ իբն Խալիդը 879 թ. մտավ Հայաստան և կանգ առավ Դաստվանում, որը Շայբանիների կալվածն էր և ահա այստեղ նրան դիմավորելու եկան Արծրունյաց նախարարները՝ Դերենիկը, որի հայրը՝ Աշոտը յոթ տարի առաջ մեռել էր, Գագիկը, Գրիգորը և այլն, Տարոնի Աշոտ Կուրապաղատը, իշխանաց իշխանի եղբայր Շապուհը, Մոկաց Մուշեղ իշխանը և «Ասպբառ Կայսիկ Ապահունեաց բռնաւորն», այսինքն Աբու-լ-Վարդը։ Այստեղ Շայբանի, Կայսիկ և այլ ամիրաները հենց տեղում դավ են նյութում Աշոտ Բագրատունու և ընդհանրապես հայ նախարարների դեմ և իրենց որոշումների մասին նամակով հայտնում Պարտավի Յամանիկին։ Մուհամմադ իբն Խալիդը գրում է. «Երբ ես Դվին քաղաք մտնեմ և արքունի հարկերը առնեմ հայոց իշխանները չկասկածելով կգան ինձ մոտ, իսկ դու ձևացնելով, որ ինձ վրա ես հարձակվում զորք գումարիր և ելիր իմ դեմ կռվի և միասին նրանց կկոտորենք և Հայաստանի տիրությունից կհեռացնենք նրանց» (ի մտանելն իմ ի Դուին քաղաք և զհարկս արքունի յիս գրաւել՝ և յանկասկած առեալ զիշխանս Հայոց՝ և եկեսցեն առ իս. դու զիմօք մարտի առ իս զօր գումարեա և ել ընդդէմ իմ ի պատերազմ և ի միասին մեսցից զձեզս ի տոստ և բարձից զսոսա ի պետութենէ Հայոց)[46]։

Կարևոր է նշել, որ Աշոտ Բագրատունին, որը միջամտել էր Մուհամմադ իբն Խալիդի համար, հենց առաջին րոպեից կասկածում է նրանից և բոլոր միջոցները ձեռք է առնում նրա դավերը կանխելու համար։ Վերոհիշյալ նամակը դեռ տեղ չհասած Հայաստանի կամուրջների մոտ և կիրճերում դարան մտած

---

45 Թովմա, էջ 217—219։

46 Նույն տեղում, էջ 219։

Աշոտի լրտեսները ձերբակալում են արար սուրհանդակին և թուղթը վերցնում։

Այս բարդ իրադրության մեջ հանդես են գալիս բանսարկուներ, որոնց մեջ առաջին հերթին Թովմա Արծրունին հիշում է Աբու-լ-Վարդ Կայսիկին։ Վերջինս ձգտում էր ոչ միայն վարկաբեկել հայ նախարարներին նոր ոստիկանի առաջ, այլև կասկած էր արթնացրել Դերենիկ Արծրունու սրտում Տարոնի Աշոտ Կուրապաղատի նկատմամբ։ Այսուհանդերձ Աբու-լ-Վարդը կասկածում էր նաև իր անձի համար։ Այսպես, երբ նա որսի էր գնում ոստիկանի և Վասպուրականի նախարարների հետ նրան հետևում էր կայսիկ հեծյալների մի խումբ։

Հայ նախարարները ստիպեցին լքեցին ոստիկանին (հավանաբար Աշոտի կարգադրությամբ) և քաշվեցին իրենց գավառները, իսկ սա շրջապատված կայսիկ զորքով (Թովմայի արտահայտությամբ՝ Ահմաթ և որ ընդ նմա կայսկաղենիցն գունդք)[47] դիմեց Դվին։ Մի օր, տոնահանդեսի ժամանակ, ոստիկանի վրանը շրջապատվեց Հայոց զորքերով և Աբաս սպարապետը մտնելով նրա վրանը ցույց տվեց այն նամակը, որը գրված էր Յամանիկին։ Սպարապետը ոստիկանին հսկողության տակ հանցրեց մինչև սահման, իսկ նրան ընկերակցող Կայսիկներին զինաթափ արեց և ուղարկեց Ապահունիք։

Շայբանի ոստիկանի համար թակարդ լարելուց հետո Աշոտը ավելի առաջ չգնաց և միաժամանակ բավարարվեց գավառան Կայսիկներին միայն զինաթափ անելով։ Սակայն Աբու-լ-Վարդն անգործ չէր մնում։ Նրա բանսարկության հետևանքով Դերենիկ Արծրունին ձերբակալեց Տարոնի Աշոտ Կուրապաղատին և բանտարկեց Վասպուրականի Սևան ամրոցում, որի տերն էր Արծրունի Հասանիկը, մանավանդ որ Դերենիկը շահագրգռված էր, որ Տարոնի իշխանը դառնա Աշոտի եղբայրը Դավիթը՝ իր փեսան։ Սակայն տեսնելով, որ Սևանի ամրոցից ազատվելն անհնարին է, Աշոտը հավատացրեց պատանի Հասանիկին, որ Դերենիկը նրան էլ թշնամի է և սա խաբեությամբ ձերբակալեց Արծրունյաց իշխանին։

Այս դեպքերի ժամանակ Աշոտ իշխանաց իշխանը արդեն պատժիչ արշավանք էր կազմակերպել Աբու-լ-Վարդի դեմ։ Նրա

47 Թովմա, էջ 221։

գորքերը պաշարել էին Մանազկերտը, բայց Վասպուրականից եկած լուրերը նրան ստիպեցին պաշարումը թողնել և շտապել իր փեսայի՝ Դերենիկի փրկության համար[48]։

Ճիշտ է Վասպուրականի դեպքերը փրկեցին Կայսիկներին վերահաս պատժից, բայց արդեն ժամանակները փոխվել էին։ Սրանից հետո այլևս ոչ մի Շայբանի Արմինիայի ոստիկան չնշանակվեց և Կայսիկները կորցրին իրենց ամենաուժեղ դաշնակցին։ Այս դեպքերից հետո Հայաստան եկավ միայն մեկ ոստիկան՝ Իսհակ իբն Կունդաջիկը, որից հետո Մուտամիդ խալիֆան թագ ուղարկեց Աշոտին[49], պաշտոնապես ճանաչելով նրան «Թագավոր Հայոց» (Malik al-Arman)[50]։

Մուհամմադ իբն Խալիդի վտարվելուց հետո Պարտավի Յամանիկը կրկին փորձել էր նամակների միջոցով գրգռել Աբու-լ-Վարդին և նույնիսկ Դերենիկին՝ Աշոտ Բագրատունու դեմ[51], սակայն նրա ջանքերն իզուր անցան և խալիֆայի կողմից պաշտոնապես ճանաչվելուց հետո Աշոտ թագավորի դիրքերն արդեն ամրապնդվել էին և Հայաստանի բոլոր ավատատերերը թե հայ իշխանները, թե արաբ ամիրաները հնազանդ էին նրան։

Աշոտ թագավորը մայրաքաղաք չդարձրեց Դվինը, թեև իր իշխանության երկար տարիների ընթացքում նա հաճախ էր այնտեղ նստել և նույնիսկ ընդունել նոր եկող ոստիկաններին, որոնք ընդհանրապես Պարտավում էին նստում։ Նա նախընտրեց իր թագավորության մայրաքաղաքը դարձնել Բագարանը, որտեղ և Գևորգ Գառնեցի կաթողիկոսը նրան հանդիսավոր կերպով թագավոր օծեց[52]։ Հավանաբար Աշոտ Ա-ը չուզեց որ այս հանդիսավոր օծումը կատարվեր Դվինում, որը ծանոթ էր որպես խալիֆաների ներկայացուցիչների վաղեմի նստավայր։

---

48 Թովմա, էջ 224։

49 Դրասխանակերտցի, էջ 175—176։

50 Ibn Hauqal, II, 343.Աշոտ Ա-ի կնիքի վրա գրված է միայն՝ Աշոտ որդի Սմբատի (Ashūt ibn Sinbāt)։ Տե՛ս В. Крачковская, Печать Багратида Ашота с арабской надписью, КСИИМК, вып. XII, 1946. նաև՝ Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, 2, էջ 97—98։

51 Թովմա, էջ 225։

52 Դրասխանակերտցի, էջ 176։

Աշոտ Ա-ը չձգտեց նաև իր անվամբ նոր փող կարելու և բավարարվեց Դվինի փողերանոցի թողարկած դրամներով[53], որոնք դեռ երկար ժամանակ օգտագործվեցին Հայաստանի առևտրի ասպարեզում։

Աշոտ Ա-ի իշխանության վերջին տարիներին Հայաստանի ամիրաները մի վերջին փորձ ևս կատարեցին հայ նախարարների հզորացմանը հակահարված տալու։ Այս անգամ արդեն իզուր կլիներ Աշոտ Ա-ի դեմ դուրս գալու, որն իր դիրքերը բավական ամրապնդել էր, այլ հարվածն ուղղեցին Վասպուրականի իշխանի դեմ։ Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ Դերենիկը նվաճել էր Հեր և Ջարևանդ գավառները, որոնք արաբ ամիրաների էին պատկանում։ Վերջիններս թեպետ և առերես հնազանդություն էին հայտնել, սակայն ուզում էին փնտրում ազատվելու հայկական գերիշխանությունից։ Ժամանակը հասել էր Մանազկերտի Աբու-լ-Վարդի և Պարտավի Յամանիկի հին ծրագրերն իրագործելու և ահա Հեր քաղաքի ամիրան Ապումսարի որդի Ապլբերսը[54] (Աբու-լ-Ֆարիս իբն Աբու Մանսուր) պատրաստեց արաբական զորքեր և հենց որ Դերենիկն անցնում էր Հերի մոտով դարանակալ սպանեց նրան։ Վասպուրականի իշխանի սպանությունը որոշ նշանակություն ուներ Հայաստանի արաբ ամիրաների համար, որոնք մեծ մասամբ տեղավորված էին հարավային Հայաստանում և Արծրունիների ուժեղացումը սպառնում էր նույնիսկ նրանց գոյությանը։

Աշոտ Բագրատունու իշխանության ամբողջ շրջանում Դվինը մնաց անորոշ դրության մեջ, որովհետև այնտեղ այլևս ասիականներ չէին նստում, իսկ Աշոտ Ա-ը զգուշացել էր այն մայրաքաղաք դարձնել, այնպես որ քաղաքական տեսակետից Դվինը նոր անակնկալների նախօրեին էր գտնվում։ Սակայն տնտեսական տեսակետից քաղաքը բնականոն կերպով զարգանում էր, որպես Հայաստանի առևտրի և արհեստների կարևորագույն կենտրոն։

---

53 H. Thoptschian, Die inneren Zustände, 26-35

54 Դրասխանակերտցի, էջ 177—178։

Թովմա, էջ 226, 263։

J. Markwart, Südarmenien, 313.

Աշոտ Ա-ի հաջորդ Սմբատ Ա-ի (890—913) իշխանության տարիները սկսվեցին երկպառակություններով։ Սմբատն ու իր հորեղբայրը Աբասը գահի ժառանգության համար բախվեցին և միայն խալիֆայի միջամտությունն էր, որ վերջնականապես հաստատեց Սմբատի իրավունքները հոր գահի վրա։ Խալիֆայի կողմից ուղարկված թագավորական թագն ու զգեստները[55] բերեց Ատրպատականի նոր կառավարիչ Ասֆին իբն Աբու-լ-Սաջը, որն Ատրպատականում մի նոր ամիրայական տան հիմնադիրը հանդիսացավ։

Ատրպատականի ազգաբնակչությունը բաղկացած էր իրանական տարրերից և արաբական տիրապետության դեմ որոշ դիմադրություն ցույց տալուց հետո (օրինակ, Բաբեկի ապըստամբությունը) ընդունեց մահմեդականությունը։ Խալիֆայության իշխանության տակ Ատրպատականը հաճախ էր միացվում Արմինիա ոստիկանությանը և այս երևույթը մի վարչական բաժանման վերապրուկ էր, որի սկիզբը հասնում էր մինչև Սասանյան շրջանը[56]։

Սմբատ Ա-ի օրոք տեղի ունեցավ Արմինիայի և Ատրպատականի մի յուրատեսակ վարչական «միավորում»[57]։ Բանն այն է, որ Աշոտ Ա-ի իշխանության տարիներին Արմինիայի հարկերը արդեն հավաքվում էին տեղական իշխանների կողմից և ժամանակ առ ժամանակ Պարտավ կամ Դվին եկող ոստիկանները այն փոխանցում էին Աբբասյաններին։ Աշոտ Ա-ի թագավոր դառնալուց հետո և Սմբատ Ա-ի օրոք Աբբասյանները վերջնականապես դադարեցին Արմինիա կառավարիչներ ուղարկելուց, բայց դրա փոխարեն ուզեցին ստեղծել մի այնպիսի գոյավիճակ, որ Հայոց թագավորությունը որոշ անուղ-

55 Դրասխանակերտցի, էջ 185։

56 Defrémery, Mémoires sur la famille des Sadjides, Journ. Asiat., B. 4, 1847, p. 428.

57 Ա. Տեր-Ղևոնդյան, Քուստ ի կապկոհ վարչական միավորի վերապրուկները խալիֆայության ժամանակ, «Տեղեկագիր», (հաս. գիտ.), 1958, 9, էջ 73—74։

գակի վերահսկողության տակ դրվեր։ Ուստի նրանք Հայաստանի հարկերի փոխանցման պարտականությունը դրեցին Ատրպատականի ոստիկան Սաջյան Աֆշինի վրա, որն, այսպիսով, պաշտոնապես կոչվում էր Ատրպատականի և Արմինիայի ոստիկան[58]։

Արրասյանների այս խորամանկ խաղը նորանոր բարդությունների ծնունդ տվեց։ Եթե Սաջյան Աֆշինը համարվում էր նաև Արմինիայի ոստիկան, ապա պարզ է, որ պետք է իրավունք ունենար Հայոց թագավորության ներքին գործերին միջամտելու, թեև հենց ինքն էր Սմբատին արքունի թագ բերողը։

Սակայն Սմբատ Ա Բագրատունին գործում էր որպես ինքնուրույն տիրակալ։ Նա ապահովեց իր թագավորության սահմանները, որոնք ըստ ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցու[59], արևմուտքում հասնում էին մինչև Կարնո քաղաք և Սև ծով («առ ափն ծովուն մեծի») հյուսիսում՝ մինչև Ալանաց Դուռը, իսկ արևելքում՝ մինչև Շամքոր։ Հարավային կողմից համապատասխանում էին Արմինիա ոստիկանության հին սահմաններին։ Այս բոլորի հետ մեկտեղ Սմբատ Ա-ն դաշինք կապեց Բյուզանդիայի կայսր Լևոն Զ-ի հետ (886—912) և հենց սա էլ ստիպեց Աֆշինին միջամտելու Հայաստանի ներքին գործերին։

Աֆշինի սպառնալի ընթացքը հույսեր ներշնչեց Հայաստանի ամիրայություններին դուրս գալու հայ թագավորի գերիշխանությունից և հավանական է, որ Ատրպատականի ոստիկանը որոշ կապերի մեջ եղած լիներ այդ ամիրաների հետ։

Դեռ Սմբատ թագավորը Ատրպատականի սահմանից վերադարձին հապիվ էր Դվին հասել, երբ քաղաքի դռները փակ գտավ իր առջև։ Այդ ժամանակ Դվինի կառավարիչները երկու տարբեր եղբայրներ էին՝ Մուհամմադ և Ումայյա, որոնք պատմիչի մոտ անվանվում են «գլխաւոր ոստիկանք և հրամանատարք քաղաքին»[60]։

Անծանոթ ծագում ունեցող այս երկու ամիրաները հավանաբար Սմբատ Ա-ի իշխանության առաջին տարիներին դար-

[58] Ibn Miskawayh, I, 16.

[59] Դրասխանակերտցի. էջ 203։

[60] Դրասխանակերտցի, էջ 202։

ձել էին Դվինի քաղաքապետներ օգտվելով ակներևորեն Սմբատի և հորեղբոր Աբասի միջև գահակալական երկպառակությունից։ Աշոտ Ա-ն Դվինը լքելով և մայրաքաղաքը Բագարանում հաստատելով հինավուրց մայրաքաղաքը որոշ իմաստով թողել էր բախտի քմահաճույքին։ Առիթից օգտվել էին վերոհիշյալ եղբայրները, որոնք սակայն կախման մեջ էին Հայոց թագավորից և պարտավորություններ ունեին նրա նկատմամբ, որպես իրենց վեհապետի։ Պատմիչը վկայում է, որ նրանք ղլացան իրենց թագավորի նկատմամբ ունեցած պարտականությունները և նույնիսկ հարկերը լրիվ չէին վճարում («վասն զի ըստ առաջնոյ կիտին եդելոյ ոչ եառեալ զնոսա հնազանդեալս ի ծառայութիւն ինքեան և զսակ արքունի հարկաց և մաքսից նուազեցուցեալ»)[61]։ Թագավորը հարձակվեց քաղաքի վրա. երկու ապստամբ կառավարիչները փախան, բայց ճանապարհին բռնվեցին և բերվեցին Սմբատ Ա-ի առջև, որը նրանց շղթայեց և բավական տանջելուց և ոսկի ու արծաթ վերցնելուց հետո Բյուզանդիայի Լևոն կայսեր ուղարկեց։

Դվինի գրավումը անկասկած մեծ նշանակություն ուներ Հայոց թագավորության միասնականության պահպանման համար, նախ և առաջ աշխարհագրական տեսակետից։ Արաքսի հովիտը Դվին մայրաքաղաքով մեկտեղ իր շուրջը հավաքում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը։ Բացի դրանից, Դվինը Հայաստանի ոչ միայն վարչական կենտրոնն էր եղել երկար ժամանակ, այլև տնտեսական խոշորագույն նշանակություն ունեցող քաղաք էր։ Ուստի պատահական չէ, որ հենց Դվինի գրավումից անմիջապես հետո Սմբատ Ա-ն ձեռնարկեց իր թագավորության տարբեր մասերի անջատողական ձգտումների խորտակմանը[62]։

893/894 թ. Դվինը ենթարկվեց ուժեղ ցնցման, որի հետևանքով քաղաքի բնակչության մեծ մասը տուժեց։ Այս դեպքի մասին մանրամասն հաղորդում են հայ պատմիչները՝ Հովհաննես կաթողիկոսը[63] և Թովմա Արծրունին[64], իսկ արար

61 Նույն տեղում։

62 Նույն տեղում, էջ 203։

63 Նույն տեղում, էջ 204—209։

64 Թովմա, էջ 372։

պատմիչ Իբն ալ-Ասիրը հետևյալ կերպ է նկարագրում 280 թ. շավալ ամսի (14 դեկտեմբերի 893—12 հունվար 894) տակ[65]. «Իսկ շավալ (ամսին) լուսինը խավարեց և Դվինի ու աշխարհի ժողովուրդը մնացին խավարում և խավարը մնաց մինչև որ երեկոյան մի սև քամի փչեց և տևեց մինչև գիշերվա երրորդը։ Իսկ գիշերվա երրորդում ցնցվեց և կործանվեց քաղաքը և հազիվ հարյուր տուն կանգուն մնաց։ Սրանից հետո հինգ անգամ ցնցվեց և ավերակների տակից հանվածների թիվը հարյուր հիսուն հազար հոգի էր, բոլորն էլ մեռած»։

Այս տարերային աղետը մեծ ազդեցություն ունեցավ քաղաքի ճակատագրի վրա։ Փուլ եկան կաթողիկոսարանը և կաթողիկե եկեղեցին, որոնցից առաջինը հետագայում ամենայն հավանականությամբ մզկիթի վերածվեց[66]։ Մեծ չափով տուժեց քաղաքի բնակչությունը՝ փլատակների տակ մնալով։ Թովմա Արծրունու մոտ զոհերի թիվը միայն յոթանասուն հազար է, որը նույնպես մեծ թիվ է։

Երկրաշարժից անմիջապես հետո Դվինը Աֆշինի կողմից հարձակման ենթարկվեց և սա արմատապես փոխեց նրա պատմության ընթացքը։ Ոստան դավառը մոտ կես դար Բագրատունիների կալված մնալուց հետո անցավ Ատրպատականի Սաջյանների ձեռքը։ Աֆշինը չէր կարող օգտագործած չլինել այն հանգամանքը, որ Սմբատ Ա-ն Աբբասյան խալիֆային ենթակա թագավոր լինելով հանդերձ, Դվինի արաբ կառավարիչներին շղթայակապ ուղարկել էր խալիֆայության թշնամուն։ Դեռ չենք խոսում այն մասին, որ այս երկու եղբայրների ապստամբությունը ամենայն հավանականությամբ կարող էր ուղղակի Աֆշինի կողմից հրահրված լինել։

894 թ. Աֆշինը հարձակվեց Հայոց թագավորության վրա[67] և գրավեց Նախճավանը։ Սմբատ Ա-ն չուզենալով դիմադրությունը Դվինում կազմակերպել, բանակ դրեց Արագածի ստորոտին՝ Վժան գյուղում, ուստի և Աֆշինն անարգել մտավ Դվին։ Գևորգ կաթողիկոսի միջնորդությունը չօգնեց կռիվը դա-

---

65 Ibn al-Athir, VII, 323.

66 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը...., էջ 120—122։

67 Դրասխանակերտցի, էջ 210—215։

դարձնելուն և նույնիսկ ինքը կաթողիկոսը կերի մնաց Աֆշինի մոտ։ Սակայն Դաղս գյուղի մոտ Ատրպատականի զորքերը պարտվեցին և Աֆշինն ստիպված եղավ նահանջել։

893/894 թ. մեծ երկրաշարժը և նրան հաջորդող Աֆշինի հարձակումը պատճառ դարձան, որ կաթողիկոսը, որը հայ նախարարների և Աղվանից թագավորի միջնորդության շնորհիվ նոր էր ազատվել գերությունից, լքի Դվինը և հաստատվի նոր Քաղաքում (Վաղարշապատում)[68]։ Դվինում, ինչպես ասացինք, ավերվել էին ս. Գրիգոր մայր տաճարը և կաթողիկոսարանը, ուստի և այնտեղ մնալը հնարավոր չէր մանավանդ, որ քաղաքական վիճակը գրությունը էլ ավելի էր բարդացնում։

Այնուամենայնիվ, Հայոց թագավորությունը դեռ միասնական էր և Սմբատ Ա-ն թեև բազմաթիվ թշնամիներով շրջապատված, հաջող կերպով պայքարում էր բոլոր ասոխների դեմ։

Այդ ժամանակ (895) ասիթից օգտվելով Բյուզանդիան հարձակվեց Կարնո բերդի վրա[69], որը թեև մնում էր Հայոց թագավորության մեջ, բայց երբեք չկորցրեց իր ինքնուրույն վիճակը, որպես խալիֆայության կարևորագույն ռազմական կայանն ընդդեմ Բյուզանդիայի։ Այս տեսակետից նա այնքան կարևոր էր, որ Թ—Ժ դարերի արաբ աշխարհագրիները այն համարում էին խալիֆի սահմանապահ ամրություն[70]։ Սակայն այս վերջին հարձակումը ասակ ասպատակության նպատակով էր կատարված և հունական զորքերը բերդը թողնելով իր տերերին նահանջեցին արևմուտք։

4. ՍՄԲԱՏ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ԱՂՎԱՆՔԻ ՇԱՅԿԱՆԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Հայոց թագավորության նկատմամբ հավակնություններ ուներ ոչ միայն Ատրպատականի Սաջյան ամիրան, այլև դեռ Շայրանիները, որոնք մնալով Ադձնիքում չէին հրաժարվել հայկական դավառների նկատմամբ իրենց ունեցած հավակնություններից։ Այլևս Արմինիայի ասոիկան նշանակվելու հնարավորություններ չունենալով նրանք հայկական հարևան

68 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, 1065։

69 Թովմա, էջ 231։

70 Ibn Hauqal, II, 343.

գավառները յուրացնելու միջոցին դիմեցին։ Թ դարի վերջին ատանամյակում Շայբանիների ամիրան էր Իսա իբն ալ-Շայխի որդին Ահմադը։ Սա նախ ուշնայրեց Արզնի ամիրայությունը, որի պետերն այնքան էին մերձեցել հայ նախարարական տներին, որ մասամբ հայացել էին։ Մուսա իբն Զուրարան ինչպես տեսանք, ամուսնացել էր Բագարատ Բագրատունու քրոջ հետ, իսկ որդին՝ Աբու-լ-Մաղրան (Ալամախրայ) ոչ միայն Արծրունի իշխանուհու հետ էր ամուսնացել, այլև ծածուկ ընդունել էր քրիստոնեությունը[71]։ Ահա այս Աբու-լ-Մաղրային բանտարկեց Ահմադը և նրանից խլեց բոլոր հողերը[72], վերջ դնելով Արզնում Զուրարայի տան իշխանությանը։

Ահմադին ակներևորեն քաջալերում էր Աֆշինի պայքարը Սմբատ Ա-ի դեմ և երբ Ատրպատականի ամիրան դրավեց Դվինը, Ահմադն շտապեց յուրացնել իրեն հարևան գավառները։ Նա պայքար սկսեց Տարոնի իշխան Դավիթ Բագրատունու դեմ դրավելով Սասունը (Սիմ լեռ), իսկ Դավթի մահվանից հետո, երբ իշխան դարձավ սրա եղբորորդին՝ Գուրգենը, Ահմադն ապտնեց նրան (895) և դրավեց ամբողջ Տարոնը[73]։

Տարոնը ոչ միայն Հայոց թագավորության մի կարևոր մասն էր, այլև Բագրատունիների կալվածը, ուստի Շայբանի Ահմադի այս ընթացքը պարզ է, որ պետք է պատերազմի պատճառ դառնար։

Այդ ժամանակ ապտնված Գեորգիի Արծրունու երեք որդիներին (Աշոտ, Գագիկ և Գուրգեն) խնամակալ Գագիկ Ապումբրվան Արծրունին խարեությամբ բանտարկել էր։ Նրանց ավագը՝ Աշոտը տարվելով Աֆշինի խոստումներից, սերտ կապեր էր հաստատել նրա հետ, նույնիսկ թագավոր դառնալու խոստում ստանալով։ Սմբատ Ա-ն դայրացած հրամայել էր Գագիկ Ապումբրվանին և Անձևացյաց Գուրգենին (որը շուտով մահանում է) վասպուրականն իրենց մեջ բաժանել[74] և այս պատճառով էր, որ Գագիկ Ապումբրվանը բանտարկել էր երեք Արծրունի եղբայրներին՝ մեծ դժգոհություն պատճառելով

71 Դրասխանակերտցի, էջ 218։

72 Նույն տեղում։

73 Թովմա, էջ 231։ Դրասխանակերտցի, էջ 219։

74 Թովմա, էջ 233։

Վասպուրականի իշխաններին։ Դժգոհ իշխաններն անհաջող պայքարից հետո նախընտրեցին անցնել Աղձնիք և Շայբանիների ծառայության մեջ մտնել, քան հանդուրժել Գագիկ Ապումրվանի այս արարքը[75]։

Սմբատ Ա-ն Ահմադ Շայբանու դեմ մի հսկայական բանակ հանեց (ըստ Հովհաննես կաթողիկոսի 60 հազար, իսկ ըստ Թովմայի՝ 100 հազար)[76]։ Բանակը շարժվեց դեպի Վասպուրական, որպեսզի Գագիկ Ապումրվանը առաջնորդի նրան մինչև Աղձնիք։ Սակայն վերջինս հանկարծակիորեն փոխեց իր վարքագիծը և փոխանակ օգնելու իրեն հովանավորող Սմբատ Բագավորին, անցավ հակառակորդ իշխաններին ապաստան տվող Ահմադի կողմը[77]։

Հայոց զորքը անցավ Վանա լճի հյուսիսային ափերով և իջնելով Տարոնի կողմերը կանգ առավ Թուղիս գյուղի մոտ։ Բայց մինչև այստեղ հասնելը Գագիկը իր Բագավորի բանակը տարել էր այնպիսի ճանապարհներով, որ այն տեղ հասավ ծայրահեղ ուժասպառ վիճակում։ Հոգնած զորքը հազիվ կարողացավ կռվել Շայբանիների բանակի դեմ և բացի դրանից Գագիկը հուսալքում առաջացրեց կռվողների շարքերում, ուստի Սմբատ Ա-ն մաղապուրծ փախավ Բագրևանդ գավառը[78]։ Այս դեպքերի մանրամասն շարադրանքը գտնում ենք Դրասխանակերտցու մոտ, իսկ Արծրունյաց պատմիչը ոչինչ չի հիշում Գագիկ Ապումրվանի արարքների մասին։ Թեև Գագիկ Ապումրվանը վերադարձին սպանվեց բանտից փախած Գագիկի (Դերենիկի որդու) ձեռքով, սակայն Բագրատունիների և Արծրունիների միջև ճեղքվածքն այնքան խորն էր, որ արդեն կարող էր սպառնալ Հայոց Բագավորության միասնականությանը։

Շայբանի Ահմադի հաջողությունը քաջալերեց Սաջյան Աֆշինին, և սա նորից հարձակվեց Հայաստանի վրա, այս անգամ արդեն արևելյան կողմից։ Պարտավի վրայով (որը նրա

---

75 Նույն տեղում, էջ 275—236։

76 Լեո, Հայոց պատմություն, Բ, էջ 538։ R. Grousset, Histoire de l'Arménie, p. 411.

77 Դրասխանակերտցի, էջ 215—232։

78 Թովմա, էջ 236—237։

տիրույթներից էր) նա մտավ Ուտիք և ապա անցավ Գուգարաց կողմերը նպատակակետ ունենալով հանկարծակի ասպատակել Բագրատունիների հիմնական տիրույթները՝ Շիրակ—Վանանդ—Արշարունիք շրջանում մանավանդ որ Շիրակում էր գտնվում Սմբատ Ա-ի մայրաքաղաքը՝ Երազգավորսը (Շիրակավան)։ Կարսի ամրոցում նա գերեվարեց թագուհուն ու այլ. ազատանի կանանց և բազմաթիվ գանձեր վերցնելով եկավ Դվին[79]։

Հայտնի չէ, թե Դողսի պարտությունից հետո, երբ Աֆշինը նահանջեց Հայաստանից, ո՞ւմ ձեռքում մնաց Դվինը։ Եթե նույնիսկ Աֆշինը քաղաքը լքած լիներ, հավանաբար դարձյալ արաբ տարրի ձեռքում մնացած կլիներ։ Այս ամբողջ շրջանում, երբ Աֆշինն ու Սմբատը պայքարում էին իրար դեմ, Դվինն ընդհանրապես Սաջյանների ձեռքում մնաց որպես ռազմակայան։ 900 թ. երբ Աֆշինը հեռացավ Հայաստանից իրեն փոխանորդ թողեց որդուն՝ Դեդատին մեծ ներքինապետի հետ[80]։ Դեդատը միայն մեկ տարի մնաց Դվինում, ոչ միայն որպես քաղաքի կառավարիչ, այլև միևնույն ժամանակ որոշ հարաբերության մեջ լինելով Սմբատ Ա-ի հետ։ Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ նրա Դվինում գտնվելու ընթացքում «ռոճիկս պատրաստեալ նմա թագաւորին Սմբատայ՝ սուղ ինչ պակաս քան զամ մի»[81]։ Հայվիվ թե ռոճիկ բառը այս դեպքում նշանակեր հարկ, այսինքն այն հարկը, որը Հայոց թագավորությունը Սմբատի օրոք վճարում էր խալիֆայությանը, այլ ավելի ճիշտ կլինի հասկանալ բառիս բուն իմաստով[82]։ Ակնարկորեն թագավորը խոստացել էր Դվինի կառավարիչ Դեդատին որոշ ռոճիկ տալ գուցե և հենց քաղաքի վերանորոգման ու երկրաշարժի պատճառած վնասները դարմանելու նպատակով։

Սակայն դեռ մեկ տարին չլրացած մեռավ Աֆշինը (901) և որդին Դեդատը այս լուրն առնելուն պես գիշերանց դուրս գա-

79 Դրասխանակերտցի, էջ 223—225։

80 Նույն տեղում, էջ 234։

81 Նույն տեղում, էջ 235։

82 Տես՝ ռոճիկ, Աճառյան, Արմատական բառարան, հատ. Ե, էջ 1279—1280։

լով թաքուն փախավ Ատրպատական[83]։ Հավանական է, որ նա վախենում էր թե չի կարողանա տիրանալ հոր իշխանությանը։ Իրոք, Ատրպատականում իշխանությունը նրա ձեռքից խլեց հորեղբայրը՝ Յուսուֆը։

Իր վերջին հարձակման ժամանակ Աֆշինը ասպատակեց նաև Վասպուրականը, որի երեք իշխանները (Աշոտ, Գագիկ և Գ-ուրգեն) փաստորեն հրաժարվել էին նրան աջակցելուց։ Աֆշինի զորքերը գրավեցին Արծրունյաց երկու քաղաքները՝ Վանն ու Ռստունը և այնտեղ երկու ներքինի կառավարիչներ նշանակվեցին, որոնցից մեկը՝ Վանի կառավարիչը, Սաֆի (Սաֆի) անունով մի հավատուրաց հույն էր[84]։ Հետաքրքրական է նշել, որ մի ուրիշ հավատուրաց հույն ներքինի՝ Հովսեփ անվամբ (արաբական աղբյուրներում՝ Վասիֆ) կառավարիչ էր նշանակված Պարսավում[85]։ Վերջինս ապստամբվեց Աֆշինի դեմ շարժվելով դեպի Միջագետք։ Աֆշինը նա կանչեց Վասպուրականի իր ներկայացուցիչներին, որպեսզի արշավանք կազմակերպի, բայց բանակում ծագած մի համաճարակի զոհ դարձավ ոչ միայն ինքը՝ Աֆշինը, այլև Սաֆին և շատ ուրիշներ։

5. ԿՈՅՍԻԿՆԵՐԻ ԱՊԱՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՃՆՇՈՒՄԸ

Այս բարդ իրադարձությունների ժամանակ Ապահունիքը հանգիստ չմնաց։ Աշոտ Ա-ի իշխանության տարիներից մեկ հայտնի Արու-լ-Վարդին հաջորդել էր որդին՝ Աբդ ալ-Համիդը (հուն. Արելիամիտ)[86], որին Անանուն Արծրունին Արդուահման է կոչում[87]։ Սա ինչպես երևում է, կարճատև իշխեց և Մանազկերտում նրան հաջորդեց ավագ որդին՝ Արու Սավադան (հուն. Ապոսեբաստաս)։ Ըստ Միրանածնի, Աբդ ալ-Համիդի մահվանից հետո կայսրերի տիրույթները բաժանվել էին նրա երեք որդիների միջև, ըստ որում ավագն ստացել էր հենց կենտրո-

83 Դրասխանակերտցի, էջ 239։
84 Թովմա, էջ 240, 242, 272։
85 Նույն տեղում, էջ 242։
86 Const. Porph., De adm. imp. c. 44, p. 198.
87 Թովմա, էջ 245։

նական քաղաքը, իսկ մյուս երկու եղբայրները՝ Աբու-լ-Ասվաղը (հուն. Ապոլեսֆուետ) և Աբու Սալիմը (հուն. Ապոսելմէս) ստացել էին այլ քաղաքներ[88]: Ինչպես վկայում է Ծիրանածինը Աբդ ալ-Համիդի երեք որդիները հարկատու էին Սմբատ Թագավորին, որովհետև նրանց տիրույթները նրան ենթակա էին:

Ահմադ Շայբանիի դեմ արշավանքի գնալիս երբ Սմբատ Ա-ն բազմահազար զորքով անցնում էր Կայսիկները անհնազանդության ոչ մի նշան չցուցաբերեցին, բայց երբ Հայոց Թագավորը պարտվեց և մյուս կողմից Աֆշինը հարձակվեց Հայաստանի վրա, երեք եղբայրները (որդիքն Աբդուահմանի) հրաժարվեցին հարկ վճարել և զինվորել Հայոց Թագավորի համար[89]:

Կայսիկ եղբայրների ապստամբությունը ճնշելու համար Սմբատ Ա-ն ստիպված եղավ մեծ զորք գումարել: Ըստ Թովմայի նրա զորաժողովին մասնակցեցին բացի արքունի զորքից, Վասպուրականի, Անձևացյաց և Մոկաց զորքերը և նույնիսկ Վրաց և Աղվանից գնդերը: Այդքան շատ զորք գումարել մի տեղական իշխանի դեմ կռվելու համար չափազանց շատ էր, որովհետև փաստորեն երեք թագավորություն պատրաստվում էին կռվել մի ոչ-մեծ ամիրայության դեմ: Բայց հարձակվող զորքերի թիվը երբեք էլ մեծ չի կարելի համարել, եթե նկատի ունենանք, որ Մանազկերտի Կայսիկները միայնակ չէին այս կռվում: Թովման հատակ կերպով զանազանում է երկու զորախումբ՝ մեկը բուն Կայսիկների գնդերն են, իսկ մյուսը՝ այն մահմեդական գնդերը, որոնք հոծ զանգվածներով եկել էին կռվելու Բյուզանդիայի դեմ («Իսկ որ տիրէր աշխարհին Ապահունեաց Կայսիկն՝ դիւր զօրսն առ ինքն դումարեալ և որ շուրջ՝ գնովաւ քաղաքային և ասպատակքն Պարսից, որք ի Յունացն վերայ առնէին արշաւանս»)[90]: Հետագա շարադրանքի մեջ, երբ պատմիչը խոսում է կռվի մասին նորից տարբերում է, այս երկու զորախմբերը՝ «Կայսիկքն և որք ընդ նոսա», որպես առանձին խումբ և ապա «զօրքն Պարսից»[91]: Այս «Պար-

88 Const. Porph., De adm. imp. c. 44, p. 201.

89 Թովմա, էջ 245։

90 Նույն տեղում, էջ 246։

91 Նույն տեղում։

սեց զորքը» եկել էր կռվելու հույների դեմ, որոնց առաջխաղացումը Թ դարում ահաղանդ էր հնչեցրել մահմեդական աշխարհում և ահա կամավոր զորքերը գալիս էին սահմանային շրջանները՝ ինչպես օրինակ Հյուսիսային Ասորիք, Ամիդ (և Աղձնիք) և վերջապես Հայաստանի արևմտյան գավառները, որպես հուսալի կայան ունենալով Ապահունիքը, որտեղից գնում էին իրենց վերջին ռազմական կետը՝ Կարնո քաղաք։

Կայսրիները և նրանց հետ կռվող օգնական զորքը նախ խորամանկություն բանեցրին և Թագավորից խաղաղություն խնդրեցին, սակայն հետո հանկարծակի հարձակվեցին անհոգ նստած հայ զորքի վրա։ Ըստ Թովմայի, Բագրատունի Թագավորը փախուստի էր պատրաստվում և միայն Արծրունի Աշոտի և Մոկաց իշխանի ուժեղ հակահարվածն էր, որ թշնամուն ետ մղեց դեպի Մանազկերտ։ Իսկ քաղաքի ժողովուրդը սկսեց պաղատել Աշոտ Արծրունուն միջնորդելու Թագավորի առաջ որպեսզի հաշտություն կայանա։ Հաշտությունը կայացավ հետևյալ պայմաններով՝ Կայսրիները պարտավորվեցին նորից վճարել սահմանված հարկը Հայոց Թագավորին, ինչպես նաև պատանդներ տվեցին, իսկ Երիկավ ամրոցը Հաղացովտում, որը Կայսրիները խլել էին Բերկրիի ամիրայից ետ վերադարձվեց նրան։ Թովման ավելացնում է, որ իր ժամանակին Բերկրիի Ութմանիկ ամիրաները, որոնց նա պարզապես կոչում է բերկրացիքն, այս ամրոցը խլել էին Գնունիներից։ Պարզվում է, որ այս կռվի ժամանակ Ութմանիկները Թագավորի կողմն էին բռնել, որովհետև Կայսրիները աչք ունեին նրանց կալվածների վրա։ Ինչպես կտեսնենք հետո Կայսրիները յուրացրին նրանց տիրույթները, որոնց նկատմամբ անտարբեր չէին նաև Արծրունիները և հենց Թովման ավելացնում է, որ Բերկրին մի ժամանակ Վասպուրականի մասն է կազմել («նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի»)։ Պատմիչի վկայությամբ, այս դեպքերը տեղի էին ունեցել հայոց ՅԾԱ (=902) տարում[92]։

Այսպիսով, Սմբատ Ա-ն մի անգամ ևս կարողացավ պահպանել իր Թագավորության միասնականությունը։ Ահմադ

92 Թովմա, էջ 247։

Շայբանու մահվանից հետո (898) սպանված Գուրգեն Բագրատունու հորեղբորորդին Գրիգորիկիոսը (հուն. Կրիկորիկիոս) դարձել էր Տարոնի իշխան[93]։ Անորոշ դրության մեջ էր մնում միայն Դվինը, որը հայտնի չէ թե ի՞նչ վիճակում էր Դեղատի փախուստից հետո։ Ատրպատականի կողմից որևէ ոտնձգությունից ապահով մնալու համար, Սմբատ Ա-ն ալ-Մուքտաֆի խալիֆայից խնդրեց և իրավունք ստացավ Հայաստանն անջատել Ատրպատականի ոստիկանությունից և հարկերն ուղղակի Բաղդադ ուղարկել[94]։

Սակայն Ատրպատականի նոր ոստիկան Յուսուֆը (901—919) էլ ավելի ուժգնությամբ շարունակեց իր եղբոր սկսած պայքարը Սմբատ Ա-ի դեմ։ Ատրպատականի Սաջյանները որոշել էին Հայոց թագավորությունը վերջնականապես վերածել բաժան-բաժան մանր իշխանությունների և այն պահել միշտ խալիֆայության հարկատու վիճակում։ Դժգոհ լինելով խալիֆայի վերոհիշյալ որոշումից, Յուսուֆը հարձակվեց Հայաստանի վրա և Սմբատն ստիպված էր նորից հարկն ուղարկել Յուսուֆի միջոցով[95]։

Յուսուֆի ապստամբությունը խալիֆայի դեմ և Սմբատի ռազմական օգնությունն ընդդեմ Յուսուֆի նորից պղտորեց հարաբերությունները Բագրատունիների և Սաջյանների միջև։ Սակայն այս անգամ Յուսուֆի դաշնակիցն էր Արծրունի Գագիկը։ Հզորացող Արծրունիների սերտ հարաբերությունները Ատրպատականի Սաջյանների հետ շատ կասկածելի էր թվացել Սմբատ թագավորին և որպես պատիժ Արծրունիներից խլել էր Նախճավանը և տվել Սյունյաց իշխաններին[96]։ Գործունյա և ընդունակ Գագիկ Արծրունին, ի դեմ արքունի թագի, որն ստացավ Յուսուֆից ոչ միայն Հայոց թագավորությունը երկճեղքեց, այլև Բագրատունյաց թագավորության համար աղետալի պատերազմների դուռ բացեց։ 908 թ. հետո, երբ Գագիկ Արծրունին անկախ թագավոր դարձավ, Հայոց թագավորությունն

---

93 Const, Porph., De adm. imp., c. 43, p. 191-193.

94 Դրասխանակերտցի, էջ 243—244։

95 Նույն տեղում, էջ 247։

96 Նույն տեղում, էջ 263։

այլևս երբեք չվերադարձավ այն միասնական վիճակին, որի մեջ գտնվում էր դեռ Աշոտ Ա-ի օրերից։ Սաջյանների և Արծրունիների միացյալ զորքի դեմ հնգամյա մաքառումներից հետո Սմբատ Ա-ն պարտվեց և սպանվեց։

Սկսվեց մի նոր շրջան, որի հիմնական հատկանիշը մասնատվածությունն էր։

ԳԼՈՒԽ Գ.

ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Սմբատ Ա-ի թագավորության քայքայմամբ Բագրատունյաց Հայաստանը մասնատվեց ինքնուրույն իշխանություններին։ Ոչ միայն Հայոց թագավորությունը քայքայվեց, այլև մասնատվեց ամբողջ Արմինիա ոստիկանությունը, որը մինչև Սմբատի մահը որպես խալիֆայության հարկատու շրջան դեռ անվանապես գոյություն ուներ։ Վրաստանը բաղկացած էր Քարթլիի և Ափխազաց թագավորությունից, Կախեթի իշխանությունից և Տփղիսի ամիրայությունից[1]։ Տայքի Բագրատունիները կազմում էին առանձին քաղաքական միավոր, ճանաչելով Հայոց թագավորների գերագույն իշխանությունը։ Աղվանքի հյուսիսային մասում կար Աղվանից (Շաքի)) թագավորությունը, արևելքում՝ Շիրվանի և Դերբենդի ամիրայությունները, իսկ Պարսավի և Բայլականի (Փայտակարան) շրջանները մտնում էին Ատրպատականի ամիրայների մեջ[2]։

Ժ դարում Հայոց թագավորությունը տրոհվեց հետևյալ մասերի՝ Բուն Բագրատունյաց թագավորությունը, Տաշիր-Զորագետի, Փառիսոսի, Կարսի, Սյունյաց ու Վասպուրականի թագավորությունները, Տարոնի, Անձևացյաց, Մոկաց, Խաչենի և այլ իշխանությունները, ինչպես նաև արաբական ամիրայությունները։

---

[1] И. Джавахишвили, История Грузинского народа (на правах рукописи), кн. II. стр. 157-181.

[2] «Очерки Истории СССР», IX-XIII в в., стр. 648-650.

Բագրատունյաց Հայաստանի մասնատվածությանը նպաստեցին ներքին և արտաքին ազդակներ։ Ավատական հարաբերություններն այդ շրջանում նոր ձև ստացան, որի հետևանքով հողատեր իշխաններն ավելի էին ձգտում ինքնուրույնության և անջատման։ Այս շրջանին բնորոշ էր ավատական խոշոր կալվածը, որն իր մեջ ընդգրկում էր բազմաթիվ գավառներ։ Ը և Թ դարերի վերիվայրումները Հայաստանում արմատական փոփոխություն մտցրին նրա նախարարական կազմի մեջ, ընդ որում բազմաթիվ հին նախարարական տներ, ինչպես Մամիկոնյանները, Կամսարականները, Գնունիները, Ռշտունիները և այլն, իրենց տեղը զիջեցին ուրիշների, որոնց մեջ առանձնապես փայլում էին երեքը՝ Բագրատունիները, Արծրունիները և Սյունյաց տերերը։ Այս շրջանի խոշոր ավատական կալվածները բաղկացած էին ոչ միայն հայրենիքից, այլև գանձագին և որպես ավատ ստացված հողերից։ Պակասում էր կայունությունը հողատիրության մեջ։ Օրինակ, Թ դարում Բագրատունիների կալվածները մեծացան ի հաշիվ քայքայվող Մամիկոնյանների կամ Կամսարականների, իսկ Արծրունիներն ու Կայսիկները, ինչպես կոհսոնենք, յուրացրին քայքայվող Ռշտունիների հողերը։ Խոշոր ավատատերերը բռնի յուրացնում էին նոր հողեր, մերթ գնում էին (գանձագին), ինչպես օրինակ, Բագրատունիները Շիրակը գնել էին Կամսարականներից, մերթ էլ որպես պարգև ստանում էին նոր հողեր։ Այս վերջինս ներքին երկպառակությունների առիթ էր տալիս, ինչպես օրինակ, Նախճավանի պարգևումը նախ Վասպուրականին և ապա Սյունյաց իշխաններին[3] առիթ ծառայեց մի շարժման, որը Բագրատունյաց թագավորության հիմքերը խախտեց։ Պարգևման մի ուրիշ օրինակ էր նաև Երնջակ գավառի խլումը սյունեցիներից և հանձնումը Գողթնի ամիրային Յուսուֆ Սաջյանի կողմից։ Այս անգամ ևս կռիվ բորբոքվեց Սյունիքի և Գողթնի տերերի միջև։ Նման դեպքերում երկրի տերը հրովարտակով ամրացնում էր ավատատուի իրավունքները պարգև տրված գավառի վրա։ Սմբատ թագավորը հրովարտակ էր տվել նախ Արծրունի և ապա Սյունի իշխաններին Նախճավան գավառի

---

3 Թովմա, էջ 247։

համար, իսկ Գողթնի ամիրան Սյունյաց Սմբատ իշխանին պնդում էր, թե Երնջակ գավառը «յարքունուստ» շնորհված է[4]։

Հողատիրության այս վիճակը չէր կարող նպաստել Հայկական լեռնաշխարհի միասնականությանը։ Ընդհակառակը, ինչքան խորանում էին ավատական հարաբերությունները, այնքան ուժեղանում էին գավառական ինքնուրույնության կենտրոնախույս ձգտումները։ Միայն Աշոտ Ա-ի նման ուժեղ միապետը կարող էր ապահովել թագավորության միասնությունը։ Սմբատ Ա-ն որոշ ժամանակ կարողացավ սանձահարել ապստամբներին, սակայն երբ այս բոլորի վրա ավելացավ նաև արտաքին միջամտությունը (Ատրպատականի Սաջյանների կողմից) նա բոլորովին անզոր դարձավ։

Սակայն Բագրատունյաց Հայաստանի մասնատվածությանը նպաստող հիշյալ աղդակներից բացի կար նաև մի այլ ուժ, որն առավել ևս դժվարացնում էր Բագրատունի թագավորների պայքարը։ Դա արաբական ամիրայություններն էին, որոնց գործունեությունը իր բնույթով հիշեցնում էր վերոհիշյալ երկու աղդակները (ներքին և արտաքին)։ Որպես գավառական անկախության ձգտող իշխաններ նրանց պայքարը միահյուսվում էր Հայաստանի մնացյալ բոլոր ավատատերերի անջատողական ձգտումների հետ։ Սակայն որպես եկվոր տարր նրանք իրենց խորթ էին պահում հայկական միջավայրում և ծագմամբ ու կրոնով կապված լինելով մի կողմից Ատրպատականի և մյուս կողմից Ասորիքի ու Վերին Միջագետքի հետ, հիմնականում հենարանի դեր էին կատարում վերոհիշյալ երկրների իշխողների համար։ Նույնիսկ տնտեսական տեսակետից ամիրայությունները Հայաստանը մի քանի մասի էին կտրատում։ Դվինի ամիրայությունը Սյունիքն ու Արցախը կտրում էր Շիրակ-Արշարունիքից, Կայսիկների ամիրայությունը Տարոնը լրիվ մեկուսացնում էր ամբողջ Հայաստանից, մյուս կողմից Վասպուրականը նույնպես կտրելով Շիրակ-Արշարունիքից։

Հայաստանի այդ շրջանի ամիրայությունները կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջինը Արաքսի հովտի ամիրայությունները՝ Դվին ու Գողթն, իսկ երկրորդը՝ հարավ-արևմտյան

---

4 Դրասխանակերտցի, էջ 384։

Հայաստանի ամիրայությունները՝ Կայսիկներ, Ուիմանիկներ, Կարնո բաղաք և այլն։

Այս ժամանակաշրջանում Հայաստանի ամիրայությունների կազմի մեջ բավական փոփոխություն էր կատարված. նախ Ուիմանիկները աստիճանաբար շարքից դուրս էին եկել, կուլ գնալով մեծ մասամբ Կայսիկներին։ Սակայն մեծագույն փոփոխությունները տեղի ունեցան Աղձնիքում, որտեղ դեռ Թ դարի վերջում Արզնի Զուրարիկների տունը կուլ էր տրվել Շայրանիների կողմից և մնացել էին լոկ նրանց մանր բեկորները՝ Վանա լճի հարավ-արևմտյան կողմում։ Դավիթ Արծրունին իր շինարարական գործունեության համար շինանյութ հայթայթելու նպատակով հարձակվեց Աղձնիքում գտնվող Կոտոմ գյուղի վրա, որտեղ իշխում էին Զուրարիկների մնացորդները («մերձ ի գրունս Ասորեստանի ամրոց մի յիշխանատանն Աղձնեաց ի գեօղն Կոտոմ կոչեցեալ, լիներով սեփհականաբար Զուրարեկն կոչեցեալ ազգի...»)[5] և նրանց բոլորին կոտորելուց հետո, հիմնահատակ կործանեց նրանց ամրոցը, իսկ քարերը տեղափոխեց Աղթամար կղզին ս. Խաչ եկեղեցու շինարարության համար։

Ժ դարի առաջին քառորդում քայքայվեցին նաև Շայրանիները։ Սմբատ Ա-ի և Ահմադ իբն Իսայի միջև տեղի ունեցած ընդհարումից հետո նրանք արդեն աստիճանաբար կորցրեցին իրենց կալվածները։ Դժբախտաբար նրանց քայքայումը և անհետանալը հստակ կերպով չի պատկերացված ոչ հայկական, ոչ էլ մանավանդ արաբական պատմագրության մեջ։ Իբն ալ-Ասիրը վկայում է, որ հիջրի 302 (914—915) թ. խալիֆայի զորավարներից մեկը մեծ կոտորած կազմակերպեց Շայրան ցեղի արարների մեջ, որովհետև տեղական կարավաններն էին կողոպտում[6]։

Այսպիսով, ժ դարում Հայաստանում կային չորս ամիրայություններ, որոնց մասին կարելի է այս կամ այն չափով հստակ խոսք ասել՝ Դվինի, Գողթնի, Մանազկերտի (Կայսիկների) և Կարնո բաղաքի ամիրայությունները։

---

5 Թովմա, էջ 297։

6 Ibn al-Athir, VIII, 67.

1. ԴՎԻՆԻ ԵՎ ԳՈՂԹՆԻ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՅԱՅՈՒՄԸ ՍԱՋՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Սաջյանների ձեռքն ընկնելով Դվինը վերածվեց ռազմական հենակետի և դարձավ Սմբատ Ա-ի դեմ մղված երկարատև պայքարի կարևոր կայան։ Այստեղ էր Յուսուֆը բանտարկել իր ձեռքն ընկած հայ իշխաններին, ինչպես նաև Հովհաննես կաթողիկոսին։ Դվինում էր, որ խաչի վրա սպանվեց Սմբատ Թագավորը։ Սաջյանների մոտավորապես երեսնամյա տիրապետության շրջանում Դվինը ոչ միայն քաղաքականապես, այլև ընդհանրապես մեկուսացվեց Հայոց Թագավորությունից։ Նրանց տիրապետությունը պատճառ դարձավ, որ կաթողիկոսական աթոռը վերջնականապես տեղափոխվի այս քաղաքից։ Դեռ 893/894 թթ. երկրաշարժից հետո Հովհաննես կաթողիկոսը հաստատվել էր Վաղարշապատում, որտեղից չկարողանալով վերադառնալ Դվին, մեծ մասամբ թափառական կյանք վարեց և վերջ ի վերջո, ինչպես կտեսնենք, հուսահատ քաշվեց Վասպուրական[7]։ Այսպիսով, Դվինը զրկվեց հայերի թե քաղաքական, թե հոգևոր իշխանների ազդեցությունից և մահմեդական տարրը բնականաբար իրեն ավելի ուժեղ զգաց։ Հավանաբար Սաջյանների օրոք էր, որ Դվինի հայրապետական ապարանքը մզկիթի վերածվեց և այսպիսով, Մայր եկեղեցու կողքին և նրանից սոսկ մի քանի քայլ հեռավորության վրա ստեղծվեց մահմեդական աղոթարան։ Հովհաննես Դրասխանակերտցին միշտ երազել էր վերականգնել Դվինի հայրապետանոցը[8], բայց քաղաքական հանգամանքները խանգարեցին նրան։ Հայտնի չէ թե ի՞նչ բախտ վիճակվեց ս. Գրիգոր մայր եկեղեցուն[9]։ Քրիստոնեական եկեղեցուն այդքան մոտիկ մզկիթի գոյությունը միայն զարմանք կարող էր առաջացնել և բնականորեն իրենք արաբ մատենագիրները, որոնք վկայում են այդ մասին, ավելացնում են, որ այդպես էր նաև Եմեսայում (Հիմս կամ Հոմս՝ Ասորիքում)։ Իբն Հաուկալը

---

7 Դրասխանակերտցի, էջ 446—447։ Մ. Օրմանյան, *Ազգապատում*, Ա, 1062—1063։

8 Դրասխանակերտցի, էջ 420—421։

9 Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը...*, էջ 100։

գրում է. «Գլխավոր մզկիթը տաճարի կողքին է» և ապա ընթերցողների զարմանքը փարատելու համար ավելացնում է. «Ինչպես Հիմսի մզկիթը, որը տաճարի կողքին է, նրան կպած ու հարակից է»[10]։

Սակայն ինչքան էլ որ Դվինը ընկել էր Սաջյանների ձեռքը, այնուամենայնիվ, քաղաքը դեռ անմիջականորեն կապված չէր Ատրպատականի հետ։ Ուստի Յուսուֆը Արաքսի հովտի Դվինից Ատրպատական երկարող մասի վրա ստեղծեց Գողթնի ամիրայությունը։

Գողթն գավառը հնագույն ժամանակներից մաս էր կազմել Վասպուրական նահանգին։ Օմայան տիրապետության շրջանում Նախճավանի հայտնի աղետի ժամանակ (706) ի շարս այլ նախարարների զոհվեց նաև խոսրով Գողթնացի իշխանը, իսկ նրա որդին՝ Վահանը, դերի տարվեց Դամասկոս և մահմեդականացվեց։ Սակայն Վահանը վերադարձավ իր հայրենի գավառը և նույնիսկ վերստին դավանեց իր նախնիների հավատը, ամուսնանալով Սյունյաց իշխանի դստեր հետ։ Արաբներն այս բանը չներեցին նրան, Վահանը նահատակվեց (737) և որպես նահատակ էլ նա հայտնի է միջնադարյան մատենագրության մեջ։ Սրանից մոտ երեսուն տարի հետո հիշատակվում է ոմն Սահակ իշխան, որպես Գողթնի տեր։ Հավանաբար այս գավառն արդեն ինքնարերաբար անցել էր Սյունյաց իշխաններին[11]։

Ժ դարի սկզբին հավանաբար հենց Յուսուֆի իշխանության տարիներին այս գավառին տիրացավ մի եկվոր արաբ ամիրա, որին պատմիչը պարզապես հագարացի է անվանում, առանց անունը հիշելու։ Սա բռնի ուժով տիրացել էր գավառին («զգաւառն Գողթան բռնակալեալ պայազատէր»)[12] և վայելում էր Սաջյանների հովանավորությունը։ Սրնջակի գրավումից հետո Յուսուֆն այս ամրոցը ևս հանձնեց նրան[13] և այսպիսով, ուժեղացավ Գողթնի ամիրայությունը։

---

10 Ibn Hauqal, II, 342

11 Ալիշան, *Սիսական*, *Վենետիկ*, *1893 էջ 310*։ Թովմա. *էջ 252*։ *Սոփերք Հայկ.*, *ԺԳ*։

12 Դրասխանակերտցի, *էջ 384*։

13 *Նույն տեղում*։

Գողթնի ամիրաները Ժ դարում ձգտում էին տարածվել Արաքսի հոսանքն ի վեր և առաջին հերթին նրանց պետք էր գրավել Նախճավանը։ Արաբական իշխանության ժամանակ Նախճավանը Դվինի համար մի նախակայան էր և նախքան Դվին մտնելը ոստիկանները հաճախ այստեղ էին կանգ առնում։ Հենց Նախճավանի եկեղեցում էր, որ Կասիմ ոստիկանը այրեց հայ նախարարներին։ Նախճավանի որոշ վարչական նշանակություն ունենալու մասին է խոսում այն փաստը, որ ոստիկանները երբեմն այստեղ թողնում էին իրենց տեղակալներին, ինչպես օրինակ, Բուղան հեռանալով Հայաստանից Նախճավանում թողեց Իբրահիմին[14]։

Սակայն Թ դարի երկրորդ կեսում Նախճավանն արդեն ենթակա էր Բագրատունյաց իշխանությանը։ Նախճավան գավառը ավանդաբար համարվել է Վասպուրականի իշխողների տիրույթներից մեկը, սակայն արաբական շրջանում նա մեծ մասամբ Սյունյաց էր պատկանել։ Թ դարի վերջին Սմբատ Ա-ն ի դիմաց այն ծառայությունների, որ Աշոտ Արծրունին մատուցել էր Կայսրիկների դեմ կռվի ժամանակ, Նախճավան գավառը տվեց Արծրունիներին[15]։ Այս ժամանակ ապստամբվեցին Սյունեցիք, սակայն Աշոտ Արծրունու միջամտությամբ նորից հնազանդվեցին Սմբատ Ա-ին։ Հետագայում, երբ Գագիկ Արծրունին ըմբոստացավ, Սմբատ թագավորը խլեց Նախճավանը Արծրունիներից և հանձնեց Սյունյաց իշխաններին[16]։ Սյունեցիք Ժ դարում երկար չկարողացան իրենց ձեռքում պահել Նախճավանը և դարի երկրորդ կեսում, ինչպես կտեսնենք, քաղաքն արդեն նրանց տիրապետությունից դուրս էր եկել։

Սմբատ Ա-ի պարտությամբ և մահվամբ թվում էր թե Յուսուֆը հասել էր իր նպատակին։ Հայոց թագավորությունը բաժանվել էր երկու մասի՝ Վասպուրականում թագավոր տիտղոսով իշխում էր Գագիկ Արծրունին, իսկ Բագրատունյաց բուն կալվածներում՝ Արշարունիք—Շիրակում Յուսուֆը Հովանավորում էր սպարապետ Աշոտ Շապուհյանին[17], որպես Հայոց գա-

14 Թովմա, էջ 191։

15 Նույն տեղում, էջ 247։

16 Դրասխանակերտցի, էջ 263։

17 Նույն տեղում, էջ 366։

հի հավակնորդի, որը սակայն ոչ մի ազդեցություն չուներ նույնիսկ Հայաստանի հյուսիսային գավառների վրա։

Հայաստանը գտնվում էր խիստ ծանր վիճակում, սակայն Յուսուֆի գերիշխանությունը միայն երևութական էր։ Հենց Վասպուրականը դեռ նույնիսկ Սմբատի պարտության նախօրեին թողել էր Յուսուֆին և պաշտպանողական դիրք բռնել նրա դեմ[18]։ Վասպուրականի թագավորությունը բավական ուժեղ էր և ռազմական տեսակետից լավ ամրացված։ Ատրպատականից եկած բոլոր հարձակումները իզուր անցան և Վասպուրականի թագավորությունը դարձավ մի կարևոր խոչընդոտ, որը դժվարացրեց Սաջյանների հետագա գործունեությունը Հայաստանում։

Սմբատ Ա-ի սպանությունից անմիջապես հետո հանդես եկավ որդին՝ Աշոտը, որը չճանաչելով իր հորեղբորորդու Աշոտ Շապուհյանի իշխանությունը կատաղի պայքար սկսեց հոր թագավորությունը վերականգնելու համար։ Հովհաննես կաթողիկոսի միջոցով Աշոտը դիվանագիտական հարաբերությունների[19] մեջ մտավ Բյուզանդիայի հետ։ Նա անձամբ գնաց Բյուզանդիա և օգնական զորքով վերադառնալով Հայաստան նորից սկսեց պայքարը թե սաջյանների դեմ, թե ապստամբ հայ իշխանների դեմ։

Լսելով Աշոտ Բ-ի վերադարձը, Յուսուֆը Աշոտ Շապուհյանին կանչեց Դվին և թաղ կապեց նրա դլխին։ Այսպիսով, Հայաստանում ստեղծվեցին երեք թագակիրներ, որոնք բոլորն էլ իրենց համարում էին «թագաւոր Հայոց Մեծաց»՝ Աշոտ Բ-ը, Գագիկ Արծրունին և Աշոտ Շապուհյանը։

Աշոտ Բ-ը հարձակվեց Արշարունիքի վրա և Աշոտ Շապուհյանը եկավ ու հաստատվեց Դվին քաղաքում[20]։ Սրանով դրությունն ավելի բարդացավ և երկու տարի շարունակ Հովհաննես կաթողիկոսին չհաջողվեց հաշտեցնել հորեղբորորդիներին։

Այսուամենայնիվ Աշոտ Բ-ի դիրքը բավական ուժեղ էր և ահա հանկարծ Յուսուֆը որոշեց ճանաչել Աշոտ Բ-ին ուղար-

---

18 Նույն տեղում, էջ 307—308։

19 Նույն տեղում, էջ 332—354։

20 Նույն տեղում, էջ 366։

կելով նրան թագ, թանկարժեք իրեր, ոսկեսանձ ձի և նույնիսկ հեծյալների մի գունդ։ («Եւ հեծեալս օգնականութիւն նմա գունդ իսմայէլեան»)[21]։

Յուսուֆի քաղաքականության հանկարծակի փոփոխությունը կարելի է համարել այն բանի հետևանք, որ նա նեղ դրության մեջ էր Պարսկաստանում և միևնույն ժամանակ Աշոտ Բ-ն իրականում Հյուսիսային Հայաստանը մեծ մասամբ հպատակեցրել էր, ուստի մնում էր իրավականորեն ևս նրան ճանաչել։

Աշոտ Բ-ն թագ ստանալուց անմիջապես հետո հարձակվեց իր ախոյանի վրա, որն ըստ երևույթին արդեն կորցրել էր Սաջյանների աջակցությունը, թեև դեռ մնում էր Դվինում[22]։ Հովհաննես կաթողիկոսն իզուր փորձեց հաշտեցնել երկու Աշոտներին, սակայն թագավորն անդրդվելի էր մնում հույսը դնելով իր զորքերի վրա։ Չկարողանալով նվաճել Դվինը և պարտություն կրելով Աշոտ Շապուհյանի զորքերից, Աշոտ Բ-ն դիմեց Վրաց Գուրգեն իշխանին և օգնական զորքով նորից եկավ Վարազշապատ նոր հարձակում ձեռնարկելու համար։ Սակայն այս անգամ կաթողիկոսի միջնորդությունը բավական եղավ կանխելու արյունահեղությունը[23]։

Աշոտ Շապուհյանի ներկայությունը Դվինում, որը համընկնում է մոտավորապես 918—920 թթ., հետևանք էր այն բանի, որ նա ի վիճակի չէր մնալու իր կալվածներում՝ Արշարունիքում։ Նրա նստավայրը Բագարանն էր, Բագրատունիների վաղեմի կենտրոնը, իսկ Աշոտ Բ-ն և նրանից առաջ էլ հայրը՝ Սմբատ Ա-ն մայրաքաղաք էին ընտրել Երազգավորսը (Շիրակավան)։

Այնուամենայնիվ Աշոտ Շապուհյանի ներկայությունը մայրաքաղաք համարված Դվինում անհանդուրժելի էր Աշոտ Բ-ի համար և վերջինս դարձյալ եկավ Դվին և մեծ կոտորած արեց։ Դժբախտաբար պատմիչը չի ասում թե ո՞ւմ դեմ էր թագավորի կռիվը և որո՞նք էին այն ապստամբները, որոնց

---

21 Նույն տեղում, էջ 375։

22 Նույն տեղում, էջ 373։

23 Նույն տեղում, էջ 376։

նա հնազանդեցրեց («հնազանդեցուցանէր զամբարտաւան և զբիրտ ապստամբութիւն նոցա ընդ լծով ծառայութեան իւրոյ»)[24]։ Այս տողերը ավելի պարզ են դառնում, եթե նկատի ունենանք, որ քիչ հետո պատմիչը ավելացնում է, որ երբ Աշոտ թագավորը իր կամքին հպատակեցրեց Դվինը («բայց թագաւորն Աշոտ իբրեւ զկամակատարս զԴվին քաղաք պատրաստեաց...»)[25] հեռացավ գնաց Վրաստան և այլն։ Պարզվում է, որ հենց Դվինը և այնտեղ նստող Աշոտ Շապուհյանն էին, որ պարտվել ու հպատակվել էին Աշոտ Բ-ին։

Նմանօրինակ իրադրության մեջ Յուսուֆի ապստամբությունը խալիֆայի դեմ և դերի բռնվելը[26] արմատապես փոխեց իրերի փոխհարաբերությունը հօդուտ Աշոտ Բ-ի։ Ատրպատականում իշխանության գլուխ անցավ մի նոր կառավարիչ Սբուք (արաբ. Սուբուք)[27] անվամբ, որը շատ զգույշ վերաբերվեց Բագրատունյաց թագավորության նկատմամբ։ Աշոտ Բ-ն որպես Բագրատունյաց ընդարձակ թագավորության միակ օրինավոր ժառանգորդը իր իրավունքները վերականգնել էր Հայաստանի հյուսիսային գավառներում, իսկ հարավում Տարոնի Բագրատունիները որոշ հարաբերության մեջ էին նրա հետ։ Կայսրերն ինքնարերաբար դուրս ընկան Բագրատունի թագավորի գերիշխանությունից, իսկ Վասպուրականի թագավորը նեղ դրության մեջ էր, ուստի Աշոտ Բ-ն արդեն մրցակիցներ չուներ։ Աշոտ Շապուհյանի մեկուսացումը առավել ևս ամրացրեց Աշոտ Բ-ի դիրքերը մանավանդ միջազգային տեսակետից և ահա Սբուքը որպես խալիֆայի ներկայացուցիչ նրան տվեց Շահանշահ (թագավոր թագավորաց)[28] տիտղոսը, ընդգծելով նրա առավելությունը մյուս երկու թագակիրների նկատմամբ։ Բյուզանդիան արդեն միայն նրան էր ճանաչել որպես Բագրատունի թագավոր, իսկ խալիֆայության կողմից Շահանշահ տիտղոսի շնորհումը նշանակում էր Աշոտ Շապուհյանի իրական և իրավական ոչնչացումը։

---

24 Նույն տեղում, էջ 384։

25 Նույն տեղում, էջ 385։

26 Ibn al-Athir, VIII, 304.

27 Դրասխանակերտցի, էջ 392—393։

28 Նույն տեղում, էջ 393։ Minorsky, Studies (arab.), 5.

Հավանաբար Դվինում էր գտնվում այդ ժամանակ Աշոտ Շապուհյանը և ահա իր դիրքերը ամրապնդելուց հետո Շահանշահը գալիս է Կոտայք գավառը և խաղաղության կոչ է անում իր նախկին ախոյանին: Կաթողիկոսի միջնորդությամբ և նրա ընկերակցությամբ վերջինս գալիս է Շահանշահի մոտ Կոտայք գավառը և խաղաղության դաշինք են կնքում: Ապա երկու հոգևորականները միասին գալիս են Դվին, որն արդեն Հայոց թագավորության ենթակա էր դարձել: Այստեղ, ինչպես երևում է, քաղաքում դիրք ունեցող մահմեդական դժգոհ տարրերը (հավանաբար հոգևորականներ) որոշ բացասական գործունեություն էին ծավալել, ուստի թագավորը հնազանդեցնում է նրանց («և անդ զմոլորութիւն պաշտօնէիցն հեթանոսաց յինքեանս դրաւեալ՝ ընդ ձեռամբ նուաճէին»)[29]: Այստեղ պատմիչի խոսքերն անորոշ են և կարելի է նաև ենթադրել, որ խոսքը վերաբերում է հայրապետանոցին, որի ինչքն ու կալվածները մահմեդականների ձեռքն էին ընկել, իսկ Հովհաննես կաթողիկոսը մեծ ջանքեր էր թափում այն ազատելու: Համենայն դեպս Դվինն այդ ոստանին գտնվում էր հայերի ձեռքում և Շահանշահն ու Աշոտ Շապուհյանը խնջույքներով և հանդեսներով նշանավորեցին այդ օրը: Ապա Շահանշահը նորից հեռացավ, իսկ հոգևորականը հավանաբար միառժամանակ մնաց Դվինում, որպես քաղաքի իշխանը, սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ նա այնտեղ երկար չմնաց, այլ նախընտրեց քաշվել Բագարան:

Դվինի մի քանի տարով նվաճումը Բագրատունիների կողմից ժամանակավոր բնույթ ուներ, թեև միայն Դվինի գրավումն էր, որ Աշոտ Բ-ին հնարավորություն կտար իր գերիշխանությունը հաստատելու Հայկական լեռնաշխարհում:

Աշոտ Բ-ի հարձակումները Դվինի վրա ուժ տվեցին Սյունյաց իշխաններին, որոնք Գողթնի ամիրայից պահանջեցին վերադարձնել Երնջակ գավառն ու ամրոցը: Ինչպես գիտենք դեռ 913 թ. Յուսուֆը գրավելով այս ամրոցը (որտեղ հայ նախարարների ընտանիքներն էին ապաստանել) հանձնեց Գողթնի ամիրային մեծ դժգոհություն պատճառելով Սյունյաց իշխան-

29 Դրասխանակերտցի, էջ 400։

ներին։ Այնուհետև մեծ իշխան Սմբատը և իր երեք եղբայրները կռվի ելան նրա դեմ։ Հետաքրքրական է, որ Սմբատն իր զորքից բացի բերել էր նաև վարձկան զորք («Սկիւթացի թուրքն», Դրասխանակերտցու մոտ՝ «Գարաւօնացի»)[30], որոնք վրանների տակ հաստատվել էին Այնիքում[31]։ Սակայն վերջիններիս դավաճանության պատճառով Գողթնի արարները (հոգարացիք) հաղթեցին, իսկ իրենք՝ «թուրքերը» փախան Նախճավան։

Բյուզանդական օգնությունը Բագրատունյաց թագավորությանը էժան չնստեց և անմիջապես երևաց դրա իսկական դրդապատճառը։ Կայսրությունն իր ցուցաբերած օգնության դիմաց իրավունք էր վերապահում խալիֆայության դեմ պայքարի անվան տակ ասպատակել Հայաստանը, որի արևմտյան որոշ գավառները ընկան նրա ազդեցության տակ։

922 թ. բյուզանդական զորքերը Հովհան Կուրկուասի գլխավորությամբ հասան մինչև Դվին, որտեղ այդ ժամանակ նստած էր Սբուքը։ Սա իրեն օգնության էր կանչել Աշոտ Շահանշահին, որը և եկել էր։ Արաբական և հայկական զորքերով պաշտպանված Դվինը անառիկ մնաց, իսկ հունական զորքերը պաշարումը վերացրեցին և հեռացան։ («Սա [իմա՝ Ռոմանոս Լեկապենոս] չերկրորդ ամի թագաւորութեանն իւրոյ զումարեաց զօր բազում և դեմեալիկոս առաքեաց ի Դուին քաղաք յորում էր Սպքի ամիրայ որ զԱշոտն Շահանշահ օգնական իւր արկ ի քաղաքն։ Եւ եկեալ զօրն Յունաց՝ պաշարեցին զԴուին և ոչ կարացեալ առնուլ՝ դարձան անդրէն»)[32]։

Այս արշավանքի մասին լռում են ոչ միայն արաբ պատմիչները, այլև նույնիսկ ժամանակակից Հովհաննես կաթողիկոսը, որն ինչ-ինչ նկատառումներով նախընտրել է լռել «քրիստոնեության պաշտպան» Կայսրության կողմից Հայոց թագավորության վրա կատարված այս ասպատակության մասին։ Այնուամենայնիվ նա ակամայից ակնարկում է այս շրջանում Բյուզանդիայի կողմից հայոց նախարարներին Աշոտ Շահանշահի դեմ դրդելու թարուն նպատակներին։ Երբ Աշոտ

30 Դրասխանակերտցի, էջ 385։ Ս. Կանայեանց, Անհայտ գավառներ, Վաղարշապատ, 1914, էջ 137—143։

31 Օրբելեան, էջ 195։

32 Ասողիկ, էջ 170։

Բ-ն խալիֆայությունից ստացավ Շահանշահ տիտղոսը և Դվինում իր հակառակորդ Աշոտ Շապուհյանին ընկճելուց հետո, Ուտի նահանգը դիմեց ապստամբ նախարար Յլիկ Ամրամի հետ հաշվեհարդար տեսնելու, գտավ որ վերջինս Հովհան Կուրկուասի դաշնակցությամբ ապստամբություն էր բարձրացրել։ Ամրամը նույնիսկ ուզում էր Կուրկուասի ծառայության մեջ մտնել («հաճէր հաւանէր մտանել ընդ լծով ծառայութեան անբնիկն Գուրգենայ որ իշխան իշխանաց էր Գամրայց աշխարհին»)[33]։ Այս դեպքերը Ուտիքում կատարվում էին մոտավորապես 920—922 թթ., այնպես որ սերտորեն կապված էին Դվինի վրա կատարված արշավանքի հետ։

Սրուքի մահվամբ և Յուսուֆի ապատ արձակմամբ (923) դրությունը նորից փոխվեց ի վնաս Աշոտ Բ-ի։ Յուսուֆը նոր թափով սկսեց պայքարը Հայոց թագավորության դեմ՝ նորից հենակետ ունենալով Դվինը։

Յուսուֆը որպես ներկայացուցիչ Հայաստան ուղարկեց Նասր ալ-Սուրուքիին[34], որը նախ կանգ առավ Նախճավան քաղաքում և հենց այստեղ ձերբակալեց իրեն դիմող Սյունյաց իշխաններին։ Ապա Քարունջ գյուղաքաղաքում նրան ընդառաջ եկան Դվինի իշխանավորները, մեծամեծները (դահիրէցք, նահապետք...), որոնք մեծ մասամբ հայեր էին։ Սրանցից քառասուն հոգու Նասրը շղթայակապ իր հետ մտցրեց Դվին[35]։ Ըստ երևույթին Աշոտ Շապուհյանի ներկայության տարիներին հայ տարրը նորից էր աշխուժություն ցուցաբերել Դվինում, մանավանդ որ Աշոտ Շահանշահը կոտրել էր մահմեդականների դիմադրությունը։

Քաղաքի հայ իշխանավորների ձերբակալմամբ Նասրն ուզում էր ուժեղացնել մահմեդական տարրի դերը քաղաքում։

Նասրը ոտնձգություններ արեց նաև հայկական վանքերի և եկեղեցիների նկատմամբ։ Հովհաննես կաթողիկոսն ամենից ավելի անհանգստանում էր Դվինի հայրապետանոցի համար և նույնիսկ բանակցություններ էր սկսել Նասրի հետ այս հարցը

---

33 Դրասխանակերտցի, էջ 401։

N. Adontz, Asot Erkat ou le fer, 31.

34 Ibn al-Athir, VIII, 129.

35 Դրասխանակերտցի, էջ 416։

լուծելու նպատակով, քանի որ երկար ժամանակ է, որ նա չէր կարողանում վերադառնալ Դվին։ Նասրը նախ համաձայնվեց և երդման թուղթ տվեց («չետակար երդման գրէ ըստ իւրեանց Կուրանին օրինացն»)[36]։ Սակայն Դվինի մահմեդական հոգևորականների կողմից այս բանը վնասակար համարվելով նրանցից մեկը («դատաւոր անկանոն կրօնից Մահմետի») կարողացավ համոզել Նասրին նա կենալ իր որոշումից և նույնիսկ ձերբակալել կաթողիկոսին ու դրավել նրա ինչքը։ Նասրի զինվորները գնացին մինչև Գեղարդ և ապա Բյուրական, բայց կաթողիկոսն արդեն փախել էր Բագարան Աշոտ Շապուհյանի մոտ։ Նասրը յուրացրեց Դվինի հայրապետանոցի ամբողջ ինչքը և նրան պատկանող բոլոր գյուղերը։ Այսպիսով, կաթողիկոսական աթոռը վերջնականապես դուրս մղվեց Դվինից և սա պատճառ դարձավ, որ հայ տարրը առավել ևս թուլանա Դվինում։

Շուտով Նասրը վերադարձավ Ատրպատական Դվինում տեղակալ թողնելով Բշիր (Բաշիր) անունով մեկին։ Այդ ժամանակ երկարատև պայքարից հոգնած Աշոտ Երկաթը քաշվել էր Սևանա վանքը և Բշիրը քաջալերված նախկինում Նասրի կողմից կաթողիկոսի դեմ Բյուրական կազմակերպված հաջող արշավանքից, ինքն էլ մի արշավանք կազմակերպեց Սևան՝ Աշոտ Երկաթի դեմ։ Սևանի կղզում հանգստացող արքան այնպիսի ջարդ տվեց Բշիրին, որ սա փախավ Դվին[37], ճանապարհին մի նոր պարտություն կրելով Գեորգ (Մարզպետունի) իշխանից։

Այսպիսի լարված իրադրության մեջ բյուզանդական զորքերը նորից արշավեցին Դվինի վրա։ Նրանք անցնում էին հավանաբար Բասենից Արշարունիքի վրայով և Արաքսի հոսանքով իջնում մինչև Դվին։ Իբն ալ-Ասիրը այս արշավանքը դնում է հիջրի 315 թ. տակ (մ.թ. 927—928) և հետաքրքրական տողերով է նկարագրում[38]։ Հույների մեծաթիվ բանակը Դումուստուկի (Դոմեստիկոս) գլխավորությամբ հարձակվեց Դվինի վրա,

---

36 Դրասխանակերտցի, էջ 421—422։

37 Նույն տեղում, էջ 433—434։

38 Ibn al-Athir, VIII, 129.

որտեղ նստած էր Նասր ալ-Սուբուքին իր զորքով։ Դումուստուկի բանակին արյունահեղ մարտից հետո հաջողվեց մերձենալ պարսպին, անցքեր բանալ և ներս թափանցել քաղաք։ Սակայն քաղաքի ներսում ժողովուրդն ու զորքը այնպիսի դիմադրություն ցույց տվեցին, որ հույները նահանջեցին կորցնելով մոտավորապես տասը հազար մարդ։

Հայտնի չէ թե այս անգամ ինչպիսի վերաբերմունք ցուցաբերեց Աշոտ Բ-ն բյուզանդական հարձակման նկատմամբ։ Համենայն դեպս Դվինի բնակիչների պայքարը հույն զորքի դեմ ցույց է տալիս, որ ժողովրդի համակրանքը հարձակվողների կողմը չէր։

Այս դեպքերից հետո Նասրը հեռացավ Դվինից և բացի սրանից այդ ժամանակ հենց Սաջյանների իշխանությունն էլ վերջացավ ամբողջ Ատրպատականում (929 թ.)[39]։

2. ԴՎԻՆԸ 929—941 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Աշոտ Բ-ին հաջորդեց եղբայրը՝ Աբասը (928—953), որի ժամանակ ավելի մեծ չափով խորացավ թագավորության մասնատվածությունը։ Սաջյանների անհետանալուց հետո անիշխանություն էր տիրում նաև Ատրպատականում, որտեղ իրանական ծագում ունեցող տարբեր իշխողներ իրար էին հաջորդում։ Վերջին Սաջյանը Աբու-լ-Մուսաֆիր ալ-ֆատհն էր, որին հաջորդեց Սաջյանների ստորադրյալներից մեկը՝ Մուֆլիհը[40]։ Սրա հաստատակ ծագման մասին են վկայում Անանուն Արծրունու հետևյալ խոսքերը. «Կակայէին որդիք աղախնեաց և ծառայի տանն Ապուսաճայ»[41]։

Բագրատունյաց Հայաստանն այս շրջանում աննպաստ վիճակում էր միայն այն տեսակետից, որ զուրկ էր կենտրոնական իշխանությունից. սակայն ընդհանրապես երկիրը բարգավաճ վիճակում էր։ Չկար խալիֆայության ճնշումը և Հայաստանն այլևս հարկ չէր վճարում Աբբասյաններին։ Բացի

---

[39] Cl. Huart, Sadjids, Enc. of Islam, IV, 49-50.

[40] Ibn Hauqal, II, 322.

[41] Թովմա, էջ 289։

սրանից, Սաջյանների անհետացումով Հայաստանն ազատվեց մի մեծ սպառնալիքից։

Սաջյանների դեմ մղված մոտավորապես երեսնամյա պայքարից Հայաստանն այնքան էր ուժասպառ եղել, որ Աբաս Բագավորը նույնիսկ փորձ չարեց Սաջյանների կողմից հափշտակված Դվինը վերանվաճել։ Մոտավորապես 12 տարի (929—941) Դվինը մնաց մեծ մասամբ անտիրության մեջ։

Այս շրջանից մեզ հասել է մի արաբական դրամ, որի վրա կա հիջրի 319 (931) թ. և կրում է Յուսուֆ իբն Դիվդատի անունը[42]։ Թողարկման վայրը նշված է «Արմինիա», իսկ այս շրջանի համար Արմինիա մակագրությունը պետք է հասկանալ որպես հենց Դվին (և ոչ ասենք՝ Պարտավ), որովհետև Արմինիա այս ժամանակ կարող էր նշանակել միայն Հայաստան։ Այս դրամի գոյությունն ապացուցում է, որ Դվինի փողերանոցը այդ տարիներին դեռ գործում էր և քաղաքը գտնվում էր Ատրպատականի հետ որոշ կապեր ունեցող տարրերի ձեռքում, որոնք դեռ նախկին կաղապարներով դրամ էին թողարկում այն էլ իշխանությունից ընկած Սաջյանների անունով։

Այդ տարիներին Մեծ Հայքում ամենաուժեղ քաղաքական միավորը Վասպուրականի թագավորությունն էր, որի ամենափայլուն շրջանը Գագիկ Արծրունու իշխանության տարիներն (908—943) էին[43]։ Գագիկը թեև բացասական դեր խաղաց Բագրատունյաց թագավորության դեմ մղված պայքարում, բայց Սմբատ Ա-ի մահվանից հետո փաստորեն Ատրպատականի և այլոց կողմից եկած բոլոր թշնամական հարձակումների թիրախը Վասպուրականն էր։ Յուսուֆի բազմաթիվ հարձակումներին հակահարված տալով Գագիկ Արծրունին մեծ չափով օգնել էր Աշոտ Բ-ի մղած պայքարին։ Նույն բանը շարունակվեց նաև Աբասի օրոք։ Այսպես, Իբն ալ-Ասիրը հիշում է[44], որ հիջրի 317 (929/930) թ. Մուֆլիհ ալ-Սաջին (պատմիչը նրան համարում է Սաջյան) բախվեց Դոմեստիկոսի (Դումուստուկ) հետ, որը պարտվեց և Մուֆլիհը մտավ

---

[42] Х. Мушегян. Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962, стр, 143-144.

[43] Թոլմա, էջ 290—292։

[44] Ibn al-Athir, VIII, 159.

հոռոմների երկիրը։ Այս հարձակումը կարող էր տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե նա Վասպուրականի հյուսիսային մասերի վրայով անցներ Կայսիկների տիրույթները և ապա բախվեր հույների հետ։

Հենց այսպիսի հնարավորության մասին է վկայում նույն պատմիչի մի ուրիշ տեղեկություն։ Հիջրի 319 (931) թ. Իբն ալ-Դայրանին (իմա՝ Դավիթ որդի Դերանկին) և ուրիշներ գրգռելով հույներին բերեցին Կայսիկների դեմ։ Հույները հարձակվեցին Խլաթի և այլ բաղաքների վրա և շատ մահմեդականների կոտորեցին։ Մուֆլի՝ ն անմիջապես միջամտեց և հարձակվելով Վասպուրականի վրա հսկայական կոտորած կազմակերպեց (ըստ Իբն ալ-Ասիրի 100.000 մարդ կոտորվեց)[45]։

Մոտավորապես 930-ական թվականների վերջերին Աբբասյանների կողմից Հայաստանի վրա հարձակվեց մի արաբ զորավար, որի անունը պատմիչը չի հաղորդում, այլ ասում է միայն, թե հմուտ զինվորական էր («այր մի արաբացի ազգաւ, այր հմուտ պատերազմաց և գործոց զինուորութեան»)[46]։ Սա մտավ Դողթն, ապա նախճավանի վրայով անցավ Շարուր և գրավեց Դվին «մայրաքաղաքը»։ Այստեղից նա հարկապահանջներ ուղարկեց Աբաս թագավորին, երեք ցանկանալով անցած ժամանակների նման հարկ վերցնել հայերից։ Այսպիսի սպառնալիքի առջև միացան Աբասն ու Գագիկը և թեև Աբասն շտապեց և, ըստ Արծրունյաց պատմիչի, պարտվեց, սակայն շուտով վրա հասան Գագիկի զորքերը և մարան ուրիշ կերպարանք ստացավ։ Արծրունյաց զորքերը բանակ էին դրել Արաքսի մյուս ափում, Գինոս բլրի վրա, Խոր վիրապի դիմացը։ Ռազմիկներին թաքցնելու համար Եղիշե կաթողիկոսն աղոթում էր Գինոս բլրի գագաթին։ Հակառակորդի զորքն անցավ գետը, սակայն բլրի վրա դիրք գրաված հայերը ուժեղ հարձակմամբ 8 հազար մարդ կոտորեցին և գետն անցնելով դրոհեցին Դվինի վրա։ Երբ Գագիկն սպառնաց վառել քաղաքը, Դվինի մեծամեծները («ծերք քաղաքին») խաղաղություն խնդրեցին տալով հարկ և պատանդներ։ Գագիկ Արծրու-

45 Ibn al-Athir, VIII, 173.

46 Թովմա, էջ 300։

նին բավարարվեց այսքանով և առանց Դվինը գրավելու վերադարձավ Դարույնք ամրոցը, ուր նա շատերին շղթայակապ ուղարկել էր կռվի դաշտից։

Հետևելով իր խոստման, ըստ որում Ատրպատականի այս շրջանի իշխողներից ոչ մեկին հիշատակության արժանի չէր համարում, Արծրունյաց պատմիչը այս անգամ ևս չի տալիս այդ զորավարի անունը, որը պետք է այդ ժամանակ Ատրպատականում գործող հայտնի անձնավորություններից մեկը եղած լիներ, ինչպիսիք էին, օրինակ, Մուֆլիհը, Լաշքարի իբն Մարդին կամ Դայսամ իբն Իբրահիմ ալ-Քուրդին։ Մուֆլիհն իշխեց մոտավորապես մինչև հիջրի 323 (934—935) թ. և 326 (937—938) թ. միջև ընկած տարիները, որովհետև հիջրի 326 թ. Ատրպատականում արդեն իշխում էր Դայսամ իբն Իբրահիմը[47], որի դեմ պայքարի դուրս եկավ Լաշքարի իբն Մարդին։ Սկզբում սա հաղթեց Դայսամին, բայց Արդաբիլում ուժեղ դիմադրության հանդիպեց և Դայսամից պարտվելով փախավ Մուղան, որտեղից զորք վերցնելով նորից հաղթեց Դայսամին։ Երբ վերջինս Վաշմգիր Զիարիից վերցրած օգնական զորքով վերստին հարձակվեց Լաշքարիի վրա, սա իր մարդկանց համոզեց ապստամբություն կատարել Հայաստան։ Այս արկածախնդրի Վասպուրական կատարած արշավանքի նկարագրությունը կա Իբն Միսքավայհի մոտ[48], որը 937—938 թ. տակ հիշում է, թե ինչպես Լաշքարին հարձակվեց Անձևացիքի վրա (ազ-Զատուաղան), որտեղ իշխում էր Աթում իբն Ջուրջինը (Ատոմ որդի Գուրգենի), որը «հայերի թագավոր Իբն ալ-Դայրանիին (իմա՝ Դավիթ Արծրունուն) աղդական էր»։ Ատոմն առաջարկեց Լաշքարիին վերջ տալ իր ապստամբություններին, բայց գոհացուցիչ պատասխան չստանալով, մի նեղ կիրճի մեջ նրան մեծ ջարդ տվեց։ Ըստ արաբ պատմիչի վկայության, Ատոմը հինգ հազար մարդ կոտորեց, որոնց մեջ էր նաև ինքը՝ Լաշքարին։

Արծրունիների հաղթանակը նպաստեց Ատրպատականում Դայսամի հաջողությանը, որը միշտ Վասպուրականն իր դաշ-

---

[47] А. Быков, Дайсам Ибн Ибрахим, стр. 27.

[48] Ibn Miskawayh, I, 401-402.

նակիցն էր համարել։ Սրանից հետո Դայսամն իրեն ենթարկից նաև Դվինը։ Այդ մասին է վկայում Լենինգրադի էրմիտաժում պահվող մի դրամ, որը կրում է հիջրի 330 (941—942) թ.։ Այս դրամը (դիրհեմ՝ արծաթյա փող) 1938 թ. ուրիշ հինգ դրամների հետ մի անհատական հավաքածուից անցել է Լենինգրադի էրմիտաժին և մանրակրկիտ քննարկման ենթարկվելով դրամագետ Ա. Բիկովի կողմից պարզվեց, որ հավելյալ նշանակություն ունի։ Ա. Բիկովը Դայսամ իբն Իբրահիմին նվիրած իր հոդվածում[49], այս դրամը նկարագրում է, որի վրա մակագրված է «Դայսամ իբն Իբրահիմ», թողարկման վայրը նշված է՝ Արմինիա, իսկ թվականը հիջրի 330 տարին է։ Ա. Բիկովը համոզիչ կերպով ապացուցում է, որ այս ժամանակվա համար Արմինիա մակագրությունը կարող է վերաբերել միայն Դվինի փողերանոցին, որովհետև Արմինիա ասելով կարող էին հասկանալ միայն Հայաստան, բայց ոչ այլևս նախկին Արմինիա ոստիկանությունը, որը վաղուց կազմալուծված էր։

Այս թվականը (330) Դայսամի իշխանության վերջին տարին է ցույց տալիս, որովհետև դրանից անմիջապես հետո Ատրպատականը և նրա հետ մեկտեղ Դվինը ընկան Սալարյանների տիրապետության տակ։

3. ԿԱՅՍԻԿՆԵՐԸ

Բագրատունյաց Հայաստանի բոլոր արաբական ամիրայություններին մեջ Մանազկերտի Կայսիկների ամիրայությունը յուրահատուկ տեղ էր գրավում։ Դա իր ժամանակին բնորոշ մի ավատական տիրույթ էր ժառանգական իշխանությամբ, մի բան, որը չի կարելի ասել ոչ Դվինի, ոչ էլ Կարնո քաղաքի ամիրայությունների մասին, որտեղ իրար հաջորդում էին մեծ մասամբ պատահական անձնավորություններ։ Կայսիկների պատմության շատ հետաքրքրական շարադրանքը գտնում ենք Կոստանդին Ծիրանածնի մոտ[50], որն արաբական և հայ-

---

[49] А. Быков, Дайсам Ибн Ибрахим, стр. 14-19.

[50] Const Porph., De adm. imp., c. 44, p. 198-204.

կական աղբյուրների ավյալների հետ միասին հնարավորություն է տալիս կազմելու կայսրիկների ամբողջական պատմությունը։

Ամբաս Ա-ի մահվան ժամանակ Կայսրիկների ամիրայությունը գտնվում էր երեք եղբայրների ձեռքում, որոնք իրենց հար ժառանգությունը բաժանել էին իրար միջև[51]։ Ավագի՝ Աբու Սավադայի տիրույթներն էին՝ Մանազկերտը, Կարոյ Ջորը և Հարքը, երկրորդը՝ Աբու-լ-Ասվադը ստացավ Արճեշը, Խլաթը և Արծկեն (արաբ. Դաստ ալ-Ջաուզ)։ Սրա հետ հիշվում է նաև հարեղբորորդին Ահմադը (որդին Աբդ ալ-Ռահմանի), որին նա որդեգրել էր։ Երրորդ եղբայրը Աբու Սալիմը ստացավ «Ցերմացու» ամրոցը, որը պետք է նույնացնել ոչ թե Ջերմաձորի հետ (Մոկսում) ինչպես անում էր Է. Հոնիգմանը[52], այլ Սերմանցի հետ[53], որը Հարքի հյուսիս-արևմուտքում էր գտնվում։ Այսպիսով, կազմվեցին երեք ամիրայություններ, որոնք շղթայի նման ձգվում էին Աղձնիքից մինչև Կարնո քաղաք։

Երեք կայսրիկ եղբայրները թեև անկախ էին դարձել Բագրատունյաց թագավորությունից, բայց մյուս կողմից նրանք պարտավոր էին դիմագրավել բյուզանդական վտանգը, որի դեմ պայքարելու համար մեծ ուժեր էին պահանջվում։ Ատրպատականի Սաջյանների սպառնալիքը ստիպեց Աշոտ Բագրատունուն (Աշոտ Բ) Բյուզանդիայի օգնության դիմել և այն էլ հավանաբար որոշ պայմաններով։ Նրա և բյուզանդական արքունիքի միջև միջնորդ Հովհաննես կաթողիկոսը Բյուզանդիայի կայսեր ուղղած իր նամակում հաճախ է կրկնում այն միտքը, որ եթե կայսրության օգնությամբ Հայոց թագավորությունն ազատվի մահմեդականների ասպատակություններից, կմտնի Բյուզանդիայի հովանավորության տակ («զի թերևս յիսմայէլականաց ասսի արտաքս զերծեալ և ի հովանի թեւոց ձերոց ամրացեալ և առկայացեալ...»)[54]։ Թեև չգիտենք թե Աշոտ ար-

---

51 Const. Porph., De adm. imp., c. 44, p. 198-201.

52 Honigmann, Ostgrenze, 147.

53 Markwart, Südarmenien, 305.

54 Դրասխանակերտցի, էջ 352։

քայորդին ինչ պայմաններով զորք ստացավ Բյուզանդիայից, սակայն Կոստանդին Ծիրանածնի գրքից պարզ և հայտնի է, որ կայսրությունը իր տված փոքրիկ ռազմական օգնության դիմաց Հայոց թագավորին՝ Աշոտ Բ-ին համարում էր իրեն ենթակա իշխան։ Ոչ միայն Շահանշահ այլև թագավոր տիտղոսը նա չի ուզում գործածել Հայոց թագավորի մասին խոսելիս, այլ երկիմաստ կերպով նրանց կոչում է «իշխանաց իշխան», որովհետև ըստ նրա, Բյուզանդիայի կայսրն էր քրիստոնեից միակ թագավորը։ Ելնելով այս դրությունից Բյուզանդիան օրինականորեն իրեն ենթակա էր համարում նաև Կայսիկների ամիրայությունը, ինչպես նաև Կարնո քաղաքը և այլն։ Ծիրանածինն այսպես է ձևակերպում Կայսրության վերաբերմունքը «քանի որ իշխանաց իշխանը (իմա՝ Աշոտ Բ-ը) Հոռոմների կայսեր ծառան է, նշանակված լինելով նրա կողմից և իր իշխանությունը նրանից ստացած լինելով, պարզ է որ նրա բոլոր ամրոցները, քաղաքները և գավառները պատկանում են Հոռոմների կայսեր»[55]։

Տեսնելով կայսրության նմանօրինակ վերաբերմունքը Աշոտ Բ-ն շուտով խզեց իր կապերը նրա հետ և բյուզանդական օգնական զորքն էլ հավանաբար ետ ուղարկեց։ Սակայն Հայաստանի որոշ արևմտյան գավառները երկար մնացին բյուզանդական ազդեցության տակ։ Ըստ Ծիրանածնի, այն հարկը, որ Կայսիկ երեք եղբայրները առաջ վճարում էին Սմբատ Ա-ին, սրա մահվանից հետո տալիս էին Բյուզանդիային։

Իրականում այս ենթարկումը շատ սահմանափակ շրջանակներում էր կատարվում, որովհետև Սմբատ Ա-ի մահվանից մինչև Բյուզանդիայի կողմից գրավումը արևմտյան Հայաստանի որոշ գավառները (Կարին, Բասեն, Մանանաղի, Հարք, Ապահունիք, Աղիովիտ, Առբերանի, Տարոն և այլն) մնացին անորոշ դրության մեջ։ Հայոց թագավորությունից նրանք կտրվել էին, մյուս կողմից Բյուզանդիան էր ձգտում իրեն ենթարկել, իսկ մահմեդական աշխարհը չէր ուզում նրանցից հրաժարվել, լավ գիտենալով որ դա ռազմագիտական մեծ

---

[55] Const. Porph., De adm. imp., c. 44, p. 201.

նշանակություն ուներ Բյուզանդիայի դրոհներից պաշտպանվելու համար։

Այսպիսի իրադրության մեջ Կայսիկները կարողացան բավական ինքնուրույնություն վայելել, ուղղակիորեն ոչ ոքի չենթարկվելով։ Երեք եղբայրների առանձին տիրույթների միջև չկար որևէ անջատում և ընդհանրապես նրանք հանդես էին գալիս որպես մեկ ամբողջություն։ Այս նպաստավոր գոյավիճակը հնարավորություն տվեց նրանց նույնիսկ նոր հողեր յուրացնելու։ Ինչպես տեսանք, 902 թ. դեպքերի ժամանակ, Բերկրիի Ութմանիկները անցել էին թագավորի կողմը ընդդեմ ապստամբ Կայսիկների, որոնք նրանցից խլել էին Երիկավ ամրոցը[56]։ Կայսիկների հնազանդեցումից հետո Սմբատ Ա-ն Ութմանիկներին վերադարձրել էր այս ամրոցը, սակայն Բերկրիի տերերը միշտ էլ մնացին Կայսիկների սպառնալիքի տակ և ահա թագավորի մահվանից հետո կայսիկ Աբու-լ-Ասվադը, որը տիրում էր Արճեշին, դարձել էր նաև Բերկրիի տերը։ 902 թ. դեպքերից հետո Ութմանիկները պատմական աղբյուրների մեջ այլևս բոլորովին չեն հիշվում։ Արդեն այս դեպքերից մի քանի տարի հետո, Գագիկ Արծրունին նրանցից խլել էր Ամյուկ ամրոցը և այսպիսով, նրանց բոլոր տիրույթները ձեռքից գնացին[57]։ Լինելով արաբ և հավանաբար Սուլայմ ցեղից, նրանք Ջահհաֆյանների նման միաձուլվեցին Կայսիկների հետ։ Շայբանիների բայքայումը հնարավորություն տվեց Կայսիկներին տիրանալու նաև Բաղեշ քաղաքին։

Կայսիկները տիրում էին բացառապես Տուրուբերանի գավառներում, որոնք էին՝ (հիմնականում) Ապահունիք, Կորի, Հարք, Վարաժնունիք, Աղիովիտ, Խուխորունիք և Բզնունիք։ Սակայն դեպի արևմուտք նրանց տիրույթները շատ չէին տարածվում, որովհետև Ողնուտում տիրում էին Տարոնի Բագրատունիները[58]։ Կայսիկ ամիրաների և ընդհանրապես Հայաստանի արաբ ամիրաների բնորոշ գիծն այն է, որ հաստատվում էին բացառապես առևտրական նշանակություն

56 Թովմա, էջ 247։

57 Canard, Histoire de la dynastie des Hamdanides, 473.

58 Const. Porph., De adm. imp., c. 43, p. 197. Honigmann, Ostgrenze, 148. Markwart, Südarmenien, 462.

ունեցող քաղաքներում։ Մենք չգիտենք ոչ մի արաբ ամիրայի, որը երկար ժամանակով հաստատված լիներ Հայաստանի որևէ լեռնային ամրոցում և իշխեր որևէ լեռնային գավառում, մի բան, որը հատուկ էր երկրի բնիկ հայ իշխաններին։ Կայսիկ ամիրաների տիրույթները Հայաստանում քաղաքային էին, ուստի և այդ քաղաքների շրջակա և մի քիչ հեռու գտնված գյուղական շրջանները նրանց ուշադրության ոլորտից դուրս էին մնում։ Այսպիսի տեղերում իշխում էին հայ իշխանական տների մնացորդներ և մանր ավատատերեր։ Կայսիկներն իրենց բոլոր տիրույթների բնակչության միայն վերնախավն էին կազմում և այն էլ հիմնականում քաղաքներում, իսկ գյուղական վայրերում նրանց դիրքերը, խախուտ էին, որովհետև ոչ միայն գյուղական բնակչությունն էր զուտ հայկական, այլև հողատեր մանր իշխանները հայեր էին։ Կայսիկների միակ հենարանը քաղաքներում հաստատված արաբ տարրն էր, որը հիմնականում ռազմիկներից էր բաղկացած, ինչպես նաև այն օգնական մահմեդական զորքերը, որոնք խալիֆայության տարբեր մասերից գալիս էին պայքարելու Բյուզանդիայի դեմ։

Կոստանդին է Ծիրանածնի կայսերակից Ռոմանոս Լեկապենոսի իշխանության շրջանը (919—944) խալիֆայության դեմ կատաղի պայքարի տարիներ էին[59]։ Խալիֆայության դեմ քսանամյա հաղթական արշավանքների հրամանատար Հովհան Կուրկուասը (Հովհաննես Գուրգեն) մշտական ասպատակումներով թուլացրել էր արաբների դիրքերը փոքր Ասիայում և կայսիկներին կարող էր փրկել միայն Բյուզանդիային հարկատվությունը։ Վերջինիս հարկատու էին դարձել նաև Տարոնի Բագրատունիները։ Սակայն հարկատվությունը չէր խանգարում, որ Կուրկուասը մերթ ընդ մերթ ասպատակեր Բագրատունյաց թագավորությունից մեկուսացված այս հայկական գավառները։ 922 և 927—928 թթ. նա ասպատակելով հասավ նույնիսկ մինչև Դվին։ Ծիրանածինը շատ բնական համարելով Հայաստանի արևմտյան գավառների ասպատակումը, գրում է որ Ռոմանոս Լեկապենոսի իշխանության ժամանակ Հովհան Կուրկուասը Դվինի դեմ գնալիս ասպատակեց և ամա-

[59] Honigmann. Ostgrenze. 71-76.

յացրեց ամբողջ Բասենը, որը սարակինոսների ձեռքում էր գտնվում[60]։ Բասենում նման արշավանք էր կատարել նաև Կուրկուասի եղբայրը՝ Թեոփիլոսը, որը Խաղտիքի թեմի զինվորական կառավարիչն էր։

Կուրկուասի մեծագույն հաջողություններից էր Մելիտինեի գրավումը, որի ամիրային՝ Աբու Հաֆսին նա նույնիսկ ստիպեց միանալ բյուզանդական զորքերին՝ ընդդեմ խալիֆայության։ Մելիտինեի անկումը ճանապարհը բաց էր անում նախ դեպի Աղձնիք ու Ասորիք և ապա դեպի Միջագետք։

Դվինի վրա անհաջող արշավանքից հետո Կուրկուասը (Դոմեստիկոսը) հարձակվեց Կայսիկների վրա, գրավեց Խլաթն առանց արյունահեղության և մզկիթի մինբարը հանեց ու փոխարենը խաչ դրեց[61]։ Երբ նույնը կրկնեց նաև Բաղեշում՝ Արզնի և այլ քաղաքների արաբները զիմեցին խալիֆային օգնություն հայցելու, բայց ոչինչ չստացան։ Այդպիսի վիճակում էին հիջրի 317 (929—930) թ. Մելիտինեն (որը գրավվեց հույների կողմից), Նփրկերտը, Ամիդը և Արզնը[62]։

Այս ժամանակ խալամի դատը պաշտպանելու համար վրա հասավ Ատրպատականի կառավարիչ Մուֆլիհը, որն ըստ արաբ պատմիչի հաղթեց Դոմեստիկոսին և նույնիսկ նրա հետևից մտավ հոռոմների երկիրը[63]։

Վասպուրականի Դաղիկ թագավորը (Իբն ալ-Դայրանի) ինչպես նաև Հայաստանի ծայրամասային այլ իշխաններ, իրենց վտանգված զգալով զիմեցին բյուզանդացիներին և նրանց գրգռեցին մահմեդականների դեմ։ Հիջրի 319 (931) թ. հույները մեծ բազմությամբ մտան Կայսիկների տիրույթները[64], ավերեցին Բերկրին ու Խլաթը և մահմեդականներին կոտորելուց հետո շատերին գերեցին։ Ակներևորեն Դաղիկ Արծրունու նպատակն էր Կայսիկներին հույների միջոցով թուլացնելուց հետո տիրել Վանա լճի շրջակա գավառներին (Առբերանի, Աղիովիտ, Բզնունիք և այլն), մանավանդ որ Առ-

[60] Const. Porph, De adm. imp., c. 45, p. 207.
[61] Ibn al-Athir, VIII, 146.
[62] Ibn al-Athir, VIII, 152.
[63] Ibn al-Athir, VIII, 159.
[64] Ibn al-Athir, VIII, 173.

բերանին ընդհանրապես Վասպուրականի գավառներից էր եղել[65]։ Սակայն Ատրպատականի կառավարիչ Մուֆլիհը անմիջապես արշավանք ձեռնարկեց Դավիթ Արծրունու դեմ Վասպուրականում մեծ ավերներ գործելով։

4. ՀԱՄԴԱՆՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԱՌՆԵՐԸ

Քանի դեռ Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք գոյություն ուներ Բագրատունյաց կենտրոնացած թագավորությունը Բյուզանդիան և խալիֆայությունը բախվում էին գլխավորապես Կիլիկիայում և մերձեփրատյան շրջաններում, սակայն Սմբատի թագավորության կազմալուծումից հետո ավելացավ պայքարի մի նոր թատերաբեմ։ Իհարկե, Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք ևս Բյուզանդիայի և Կարնո քաղաքում հաստատված արաբների միջև տեղի էին ունենում որոշ ընդհարումներ[66], բայց միայն Հայոց թագավորության թուլացումից հետո էր, որ երկու կայսրությունների զորքերը պայքարի աղատ տասպարեզ գտան Հայաստանի արևմտյան գավառներում, այն աստիճանի, որ Ատրպատականի և բյուզանդական զորքերը հանդիպման կետեր էին գտնում Հայկական լեռնաշխարհի նույնիսկ կենտրոնական գավառներում։

Բյուզանդական զորքերի հաղթական արշավը սարսափ ցցեց ամբողջ խալիֆայության մեջ, որի տարբեր բաղկացուցիչ մասերը միասնական պայքարի պահանջ զգացին։ Մահմեդական ռազմիկներ, կամավոր կամ ի պաշտոնե խուռներամ գիմում էին սահմանային գոտին, որը տարածվում էր հիմնականում Միջերկրականից մինչև Վերին Եփրատի շրջանները։ Սակայն այս բոլորի հետ մեկտեղ հարկավոր էր մի տեղական ուժեղ իշխանություն, որը կարողանար պատվար հանդիսանալ հույների ներխուժման դիմաց։ Այդ դերը Ժ դարում կատարեցին Համդանյանները։

Համդանյանների տունը սերում էր հյուսիս-արաբական

---

65 Թավմա, էջ 247։

66 Նույն տեղում։

Տալլիբ ցեղից, որը հաստատվել էր Միջագետքի հյուսիսում՝ Մոսուլի (արաբ Մաուսիլ) շրջակայքում[67]: Համդանյան ամիրայական տան հիմնադիրն էր Համդան իբն Համդունը, որը բախվեց Աբբասյան Մուտադիդ խալիֆայի հետ: Նրա որդին Աբու-լ-Հայջան նշանակվեց Մոսուլի կառավարիչ և այս քաղաքը այդ ժամանակվանից դարձավ նրանց ժառանգական տիրույթը, թեպետ և այս տան շատ անդամները տարբեր տեղերում կառավարիչ էին նշանակված: Համդանյանների պատմության ամենածաղկուն շրջանը Աբու-լ-Հայջայի երկու որդիների իշխանության տարիներն էին: Առաջինը՝ Հասանը, որը 941 թ. Նասիր ալ-Դաուլա տիտղոսն էր ստացել տիրում էր Մոսուլում, իսկ եղբայրը Ալին՝ Սայֆ ալ-Դաուլա կոչված, ձգտեց դեպի արևմուտք՝ արաբա-բյուզանդական սահմանային գոտին, մինչև որ 944 թ. տիրացավ Հալեպին և դարձավ Համդանյանների մի նոր ճյուղի հիմնադիրը: Այսպիսով, ամբողջ Վերին Միջագետքը և հյուսիսային Ասորիքը դարձան մեկ ամիրայական տան տիրույթներ միաժամանակ սահմանակից լինելով Բագրատունյաց Հայաստանին: Մոսուլի Համդանյանները հարևան էին Վասպուրականի հարավում Անձևացյաց գավառի (արաբ. ալ-Ջազիրաղան) լեռնային շրջաններին, իսկ Հալեպի Համդանյանները, որոնք տիրել էին ամբողջ Աղձնիքին (արաբ. Դիար Բաքր) սահմանակից էին Տարոնի Բագրատունիներին և Վանա լճի արևմտյան և հարավային շրջաններին:

935 թ. Նասիր ալ-Դաուլան (որն այդ ժամանակ դեռ այդ տիտղոսը չէր կրում) Աբբասյանների վեզիր իբն Մուկլայի կողմից հարձակման ենթարկվեց[68] և Մոսուլից փախչելով ապաստանեց Անձևացյաց գավառը: Ըստ արաբ պատմիչի վկայության, այստեղ նրան հպատակություն հայտնեցին հայ «թագավորները»: Թագավոր բառն այստեղ պետք է հասկանալ տիրակալի կամ իշխանի (մալիք կամ մելիք), այսինքն որևէ գավառի տիրոջ իմաստով և պարզ է, որ տվյալ դեպքում ամենայն հավանականությամբ նկատի է առնված հենց Անձևաց-

---

[67] С. Лэн-пуль, Мусульманские династии, стр. 89.
[68] Ibn Miskawayh, I, 323

յայց տերը՝ Ատամը (որդի Գուրգենի) և դուցե նաև Վասպուրականի հարավի մի քանի ուրիշ մանր իշխաններ[69]։

Շուտով Համդանյանները տարածվեցին դեպի Աղձնիք, որի հին տերերը՝ Շայբանիները արդեն քայքայվել էին։ 930-ական թվականներին Արզնում հաստատված էր Համդանյաններին ստորադաս Ալի իբն Ջաֆար Դայլամցին, որը 936 թ. ապըստամբվեց Նասիր ալ-Դաուլայի դեմ[70]։ Վերջինս հենց այդ տարում նշանակվել էր ամբողջ Ջազիրայի կառավարիչ, իր իշխանության տակ ունենալով ոչ միայն Աղձնիքը, այլև բյուզանդական սահմանի մոտ գտնվող մերձնիբատյան շրջանները։ Դեռ շատ վաղուց Համդանյանները տիրացել էին նաև Մարդինին։ Նասիր ալ-Դաուլան Դայլամցու դեմ ուղարկեց իր եղբորը՝ Սայֆ ալ-Դաուլային, նշանակելով նրան Դիար Բաքրի (Աղձնիքի) կառավարիչ։ Արզնի ապստամբ ամիրան դիմեց Տարոնի տիրոջ (ընդգրում «Իբն Թուռնիկ» Թուռնիկի որդի)[71] օգնությանը, նրան համոզելով, որ Համդանյանների հաստատվելը Աղձնիքում սպառնալիք է Տարոնի համար։ Սակայն ապստամբը պարտվեց, իսկ Տարոնը ենթարկվեց հաղթողների սպասատակությանը[72]։

Այս ժամանակվանից արդեն Սայֆ ալ-Դաուլան սկսեց Բյուզանդիայի դեմ ռազմական գործողությունների այն շարքը, որի համար նա նշանավոր դարձավ արաբների պատմության և ընդհանրապես մատենագրության մեջ։ 939 թ. աշնանը նա Մծբինից արշավանքի ելավ դեպի Հայաստան, անցավ Մանազկերտի վրայով և ուղղվեց Կալիկալա (Կարնո քաղաք), որի դիմաց հոռոմները կառուցել էին Հաֆջիջ (Հաւճիշ) անունով մի քաղաք։ Ըստ արաբ պատմիչի վկայության վերջիններս հենց որ լսեցին Սայֆ ալ-Դաուլայի գալուստը, ավերեցին քաղաքը և փախան։ Համդանյան ամիրան վերադարձավ Արզն և այնտեղ ձմեռեց[73]։

---

[69] В. Розен, Император Василий Болгаробойца, СПб, 1897, стр. 102.

[70] Canard, Les Hamdanides et l'Arménie, 84.

[71] Canard, Recueil des textes relatifs a Sayf al-Daulah, 71.

[72] Canard, Les Hamdanides et l'Arménie, 84-85.

[73] Canard, Recueil, 71.

Դարնանը, 940 թ., Սայֆ ալ-Դաուլան մի նվաճողական արշավանք ձեռնարկեց Հայաստանի հարավ-արևմտյան գավառների դեմ, որոնք կարևոր էին Բյուզանդիայի դեմ մաքառման համար։ Այս դեպքերի մասին պատմում են երկու արաբ մանր պատմիչներ՝ Իբն Զաֆիրը և Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկին (Նփրկերացի)։

Ըստ Իբն Զաֆիրի[74] Սայֆ ալ-Դաուլան 940 թ. արշավանքի ժամանակ կանգ առավ Խլաթում և այնտեղ ընդունեց «Հայոց և Վրաց թագավորին» (malik Arminiya wa Djurzān Հայաստանի և Վիրքի թագավոր)[75], որը ոչ մի թագավորի չէր հպատակվել (բնագրում տառացիորեն ոչ մի թագավորի գորգին ոտք չէր դրել, այսինքն՝ գլուխ չէր ծռել) Սայֆ ալ-Դաուլան նրան մեծ պատիվներ արեց և նրանից վերցրեց որոշ բերդեր, որոնք մահմեդականներին անհրաժեշտ էին։ Ապա հպատակության խոստում վերցնելուց հետո ողջ առողջ վերադարձրեց նրան։ Նրան հպատակություն հայտնեցին նաև Հայաստանի այլ իշխաններ։ Այստեղից Սայֆ ալ-Դաուլան դիմեց Իբն Թոռնիկի (իմա՝ Տարոնի տիրոջ) երկիրը, հարձակվեց Մուշ քաղաքի վրա և ավերեց մի եկեղեցի, որը քրիստոնյաների համար շատ նվիրական էր եղել (ս. Կարապետ)։

Իբն Զաֆիրի այս տեղեկություններում տեղ գտած անորոշությունն ու չափազանցությունը որոշ չափով պարզվում է Իբն ալ-Ազրակի մոտ[76]։ «Ասվում է, որ երեք հարյուր քսանութ թվին (հոկտեմբեր 939 — սեպտեմբեր 940) Սայֆ ալ-Դաուլան Մայյաֆարիկինից (Նփրկերտ) ուղղվեց Հայաստան և իջավ Թայթուանայում (Դաուվան), որը լճի վրա է։ Եվ կանչեց Իբն Զաջիկ իբն ալ-Դայրանիին (Գագիկ որդի Դերենիկի), Ահմադ իբն Աբդ ալ-Ռահման Աբու-լ-Մուիզզին՝ Խլաթի, Դաա ալ-Զաուզի (Արծկե), Արջիշի (Արճեշ) և Բարքարիի (Բերկրի) տիրոջը, Աբդ ալ-Համիդին՝ Մանազկիրդի (Մանազկերտ) և Դաշտ ալ-Ուարթի ու ալ-Հարթի տիրոջը (ինչ-

---

[74] Canard, Recueil, 71.

[75] Այս հատվածի Djurzan բառը Մարկվարտը կարդում է Zawazan (Südarmenien, 460), որը սակայն հեռանում է բնագրում գրված ձևից։

[76] Canard, Recueil, 76-78. Markwart, Südarmenien, 453-454.

պես նաև) Աշոթ իբն Ջարջուրին (Աշոտ որդի Գրիգորի)՝ Հայաստանի պատրիկների պատրիկին։ Սրանք ժամանեցին նրա մոտ, որը վերցրեց իբն ալ-Դայրանիից Շահրան և ալ-Համիդ ամրոցները իրենց ավաններով և շրջակայքով, Ահմադ իբն աբդ ալ-Ռահմանից առավ Բաղլիսը (Բաղեշ) շրջակայքով, Աշոթից՝ ալ-Սանասունա (Սանասունի) երկիրը, որը նվաճեց և տիրեց Կուլը ամրոցին և Սուլայման բերդին իրենց շրջակայքով։ Ապա վերադարձրեց Հայաստանի թագավորներին, որոնք (արդեն) մտել էին նրա իշխանության և ծառայության մեջ։ Հետո դիմեց իբն ալ-Մարզուբանի երկիրը և ալ-Խալիդիյա երկիրը, որը կողոպտեց, մեծ թվով մարդկանց գերեց և գրավեց նրանց բոլոր բերդերը։ Այս բոլորը կատարեց հիսուն օրում և վերադարձավ»[77]։

Այս խոսքերից արդեն պարզ է դառնում թե ովքեր էին Սայֆ ալ-Դաուլայի մոտ եկողները։ Առաջինը հիշվում է Վասպուրականի տիրոջ Գագիկի որդին, որը կոչվում էր իբն Ջաջիկ (Դերենիկ—Աշոտ)։ Իբն Ջաֆիրի մոտ հիշատակված «թագավոր Հայոց և Վրացը» ոչ այլ ոք է, եթե ոչ հենց Վասպուրականի թագավորը Գագիկ Արծրունին, որը Բագրատունյաց գահին հավակնորդ լինելով կրում էր նրանց բոլոր տիտղոսները։ Նույնիսկ Ծիրանածինը, երբ հիշում է Հայաստանի թագավորներին և իշխաններին դիմելու ձևերը, Բագրատունի և Արծրունի թագավորներին հավասարապես կոչում է «իշխանաց իշխան»[78], իսկ բոլոր մնացյալ տիրակալներին (Սյունյաց թագավոր Անձևացյաց տեր և այլն) պարզապես «իշխան»։ Գագիկ Արծրունու կողմից այս տիտղոսի յուրացումը չպետք է կարծել տա, որ Սայֆ ալ-Դաուլայի մոտ եկողը հենց Աբաս Բագրատունին էր, ինչպես ենթադրում է Մ. Կանարը[79]։ Ինչ վերաբերում է Տարոնի տիրոջից՝ Աշոտ պատրիկից (պատրիկների պատրիկ) խլված հողերին, ապա դրանք էին առաջին հերթին Սասունը և մերձակա երկու ամրոցներ՝ Կուլը (Խուլի) և Սուլայման։

Որոշ շփոթություն կա Կայսրիների անունների մեջ։ Կոստանդին Ծիրանածնի խոսքերից գիտենք, որ այդ ժամանակ

---

[77] Recueil, 76-78.

[78] Const. Porph., De Ceremoniis, Bonnae, 1829, p. 686-687.

[79] Canard, Les Hamdanides et l'Arménie, 89-90.

Մանազկերտում արդեն իշխում էր Աբու Սավադայի եղբայր Աբու Սալիմ իբն Աբդ ալ-Համիդը, ուստի և Իբն ալ-Ազրակի հիշած Աբդ ալ-Համիդի անվան առջևը պետք է ավելացնել «Իբն», այսինքն դարձնել՝ որդի Աբդ ալ-Համիդի[80]: Ըստ Ծիրանածնի խլաթի, Աբճեղի, Բերկրիի և Արծկեի տեր Աբու-լ-Ասվադի մահվանից հետո նրան ժառանգեց նրա որդեղիր Ահմադը[81] (հորեղբորորդին), որը հենց Իբն ալ-Ազրակի հիշած Ահմադ իբն Աբդ ալ-Ռահման Աբու-լ-Մուիզն է: Ահա սրանից էր, որ Սայֆ-ալ-Դաուլան խլեց Բաղեշ քաղաքը:

Արծրունիներից խլված երկու բերդերը (Հիսն Համիդ և Հիսն Շահրան) պետք է փնտրել Վանա լճի հարավ-արևմտյան ափին, որովհետև դրանով Համդանյանների խլած հողերը մի ամբողջություն էին կազմում: Հավանական չէ Մարկվարտի այն ենթադրությունը[82], թե Հիսն Համիդը Ամյուկ բերդը կարող է լինել, քանի որ դա շատ հեռու է Աղձնիքից: Հավանաբար այդ բերդերը Դավիթ Արծրունին խլել էր Զուրարիկների մնացորդներից:

Սակայն այս բոլորի մեջ որոշ շփոթություն է առաջացնում մի բանաստեղծական տող, որի արարիերեն մեկնությունը որոշ անուններ իրար է խառնում: Սայֆ ալ-Դաուլայի ներբողագիր բանաստեղծ Աբու Ֆիրաս ալ-Համդանին այս արշավանքի մասին գրած բանաստեղծության մեջ ասում է հետևյալը. «Խոնարհվեցին նրա առաջ, դուր գիմադրելուց հետո, թագավորները Ջահհաֆյան այս ռազմիկները քաջարի»: Աբու Ֆիրասի միջնադարյան մեկնիչը հետևյալ ձևով է բացատրում այս տողը[83]. «Ջահհաֆյան թագավորներ (նշանակում) է Աբու-լ-Յակզան ալ-Ալա իբն Մասլամա ալ-Սուլամի, որի քաղաքը պաշարվեց և գրավվեց Սայֆ ալ-Դաուլայի կողմից և որը փախավ հոռոմների երկիրը: Մի պատրիկից նա բան հազար օգնական զորք ստացավ, որը սակայն ամիրայի (իմա՝ Սայֆ ալ-Դաուլա) կողմից փախուստի մատնվեց: Սուլամին վերադարձավ և իր բոլոր ընկերակիցների հետ հպատակվեց Սայֆ

[80] Canard, Les Hamdanides et l'Arménie, 88.
[81] Const. Porph., De adm. imp., c. 44, p. 203.
[82] Markwart, Südarmenien, 460.
[83] Canard, Les Hamdanides et l'Arménie, 86.

ալ-Դաուլային, որը նրան թողեց որ մտնի իր քաղաքը և ընդունեց նրա հպատակությունը։ Ապա նա գնաց Աբու-լ-Մուիզզ ալ-Սուլամիի և Աբու Սալիմի դեմ, գրավեց նրանց քաղաքները, սակայն վերադարձրեց և հաստատեց նրանց իշխանությունը ու դարձան նրան ենթակա»։

Ջահհաֆյանների հիշատակումը Աբու Ֆիրասի մոտ վկայում է այն մասին, որ Կայսիկ Աբու-լ-Վարդի տունը իրոք որ Ջահհաֆյանների ժառանգորդն էր, որոնք ևս կամ պատկանում էին Սուլայմ ցեղին կամ էլ շատ մերձավոր էին նրան։ Վերջում հիշված երկու ամիրաներից Աբու-լ-Մուիզզ ալ-Սուլամին հենց Ծիրանածնի հիշած Ահմադն է, իսկ Աբու-Սալիմը երեք կայսիկ եղբայրներից կրտսերն է, որը տիրում էր Սերմանց լեռան շրջանում։ Առեղծվածային է միայն առաջին անունը Աբու-լ-Յակզան ալ-Ալա իբն Մասլամա ալ-Սուլամի։ Այս կայսիկ ամիրայի ինքնությունը որոշելու համար Մ. Կանարը բազմաթիվ ենթադրություններ է անում[84], մերթ նույնացնելով այս կամ այն մեկ ծանոթ կայսիկ ամիրայի հետ, մերթ էլ ենթադրելով, որ սա ուրիշ անձնավորություն է, որի կալվածները ընկած էր բյուզանդական խալդիա (խաղտիք) բանակաթեմի սահմանների վրա։

Այս երեք աղբյուրների (Իբն Ջաֆիր, իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկի և Աբու Ֆիրասի մեկնիչը) հաղորդած տեղեկությունները, ինչքան էլ կցկտուր լինեն և նույնիսկ երբեմն հակասական, բավական լույս են սփռում Համդանյանների և Հայաստանի հարավ-արևմտյան դավառների փոխհարաբերության վրա։ Պարզվում է, որ Կայսիկ եղբայրները դարձել էին Սայֆ ալ-Դաուլային ենթակա։ Նեղ դրության մեջ էին նաև Տարոնի Բագրատունիները, որոնք ամեն կողմից խեղդված էին թշնամի ուժերի կողմից, մանավանդ Սասունի անջատումը առավել ևս թուլացնում էր նրանց դիրքերը, ինչ վերաբերում է Դագիկ Արծրունու (կամ ինչպես ընդգրում գրված է Հայոց և Վրաց թագավորի) ենթարկվելուն, ապա հազիվ թե կարելի լիներ համաձայնվել Մ. Կանարի հետ, որն այնքան հավատ է ընծայում արաբ պատմիչի չափազանցված ոճին։ Երկու լեռնային

---

[84] Canard, Les Hamdanides et l'Arménie, 86-87.

ամրոցի գրավումը բոլորովին էլ չէր նշանակում Արծրունյաց թագավորության ենթարկումը Համդանյաններին։

Հավանաբար այս արշավանքն է ակնարկում Ասողիկը[85], երբ գրում է «և յՅԶԸ թուականին (939) Համատն ի Կողնիա եմուտ զօրօք բազմօք և անդրէն դարձաւ»։ Նույնը կրկնում է նաև Վարդանը[86]։

Սայֆ ալ-Դաուլայի այս արշավանքի ժամանակ Կայսիկների կալվածները երեք մասից վերածվել էին երկու մասի, ինչպես տեսանք Մանազկերտում իշխող մեծ եղբոր Աբու Սավադայի մահվամբ քաղաքն անցել էր որդուն՝ Աբդ ալ-Ռահիմին։ Սրա մահվանից հետո նրա տիրույթները ժառանգեց ոչ թե փոքր անչափահաս եղբայրը՝ Աբու-լ-Մուիզը, այլ հորեղբայրը՝ Աբու-լ-Ասվադը, որն արդեն տիրում էր Խլաթում, Արճեշում և այլն։ Վերջինիս մահվանից հետո Մանազկերտը և բոլոր հարակից տիրույթները անցան երրորդ եղբորը՝ Աբու Սալիմին, իսկ նրա բուն կալվածները՝ Խլաթը, Արճեշը և Արծկեն ժառանգեց որդեգիր Ահմադը[87]։ Այսպիսով, մնացին երկու Կայսիկ տիրույթներ, որոնցից առաջինի տերը Իբն ալ-Ազրակի մոտ հիշված է որպես (Իբն) Աբդ ալ-Համիդ, իսկ երկրորդինը՝ Ահմադ իբն Աբդ ալ-Ռահման։

Շուտով մեռավ նաև Աբու Սալիմը և նրա կալվածները՝ Ապահունիք, Հարք, Կորի և Սերմանց ժառանգեց որդին Աբու-լ-Վարդը։ Արաբ[88] և բյուզանդացի աղբյուրների համաձայն, սա սպանեց Ահմադին և հափշտակեց նրա բոլոր կալվածները և այսպիսով, Կայսիկ բոլոր կալվածները նորից միավորվեցին։ Այս դեպքերը պետք է տեղի ունեցած լինեին նախքան 952 թ., որովհետև Ծիրանածնի աշխատությունը գրված է եղել 949—952 թթ.։

Աբու-լ-Վարդը երկար չվայելեց իր իշխանությունը, որովհետև Սայֆ ալ-Դաուլայի սորտագրյալներից մեկը Նաջա անունով, ցանկանալով Բուայհի Մուիզզ-ալ-Դաուլայի գերիշ-

---

85 Ասողիկ, էջ 179։

86 Վարդան, էջ 120։

87 Const. Porph., De adm. imp., c. 44, p. 203.

88 Ibn al-Athir, VIII, 180-181.

խանությանն տակ մի իշխանություն հիմնել Համդանյաններին ենթակա գավառներում, 964 թ. ապստամբվեց Սայֆ-ալ-Դաուլայի դեմ և օգտվելով վերջինիս հիվանդությունից, հարձակվեց Նփրկերտի վրա, սակայն չկարողացավ գրավել և անցավ Հայաստան։ Այստեղ նա տիրացավ Կայսիկ Աբու-լ-Վարդի բոլոր կալվածներին և, ըստ Իբն ալ-Ասիրի[89] և Յահիա իբն Սաիդի սպանեց նրան, իսկ ըստ Իբն ալ-Ազրակի[90] Աբու-լ-Վարդը պարապից ընկավ ու մահացավ։

Այսպիսով, վերջ դրավ Կայսիկների իշխանությունը, որը մեկ դար տևեց։ Կայսիկների բոլոր քաղաքներն անցան Նաջային և նրա երկու եղբայրներին, որոնք տիրեցին Խլաթին ու Բաղեշին։ Հայաստանից Նաջան նորից դիմեց Նփրկերտ, սակայն Մանազկերտում և Խլաթում ծագած ապստամբությունները նրան ստիպեցին վերադառնալ Հայաստան։ Մանազկերտում ապստամբվել էր բնակչությունը և բացի դրանից, այստեղ գործում էր նաև մի սուլամի ամիրա, որի անունը չի տրված։ Խլաթում ապստամբվել էին, որովհետև զորքը ոռճիկ չէր ստացել։ Այս բոլորի հետ գործում էր նաև Սայֆ ալ-Դաուլան, որը վերջապես ստիպեց նրան վերադառնալ Աղձնիք և մի ճաշկերույթի ժամանակ սպանել տվեց նրան Նփրկերտում։ Այս դեպքերից հետո Սայֆ ալ-Դաուլան անձամբ եկավ Հայաստան գրավելու Կայսիկների քաղաքները և վերադարձավ 966 թ. հունվար ամսին (Սաֆար, հիջրի 355 թ.), իր հետ գերի բերելով Նաջայի երկու եղբայրներին[91]։

Այս անցուդարձերի մասին տեղեկություն կա արաբ ներբողագիր Աբու Ֆիրաս ալ-Համդանիի մի բանաստեղծության մեջ, որտեղ խոսվում է այն մասին, որ Սայֆ ալ-Դաուլան սկզբում ներեց Նաջային, սակայն հետո Նփրկերտում խնջույքի ժամանակ, երբ սա հայհոյեց Սայֆ ալ-Դաուլային, վերջինիս ծառան տեղն ու տեղը սպանեց նրան։ Սհա այս ներբողն առթիվ բանաստեղծը հիշեցնում է, որ Նաջան տիրել էր Մանազկերտ, Խլաթ, Բերկրի, Արծկի և Արճեշ քաղաքներին և սպանել էր

---

[89] Ibn al-Athir, VIII, 180. Patrologia Orientalis, XVIII, 772.
[90] Canard, Recueil, 257.
[91] Canard, Recueil, 258.

«Աբու-լ-Վարդայն Սալամային»։ Վերջին անունը ակներևորեն Աբու-լ-Վարդ իբն Աբու Սալիմի աղավաղումն է[92]։

Միսքավայհի մոտ[93] մի հետաքրքրական տեղեկություն կա այս դեպքերի առթիվ։ Ըստ նրան, Նաջան Հայաստան մտնելիս կարողացավ համոզել Խորասանից եկած մահմեդական հինգ հազարանոց զորքի հրամանատարին, կռվի տարավ Աբու-լ-Վարդի դեմ և այսպիսով, հաղթեց նրան։ Վերջինիս ձեռքից գրաված քաղաքների մեջ հիշվում է նաև Մուշը, որը սակայն պարզ չէ իրոք պատկանե՞լ է Աբու-լ-Վարդին, թե ոչ։

Համդանյանները երկար չմնացին Հայաստանում։ 967 թ. փետրվար ամսին մեռավ Սայֆ ալ-Դաուլան և նրա իշխանությունը բայրայվեց։

5. ԿԱՐՆՈ ՔԱՂԱՔԸ

Կարնո քաղաքը (հուն. Թեոդոսուպոլիս, արաբ. Կալիկալա) խալիֆայության համար բացառիկ նշանակություն ուներ, որպես կարևոր ռազմական կայան[94]։ Բյուզանդիայի և արաբների միջև դարավոր կռիվները մղվում էին մի քանի ճակատի վրա՝ Փոքր Ասիայում, Սիկիլիայում, Կրետեում և այլն։ Փոքր Ասիականը, որն ամենագլխավորն էր, երկու հատվածների էր բաժանվում[95]՝ Ասորիքի և Վերին Միջագետքի (Ջազիրայի) սահմանային ամրությունները[96]։ Վերին Միջագետքի սահմանամերձ գոտու հետ սերտորեն կապված էր սահմանային ամրությունների երրորդ հատվածը՝ Հայաստանի արևմտյան գավառները (Վերին Եփրատի շրջանը)[97] և առաջին հերթին Կամախը և Խարբերդը (Հիսն Զիադ)։

Այս ամրությունների[98] դիմաց Բյուզանդիան էլ ուներ իր ամրացված բերդակաթեմները, որոնք էին, օրինակ՝ Հայաստա-

---

[92] Canard, Les Hamdanides et l' Armenie, 92.
[93] Ibn Miskawayh, II, 201.
[94] Ibn Hauqal, II, 343.
[95] Canard, Histoire de la dynastie des Hamdanides, p. 244-248.
[96] Honigmann, al-Thughur, Enc. of Islam, IV, 738.
[97] Le Strange, The Lands of the Eastern Caliphate, 115-126.
[98] Hitty, History of the Arabs, 204.

նի կողմից խաղտիքը, Միջագետքը (Մեսոպոտամիա, որն ընդգրկում էր Բարձր Հայքի և Դ Հայքի արևմտյան գավառները և կազմավորվել էր Ժ դարում), Լիկանդյանքը և այլն[99]:

Մինչև 867 թ., այսինքն Հայկական (մակեդոնական) կայսերական տան իշխանության զլուխ անցնելը, երկու պետությունների միջև ընկած սահմանը արմատական փոփոխության չենթարկվեցին և ավելի շատ արաբներն էին, որ նեղում էին հույներին և անընդհատ արշավանքներ կազմակերպում դեպի Փոքր Ասիական թեմերը: Վասիլ Ա-ի (867—886) ձեռնարկած հաղթական արշավանքները թե Միջագետքի, թե Ասորիքի կողմից, սահմանը մղեցին դեպի հարավ և սկսեցին իրենց հերթին նեղ դրության մեջ դնել արաբներին: Սակայն Հայաստանի կողմից սահմանները անփոփոխ մնացին մինչև Ժ դարի կեսը, քանի որ Հայաստանի անկախության վերականգնումը Բագրատունի Աշոտ Ա-ի օրոք Բյուզանդիայի կողմից ակնկալվորեն համարվել էր արաբական ուժերի որոշ նահանջ:

Արաբական տիրապետության ժամանակ Հայաստանում չկար առանձին սահմանային ամրություններով շրջան, ինչպիսին ունեին, օրինակ, Ջազիրան և Ասորիքը՝ «սուղուր» անվան տակ[100]: Արմինիա ստատիկանությունն ուներ արևմտյան հատված, որը Զորրորդ Արմինիա անվան տակ հիմնականում միավորում էր Բարձր Հայքի և Զորրորդ Հայքի արևելյան գավառները և Տուրուբերանն ամբողջությամբ: Այստեղ էին հաստատված արաբական զաղթական ցեղերը, որոնք պետք է պատվար ստեղծեին Հայաստանը Բյուզանդիայից մեկուսացնելու համար: Այս գավառները Աշոտ Ա-ի օրոք Հայոց թագավորության մասը կազմեցին, բացի որոշ չափով Կարնո քաղաքից, որը համարվում էր իսլամի պաշտպանության համար կարևոր ռազմական կայան՝ մի «սաղր»: Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի իշխանության տարիներին Կարնո քաղաքը տեսականորեն համարվում էր Հայոց թագավորությանը մաս կազմող քաղաք[101], բայց նրա արար կառավարիչները մեծ մասամբ ինք-

---

[99] Honigmann, Ostgrenze, 43-80.

[100] Jacut, I, 927-930. Beladsori, 163-171.

[101] Ibn Hauqal. II, 343.

նագլուխ էին գործում։ Նրա կառավարիչներից միայն երկուսի անունն է մեզ հայտնի (Զբրի և Բշիր) ակնհայտորեն այն պատճառով, որ քաղաքը հաճախ կառավարվում էր զորավարների կողմից, որոնք կարող էին արագ փոխվել։

Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք արաբաբյուզանդական ռազմական գործողությունները ավելի շատ կենտրոնացած էին Ասորիքի և Միջագետքի հատվածներում, որովհետև Հայոց թագավորության վերականգնմամբ երկու մեծ պետությունների միջև չեզոք գոտի էր ստեղծվել։ Սակայն նույնիսկ այս շրջանում ռազմական գործողությունները բոլորովին չէին դադարել, քանի որ Բյուզանդիան որոշել էր ամեն ճակատով հարձակվել թուլացող խալիֆայության վրա, որը դեռ պահպանում էր իր ռազմական ամրությունները Կարնո քաղաքում[102]։ Մյուս կողմից արաբները միշտ այնտեղ էին ուղարկում թարմ ուժեր, որոնց մասին, ինչպես տեսանք, վկայում է Թոմա Արծրունին։[103]։

Այս զոյավիճակն արմատապես փոխվեց Սմբատ Ա-ի սպանությունից հետո, երբ Հայաստանի արևմտյան բազմաթիվ գավառներ պոկվելով Բագրատունյաց թագավորությունից, նորից պայքարի թատերաբեմ դարձան հին ոսոխների միջև։ Այդ օրվանից մինչև Բյուզանդիայի կողմից գրավումը Կարնո քաղաքը նորից խալիֆայության ուշադրության առարկա դարձավ[104], քանի որ Բյուզանդական զորավար Հովհան Կուրկուասը խալիֆայության դեմ ուղղված արշավանքները հասցնում էր մինչև մահմեդականների ձեռքն ընկած հեռավոր Դվինը (922)[105]։ Դրեթե նույն տարում Մոսուլից Կարնո քաղաք էր եկել հաջիր (սենեկապետ) Մուհամմադ իբն Նասրը մահմեդական ռազմիկների (զազիների) հրամանատարությունն ստանձնելու համար[106]։

Այս վերջին շրջանի համար մի ընդհանուր պատկեր է տալիս դարձյալ Կոստանդին Է Ծիրանածինը, որի կայսրության

---

102 Դրասխանակերտցի, էջ 203։

103 Թոմա, էջ 246։

104 Honigmann, Ostgrenze, 79-80.

105 Ասողիկ, էջ 170։

106 Ibn al-Athir, VIII, 101.

կառավարմանը նվիրված մեկ ծանոթ աշխատության մեջ կա մի փոքրիկ ենթագլուխ («Վրաց մասին») գրեթե ամբողջությամբ Կարնո քաղաքին նվիրված[107]։ Ըստ նրա, դեռ Լևոն կայսեր ժամանակ (886—912) Կարնո քաղաքի պաշտպանությունը ուժեղացնելու համար արաբները Բասեն գավառի եկեղեցիները վերածել էին ամրություններին։ Սրա վրա բյուզանդական կայսրը ուղարկեց Արմենիակոն թեմի զինվորական կառավարիչ Լալակոնին, ինչպես նաև Կողոնիայի, Միջագետքի և Խաղտիքի զինվորական կառավարիչներին, որոնք կործանեցին նրանց բոլոր ամրությունները և ասպատակեցին Բասենը։ Մի ուրիշ ավերիչ արշավանք կազմակերպեց Կատակալոն մագիստրոսը Կարնո քաղաքի շրջակայքում։ Ինչպես գիտենք, Բասենում նման արշավանքներ կազմակերպել էր նաև Հովհան Կուրկուասը և եղբայրը՝ Խաղտիքի ռազմական կառավարիչ Թեոփիլոսը[108]։

Հետաքրքրականն այն է, որ հարևան Տայքում իշխող վրաց Բագրատունիները բոլորովին չէին ուզում գործակցել բյուզանդացիների հետ Կարնո քաղաքի, Ավնիկի[109] և Մանազկերտի արաբների դեմ ուղղված ռազմական գործողություններին, որի համար Միրանածինը բողոքում է և պախարակում նրանց «խորամանկությունը»։ Կայսրությունը վրացիներին առաջարկել էր ժամանակավորապես հանձնել Կեցեոն քաղաքը, որը կարևոր էր Կարնո քաղաքի դեմ պայքարելու համար, իսկ վրացիք այլևայլ պատճառաբանություններով մերժել էին։

Կարին և Բասեն գավառներում, ըստ Միրանածնի, կային երեք քաղաքներ, որոնք գտնվում էին արաբների ձեռքում՝ Կարնո քաղաքը, Ավնիկը և Մասատոնը[110]։ Հայոց թագավորությունից կտրված այս գավառների նկատմամբ հավակնություններ ունեին ոչ միայն բյուզանդացիք, այլև Տայքի կյուրապաղատները։ Ըստ Միրանածնի, վրացիք արաբների

---

[107] Const. Porph., De adm. imp., c. 45, p. 204-215.
[108] Const. Porph., De adm. imp., c. 45, p. 209.
[109] Honigmann, Ostgrenze 80.
[110] Const. Porph., De adm. imp., c. 45. p. 211-213.

դեմ մղված պայքարում օգնություն էին խոստանում միայն այն դեպքում, եթե հաղթանակից հետո իրենց թույլ տրվեր տիրանալ վերոհիշյալ քաղաքներին և իջնել մինչև Արաքսի ափը, իսկ բյուզանդացիք ուզում էին, որ նրանք այդ պայքարին մասնակցելով նոր ոչինչ չստանան, այլ պարզապես խոստանում էին ամրապնդել նրանց իշխանությունը Տայքում։ Տայքի կյուրապատարը Ռոմանոս Լեկապենոսից ստացել էր մի երկիմաստ հրովարտակ, որի բովանդակությունը վրաց և հույների կողմից յուրովի էր մեկնաբանվում։

Կարնո քաղաքի արաբական ուժերի դեմ պայքարելու համար բյուզանդացիք քաղաքի դիմացը կառուցել էին մի նոր քաղաք, որը կոչվում էր Հավճիշ (արաբ. «Հաֆջիջ»)։ Այս մասին վկայող արաբ պատմիչ Իբն Զաֆիրը պատմելով Սայֆ ալ-Դաուլայի 940 թ. Հայաստան կատարած արշավանքի մասին ասում է, որ հույները հենց որ լսեցին նրա գալստյան մասին քանդեցին Հավճիշը և փախան[111]։

Շուտով Կայսրությունը վճռական քայլերի դիմեց արաբական ամրությունները ոչնչացնելու նպատակով։ Բյուզանդիան քար ու քանդ էր անում արաբներից գրավված քաղաքները։ Այսպես, օրինակ, Մելիտինեն երբ գրավվեց և նրա ամիրան Աբու Հաֆսը գերի տարվեց, քաղաքը գրեթե ամայացվեց։

Այս նույն ճակատագիրն սպասում էր նաև Կարնո քաղաքին և մյուս արաբական ամրություններին։ Պրոտոսպաթարիոս Հովհան Առաբոնիդեսը և պատրիկ Թեոփիլոսը մեծ ավերածություններ գործեցին Ամնիկի շրջակայքում, այրելով նրա գյուղերը[112]։ Յանկանալով ոտիթից օգտվել, վրացիք ներթափանցեցին այս գյուղերը և փորձեցին գրավել Ամնիկը։ Սակայն քաղաքի ամիրան զգալով իր անհուսալի վիճակը, հնազանդություն հայտնեց բյուզանդացիներին իր որդուն տալով որպես պատանդ։

Այդ ժամանակ (մոտավորապես 949 թ.) պաշարվեց Կարնո քաղաքը նույն Հովհանի կողմից, որը չկարողանալով գրավել այն, նվաճեց Մասատոնը, որպես Կարնո քաղաքի ամիրային

---

[111] M. Canard, Recueil, 71.

[112] Const. Porph., De adm. imp., c. 45, p. 213.

հպատակ քաղաք և այն հանձնեց պրոտոսպաթարիոս Պետրոնաս Բոյիլասին։ Կարնո քաղաքի առջև կռվող մի հայազգի մագիստրոս՝ Պանկրատիոսը (Բագարատ) խնդրեց իրեն հանձնել Մաստատոնը, բայց ստանալուց հետո հանձնեց Կարնո քաղաքի արաբներին։ 949 թ. հույները գրավեցին Կարնո քաղաքը և մեծ ավերածություն գործեցին թե քաղաքում, թե շրջակա գյուղերում։ Վրացիք գրավեցին Մաստատոնը որին բյուզանդացիք այլևս չառարկեցին։

Կարնո քաղաքի գրավման մի հակիրճ, բայց հետաքրքրական նկարագրություն կա Ասողիկի մոտ[113]։ Ըստ նրան, ՅՂԸ (949) Կոստանդին Միրանածին կայսրը Հովհան Զմշկիկին ուղարկեց Կարնո քաղաքի դեմ։ Սա հաղթելով արաբական զորքերին ճեղքեց քաղաքի խանդակը (խրամատը) և քանդելով բարձրաբերձ աշտարակները գրավեց քաղաքը։ Նրա վկայությամբ, Կիւռ Ժանը (Զմշկիկ) այստեղ մեծ քաջագործություններ ցույց ավեց։ Բյուզանդիայի ապագա կայսրը, որը Կուրկուասների ընտանիքից էր և վերոհիշյալ Թեոփիլոսի թոռը՝ այդ ժամանակ 25 տարեկան էր և հավանաբար իր պապի հետ մասնակցում էր Կարինում մղված կռիվներին։

ԺԱ դ. քրիստոնյա արաբ պատմիչ Յահիա իբն Սաիդը Կարնո քաղաքի (նրա մոտ Կալիկալայի փոխարեն Կիլիկիա է գրված) գրավման թվականը դնում է հիջրի 338 տարի ալ-ավալ ամսին (29 օգոստոս—28 սեպտեմբեր 949)։ Ըստ նրա հույները քաղաքը գրավեցին պարիսպները կործանեցին և հեռացան։

Միրանածինը վկայում է, որ գրավումից հետո Կարնո քաղաքի ռազմական կառավարիչ նշանակվեց նույն Թեոփիլոսը[114]։ Կարնո քաղաքի նվաճումով սկիզբ դրվեց Բյուզանդիայի դեպի արևելք առաջխաղացմանը, որը ծանր հետևանքներ ունեցավ Բագրատունյաց Հայաստանի համար։

---

113 Ասողիկ, էջ 179։ Vasiliev, Byzance et les Arabes, t. II, II partie, p. 95.

114 Const. Porph., De adm. imp., c. 45, p. 213.

ԳԼՈՒԽ Դ.

ԱՆԻԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Ժ դարի կեսում Բագրատունյաց թագավորությունը աշխուժացման շրջան ապրեց, որն անխուսափելիորեն ազդեց Հայաստանի ամիրայությունների ճակատագրի վրա։ Դա նրա պատմության «անիական» շրջանն էր, երբ Անիում վերջնականապես հաստատված Բագրատունի թագավորները ամեն կերպ ձգտում էին ի մի հավաքել հայկական բոլոր գավառները և վերականգնել Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի թագավորությունը, վերջ տալով ոչ միայն հայ իշխանների, այլև արաբ ամիրաների կենտրոնախույս ձգտումներին։ Այս նոր շրջանի հիմքը դրեց Աշոտ Գ Ողորմածը, և ինչպես նրա պապը՝ Սմբատ Ա-ը բախվել էր Ատրպատականի Սաջյանների հետ, նույնպես և նա դիմադրության հանդիպեց Ատրպատականի Սալարյանների[1] կողմից։

1. ԱՌԱՋԻՆ ՇԱԴԴԱԴՅԱՆԸ ԴՎԻՆՈՒՄ

Տասներորդ դարը Ատրպատականի պատմության մեջ իրանական տարրերի խիստ աշխուժացման շրջանն է, որոնց մեջ առաջին հերթին պետք է հիշել քրդերին և դայլամցիներ-

[1] *Տե՛ս նրանց մասին* C. Huart, Les Musafirides de l' Azerbaidjan' 1922.

R. Vasmer, Chronologie des Gastaniden und Sallariden, Islamica, III, 1927.

V. Minorsky, La domination des Daïlamites, 1932.

ին։ Ինչպես տեսանք, Դայլամ իբն Իբրահիմը քուրդ էր և հենց քրդերի և դայլամցիների վրա հենվելով էր, որ նա կարողացավ տիրանալ Ատրպատականին։

Դայլամցի (հայ մատենագիրների մոտ՝ դելմիկ) էին կոչվում Կասպից ծովի հարավային գավառներում բնակվող իրանական տարրերը։ Դայլամյան ծագում ունեին Սալարյանները (Մուսաֆիրիները), որոնց կալվածները գտնվում էին Կասպից ծովի հարավում՝ Թարոմ նահանգում, ինչպես նաև Ջուստանիները և Բույիները (կամ բուայհիները)։ Սակայն եթե վերջիններն տարածվեցին դեպի հարավ, իրենց գերիշխանությունը հաստատելով նույնիսկ Բաղդադի խալիֆաների վրա, ապա Սալարյանները՝ դիմեցին հյուսիս, տիրելով Ատրպատականին։

Նրանցից առաջինը՝ Սալար Մարզուբանը, օգտվելով Դայլամի վեզիր Աբու-լ-Կասիմ Ալի իբն Ջաֆարի դավաճանությունից, հիջրի 331 թ. (942—943) հարձակվեց Ատրպատականի վրա։ Դայլամին դավաճանեց նաև նրա դելմիկ զորքը և նա պարտված ապաստան գտավ Վասպուրականի Գագիկ Արծրունու մոտ։ Քրդերից նոր զորք հավաքելով և օգտվելով իր նախկին վեզիրի նոր դավաճանությունից, Դայլամը կրկին մտավ Ատրպատական և գրավեց Թավրիզը, սակայն Արդաբիլում պարտվելով գերի ընկավ ու բանտարկվեց Թարոմի բերդերից մեկում[2]։

Սալար Մարզուբանը տիրում էր ոչ միայն Ատրպատականին, այլև ինչպես երևում է, Դվինին։ Պատմիչները ոչինչ չեն հաղորդում Աբասի թագավորության տարիներին հայ իշխանների կողմից Դվինի դեմ ձեռնարկված որևէ արշավանքի մասին։ Հիջրի 330 թ. (941—942) Դայլամի անունով Դվինում թողարկված դրամը[3] ցույց է տալիս, որ մինչև այդ ժամանակ Դվինը դեռ գտնվում էր նրա իշխանության տակ, իսկ թե ո՞ւմ էր Մարզուբանը կառավարիչ նշանակել Դվինում, հայտնի չէ։

Սակայն 948—949 թ. Ռեյի (Թեհրանի) վրա կատարված մի հարձակման ժամանակ Մարզուբանը գերի ընկավ Բույի Ռուքն ալ-Դաուլայի ձեռքը և բանտարկվեց Պարսկաստանի Սումայ-

---

[2] А. Быков, Дайсам Ибн Ибрахим, стр. 31-32.

[3] Там же, стр. 14-19.

բամ ամբոցում[4]։ Ատրպատականին տիրեց բույիների զորավարներից Մուհամմադ իբն Աբդ ալ-Ռազզակը, սակայն սրան հակահարված տալու համար Մարզուբանի եղբայրը Վահսուդանը աղաչ արձակեց Դայլամին, որը վերսկսեց պայքարը Ատրպատականին տիրանալու համար։

Հենց որ Մարզուբանը գերի էր բռնվել, Դվինին և Նախճավանին տիրացել էին երկու ամիրաներ՝ ալ-Ֆադլ իբն Ջաֆար ալ-Համդանին և Իբրահիմ իբն ալ-Դաբբին[5], որոնք ըստ երևույթին անբարյացակամ էին Դայլամի նկատմամբ։ Վերջինս հաղթելուց հետո բույի զորավարին, մոտավորապես 950 թ. հարձակվեց այս հայկական երկու քաղաքների վրա և խլեց վերոհիշյալ ամիրաների ձեռքից, որոնցից Իբրահիմ իբն ալ-Դաբբին բանտարկեց։ Դայլամի նոր իշխանությունը շատ կարճ տևեց թե Ատրպատականում, թե Դվինում։ 951 թ., հավանաբար Ատրպատականի կողմերից եկած քուրդ Մուհամմադ իբն Շադդադը տիրացավ Դվինին։ Սա առաջինն էր այն հայտնի քուրդ ամիրաների տոհմից, որի անդամները հետագայում կարևոր դեր խաղացին Դվինի, Գանձակի և Անիի պատմության մեջ։ Նրա մասին պատմող միակ աղբյուրը՝ Մունաջջիմ Բաշին վկայում է, որ Մուհամմադը քաղաքին տիրացավ առանց արյունահեղության, որովհետև, ըստ պատմիչի, անիշխանությունից զզված դվինեցիք ինքնակամ նրան հանձնեցին քաղաքը, որպեսզի նրանց պատիվն ու ինչքը պաշտպանի դայլամցիների և այլ ավազակների հարձակումներից։ Այստեղ պատմիչի համակրանքը ամբողջովին Շադդադյան Մուհամմադի կողմն է, ուստի և ձգտում է ամեն կերպ բարձրացնել նրան, որի իշխանության կարճ շրջանի դեպքերը շատ մանրամասն նկարագրված[6] են հետևյալ ձևով.

Բանտարկված Մարզուբանի որդին Իբրահիմը, որը Ատրպատականի որոշ մասերում հեղինակություն ուներ, հարաբերության մեջ մտավ Հայաստանի իշխաններից Դիրմուսի տիրոջ (կամ Դիր Մուս) հետ և նրան դրդեց Մուհամմադ իբն

---

[4] Ibn Miskawayh, II, 115.
[5] Ibn Miskawayh, II, 149.
[6] Minorsky, Studies (arab.) 3-5.

Շադդադի դեմ։ Ս. Երեմյանի բացատրությամբ Դիրմուսը «Տէր Մոզայ» բառերի արաբական աղավաղումն է, իսկ Մոզը Վայոց Ձորի քաղաքներից էր և Սյունյաց իշխանների նստավայրը Ժ դարում։ Վերջինս համաձայնվելով Իբրահիմի կողմից առաջարկված՝ Մուհամմադ իբն Շադդադին Դվինից հեռացնելու ծրագրի հետ զորք հավաքեց հայերից, նույնիսկ վարձկան լեզգիներից և ուրիշներից ու շարժվեց դեպի Դվին։

Դվինի նոր ամիրայի կողմնակիցները, որոնք որոշել էին ամեն կերպ դիմադրություն ցույց տալ, դուրս եկան քաղաքից և հարձակվող բանակը դիմավորեցին Արաքսի և Մանամանի (Մեծամորի) միջև ընկած վայրում։ Շադդադյանները հաղթեցին, սակայն Մուհամմադն անհանգստացած լինելով իր մերձավորների ապահովության համար, բնակիչների օգնությամբ քաղաքից դուրս մեկ ձայնընկեց հեռավորության վրա կառուցեց ամրոց, որը կոչեց «Տալլ (բլուր) Հասլի» և այնտեղ տեղափոխեց իր տոհմը։ Հավանաբար սա Տիկնոնի ամրոցն է, որի հետքերը (կառուցվածք և խեցեղենի բեկորներ) մինչև այժմ կան, իսկ անունը ակներևորեն աղավաղված ձևով է տրված արաբերեն բնագրում։ Այս բնագրի հրատարակիչ Վ. Մինորսկին փորձում է մի կետ ավելացնելով այն կարդալ Տալլ Ջասլի «Մրջյունի բլուր», որը սակայն չի օգնում հարցի լուծմանը։

Տեսնելով հարևան հայ իշխանի կրած անհաջողությունը, Իբրահիմ իբն ալ-Մարզուբանը, որն այդ ժամանակ Արդաբիլում էր, դելմիկներից և քրդերից հավաքված մի խայտաբղետ բանակ ուղարկեց Դվին։ Սրանց հարձակմանը չդիմանալով դվնեցիք դավաճանեցին Մուհամմադին, որը վերցրեց իր ընտանիքը և նախ քաշվեց իր ամրոցը (հավանաբար նորակառույցը), ապա հեռացավ Հայաստանի (իմա՝ Վասպուրականի) ուղղությամբ։ Դվինը ենթարկվեց հաղթական անկանոն բանակի ավազակային կողոպուտին։ Քաղաքի մեծամեծները այլ ելք չգտնելով նորից դիմեցին Մուհամմադ իբն Շադդադին և հավատարմության խոստում տալով նրան բերեցին քաղաք։ Ըստ երևույթին հարձակվող բանակի նպատակը չէր Դվինը գրավելն ու այնտեղ հաստատվելը, այլ ձգտում էր սոսկ կողոպուտի և պատահական չէ, որ Շադդադյան ամիրան առանց դի-

մաղրության նորից տիրացավ քաղաքին։ Դվինում նա կարգավորեց գործերը և բնակիչներին ազատեց «հեթանոսների և ապականիչների չարիքից»։ Հավանական չէ, որ հեթանոս անվան տակ ենթադրենք մահմեդական դայլամցիներին կամ քրդերին, այլ պետք է հասկանալ հայերին կամ էլ լեզգիներին, որոնցից վախենալով էր, որ Մուհամմադը կառուցել էր իր վերոհիշյալ ամրոցը։

Հենց այս դեպքերի ժամանակ էր, որ մահացել էր Հայաստանի թագավոր Աբասը և նրան հաջորդել որդին՝ Աշոտը։ Աշոտ Գ Ողորմածը[7] (953—977) իր թագավորության սկզբում միջոցներ ձեռք առավ պետության միասնականությանը խանգարող ապստամբների վերացման համար։ Նա վերակազմավորեց բանակը[8] և այն մեծացրեց, իսկ եկեղեցուն ուղղակի ենթարկեց իր ազդեցությանը, սատարելով նրա հարստացմանը։ Անանիա Մոկացի կաթողիկոսը, որը Մայր աթոռի ժամանակավորապես Վասպուրական տեղափոխվելու հետևանքով գտնվում էր Արծրունիների մոտ, եկավ Շիրակ և հաստատվեց Արգինա գյուղում[9]։ Սակայն Աշոտի բոլոր ձեռնարկումների մեջ առաջինը մշտական մայրաքաղաքի հարցի լուծումն էր։ Մինչև նրա իշխանության գլուխ անցնելը Բագրատունի թագավորները երեք մայրաքաղաք էին փոխել՝ Բագարան, Երազգավորս (Շիրակավան) և Կարս։ Հասկանալով մշտական և կայուն մայրաքաղաքի անհրաժեշտությունը, որպես պետության միասնականությանը նպաստող մի կարևոր օղակ, Աշոտ Գ-ն իր գահակալության հենց առաջին տարում միջոցներ ձեռք առավ ազատագրելու Դվինը օտար տիրակալների ձեռքից և հավանաբար հենց այն էլ դարձներ մշտական մայրաքաղաք։ Այս արշավանքի մասին այսօր մեզ հայտնի է միայն մեկ աղբյուրի շնորհիվ՝ Մունաջջիմ Բաշիի մեզ արդեն ծանոթ հատվածից, ուստի ավելորդ չենք համարում պատմիչի խոսքերը ամբողջությամբ մեջ բերել թարգմանաբար։ «Վրաստան նահանգի և Արմինիայի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշոտ որ-

---

7 Ասողիկ, էջ 180—181։

8 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1949, էջ 256։

9 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, 1110։

դի Աբասի (Աշուբ իբն ալ-Աբբաս) և կրում էր Շահինշահ տիտղոսը։ Սա որոշեց պաշարել Դվինը և նրա ժողովրդի դեմ կռվել։ Զորք հավաքեց հայերից, լեզգիներից և այլ անհավատներից 30 հազար մարդկանց և իջավ նրան (Դվինին) մոտիկ մի վայրում, որը կոչվում էր Նաուարդ։ Նա ցրեց իր զորքը, որպեսզի այրեն բերքը և քանդեն շենները։ Լուրը հասավ Մուհամմադ իբն Շադդադին, որն անտեղյակ նստած էր մի խումբ մարդկանց և մերձավորների հետ։ Ուստի մի հնարամտություն մտածեց այս ուժեղ թշնամուն ետ մղելու։ Նա հրամայեց քաղաքում բոլոր գոնվողներին՝ տղամարդկանց և երեխաներին, նստել անասունների վրա, ինչպես էշերի, կովերի, ձիերի և ջորիների վրա և այդ վիճակում քաղաքից դուրս գալ ու կանգնել քաղաքին մոտիկ վայրում որպեսզի թշնամին տեսնի նրանց հոծ բազմությունը և լսի նրանց աղաղակն ու բացականչությունները (և սպասել) մինչև Մուհամմադը հրամայի նրանց շարժվել և առաջ խաղալ։ Այդպես էլ արեցին։ Եվ մի խումբ ձիավորների ու քաջերի հետ, որպես առաջապահ, գնաց նա թշնամու կողմը, որը եղածից անտեղյակ ցրված էր տավերում տեղերում, պատրաստվելով սաստիկ շոգից։ Նրանք չսթափվեցին մինչև որ մահմեդականները հարձակվեցին կատաղած առյուծների նման և ամեն կողմից սրախողխող արեցին նրանց։ Երբ կռիվը սաստկացավ, Մուհամմադ իբն Շադդադը նշան արեց քաղաքի մոտ հավաքված խմբին, որը գոռաց բարձրաձայն և մոտեցավ թշնամուն տեսանելի լինելու չափ։ Թշնամին, երբ տեսավ նրանց լեռնանման հոծ բազմությունը, նրա աչքին ավազի հատիկներից ավելի շատ թվացին։ Ալլահի օգնությամբ և օժանդակությամբ նա պարտվեց»[10]։

Այստեղ ինչպես նաև ամբողջ շարադրանքի մեջ մահմեդական պատմիչը առիթը բաց չի թողնում բարձրացնելու Շադդադյաններին։ Մուհամմադ իբն Շադդադի հակառակորդները միշտ հարձակվում էին հսկայական զորքով. «Դիրմուսի» տերը եկել էր «կոպիտ բանակով», Իբրահիմ իբն ալ-Մարզուբանը ուղարկել էր մի «հսկայական բանակ», իսկ Աշոտ Ողորմածը եկել էր երեսուն հազար զորքով, սակայն բոլորն էլ պարտու-

---

[10] Minorsky, Studies (arab.), 5-6.

թյան կրեցին Մուհամմադ իբն Շադդադից, որը միշտ էլ կռվել էր սոսկ «փոքրաթիվ խմբով» և միշտ էլ հաղթական էր դուրս եկել։

Աշոտ Գ-ի այս հարձակումը վկայում է թե ինչպիսի վճռական քայլերի էր նա դիմել Հայաստանի հին մայրաքաղաքի ազատագրման համար և թե ինչքան սխալ կլիներ նրա իշխանության տարիները բնորոշել որպես սոսկ շինարարության և վանքերի հիմնադրման մի շրջան[11]։ Նրա օրոք շատ վանքեր հիմնվեցին և բարեկարգվեցին, սակայն դրան զուգահեռ նա բազմաթիվ մեծ ընդունակություն ցուցաբերեց, իսկ վանքերի նկատմամբ նրա ոգորմած լինելը բխում էր եկեղեցին իրեն ենթարկելու ձգտումից։ Նրա նպատակն էր վերականգնել Հայոց թագավորության միասնականությունը, բայց ոչ բոլոր ավատատերերին ուղղակի ենթարկելու ձևով, որը գրեթե անհնարին էր, այլ բավարարվելով թեկուզ ձևական հպատակությամբ։ Դեռ Մուկտադիր խալիֆի ժամանակ (908—932) Աշոտ Երկաթի ստացած Շահանշահ տիտղոսը[12] նրա օրոք որոշ իմաստ ստացավ։ Նրա հեղինակության մասին է վկայում հետևյալ փաստը։ Երբ 974 թ. Բյուզանդիայի կայսր Հովհան Զիմշկիկը մտեցավ Հայաստանին, Աշոտ Գ-ի շուրջը հավաքվեցին Հայաստանի բոլոր հայանի նախարարները «թագաւորն կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից (իմա՝ Տաշիր-Զորագետի) Գուրգէն, Աբաս Կարուց տէրն և Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձևացեաց տէրն և բովանդակ ամենայն ազնն Սասանու»[13]։ Սրանք բոլորն ընդունում էին Բագրատունի թագավորի ընդհանուր գերիշխանությունը, որն իրավամբ համարվում էր «Շահան Շահ Հայոց Մեծաց»։

Հայոց թագավորության միասնականությանը խանգարում էին նաև Հայաստանի մահմեդական ամիրայությունները և ահա իր իշխանության հենց առաջին տարում Աշոտ Գ-ը մեծ զորքով հարձակվեց Դվինի վրա, սակայն լավ պաշտպանված բաղաքը չհանձնվեց։ Այս անհաջող արշավանքից հետո Աշոտ

---

[11] Грен, Династия Багратидов в Армении, стр. 105.

[12] Դասխուրանակերտցի, էջ 393։

[13] Ուռհայեցի, էջ 17։

Գ-ը մոտավորապես 961 թ., Շիրակի Անի ամրոց-ավանը հանդիսավոր կերպով հռչակեց իր թագավորության նոր մայրաքաղաք[14], որի կողքին Արգինա ավանում եկավ և հաստատվեց նաև կաթողիկոսական Մայր աթոռը։

Աշոտ Գ-ի հարձակումը Դվինի վրա բնականաբար թուլացրել էր Մուհամմադ իբն Շադդադի դիրքերը և ահա հաջորդ հարձակմանը նա չդիմացավ։ 954 թ. բանտից ազատված Սալար Մարզուբանը հաղթելով Դայլամին նորից բանակ ուղարկեց Դվին։ Մուհամմադ իբն Շադդադը իր զորքի մեջ չունենալով բավարար թվով քրդեր, Դվինի պաշտպանությունը հանձնել էր դայլամցիներից բաղկացած մի կայազորի, որն անմիջապես դավաճանեց և միջնաբերդի մի փոքր դռնից թշնամուն ներս թողեց։ Քաղաքի բնակիչների մի մասը ևս միացավ նրանց և ահա Շադդադյանների դրությունը խիստ ծանրացավ։ Ըստ մեր պատմիչի, դավաճանող զվնեցիք աչք ունեին Մուհամմադի ինչքին, սակայն ակնհայտորեն այստեղ մենք գործ ունենք նրանից դժգոհ տարրերի հետ։ Գուցե դրանք հայեր էին, որոնք Աշոտ Գ-ի հարձակման ժամանակ անտարբեր չմնալու պատճառով հալածանքի էին ենթարկվել։ Զգալով իրենց ծանր վիճակը Շադդադյանները վերցրեցին իրենց ամբողջ ունեցվածքը և «Գերեզմանների դռնով» մի կերպ փախան քաղաքից։ Նրանք անցան Արաքս և Մեծամոր (Մանսուման) գետերը, ապաստան գտնելով Վասպուրականի (Ասֆուրջան) տիրոջ մոտ[15]։

Քուրդ ցեղապետի Վասպուրականում ապաստան որոնելը շատ բնորոշ երևույթ էր։ Վասպուրականի հարավային շրջանները, մանավանդ Անձևացիքը Միջագետքի քրդաբնակ գավառների հետ սերտ կապի մեջ էին։ Քուրդ Դայլամ իբն Իբրահիմը հաճախ էր որոնել Գագիկ Արծրունու և նրա որդիների՝ Դերենիկի ու Ասլանահլ Համազասպի մտերմությունը[16]։ 941—942 թթ., երբ Դայլամը պարտվեց Սալար Մարզուբանից, ապաստան գտավ Գագիկ Արծրունու մոտ։ Երկրորդ ան-

---

14 Նույն տեղում, էջ 3—4։

15 Minorsky, Studies (arab.) 6.

16 Ibn Miskawayh, II, 150. А. Быков, Дайсам Ибн Ибрахим, стр. 35.

գամ 953 թ. Դայլամը պարտվելով Մարզուբանից կրկին ապաստանեց Վասպուրական և օգնություն ստանալով Արծրունիներից ուղեց կրկին տիրել Ատրպատականին։ Նա գնաց Բաղդադ, ապա եկավ Մոսուլ Համդանյան Նասիր ալ-Դաուլայի մոտ, բայց օգնություն չստանալով դիմեց նրա եղբորը՝ Սայֆ-ալ-Դաուլային, որի օժանդակությամբ հարձակվեց Ատրպատականի վրա և գրավեց Սալմաստը։ Սակայն մի անգամ ևս պարտվելով Մարզուբանից կրկին ապաստանեց Վասպուրական։ Դերենիկ Արծրունին պաշտպանեց Դայլամին, բայց չդիմանալով Մարզուբանի գործադրած ճնշմանը, ստիպված եղավ հանձնել նրան[17]։

Հենց նույն Դերենիկի իշխանության ժամանակ էր, որ Վասպուրական ապաստանեց նաև Մուհամմադ իբն Շադդադը։ Շադդադյան տոհմը Վասպուրականում տեղավորելուց և Արծրունյաց իշխանից երաշխիք վերցնելուց հետո, նա դիմեց Հոռոմների կայսրը՝ Դվինը նորից նվաճելու համար նրանից որոշ օգնություն ստանալու ակնկալությամբ։ Ինչպես երևում է կայսրը ոչնչով չօգնեց և նա ձեռնունայն վերադարձավ Վասպուրական և հենց այնտեղ էլ մահացավ 955 թ.[18]։

2. ՍԱԼԱՐՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

954 թ. կրկին գրավելով Դվինը և նրանից հարավ տարածվող Արաքսի հովիտը, Սալարյանները նորից ամրապնդեցին այն սեպը, որը խրված էր Հայոց թագավորության մեջ և հանդիսանում էր նրա միասնականությանը խանգարող կարևորագույն ազդակներից մեկը։ Աշոտ Գ-ը քաջ գիտակցելով Դվինի և ընդհանրապես Արաքսի հարավային հովիտի կարևորագույն նշանակությունը իր ծրագրերի իրագործման համար հենց սկզբից էլ ուզեց վերացնել այդ սեպը, բայց անհաջողության մատնվեց։ Տիրելով այս շրջանին Սալարյանները հնարավորություն ունեցան սպառնալու Հայոց թագավորության այն շրջաններին, որոնք նրա շուրջն էին գտնվում։ Դվինից բացի

---

[17] Ibn Miskawayh, II, 151.

[18] Minorsky, Studies (arab.), 6.

նրանք տիրում էին նաև Պարտավին, և այսպիսով, հնարավորություն ունեին սպառնալու նաև Աղվանքին։ Նրանց զորքը, որը բաղկացած էր ավազակաբարո դայլամցիներից, վատ հրոշակ ուներ և այդ մասին են վկայում Շադդադյանների պատմիչի ակնարկները։ Նա նրանց հաճախ է որակում այսպիսի խոսքերով՝ «չարագործներ և խռովարարներ»[19], որը վկայում է նրանց ավազակային ասպատակությունների մասին։

Սակայն այսպիսի իրադրության մեջ Հայաստանի ու Աղվանքի թագավորներն ու իշխաններն իրենց գավառների ապահովության համար ստիպված եղան որոշ միջոցներ ձեռք առնել։ Աշոտ Գ-ի և Սալարյանների փոխհարաբերության մասին հայ պատմիչները լռում են, սակայն աշխարհագիր Իբն Հաուկալի մոտ հիշվում է մի հարկային ցուցակ[20], որը մեզ օգնում է այս հարցում։ Հայաստանին, Աղվանքին և Ատրպատականին նվիրված հատվածում նա հաղորդում է, որ Մարզուբանի վեզիր Աբու-լ-Կասիմ Ալի իբն Ջաֆարը հիջրի 344 թ. (955/956) թ. համար կազմել էր մի հարկացուցակ, որտեղ տրված են Մարզուբանին հարկատու ավատատերերի անունները և հարկերի քանակը։ Հայաստանից հիշվում են հետևյալները՝ Վայզուրի (Վայոց Ձորի) տերը (Սահիբ Վայզուր) Աբու-լ-Կասիմ ալ-Վայզուրին, Դայրանի (Դերենիկի) որդիները, Սինբաթի (Սմբատի) որդիները (Բանու Սինբաթ) և վերջապես Խաչենի տերը Սինհարիբը (Սենեքերիմ)։ Սրանցից առաջինը, որի արաբական մականունն էր Աբու-լ-Կասիմ և դուցե Վայոց Ձորի Սմբատ իշխանի որդին՝ Վասակն էր, վճարում էր հիսուն հազար դինար և նվերներ տալիս։ Հենց սրան էր, որ մի քանի տարի առաջ Մարզուբանի որդի Իբրահիմը գրրգռել էր Դվինում տիրող Մուհամմադ իբն Շադդադի դեմ։ Կարելի է ենթադրել, որ այս հարկը ամբողջ Սյունիքի համար էր և ոչ թե սոսկ Վայոց Ձորից։ Արծրունյաց տերերը՝ Դերենիկի որդիները կամ ավելի ճիշտ կլիներ ասել՝ թոռները (Դերենիկ և Ապուսահլ Համազասպ) վճարում էին հարյուր հազար

---

[19] Minorsky, Studies (arab.), 3.

[20] Ibn Hauqal, II, 354-355. Minorsky, The Caucasian vassals of Marzuban, Caucasica, IV, 1953.

դիրհեմ, որը սակայն չորս տարվա համար դեղչվել էր Դայսամին հանձնելու փոխարեն: Խաչենի տեր Սենեքերիմը վճարում էր ոչ միայն հարյուր հազար դիրհեմ, այլև հիսուն հազար դիրհեմ արժողությամբ ընծաներ ու ձիեր: Ամենատարօրինակն այն է, որ հարկատուների մեջ հիշվում են նաև Բագրատունի թագավորները (Սմբատի որդիներ): Պարզ է, որ այստեղ առաջին հերթին նկատի ունի Սմբատ Բ-ի երկու որդիներին՝ Աշոտ Բ-ին և Աբասին: Սակայն եթե նկատի ունենանք, որ Աշոտ Բ-ի օրոք Սալարյանների իշխանությունը դեռ գոյություն չուներ, պետք է ենթադրել, որ այս անվան տակ հեղինակը հասկանում է Աբասին, որն ըստ այս ցուցակի, վճարելու էր տարեկան երկու միլիոն դիրհեմ, որից հետագայում իջեցվել էր երկու հարյուր հազար դիրհեմ: Այս գումարը Բագրատունիները տալիս էին ոչ թե ամբողջ Հայաստանի համար, այլ ինչպես Իբն Հաուկալն է արտահայտվում, Ներքին Հայաստանի գավառների դիմաց (Արմինիյա ալ-Դախիլա)[21]: Մի ուրիշ տեղում նույն մատենագիրը խոսելով Ներքին Հայաստանի մասին, ասում է, որ սրա մեջ մտնում էին Դվինը, Նախճավանը և Կարնո քաղաքը, այսինքն՝ Հյուսիսային Հայաստանը: Արաբ մատենագրության մեջ այս անունը միայն Իբն Հաուկալի մոտ ենք հանդիպում: Ըստ հայ պատմիչների, Բյուզանդիայի Մավրիկ կայսրը 591 թ. դաշնագրից հետո, Հայաստանի հյուսիսային մասերում ստեղծեց «Ներքսագոյն Հայք»[22] կոչված մի վարչական միավոր, որը սակայն նույնությամբ չի համընկնում արաբ աշխարհագրի հիշածի հետ: Համենայն դեպս անկախ «Ներքին Հայաստան» տեղանվանը տրվելիք ստուգաբանությունից, Իբն Հաուկալի հարկացուցակում այս տեղանվան տակ պետք է հասկանալ Հյուսիսային Հայաստանի այն մասերը, որոնք Բագրատունիների անմիջական իշխանության տակ էին:

---

[21] Ibn Hauqal, II, 343.

[22] Դրասխանակերտցի, էջ 89; Վարդան, էջ 83; Դեռ նախքան Հուստինիանոսի բարեկարգումները Բարձր Հայքի կողմերը կոչվում էին Ներքին Հայաստան Armenia Interior.

Տես՝ Н Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 46.

Այս ցուցակի մեջ Դվինը որպես հարկատու քաղաք չի հիշվում, հավանաբար այն պատճառով, որ նա Սալարյաններին ուղղակի ենթակա քաղաք էր, իսկ Հայաստանի այն մասերը, որոնք հիշված են այնտեղ, Սալարյաններին ոչ մի ձևով ենթակա չէին և հիշյալ գումարները տալիս էին որպես ասպատակությունների դեմ ապահովության երաշխիք, մանավանդ որ Աշոտ Բ-ից հետո Հայոց թագավորությունը բոլորովին դադարել էր խալիֆայության հարկ վճարելուց: Բացի դրանից, հավանաբար այս հարկացուցակը ցույց է տալիս հիմնականում Արաբի թագավորության տարիների քաղաքական գոյավիճակը, որովհետև կասկածելի է Աշոտ Գ-ի հարկատու լինելը, մանավանդ, որ հենց ինքը Իբն Հաուկալը ասում է «Սմբատի որդիները», այսինքն՝ Աշոտ Բ-ը, որը խալիֆայության էր հարկատու և Աբասը, որը կարող էր Սալարյաններին հարկատու եղած լինել:

Մարզուբանի իշխանության երկրորդ շրջանում (954—957) Դվինը դարձյալ գտնվում էր Սալարյանների ձեռքում, բայց մեզ հայտնի չէ նրանց կողմից նշանակված որևէ կառավարչի անունը: Իբն ալ-Ասիրի մոտ հիշվում է Պարտավում նստող սալարյան կառավարչի գոյության մասին (Մարզուբանի տեղակալը)[23] և շատ հավանական է, որ նույն ձևով Դվինում էլ լինեին նման կառավարիչներ: Սակայն Մարզուբանի մահվանից հետո Ատրպատականում ծայր առան երկպառակություններ, նրա եղբորը՝ Վահսուդանի և որդու՝ Իբրահիմի միջև: Հայտնի չէ թե այս շրջանում (957—966) ինչ վիճակում էր գտնվում Դվինը: Մինորսկին կարծում է[24], որ այս տարիներին Իբրահիմը Դվինում էր գտնվում: Նրա այս ենթադրությունը հիմնված է ակներևորեն Իբն Միսքաուայհի տեղեկությունների թյուրըմբռնման վրա: Արաբ պատմիչը պարզապես վկայում է, որ այս տարիներին Իբրահիմը գտնվում էր «Արմինիայի» կողմերում, բայց որպեսզի հասկանանք թե Հայաստանի ո՞ր մասերին էր մոտիկ գտնվում Իբրահիմը, պետք է նկատի ունենանք նույն Իբն Միսքաուայհի այն վկայությունը, թե Իբրա-

[23] Ibn al-Athir, VIII, 308.

[24] Minorsky, Musafirids. Enc. of Isl., III, 744.

հիմը մոտիկ էր Մարաղային տիրող Ջաստան իբն Շարամզանին[25]։ Պարզ է, որ Իբրահիմի գտնված վայրը ոչ թե Դվինն էր, այլ Վասպուրականը, որը Սալարյանների հետ որոշ հարաբերությունների մեջ էր։ Դեռ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Իբն Միսքաուայհը Վասպուրականի համար միշտ օգտագործում է Արմինիա տեղանունը, իսկ Դվինը պարզապես Դարիլ է կոչում։

Հավանական է, որ Աշոտ Գ-ն 953 թ. անհաջող հարձակումից հետո կրկին փորձած լիներ Դվինին տիրել։ Այդ մասին են ակնարկում Նախճավանի մոտ Մաղարթա (Ստեփանոսի Նախավկայի) վանքի հետ կապված մի քանի կասկածելի վավերականությամբ փաստաթղթեր, որոնք են՝ մի կոնդակ[26], Աշոտ Գ-ի դուստր Հռիփսիմե տիկնոջ կտակը[27], ինչպես նաև Էջմիածնի թանգարանում պահվող մի խաչ, որը կրում է հայոց ՆԺՆ (=966) թվականը[28]։ Սրանց պարունակած հիմնական միտքն այն է, որ այդ տարում Աշոտ Գ-ը զորքով գալիս է Մաղարթա վանքը տոնահանդեսի և որպես պարգև նվիրում է վանքին բազմաթիվ կալվածներ՝ Ոստան, Նախճավան գավառներում, ինչպես նաև Ատրպատականում։ Ինչքան էլ որ այս բոլորը հետագայում հարմարեցված վավերագրեր լիներ, այնուամենայնիվ դրանք կարող են հեռավոր և աղավաղված արձագանքը լինել ինչ որ պատմական իրադարձության, մանավանդ որ թվականը զարմանալիորեն համապատասխանում է վերահիշյալ անորոշության տարիներին։ Դժբախտաբար վստահելի աղբյուրների պակասը մեզ հնարավորություն չի տալիս պնդելու, որ Աշոտ Գ-ն իրոք որևէ գործունեություն ունեցավ Արաքսի հովտի հարավային մասում։

Անկախ այն բանից, թե ինչպիսի գործունեություն կամ ինչպիսի հաջողություն ունեցավ Աշոտ Գ-ն Արաքսի հովտի այս հատվածում, աղբյուրների վկայությունից երևում է, որ Դվինը դեռ նույնիսկ Սմբատ Բ-ի ժամանակ համարվում էր Սալար-

---

25 Miskawayh, II, 166-167.

26 Յ. Շահխաթունեանց, *Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ, էջմիածին, 1842, Բ., էջ 304—307։*

27 Ղ. Ալիշան, *Սիսական, էջ 516—522։*

28 Գ. Յովսեփեան, *Յիշատակարանք Ջեռագրաց, էջ 122։*

յաններին ենթակա քաղաք։ 966 թ., երբ Իբրահիմ Սալարյանը կարողացավ Ատրպատականում իշխանությանը լրիվ տիրանալ, նրան ըստ երևույթին ենթակա էին Դվինը՝ Հայաստանում և Պարտավն ու Գանձակը՝ Առանում։ Սակայն շուտով այս վերջին քաղաքները անջատվեցին Ատրպատականից։ Դվինում անհաջողություն կրելուց հետո Շադդադյանները 970 թ. տիրացան Գանձակին, իսկ որոշ ժամանակ հետո, գրավեցին նաև Պարտավը[29]։

Արաքսի հովտում Դվինի և Ատրպատականի միջև ընկած էր Գողթնի փոքր ամիրայությունը, որը Սաջյանների օրոք էր գոյացել։ Սմբատ Բ-ի օրոք այստեղ իշխում էր Աբու Դուլաֆը (Աբու Տլուի) հավանաբար այս ամիրայության հիմնադրի ցեղից։ Նրա մասին առաջին անգամ հիշում է Ասողիկը 982 թ. դեպքերի տակ, երբ Կարսի տեր Մուշեղ Բագրատունին իր եղբորորդու Սմբատ թագավորի դեմ դրդեց Սալարյան Աբու-լ-Հայջային (զԱբլհաճայ Դելմաստանի, թոռն Սալարին, ամիրայ պարսիկ) Իբրահիմի որդուն։ Սա հարձակվեց և մեծ վնասներ հասցրեց Այրարատում. սակայն բախվելով Գողթնի ամիրայի հետ պարտվեց և գերի ընկավ։ Վերջինս նրա ձեռքից վերցրեց Դվինը և հավանաբար նաև Նախճավանը («զԴուին և զամենայն քաղաքս նորա»)։ Աբու-լ-Հայջան այս դեպքերից հետո ազատ արձակվելով իր ընտանիքի հետ թշվառ վիճակում թափառում էր Հայաստանում ու Վրաստանում և նույնիսկ դիմեց Բյուզանդիայի օգնության, բայց ոչինչ չստացավ[30]։ Այսպիսով, վերջ դրավ Սալարյանների իշխանությունը Դվինում, որը տևեց մոտավորապես չորս տասնամյակ։

3. ԱՐԱՔՍԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀՈՎԻՏՈՒ ԳԱԳԻԿ Ա-Ի ՕՐՈՔ

Գողթնի ամիրայությունը վերջին արաբական ծագմամբ իշխանական տունն էր Մեծ Հայքում։ Արաբական ծագումով ամիրայական տները, որոնք Հայաստանում հաստատվել էին Ը դարի վերջին քառորդում, մոտավորապես մեկ դար հետո

---

29 Minorsky, Studies (arab.), 11,

30 Ասողիկ, էջ 188—189։

սկսեցին աստիճանաբար անհետանալ։ Զուարիկները անհետացան Թ դարի վերջում, Ութմանիկները՝ Ժ դարի սկզբին։ Նրանցից մի քիչ հետո՝ Շայբանիները, իսկ Կայսիկները անհետ կորան այդ դարի երկրորդ կեսում։

Կարծվում է, որ Գողթնի ամիրա Աբու Դուլաֆը Շայբանի տնից էր[31]։ Գողթնի արաբ առաջին ամիրան հանդես եկավ հենց այն ժամանակ, երբ Աղձնիքի Շայբանիները քայքայվում էին և հավանական է, որ նրանցից մեկն ու մեկը եկած և հաստատված լիներ Արաքսի հովտում, բայց դժբախտաբար փաստերի պակասությունը մեզ հնարավորություն չի տալիս այս հարցը ճշտելու։

Վերջին Սալարյան Աբու-լ-Հայջայի նույթի ժամանակ Աբու Դուլաֆը բավական ուժեղ դիրք ուներ և համարձակ պայքարի էր դուրս եկել թե Ատրպատականի Սալարյանների, թե Վասպուրականի Արծրունիների դեմ։ Հայկական ՆԼԲ (983) թվին նա մի մեծ արշավանք կազմակերպեց Վասպուրականի Աշոտ Արծրունու դեմ[32], որին մասնակից դարձրեց նաև մահմեդական կամավոր զորքերը, որոնք հանուն հավատի կռվի էին գնում Բյուզանդիայի դեմ։ Ասողիկը նրանց կոչում է «խազիկք», որը արաբերեն «ղազի» բառից է գալիս (արշավող, ռազմիկ)[33]։ Արծրունյաց իշխաններ Դրիգորը և Տիգրան Մարզպանը ճվաշ գավառում հանկարծակիի գալով պարտվեցին։

Շուտով Ատրպատականում իշխանության գլուխ կանգնեցին քրդական ծագում ունեցող Ռավվադյանները։ 987 թ. Աբու-լ-Հայջա Ռավվադյանը (Աբլհաճ որդի Ռավվադ) հարյուր հազարանոց զորքով հարձակվեց Աբու Դուլաֆի վրա և գրավեց նրա կողմից նախկինում գրավված Սալարյան քաղաքները (զքաղաքսն Սալարին)[34]։ Այստեղ բացի Դվինից, որի մասին Ասողիկը հատուկ հիշում է, պետք է դնել նաև Նախճավանը։ Սակայն այս գրությունը շատ շուտով փոխվեց Աբու-լ-Հայջայի մահվամբ (989)[35], որից անմիջապես հետո Աբու Դուլաֆը

31 Minorsky, Studies 121.

32 Ասողիկ, էջ 189—190։

33 Markwart, Südarmenien 303.

34 Ասողիկ, էջ 198։

35 Ասողիկ, էջ 199—200։

կրկին տիրեց Դվինին և խաղաղության դաշինք կնքեց Հայոց Սմբատ Թագավորի հետ՝ Խաչիկ կաթողիկոսի միջնորդությամբ[36]։ Ասողիկը կատմնակի ակնարկով ասում է, որ Սմբատ Բ-ն այս դաշինքը չպահեց, այլ Աբու Դուլաֆի դեմ գրգռեց սալարյան մի ամիրայի, որի միջոցով գուցե ուզում էր ոչնչացնել Գողթնի ամիրային։ Նա նույնիսկ զորք տվեց նրան, սակայն իր եղբոր Գագիկի հակառակության պատճառով այս ձեռնարկը ձախողվեց։ Հայտնի չէ թե ինչ գրգռպատճառներ ուներ Սմբատի այս արարքը։ Համենայն դեպս Ասողիկն այն համարում է շար գործ և երդման դրժում, քանի որ ըստ նրան Աբուդուլաֆը մահմեդական լինելով հանդերձ պահեց իր խոստումը, իսկ քրիստոնյա թագավորը խոստմնադրուժ եղավ[37]։ Վերջինս բնականաբար ուզում էր իրեն ենթարկված տեսնել Դվինը, Նախճավանը և Գողթնը։

Այս բանը հաջողվեց նրա եղբորը և հաջորդին՝ Գագիկ Ա-ին։ Սա մեծապես ուժեղացրեց Բագրատունյաց թագավորությունը, իրեն ենթարկեց ամբողջ հյուսիսային Հայաստանը[38] և նորից վերականգնեց Շահան Շահի վտանգված հեղինակությունը։ Ինչպես տեսանք, նա համաձայն չէր Գողթնի ամիրայի դեմ իր նախորդի ձեռնարկած ծրագրին և իշխանության գլուխ գալուց հետո բավարարվեց այս ամիրայությունն իրեն ենթարկելով[39]։ Դժբախտաբար այս ամիրայական տունը չոչնչացվեց և դեռ հետագայում Հովհաննես Սմբատի օրոք մի ուրիշ Աբու Դուլաֆ նստում էր Նախճավանում։ Դվինը, Նախճավանն ու Գողթնը Հայոց թագավորության համար ռազմապիտակաև նշանակություն ունեին։ Օրինակ, Գագիկ Ա-ի մահվանից անմիջապես հետո, 1021 թ. երբ դելմիները հարձակվեցին, առաջին դիմադրությունը կազմակերպվեց հենց Նախճավանում[40]։ Ըստ երևույթին Գողթնն ու Նախճավանը մնացին Գողթնի ամիրաների ձեռքում, իսկ Դվինում Գագիկ Ա-ն մի նոր կառավարիչ նշանակեց, որը հայտնի է որպես Դավիթ Դվնացի։

36 Ասողիկ, էջ 200—201։

37 Նույն տեղում, էջ 254։

38 Նույն տեղում, էջ 256։

39 M. Canard, Dwin, Enc. de l' Islam, nouv. éd., I. 697.

40 Վարդան, էջ 131։

Սա մի առեղծվածային անձնավորություն է, որի նույնիսկ գոյության մասին կան հակառակ կարծիքներ։ Նրա մասին խոսող միակ պատմիչը Արիստակես Լաստիվերցին է, բայց նրա խոսքերն այնքան լակոնիկ են, որ հստակ ոչինչ չի հասկացվում։ Դավիթ Բ-ի Բյուզանդիայում գերի մնալու և դահիճ ղրկվելու առթիվ նա գրում է. «իսկ քաղաքացի գլխաւորքն որ նստէին յԱնի իբրև տեսին թէ արգելաւ Դաւիթ ի Յոյնս խորհեցան երբեմն ի Դաւիթ տալ զքաղաքն (երբեմն) ի Դունացին, քանզի քոյրն Դաւթի կին էր նորա, երբեմն ի Բագարատ թագաւորն Ափխազաց»[41]։ Նկատի ունենալով, որ այս պարբերության փակագծերի մեջ գրված «երբեմն»-ը որոշ ձեռագրերում կա, իսկ ուրիշների մեջ բացակայում է, երկու հակառակ կարծիքներ են գոյացել։ Ուսումնասիրողների մեծամասնությունը, դեռ սկսած Մ. Չամչյանից[42], այս հատվածի մեջ ավելորդ «երբեմն»-ը կարդում են, և այսպիսով, ստացվում է հետևյալը, որ Անիի մեծամեծները Բագրատունյաց գահը և Անի քաղաքը մատուցում էին տալ երեք հոգուց որևէ մեկին՝ Դավիթին (Անհողին), Դվնացուն (Աբու-լ-Ասուար) և կամ էլ Վրաց Բագարատ թագավորին։ Ի միջի այլոց այսպես է հասկացել նաև Լաստիվերցու ֆրանսերեն թարգմանիչը է. Պրյուդոմը, որը համարձակ կերպով «Դունացի» բառը թարգմանել է «l'émir de Tevin»[43], «Դվինի ամիրան» և դրա հիման վրա եվրոպացի ուսումնասիրողներն էլ այստեղ տեսել են տարբեր անձնավորություններ, մեկը՝ Դավիթ, մյուսը՝ Դվնացի[44]։

Սակայն սրան հակառակ կան ուսումնասիրողներ, որոնք ավելորդ «երբեմն»-ը դանց առնելով, այս հատվածը հետևյալ կերպ են հասկանում՝ քաղաքացի գլխավորները Անին առաջարկում են Դավիթ Դվնացուն և Բագարատ թագավորին։ Դավիթ Դվնացու գոյությանը կողմնակից են օրինակ, Ղ. Ալիշա-

41 Լաստիվերցի, էջ 62։

42 Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, Բ., էջ 932—933։

43 Histoire d' Arménie par Aristdages de Lasdiverde, trad. et accom. de notes par Ev. Prud'homme, Paris, 1864, p. 68-69.

44 R. Grousset, Histoire de l' Arménie, 578. Ս. Տ. Երեմյան. Լիպարիտ զորավարը և նրա նախորդները. «Մառի անվան կարինետի «Աշխատություններ», № 2, Երևան, 1947, էջ 130—131։

նը[45] և Հ. Աճառյանը[46]։ Մեր միջնադարյան մատենագրության մեջ երբեմն Բագրատունի թագավորների ցուցակի վերջում ավելացվում է ևս մի Դավիթ[47], որը հենց Լաստիվերտցու հիշած Դավիթն է։

Լաստիվերտցին վերոհիշյալ հատվածում «Դունայի» բառից հետո հիշյալ առաջարկը հիմնավորելու համար ավելացնում է «քանզի քույրն Դաւթի կին էր նորա»։ Նույն պատմիչը մի ուրիշ տեղում արդեն ասել էր, որ Աբու-լ-Ասուարը «էր փեսայ թագաւորին Հայոց Աշոտոյ»[48], այսինքն ամուսնացել էր Հովհաննես Սմբատի եղբոր Աշոտի դստեր հետ և, ինչպես կտեսնենք, իր որդուն տվեց պապի անունը՝ Աշոտ (արաբ. բնագրում՝ Աշութ)[49]։ Այս աղջիկը Դավիթ Անհողինի հորեղբոր թոռն էր և արդյո՞ք պատմիչն այս աղգականությունը կարող էր հիմք համարել նրան Դավթի հենց քույրը կոչելու համար։ Համենայն դեպս Լաստիվերտցին իր ամբողջ Պատմության մեջ ոչ մի տեղ Դավիթ Անհողինի անունը չի տալիս և միայն այս հատվածում խոսում է ինչ որ Դավիթի մասին։ Բացի սրանից, անհավատալի է թվում, որ Բագրատունիների ժառանգությունն առաջարկվեր Գագիկ Բ-ի թշնամի մի մահմեդական ամիրայի և այն էլ կամավոր կերպով։ Սրան հակառակ, եթե ընդունենք, որ հարկավոր է կարդալ Դավիթ Դվնացի, պետք է համաձայնվել, որ սրա քույրը Գագիկ Բ-ի կինն էր։ Համենայն դեպս, Լաստիվերտցու սույն վկայությունը դեռ բավական չէ լուծելու այս հարցը, որը շատ կարևոր է Դվին քաղաքի պատմության համար։

Գագիկ Ա-ն Դվինը, ինչպես նաև Նախճավանն ու Գողթնը իրեն ենթարկեց հավանաբար Ժ դարի վերջին տասնամյակում և մինչև իր մահը այստեղ որևէ արմատական փոփոխություն տեղի չունեցավ։ Բագրատունիների մղած երկարատև պայքարը Դվինի համար (Սմբատ Ա, Աշոտ Բ, մասամբ Աշոտ Շապուհ-

---

45 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 411—412։

46 Անձնանունների բառարան, Բ., էջ 34։

47 Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 482։

48 Լաստիվերտցի, էջ 96։

49 Minorsky, Studies (arab.) 16-17.

յան, Աշոտ Գ, մասամբ Սմբատ Բ և Գագիկ Ա) իր արտացոլումն է գտել հայ մատենագրության մեջ, ըստ որում Մովսես Խորենացուն վերագրվում է թե իր ժամանակին մարգարեացել է հետևյալը «Բագրատունիքդ թագաւորէք ի Դուին»[50]։

Գագիկ Ա-ի հաջողությանը նպաստեց Ատրպատականի Ռավվադյանների թուլությունը։ Նրանցից միայն առաջինի՝ Աբու-լ-Հայջայի ժամանակ էր, որ Ատրպատականը որոշ ապառնալիք էր ներկայացնում իր շրջապատի համար։ Վերջինս բացի նրանից, որ գրավեց Դվինը և թուլացրեց Գողթնի ամիրայությունը, մի արշավանք էլ ձեռնարկեց Վասպուրականի դեմ։ Հերի ամիրայի (որին Ասողիկը «Ալիորն Հերայ» է կոչում) որդին Ապահունյաց ամիրայի (Մրվանյան) մոտից վերադարձին Վասպուրականում ուզում էր դեղնցիկ հայ մանուկների փախցնել, բայց Սարգիս անունով մի հայ իշխան հարձակվեց նրա վրա, ազատեց երեխաներին և նրան էլ սպանեց։ Հերի ամիրան համարձակություն չունենալով անձամբ հարձակվելու Վասպուրականի վրա, դիմեց Ատրպատականի Աբու-լ-Հայջային, խոստանալով նրան տալ Հեր քաղաքը, միայն թե վերջինս լուծեր իր վրեժը։ Ռավվադյանը հսկայական բանակով եկավ արևմուտք, բայց դեռ հայկական սահմանը չանցած ճանապարհին մեռավ[51]։

Նրա որդին Մամլանը, երկու հարձակում ձեռնարկեց դեպի արևմուտք, բայց ինչպես կտեսնենք, երկուսն էլ շատ անհաջող վախճան ունեցան։

Հայ Բագրատունիների երկարատև պայքարը իրենց երկրի գլխավոր քաղաքի համար հիշեցնում է Վրաց Բագրատունիների մղած համանման պայքարը հանուն Տփղիսի ազատագրման։ Դվինի նման Տփղիսն էլ Սասանյան և արաբական տիրապետության ժամանակ օտար կառավարիչների նստավայրն էր։ Սակայն հենց Թ դարում Տփղիսում արդեն զոյացել

---

50 Մովսեսի Խորենացւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 284։ Մխիթար Այրիվանեցի. Պատմութիւն, Մոսկվա, 1860, էջ 56։ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 411։

51 Ասողիկ, էջ 199—200։

էր մի տեղական ամիրայություն, որի տերերը՝ Ջաֆարյան ամիրայական տունը[52] երկար ժամանակ ժառանգաբար տիրեցին քաղաքում: Ջաֆարյանների ամիրայությունը Տփղիսում մի այնպիսի ժառանգական ավատական իշխանություն էր, ինչպես օրինակ, Կայսիկների ամիրայությունը Մանազկերտում և այս տեսակետից նա տարբերվում էր Դվինի ամիրայությունից, որը արտաքին ուժի (Սարպատականի) կողմից ստեղծված մի հենարան էր Հայաստանի ներքին գործերին միջամտելու համար: Հետևաբար Դվինի ամիրայության վերացումը պահանջում էր կատաղի պայքար Սարպատականի Սաջյան, Սալարյան և այլ ամիրայական տների հետ:

Տփղիսի ամիրայությունը իր գոյությունը պարտական էր ավատական Վրաստանի ներքին երկպառակությունների: Օրինակ, Բագրատ Դ-ի օրոք (1027—1072), երբ վրացական հողերի միավորումը օրվա հարց էր Կլդեկարի էրիսթավի՝ Լիպարիտի կատաղի պայքարը Վրաց թագավորի դեմ փրկեց Տփղիսի ամիրաներին վերահաս վտանգից:

Փաստորեն նախասելջուկյան շրջանում երեք հարևան երկրներում էլ (Հայաստան, Վիրք և Աղվանք) հինավուրց մայրաքաղաքները մնացին մահմեդական ամիրաների ձեռքում: Հայ Բագրատունիները զրկված լինելով Դվինից, մի քանի մայրաքաղաք փոխելուց հետո, (Բագարան, Երազգավորս, Կարս) կանգ առան Անիում: Վրաց Բագրատունիները, նույնպես, չկարողանալով Տփղիսը նվաճել, նստավայր ընտրեցին Արտանուջը, Ուփլիս Ցիխեն և Քութայիսին, իսկ Աղվանից թագավորները, այնքան թույլ էին, որ ի վիճակի չէին նույնիսկ որևէ գործնական քայլի դիմելու՝ Պարտավի կրավման համար: Համենայն դեպս այս բոլորի մեջ ամենաբախտավորը դտնվեցին Վրաց Բագրատունիները, որոնք հետասելջուկյան շրջանում Դավիթ Դ Շինարարի օրոք (1122) վերջնականապես նվաճեցին Տփղիսը և վերածեցին Վրաստանի մշտական մայրաքաղաքի:

---

52 М. Лордкипанидзе, Из истории Тбилисского эмирата, (на груз. яз.) Мимомхилвели инст. ист. им. Джавахишвили,т. 11, 1951, стр,200-201 (резюме). *Ս. Տ. Երեմյան. Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, էջ 131—133։*

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՎԱՌՆԵՐԸ

Սմբատ Ա.-ի մահվանից (913) մինչև Կարնո քաղաքի գրավումը (949) Բյուզանդիան Հայաստանի արևմտյան գավառներում միայն ասպատակություններ էր սփռում առանց որևէ նվաճում կատարելու և փաստորեն այս կողմից նախկին արաբա-բյուզանդական սահմանը մնում էր գրեթե անփոփոխ[53] *և խախտվեց միայն Կարնո քաղաքի գրավմամբ։*

Երկրորդ անգամ այս սահմանը եւս մղվեց 966 թ., երբ Տարոնը միացվեց կայսրությանը։ Սա արդեն զուտ հայկական մի գավառ էր, որը միշտ էլ գտնվել էր հայ նախարարների իշխանության տակ։ Կոստանդին Ծիրանածինը Տարոնին նվիրված հատուկ ենթագլխի մեջ («Տարօն երկրի մասին»), որտեղ շարադրում է Տարոնի Բագրատունիների համառոտ պատմությունը, այս գավառի մասին խոսում է որպես սոսկ կայսրության մի մասի[54]*։ Այն նեղ դրությունը, որին մատնվել էին Տարոնի Բագրատունիները շրջապատված լինելով մի կողմից Շայրանիների և Համդանյանների, ինչպես նաև Կայսիկների կողմից, իսկ մյուս կողմից՝ Բյուզանդիայի կողմից, նրանց ստիպում էր լինել շրջահայաց և զգույշ, մանավանդ մահմեդական հարևանների հետ։ Այս քաղաքականությանը հետևող Տարոնի իշխան Գրիգորիկիոսը Ծիրանածնի կողմից սրակվում է՝ երկերեսանի դավաճան, որը կայսրությանը բարեկամ ձևանալով նրա բոլոր ռազմական գաղտնիքները հաղորդում էր արաբներին*[55]*։*

Սակայն Գրիգորիկիոսի հաջորդները արդեն չդիմանալով Համդանյանների և այլոց մշտական սպառնալիքին ամբողջովին ընկան Բյուզանդիայի գիրկը և կայսերական բանակում ծառայող բազմահազար հայ ռազմիկների հետ նրանք ևս մարտնչում էին արաբական ուժերի դեմ։ Նրանց վերջին իշ-

---

[53] Honigmann, Ostgrenze, 147.

[54] Const. Porph., De adm. imp., c. 45, p. 189-191. Adontz, Les Taronites Arménie et a Byzance, Byzantion, t, X, 1935, p, 540-542.

[55] Const. Porph., De adm. imp., c. 45, p. 189.

խան Աշոտի մահվամբ (966) Տարոնը վերածվեց բյուզանդական նահանգի[56]։

Սրանից հետո որոշ ժամանակ Կայսրությունը ավելի առաջ չգնաց Հայաստանում, քանի որ Տարոնի գրավմամբ նա մի հարմար կայան ևս ունեցավ խալիֆայության դեմ ուղղված պայքարի համար։ Օրինակ 972—973 թթ. Տարոնի ստրատեգը հարձակվեց Բաղեշի վրա։ Այսպիսի իրադրության մեջ Կայսրիկների կալվածները մնացին անորոշ վիճակում։ 967 թ. մահացել էր Սայֆ ալ-Դաուլան և նրա կալվածները անցել էին Մոսուլի ամիրա Աբու Տաղլիբին[57]։ Սակայն հայտնի չէ, թե այլ կալվածների հետ Կայսրիկների տիրույթները ևս նրան անցա՞ն, թե ոչ։ Մանազկերտ, Խլաթ, Արճեշ, Արծկե, Բերկրի քաղաքները հավանաբար գտնվում էին Կայսրիկների մնացորդների ձեռքում, որոնք արդեն ոչ մի ուժ չէին ներկայացնում։

Կայսրությունը թեև չգրավեց այս քաղաքները, այնուամենայնիվ այնտեղ արաբական ուժերի որևէ վերախմբավորում կանխելու համար մի ավերիչ արշավանք կազմակերպեց Մանազկերտի դեմ, որը Կարնո քաղաքից հետո ամենալավ ամրացված քաղաքն էր այս կողմերում։ Ըստ Ասողիկի[58], Նժէ (968) տարում Նիկեփոր կայսեր (որը հենց նույն տարում մի հզոր արշավանք էր գլխավորում դեպի Անտիոք) եղբորորդին վարդ Փոկասը պաշարեց Մանազկերտը և գրավելուց հետո հիմքից կործանեց նրա պարիսպները։ Ըստ Իբն ալ Ասիրի[59], այս հարձակումը տեղի ունեցավ 359 թ. (969—970), ուստի Ասողիկի հայտնած թվականը կարելի է մեկ տարով առաջ բերել։

Այս դեպքերը տեղի էին ունենում Աշոտ Գ-ի թագավորության ժամանակ և պարզ է, որ Կայսրիկների տիրույթների գրեթե անտեր վիճակը պետք էր հրապուրեր թե Բագրատունի, թե Արծրունի թագավորներին։ Ուռհայեցին ՆԸ (959) թվականի տակ հիշում է մի ընդհարում Հայոց զորքի և ոմն Համատունի

---

56 Ասողիկ, էջ 183։

57 Canard, Les Hamdanides et l' Arménie, 93.

58 Ասողիկ, էջ 183։

59 Ibn al-Athir, VIII, 445.

միջև, որը վերջացավ հայոց հաղթանակով («կոտորեցին զօրք Հայոց զՀամատուն զօրապետն Տաճկաց»)[60]։ Եթե նկատի ունենանք, որ հայկական աղբյուրները Համատուն անվան տակ ճանաչում են հենց Սայֆ ալ-Դաուլային, ապա այստեղ ևս գործ ունենք կամ նրա, կամ էլ Համդանյան որևէ զորավարի հետ։ Այս արշավանքը վկայում է, որ Աշոտ Գ-ն գործնական քայլերի էր դիմել դեպի Տուրուբերան տարածվելու համար։

Այս դեպքերից մի քանի տարի հետո 974 թ. Բյուզանդիայի նոր կայսր Հովհան Չմշկիկը, երբ մոտեցավ Հայաստանին, նրա դեմ դուրս եկավ Աշոտ Գ-ն, իր հետ ունենալով Հայաստանի բոլոր երևելի իշխաններին և կանգ առավ Հարք գավառում։ Կայսրը իր հերթին եկավ և կանգ առավ Տարոնի Այծյաց բերդի դիմաց[61], այսինքն ամեն մեկը կանգ առավ այն գավառում, որտեղ վերջանում էին իր տիրույթները։ Ինչպես երևում է, Կայսիկների տիրույթների հյուսիսային մասերը՝ Հարքը, Սերմանց լեռան շրջանը (Մարդպի) և այլն այս անորոշ իրադրության մեջ անցել էին Բագրատունիներին, որպես նրանց ենթակա գավառներ։

Կայսիկների քայքայումից ուղեցին օգտվել նաև Արծրունիները։ Ուռհայեցու խոսքերը ցույց են տալիս, որ պարտված Համդանյանների լծից ազատված Սասունը և Աղձնիքի որոշ մասերը ընդունել էին Արծրունիների գերիշխանությունը[62]։ Օրինակ, 972 թ. վերոհիշյալ դեպքերի ժամանակ Սասունի իշխանները («բուվանդակ ամենայն տունն Սասանու») Աշոտ Գ-ի շուրջն էին հավաքվել։ Նրանք նույնիսկ նեղում էին բյուզանդական զորքերին, որոնք կայսեր հետ կանգ էին առել Տարոնում («և յառաջին դիշերն բաղում նեղութիւն կրեաց զօրքն Հոռոմոց և հետևակ զօրացն Սասանու»)[63]։

Բացի Սասունից և Աղձնիքի որոշ մասերից, Արծրունիները ձգտում էին իրենց ենթարկել նաև Վանա լճի շուրջը գտնվող բոլոր քաղաքները՝ Բերկրի, Արճեշ, Մանազկերտ և Խլաթ։ Հայտնի չէ թե ի՞նչ հաջողություն ունեցան նրանք այս կողմե-

60 Ուռհայեցի, էջ 3։

61 Ուռհայեցի, էջ 18։

62 Markwart, Südarmenien, 464.

63 Ուռհայեցի, էջ 18։

բում։ Վիեննայում գտնվող մի ձեռագիր Հայսմավուրք տալիս է Սենեքերիմ Արծրունու կողմից Վասիլ Բ-ի հանձնած քաղաքների և գավառների մի ցուցակ (ուշ շրջանում շարադրված), որը նպատակահարմար է ամբողջությամբ մեջ բերել[64]։ «Եւ Սենեքերիմ եւ կայսերն զկալուածս իւր. բերդս ՀԲ, գիւղս ԳՌ և Ն լայնանիստ և արդիւնաւոր եւ քաղաքս ԺԵ։ Ջելաթ և զՓողց, զՀիզան և զԿեցան, զՈստան և զՎան, զԲերկրի եւ զԱրճէշ, զԱրծկէ և զՄանծկերտ և զբոլոր կողմանս Խլաթայ ի լերանցն Սասնոյ մինչև ի Սևան և ի Նըւան ի Սալամաստ եւ ի Ջղմաթ որ է Ջուլամերկ։ Զայս ամենայն եւ Սենեքերիմ ի կայսրն Վասիլ զսեպհական թէմս եւ զվիճակս իւր»[65]։ Ըստ երևույթին Արծրունիներն այս քաղաքները ոչ թե վերցրել էին իրենց նախկին տերերի ձեռքից, այլ պարզապես բավարարվել էին նրանց կողմից Վասպուրականի ընդհանուր գերիշխանության ճանաչմամբ։ Այս բոլորից բացի Սասունն էլ, ըստ երևույթին միացվեց Արծրունիների իշխանությանը։ Իբն ալ-Ազրակը հիշում է Սասունի իշխան Սենեքերիմին[66] (Սինհարիբ), որը Յ. Մարկվարտը կարծում է որ Վասպուրականի Սենեքերիմ Արծրունին[67] պետք է լինի։

Մատավորապես այս շրջանին է վերաբերում ԺԱ դարի բյուզանդացի պատմիչ Կեկավմենոսի տեղեկությունը Արևմտյան Հայաստանի ինչ որ քաղաքի մասին, որը Վ. Վասիլևսկին՝ շփոթում է Դվինի հետ։ Բնագրում գրված է «Տիվինիոն» ամրոց, որը չի կարելի նույնացնել «Տիվինոնի» (Դվին) հետ։ Սակայն այս երկուսի նույնացման դեմ խոսող ամենակարևոր փաստարկը կարելի է համարել հենց հիշյալ ամրոց-քաղաքի նկարագրությունը։ Ըստ Կեկավմենոսի[68] սա մի ամրացված վայր էր Մեծ Հայքում, տեղավորված մի սարահարթում, իսկ

---

64 *Է. Հոնիգմանը բոլորովին անհիմն է համարում այս ցուցակը։ Տե՛ս* Honigmann, Ostgrenze, 169.

65 *Ցուցակ հայերէն ձեռագրաց, Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 100։*

66 H. F Amedroz, The Marwanid dynasty at Mayyafariqin in the Xth and XIth centuries A. D. p. 138-139.

67 Markwart, Südarmenien, 464 Васильевский, Советы и рассказы византийского боярина XI в., 26-29.

68 Cecaumeni Strategicon, Petropoli, 1896, p. 26-27.

Նրանից վերև կար մի ուրիշ հարթ տարածություն, որը ամրոցի բնակիչներն օգտագործում էին տարբեր կարիքների համար։ Տիվինիոնն ամեն կողմից ուներ ժայռեր և վիհեր, իսկ թշնամին կարող էր նրան մերձենալ նեղ ճանապարհով, որը տանում էր մինչև դարպասը։

Կարիք չկա նույնիսկ ապացուցելու, որ այս լեռնային ամրոցը ոչ մի կապ չունի Արարատյան հովտում, հարթ տարածության վրա սփռված և բազմամարդ Դվին քաղաքի հետ։ Ըստ Ս. Երեմյանի, հիշյալ վայրը Դվնիքն է Բարձր Հայքի Դերջան և Եկեղյաց գավառների միջև, որն ընկած էր Հայաստանի և Կայսրության սահմանի վրա։ Պատմիչի վկայությամբ, իր պապը, որն այդ շրջանի իշխաններից էր եղել, այս Դվնիքի տիրոջից[69] խաբեությամբ խլել էր ամրոցը, դաշնակցելով կայսրությանը թշնամի մի ամիրայի հետ։

Կեկավմենոսի իշխանական տունը հետագայում մերձեցավ հայ իշխանական տների հետ։ 1047 թ. նրանցից մեկը, որին Լաստիվերտցին Կամենաս է կոչում, Անիում կառավարիչ է դառնում[70]։ ԺԲ դարում նրանց հետնորդները ապրում էին Զորրորդ Հայքի Դեղիք գավառի Սավուկ ամրոցում և նրանցից մեկը՝ Շահանշահը (որդի Գրիգորի որդի Կատակալոնի որդի Կամենի) ամուսնացավ Սասունի Վիրեն իշխանի դստեր Կատայի հետ[71]։

---

69 Cecaumeni Strategicon, 26.

70 Լաստիվերտցի, էջ 63։

71 Դ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., 313։

ԳԼՈՒԽ Ե

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական (մակեդոնական) կայսերական տան իշխանության ընթացքում Բյուզանդիայի դեպի Հայաստան կատարած առաջխաղացումը կարելի է բաժանել մի քանի շրջանների։

1. Սմբատ Ա.-ի մահվանից մինչև 949 թ. բյուզանդական զորքերը ասպատակում էին Հայոց թագավորությունից պոկված արևմտյան գավառները (Կարին, Կայսիկների տիրույթները և այլն) նույնիսկ հարկատու դարձնելով Կայսիկներին։

2. Կարնո քաղաքի գրավումից (949) մինչև 979 թ. կայսրությունն արդեն սկսում է աստիճանաբար նվաճել հայկական գավառները։ Կարնո քաղաքից և Բասենից հետո 966 թ. Տարոնը միացվեց Բյուզանդիային, իսկ 969 թ. գրավվեց (ժամանակավորապես) և ավերվեց Մանազկերտը։

3. Վասիլ Բ կայսեր իշխանության (976—1025) սկզբնական շրջանում ներքին երկպառակությունների և այլ պատճառներով Կայսրությունը ժամանակավորապես հրաժարվեց դեպի Հայաստան առաջ խաղալուց և միայն Տարոնն իր ձեռքում պահելով, Կարինն ու Կայսիկների տիրույթներից շատերը պարգևեց Տայքի Կյուրապաղատ Դավիթ Բագրատունուն, իսկ որոշ հարավային գավառներ մնացին Մրվանյաններին։

4. Վերջապես, 1001 թ. Վասիլ Բ-ն սկիզբ դրեց Հայաստանի նվաճմանը, որը վերջացավ Հայոց թագավորության կործանմամբ։

Վասիլ (Բասիլիոս) Բ-ի իշխանության սկզբում թվում էր թե արդեն հասել է ժամանակը, որ Կայսրությունը նվաճի Կայսիկների բոլոր նախկին կալվածները, սակայն Վարդ Սկլերոսի ապստամբությունը առիթ տվեց մի քանի տարի տևող ներքին պայքարի։ Փոքր Ասիայում մղվող այս կատաղի դատեմարտում (976—979) Վասիլ կայսրը օգնության կանչեց Տայքի Կյուրապաղատ Դավթին, նրան խոստանալով տալ՝ «զԽաղտոյատիճ Կղէսուրան, զՁորմայրի և զԿարին, զԲասեան և զՍևուկ բերդակ որ է Մարդաղի, զՀարք և Ապահունիս»[1]։ Այսպիսով, Հայաստանի արևմտյան դավառների ամբողջ հյուսիսային կեսն անցավ Տայքի Կյուրապաղատին, Կայսիկների կալվածների հարավային կեսն անցավ այդ ժամանակ նոր իշխանության տիրացած Բատ ամիրային, իսկ Կայսրությունն[2] իր ձեռքում պահում էր միայն Տարոնը։ Այս ժամանակավոր նահանջը պայմանավորված էր մի կողմից Բյուզանդիայի ներքին դժվարություններով, մյուս կողմից՝ հայ և վրաց Բագրատունիների ուժեղացմամբ։ Գագիկ Ա-ն և Տայքի Դավիթ Կյուրապաղատը ոչ միայն ուժեղացրել էին իրենց երկրների ռազմական կարողությունը, այլև իրար հետ լավ հարաբերությունների մեջ լինելով, ի վիճակի էին հրոշ պատկառանք ազդելու քրիստոնյա Կայսրությանը և մահմեդական Արևելքին։

Վասիլի հաղթանակից հետո, Դավիթ Կյուրապաղատն իրոք նվաճեց իրեն խոստացված դավառները, բացի Ապահունիքից, որի նվաճումը որոշ ժամանակով հետաձգվեց Մրվանյանների առաջխաղացման պատճառով։

1. ՔՈՒՐԴ ՏԱՐՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կայսիկների տոհմը վերջին քիչ թե շատ ուժեղ արաբական ամիրայական տունն էր Մեծ Հայքում, որի վերացումից (964) հետո մնաց միայն Գողթնի արաբական մանր ամիրայությունը։ Այսպիսով, Ժ դարի երկրորդ կեսում դուտ արաբ տարրը դրեթե բոլորովին չքացավ Մեծ Հայքում, բայց նրա փոխարեն

---

1 Ասողիկ, էջ 192։

2 Honigmann, Ostgrenze, 147-152.

մի նոր տարր հաստատվեց Հայկական լեռնաշխարհում՝ քրդերը, որոնք բոլորովին այլ պայմաններում եկան, քան արաբները։ Արաբները մտան Հայաստան որպես նվաճողներ, իսկ արաբական ցեղերը եկան հաստատվեցին Հայկական լեռնաշխարհում որպես այդ նվաճողների հենարանը։

Քրդերի մուտքը Հայաստան շատ անաղմուկ էր, ուստի դժվար է գտնել դրա սկիզբը։ Մարերը, որոնք քրդերին խիստ մոտ են ցեղային տեսակետով, հավանաբար դեռ Արտաշեսյաններից առաջ էին հաստատվել Արաքսի հովտում և ժամանակի ընթացքում հայացել էին պահպանելով վիշապաղուն անունը[3]։ Մեծ Հայքի հարավային Կորճայք նահանգի գավառները՝ Կորդուք և Տմորիք միաձուլվում են հենց այն լեռնաշխարհի հետ, որը հետագայում Քուրդիստան անունն ստացավ։ Դժբախտաբար մինչև Թ դարը այս ժողովրդի պատմությունը ծածկված է անորոշության թանձր քողով[4]։ Թ դարում նկատվում են նրանց աշխուժացման առաջին նշանները։

Ժ դարում իրանական տարրերի աշխուժացման ընդհանուր հասանքի հետ Ջազիրայում, Ջիբալում, Ատրպատականում, Աղվանքում և նույնիսկ Մեծ Հայքում երևան եկան քրդական ամիրայական տներ։ Ջազիրան և Ջիբալը (Իրանի և Իրաքի միջև) քրդական ցեղերով բնակեցված հիմնական նահանգներն էին և արաբական նվաճումից անմիջապես հետո այս նահանգներում հաստատվել էին հյուսիսային խմբին պատկանող արաբական ցեղեր, որոնք քրդական ցեղերի հետ պայքարի մեջ էին իշխանության համար, իսկ քրդական ցեղերը ոչ մի նահանգում զուտ քրդական կենտրոնացած իշխանություն չկարողացան ստեղծել։

Միակ քրդական իշխանությունը, որն այս կամ այն չափով քրդական հողի վրա էր առաջացել Հասանվեյհների իշխանությունն էր Ջիբալում։ Ժ դարի դեռ առաջին կեսում Ատրպատականում հայտնի դարձավ Դայսամ իբն Իբրահիմը, իսկ դարի վերջում այնտեղ իշխանություն ձեռք բերեցին Ռավվադյանները։

Քուրդ ռազմիկները Ժ դարում Հայաստանում հանդես եկան

3 Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 84։

4 Minorsky· Kurds' Enc. of Isl. II, 1134-1135.

որպես վարձկան զորք։ Այն ճեղքվածքը, որ բաց էին արել արաբական ամիրայությունները Հայաստանում, նպաստեց քրդերի դյուրին ներթափանցմանը։ Արաբ ամիրայական տները չկարողացան պահպանել իրենց գոյությունը, բայց նրանց տիրույթները ոչ թե վերանվաճվեցին երկրի բնիկ տերերի կողմից, այլ անցան քրդական տարրի ձեռքը, որը իսլամացած և մասամբ արաբացած էր։ Երկրի բնիկ իշխանները վերանվաճման որոշ փորձեր կատարեցին, բայց մեծ հաջողություն չունեցան, քանի որ Հայոց թագավորության մեջ չկար կենտրոնական ուժեղ իշխանություն։

Քրդական ծագում ունեցող ամիրայական տները (Մրվանյաններ, Շադդադյաններ), որոնք գոյություն ունեին վերջին Բագրատունիների օրոք, վերջին հաշվով արաբական ամիրայություններ էին։ Նրանց օգտագործած գրական լեզուն արաբերենն էր թե արձանագրություններում, թե այլ նպատակների համար։ Բացի դրանից արաբ տարրի մնացորդները նրանց մոտ ծառայության էին մտնում որպես վարչական գործերի կառավարիչներ։ Հայաստանի հողի վրա քուրդն ու արաբը ինչպես նաև այլ մահմեդական տարրերը հանդես էին գալիս որպես միաձույլ ամբողջություն ընդհանուր ճակատ կազմելով երկրի բնիկ հայ աղգաբնակչության դեմ։ Եվ հայերենում «տաճիկ» արդեն նշանակում էր ո՛չ միայն «արաբ», այլև «մահմեդական» առհասարակ։

951—954 թթ. Դվինում ժամանակավոր կերպով իշխող Մուհամմադ իբն Շադդադը մեզ ծանոթ առաջին քուրդ ամիրան էր Մեծ Հայքում, սակայն նրա իշխանությունը շատ կարճատև եղավ։ Քուրդ ռազմիկները հաճախ էին ծառայում որպես վարձկան հայ թագավորների և իշխանների զորքերի մեջ և հենց այդպիսին էր, օրինակ, Մուհամմադի որդիներից ավագը՝ Լաշքարին[5]։

Բագրատունյաց զորքի մեջ վարձկան ռազմիկներից բաղկացած ջոկատների գոյության մասին վկայում է Մունաջջիմ Բաշին։ Ըստ նրա Աշոտ Գ Ողորմածի զորքի մեջ կային լեզգիներ, որոնք 953 թ. մասնակցեցին Դվինի վրա նրա կատարած արշավանքին. նույն պատմական աղբյուրը վկայում է, որ

[5] Minorsky, Studies (arab), 7.

բացի կովկասյան լեռնականներից հայկական զորքերի մեջ կռվում էին նաև քուրդ վարձկաններ։ Սյունյաց իշխաններից մեկի մոտ որպես վարձկան ծառայում էր վերոհիշյալ Լաշքարին, իսկ Դրասխանակերտցին գեռ վկայում է, որ Ժ դարի սկզբին Սյունյաց իշխանների զորքի մեջ կռվում էին նաև այլ վաշկատուն տարրեր։

Մեծ Հայքի առաջին գավառը, որը բնակեցվեց քրդերով Կորդուքն էր, որտեղ հավանաբար վաղուց ապրում էր այս իրանական ժողովուրդը։ Ժ դարում քրդերը Կորդուքից տարածվում են դեպի Աղձնիք՝ Խլզանի և Սղերդի կողմերը, ապա անցնում Արզն և Նփրկերտ, իսկ հետագայում Բաղեշի վրայով մտնում Վանա լճի ավազանը։

2. ՄՐՎԱՆՅԱՆՆԵՐԸ

Մրվանյանները (արաբական արտասանությամբ՝ Մարուան) հիմնեցին առաջին քրդական քիչ թե շատ մեծ ամիրայությունը Մեծ Հայքի հարավ-արևմտյան մասում։ Այս իշխանության հիմնադիրն էր Բաաը (Բադ ալ-Քուրդի, կամ Աբու Աբդ Ալլահ ալ-Հուսայն իբն Դոստակ ալ-Զարբուխտի) մի հովիվ, որն զբաղվում էր ավազակային ասպատակություններով և ծագմամբ Խլզանի շրջանից էր։ Ըստ Իբն ալ-Ասիրի, առաջին քաղաքը, որ նա գրավեց, Արճեշն էր[6], ուստի պետք է ենթադրել, որ սկզբում նրա գործունեության ասպարեզը Վանա լճի շրջակայքի հայկական գավառներն էին։ Ասողիկի վկայությունից երևում է[7], որ հենց նույն ժամանակ նա նվաճել էր նաև Խլաթն ու Նփրկերտը, ինչպես նաև Մանազկերտը։ Վերջինիս գրավումը տեղի էր ունեցել Վասիլ կայսեր և Վարդ Սկլերոսի միջև սկիզբ առած կռվի ժամանակ։

Բաաի հիմնական տիրույթներն էին Աղձնիքը և Վանա լճի հյուսիսային և արևմտյան կողմի գավառները։ 983 թ. նա նվաճեց Ամիդը, Մծբինը և Մոսուլը, բայց Բաղդադի վրա կատարած արշավանքը ձախորդությամբ վերջացավ և նա կորցրեց Մոսուլը, իսկ Համդանյանների մնացորդները, որոնք գեռ ապրում էին Նփրկերտում և Ամիդում, հեռացան ու հաստատվեցին

[6] Ibn al-Athir, IX, 26.

[7] Ասողիկ, էջ 192։

Հալեպում։ Բատն իր ավազակաբարո ռազմիկներից բաղկացած խմբերով ասպատակեց նույնիսկ բյուզանդացիների ձեռքում գտնվող Տարոնը, կողոպտեց, կոտորեց ամբողջ գավառը, ավարի առավ Մուշ քաղաքը և քահանաներին սրախողխող արեց ս. Փրկիչ եկեղեցում[8]։

Այս դեպքերը կատարվում էին այն ժամանակ, երբ Վասիլ կայսեր կողմից պայքարող Վարդ Փոկասը, որը հաղթելով Վարդ Սկլերոսին, ստիպել էր նրան փախչել արաբների մոտ և մնալ այնտեղ որպես կալանավոր, տիրապետող դիրք ուներ Փոքր Ասիայում։ Սակայն հենց որ վերջինս իրեն կայսր հռչակեց, արաբները բաց թողեցին Վարդ Սկլերոսին, տալով նրան քրիստոնյա ռազմադերիներից բաղկացած մի զորք[9]։ Վարդ Սկլերոսին օժանդակեց նաև Բատը, ինչպես նաև նրա իշխանության տակ եղած արաբ ցեղերը («Բատն Ապահունեաց և Նիբրկերաց ամիրայն և վայրաբնակ Արապիկքն որ ընդ նմա»)[10]։ Սկլերոսին հենց սկզբից կողմնակից էին Տարոնի իշխանի որդիները՝ Գրիգորն ու Բագարատը, ինչպես նաև Մոկաց Զափրանիկ իշխանը։ Սակայն Սկլերոսը պարտվեց Վարդ Փոկասից, որն իր հերթին երկու տարի հետո (989) սպանվեց Կ. Պոլսի մոտ և այսպիսով, վերջացավ քաղաքացիական պատերազմը Բյուզանդիայում։ Ասողիկը վկայում է, որ Սկլերոսի հետ կար նաև «տաճիկ զորք» և երբ նա պարտվեց, այս զորքը իր վերադարձին ասպատակեց և կերեվարեց Հարսվից մինչև Ապահունիք («զերի տարին ի Հարաւոյ մինչև յԱպահունիս»)[11], այսինքն՝ Բատի տիրույթները։

990 թվականին Բատը փորձեց վերադարձնել Մոսուլը, բայց Համդանյանները հաղթեցին և սպանեցին նրան, Թուր Աբդինի մոտ։

Բատի մահվամբ նրա իշխանությունը որոշ չափով քայքայվեց։ Դա մի անկայուն և անկազմակերպ ամիրայություն էր հիմնված Բատի և իր մարդկանց մարտունակության վրա։ Նրան օգնեց նաև ժամանակը, քանի որ, Բագրատունի թագա-

8 Ասողիկ, էջ 192։

9 Marwanids, Enc, of Islam, III, 309-310.

10 Ասողիկ, էջ 247։

11 Նույն տեղում, էջ 248։

վորները թուլացել էին, Համդանյանները քայքայվել էին, Կայսիկները՝ ոչնչացել, իսկ Բյուզանդիան խիստ զբաղված էր։ Նրա մահվանից անմիջապես հետո Դավիթ Կյուրապաղատը, որն իրեն տրված պարգևական կալվածներից չէր կարողացել գրավել Մանազկերտը, անմիջապես հարձակման անցավ։ Մանազկերտը պաշարվեց ու գրավվեց և բոլոր արաբ բնակիչները քաղաքից հանվեցին և քաղաքը բնակեցվեց հայերով ու վրացիներով (գուցե վրացադավան հայերով)։ Սա արդեն մի ցույց էր մահմեդական աշխարհի դեմ (ամենայն Պարսիկք և Տաճիկք), որի դեսպանները եկան զգուշացնելու Կյուրապաղատին և պատերազմով սպառնացին նրան[12]։ Մահմեդականների միացյալ զորքը Ատրպատականի Ռավվադյան Մամլանի գլխավորությամբ եկավ և կանգ առավ Ծաղկոտն գավառի Կոստեանք գյուղում։ Սակայն նրանց դեմ դուրս եկավ հայ-վրացական ուժեղ դաշնակցությունը, որի մեջ էին Հայոց Գագիկ Ա-ն, Կարսի՝ Աբասը, Տայքի՝ Դավիթ Կյուրապաղատն ու Վրաց Բագրատը և կանգ առան Վաղարշակերտ քաղաքում։ Վախենալով ուժեղ հակահարվածից Մամլանը նահանջեց։

Բատին հաջորդեց նրա քրոջորդին Աբու-Ալի Հասան իբն Մրվանը[13]։ Սրա օրոք Աղձնիքի արաբ ազգաբնակչության և քուրդ Մրվանյանների միջև հակասությունը սրվեց։ Նփրկերտում ժողովուրդը Համդանյաններին կողմնակից էր և առիթը չէր փախցնում շուկաներում սպանելու հանդիպած քրդին։ Նփրկերտի կառավարիչ Մամմայի ծրագրով հետևյալը կիրառվեց արաբ ազդաբնակչության դեմ. 384 թ. (994—995) Աղհա տոնի օրը, երբ ժողովուրդը քաղաքից դուրս էր եկել, քաղաքի դռները փակվեցին և անցանկալի տարրերի կոտորածից հետո ներս թողեցին միայն որոշ մարդկանց։ Ասողիկը գոհունակությամբ է հիշում այս դեպքը ավելացնելով, որ դրանից հետո Նփրկերտում մնացին միայն հայեր և ասորիներ։

Արաբ տարրի դեմ ձեռնարկված այս միջոցառումները թանկ նստեցին քուրդ ամիրային, որն սպանվեց Ամիդում՝ բնակիչների ձեռքով։

12 Ասողիկ, էջ 266։

13 Amedroz, The Marwanid dynasty at Mayyafariqin, Journ. of Royal. Asiat. Soc., 1903, p. 124-126.

Նրան հաջորդեց եղբայրը Մումահհիդ ալ-Դաուլա Աբու Մանսուր Սաիդը։ Ամիրը սկզբում չհնազանդվեց նրան, բայց հետո քաղաքի կառավարիչը համաձայնվեց հարկատու լինել։

995 թ. Բյուզանդիայի իշխանության տակ գտնվող Զորբորդ Հայքի գավառներում տեղի ունեցավ ուժեղ երկրաշարժ, որի հետևանքով առանձնապես տուժեցին Հաշտյանք, Խորձյանք, Ծոփք, Բալու և Պաղնատուն գավառները[14]։

Քաջալերված իր հաջողություններով Դավիթ Կյուրապաղատը 998 թ. ձմռանը հարձակվեց նաև Խլաթի վրա և եթե չլիներ կույր մոլեռանդությունը և վիրավորական վերաբերմունքը հայերի նկատմամբ, հավանաբար նրա արշավանքը հաջող վախճան կունենար։ Վրացիք Խլաթի պարսպից դուրս գտնվող հայկական եպիսկոպոսարանն ու ս. Խաչ և ս. Գամադիել ուխտատեղիները գոմի և իշևանի էին վերածել, ապշեցնելով նույնիսկ Խլաթի արաբներին, որոնց զարմացական հարցին վրացիք պատասխանում են, թե հայկական եկեղեցին և ձեր մզկիթը միևնույն է մեզ համար։ Այս բանը խիստ վնասեց հայ-վրացական միացյալ պայքարին և թուլացրեց Կյուրապաղատի բանակը, որը բաղկացած էր հենց այդ երկու ժողովուրդներից։ Պաշարումը տևեց մինչև 998 թ. գարունը, երբ վրացիք խիստ կոտորած կրեցին և մեծ զոհեր տալուց հետո նահանջեցին[15]։

Պարտությունից անմիջապես հետո նույն տարում Ատրպատականի Մամլանը մահմեդական օգնական զորքով միասին նորից եկավ Հայաստան Հերի վրայով և կանգ առավ Ապահունիք գավառում։ Նա սպառնում էր քար ու քանդ անել Տայքը և վերականգնել Կարնո քաղաքը, քանի որ դա մահմեդական աշխարհի ինքնապաշտպանության ամրոցներից մեկն էր։ Դարձյալ հայ-վրացական դաշնակցությունն էր, որ արժանի հակահարված տվեց այս արշավանքին և Մամլանի գլխավորած զորքը սաստիկ ջարդ կրելով փախավ Արճեշ[16]։

Գագիկ Ա-ի և Դավիթ Կյուրապաղատի հայ-վրացական դաշնակցությունը ի վիճակի էր վերջ տալու Հայաստանի ամի-

14 Ասողիկ, էջ 263։

15 Նույն տեղում, էջ 268—269։

16 Նույն տեղում, էջ 269—274։

շայությունների գոյությանը, սակայն երկու երկրների միջև թշնամական մանր հաշիվները և մյուս կողմից մանավանդ Բյուզանդիայի միջամտությունը այս բոլորը օդը ցնդեցրին։

3. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

1000 թվականին մեռավ Դավիթ Կյուրապաղատը։ Դեռ Վարդ Փոկասի ապստամբության ժամանակ, երբ Դավիթը սրա դաշնակիցն էր, Վասիլ Բ-ի վրեժխնդրությունից ազատվելու համար իր կալվածները կտակել էր Բյուզանդիային, քանի որ ինքը զավակ չուներ։ Մյուս տարում Վասիլ Բ-ն անձամբ եկավ Հայաստան տիրանալու Դավիթ Կյուրապաղատի տիրություններին[17] և ընդհանրապես Հայոց և Վրաց Բագրատունիների հպատակությունը ապահովելու նպատակով։

Սա արդեն Բյուզանդիայի դեպի Հայաստանի խորքերը առաջխաղացման վճռական շրջանն էր։ Մինչ այդ կայսրությունը լոկ հանդուրժում էր Հայաստանի և Վրաստանի անկախությունը, բայց չէր ընդունում որպես հաստատուն գոյավիճակ։ Իրեն ամենաշոր զգացող Վասիլ Բ-ն համարում էր, որ եկել է ժամանակը ոչնչացնելու այդ երկու երկրների ինքնուրույն պետականությունը։ Բյուզանդական զորքերի Արևելքում ձեռք բերած հաջողություններին նպաստեցին առաջին հերթին հենց հայերը այն աստիճանի, որ մահմեդականները հույներին հավասար հայերին էլ համարում էին Իսլամի թշնամի։ Իբն Միսքավայհը վկայում է, որ 965—966 թթ. մահմեդականների մի մեծ խումբ, որը հավաքվել էր Ռեյում (Թեհրան) բողոքում էր և ասում «Չկա ավելի մեծ պատուհաս քան հոռոմների և հայերի ցանկությունը մեր հողերին տիրելու»[18]։ Կայսրության ծառայող մի խումբ արկածախնդիր հայ ռազմիկների պատճառով Հայաստանը համարվում էր Արևելքի թշնամի, այն դեպքում, երբ Հայոց թագավորությունը չէր կարողանում նույնիսկ իր հողերը պաշտպանել մահմեդական հարևանների

---

[17] G. Schlumberger, L'Epopée byzantine, 415-416.
[18] Ibn Miskawayh, II, 223.

մշտական հարձակումներից։ Կայսրությանը ծառայող հայ ռազմիկները նախապատրաստեցին Հայոց թագավորության կործանումը մի կողմից պղտորելով հայոց և հարևան մահմեդականների հարաբերությունները, մյուս կողմից՝ օգնելով Բյուզանդիայի առաջխաղացմանը։ Հայ ռազմիկները ոչ միայն մեծ թվով ծառայում էին կայսերական բանակում, այլև Տարոնի և այլ կողմերից հայկական ամբողջ գնդեր կռվում էին արաբների դեմ՝ որպես կայսերական զորքի բաղկացուցիչ մասերը։ Ասողիկը վկայում է, որ Սկլերոսի հետ կռվում էր նաև «հնձելագունդ զօրն Հայոց որ ընդ Յունաց թագաւորութեամբն»[19]։ Այս էր պատճառը, որ արաբ պատմիչները շատ անգամ բյուզանդական բանակի հարձակումները և ավերածությունները վերագրում էին ուղղակի հայերին։ Իբն ալ-Ասիրը հիջրի 352 (963) տարվա դեպքերի մեջ հիշում է, որ «հայերի մի մեծ խումբ» հարձակվեց Ռուհա (Եդեսիա) քաղաքի վրա ասպատակեց, կերեց և մեծ կողոպուտով վերադարձավ[20]։

1001 թ. Վասիլ Բ-ն Մելիտինեի վրայով մտավ Հայաստանի Հանձիթ և Բալու գավառները, ապա կանգ առավ Արշամունիքի Երիզա քաղաքում։ Այստեղ նրան ընդառաջ եկավ Մրվանյան Աբու Մանսուրը («ամիրայն Նփրկերտոյ») և կայսրը նրան տվեց մագիստրոսի աստիճանը և նույնիսկ հրամայեց Զորբորդ Հայքի և Տարոնի զորքերին օգնել նրան, երբ որ կարիք լիներ[21]։

Արշամունիքից կայսրը գնաց Հավճիչ, ուր նրան ընդառաջ եկավ Վրաց Բագարատ թագավորը իր հոր՝ Դուրգենի հետ։ Այստեղ էին նաև Դավիթ Կյուրապաղատի իշխաններն ու ազատները, որոնք դժգոհ էին Դավթի պարգևական կալվածների խլման պատճառով և ահա երկու զինվորների վեճի հետևանքով կռիվ բռնկվեց կայսեր զորքի ու տայեցիների միջև, որը վերջիններիս համար տխուր վախճան ունեցավ։ Վասիլին ընդառաջ եկան նաև Վանանդի Աբասը և Վասպուրականի Սենեքերիմը պարգևներ ընդունելով նրանից[22]։

19 Ասողիկ, էջ 191։

20 Ibn al-Athir, VIII, 407.

21 Ասողիկ, էջ 276։

22 Ասողիկ, էջ 277։

Վերոհիշյալ բոլոր թագավորներն ու իշխանները, որոնք եկել էին Վասիլի մոտ արդեն համարվում էին կայսրությանը ենթակա և հպատակ իշխաններ։ Կայսրը հույս ունենալով, որ այս վճռակին կենթարկվի նաև Հայոց թագավոր Գագիկ Ա-ն շարունակեց իր երթը Հարքի վրայով և կանգ առավ Բագրևանդի Վաղարշակերտ քաղաքում։ Սակայն հպարտ Գագիկը իրեն համար նվաստացուցիչ համարելով Վասիլին ներկայանալը («Այլ նա իբրև փոքրութիւն համարեալ զգնալն իւր առ նա...»)[23] բոլորովին արհամարհեց իր թագավորության հարավային սահմաններում սպասող բյուզանդական կայսրին, որը Կարինի վրայով ձեռնունայն վերադարձավ Կ. Պոլիս։

Վասիլ Բ-ն կայսրությանը ուղղակի միացրեց Դավիթ Կյուրապաղատի ստացած բոլոր պարգևական կալվածները, այսինքն՝ Կարինը, Բասենը, Հարքը, Ապահունիքը, Մարդաղին, Խաղտոյտռիճը և Ջորմայրին, որոնց բոլորի վրա նա նշանակեց իր ուղած կառավարիչներին և պաշտոնյաներին («և կացուցանէ ի վերայ նոցա զործակալս և զատաւորս և վերակացուս...»)[24]։ Այսպիսով, կայսրությանը միացվեցին այն արևմտյան գավառները, որոնք Սմբատ Ա-ի մահվամբ մեկուսացվել էին Հայոց թագավորությունից։ Մրվանյանների իշխանությունը սահմանափակվեց հիմնականում Աղձնիքի մեջ, իսկ Վանա լճի շրջակա քաղաքներն աստիճանաբար դուրս ընկան նրանց իշխանությունից։ Բերկրի և Արճեշ քաղաքներում մնացին մահմեդական իշխողներ, Վասպուրականի Արծրունիներին ենթակա վիճակում. Մրվանյանների ձեռքում մնաց միայն խլաթը։

1018 թ. Վասիլ Բ-ն Հայաստան ուղարկեց Նիկոմիդիացի մի իշխանի[25], որը նոր գրավված գավառներում մարդահարկ անելով վերստին կառուցել տվեց Կարնո քաղաքը՝ որպես կարևոր ռազմական, թեև նրա կողքին արդեն ծաղկել էր մի նոր վաճառաշահ քաղաք՝ Արծնը, որը սակայն զուրկ էր պարիսպներից։ Կայսրության համար կարևոր ռազմական կայան էր նաև Մանազկերտը։ Բյուզանդիայի նորանվաճ հայկական գա-

23 Ասողիկ, էջ 277—278։

24 Լաստիվերտցի, էջ 24։

25 Նույն տեղում, էջ 28։

վանքերում տեղավորվում էին հույները[26], իսկ հայությունը նույնիսկ գաղթեցվում էր Հայաստանից և բնակեցվում Մակեդոնիայում[27]։

1021—1022 թթ. Վասիլ Բ-ն նորից եկավ Հայաստան շարունակելու իր կիսատ մնացած գործը։ Գագիկ Ա-ն մահացել էր, իսկ Վասպուրականը ի վիճակի չէր դիմադրելու սելջուկյան հրոսակների ասպատակություններին։ Գագիկ Ա-ի հաջորդ Հովհաննես-Սմբատը իր թագավորությունը կայսրությանը կտակեց, իսկ Արծրունի Սենեքերիմը իր ձեռքով ամբողջ Վասպուրականը հանձնել էր Վասիլին։ Բյուզանդական նահանգի վերածվեց ամբողջ արևմտյան և հարավային Հայաստանը, իսկ անկախ վիճակում մնաց Անիի Բագրատունյաց թագավորությունը և Վանանդի, Տաշիր-Զորագետի ու Սյունիքի մանր թագավորությունները։

Կայսրությունը Վասպուրականում չստեղծեց կայուն իշխանություն։ Պաշտոնապես ստեղծվել էր Բասպրականիա կամ Ասպրականիա կոչված կատեպանությունը[28], որն ընդգրկում էր բացի բուն Վասպուրականի թագավորությունից, նաև Վանա լճի հյուսիսային մասերը (Մանազկերտ, Արճեշ, Բերկրի)։ Սենեքերիմ Արծրունին հեռանալով Վասպուրականից իր հետ տարել էր մի սովոր դաղթականություն, որի մեծ մասը ռազմիկ տարրն էր։ Այս ժամանակ Վասիլ Բ-ն արշավանք ձեռնարկեց Վասպուրականի անհանգիստ հարևան և նրա երբեմնի հպատակ Հերի ամիրայության դեմ։ Նրա հեծյալները պաշարեցին քաղաքը, կտրատեցին պարիսպի տակի ծառերը, որպեսզի բարաններով քար ու քանդ անեն ամրությունները, որը տեսնելով քաղաքի ամիրան խնդրեց խնայել, խոստանալով հարկատու դառնալ կայսրությանը։ Եվ մինչ կայսրը մտածմունքի մեջ էր տեսնելով ամբողջ Ատրպատականի սարսափահար վիճակը, հանկարծ սկսեցին հորդառատ անձրևներ, իրար հաջորդեցին քամիները, կարկուտն ու ձյունը։ Ձիերն ու ջորիները անշարժության մատնվեցին, իսկ զինվորների ձեռքերն ու ոտքերը սառեցին։ Մի ողբերգական նահանջ սկսվեց դեպի

---

26 Markwart, Südarmenien, 470.

27 Ասողիկ, էջ 201։

28 R. Grousset, Histoire de l'Arménie, 553-556.

Վասպուրական, որն ավելի ծանր վիճակ ստացավ Հերի քաղաքացիների գրոհի պատճառով։ Վասիլն իր զորքի մնացորդներով նահանջեց ուղիղ Կ. Պոլիս[29]։

Վասպուրականի կատեպան Նիկեփոր Կոմնենոսը մոտավորապես 1023—1026 թթ. գրավեց Արճեշը և վերջ դրեց այնտեղ մահմեդականների իշխանությանը։ Մի ուրիշ կատեպան՝ Կոստանդին Կավասիլասը մեծ զորքի գլուխն անցած հիջրի 425 թ. (1033—1034) պաշարեց Բերկրին[30], որտեղ իշխում էր Ատրպատականի Վահսուդան իբն Մամլանի քրոջ որդին Աբուլ-Հայջա իբն Ռաբիը ալ-Դաուլան։ Ըստ իբն ալ-Ասիրի[31], վերջինիս քեռին՝ Վահսուդանը նրա հետ վատ հարաբերությունների մեջ լինելով գրգռեց հույներին, որ Բերկրիի վրա հարձակվեն։ Ուռհայեցին[32] այս հարձակումը նկարագրում է որպես հայերի կողմից կատարված ռազմական գործողություն հայ իշխան Գանձիի հրամանատարության տակ։ Ըստ երևույթին վերջինս մասնակից էր այս արշավանքին և հենց ինքն էլ նշանակվեց Բերկրիի կառավարիչ, որը գրեթե նվաճված էր։ Քաղաքի ամիրան, որին հայ պատմիչները խորիկ անունն են տալիս, թեև միջնաբերդում պաշարված էր, այնուամենայնիվ կարողացավ օգնության կանչել Ատրպատականի այլազգիներին այն ժամանակ, երբ հույն և հայ զորքը Գանձիի գլխավորությամբ թողնելով միջնաբերդի գրավումը գնացել էր Արճակ դարմանի և այլ պիտույքների համար։ Վրա հասավ մահմեդական օգնական զորքը և կոտորեց քաղաքում մնացած հունական հեծյալ գունդը, որը գինարբուքով էր տարված։ Սպանվեց նաև Գանձի իշխանը, իսկ հույն զորքը թողեց ու փախավ։ Այնուամենայնիվ այնքան հույներ էին գերվել, որ խորիկը հրամայեց բոլորին մորթել, արյունը լցնել մի փոսի մեջ և ինքն էլ մեջը մտավ ու լողացավ, որպես սրտի հովացում։ Ըստ հույն պատմիչ Սկիլիցեսի[33], Բերկրին գրավվեց Ալիմ կոչված մի մահմեդականի դավաճանության հետևանքով, որը հույս ուներ, այսպիսով,

29 Լաստիվերտցի, էջ 38—39։

30 R. Grousset, Histoire de L' Arménie, 562-564.

31 Ibn al-Athir, IX, 297.

32 Ուռհայեցի, էջ 74—75։

33 Grousset, Histoire de l 'Arménie, 563-564.

դառնալ քաղաքի կառավարիչ ու պատրիկ և երբ իր հույսերն ի դերև ելան, նա օգնական զորք հրավիրեց ու գրավելով քաղաքը կոտորեց բոլոր հույներին։

Համենայն դեպս մյուս տարի 1034—1035 թթ. Միքայել Դ (1034—1041) կայսրը նորից զորք ուղարկեց (պաշարման գործիքներով զինված) որը պաշարեց քաղաքը և սկսել էր պարիսպները քանդել, երբ քաղաքը հանձնվեց, պայմանով, որ բնակչության կյանքը խնայվի։ Այս պայմանով էլ Բերկրին վերջնականապես նվաճվեց։ Ըստ Սկիլիցեսի նվաճումը կատարվեց Նիկետաս Պեգոնիտես պատրիկի ձեռքով[34]։

Կարնո քաղաք (ինչպես նաև Ավնիկ և Մասատոն), Մանազկերտ և Արճեշ քաղաքներից հետո, Բերկրին, ամիրաների ձեռքում գտնվող վերջին քաղաքն էր Հայաստանում, որ խլեցին հույները։ Մրվանյանների ձեռքում ընդմիշտ մնացին Խլաթ, ինչպես նաև Բաղեշ և Նփրկերտ քաղաքները։

Ամիրաների ձեռքից խլված հայկական քաղաքներում Կայսրությունը դուրս մղված արաբ բնակչության փոխարեն ձրդատում էր լցնել հույն տարրը։ Հ. Մարկվարտը հիշում է, որ ԺԱ դարի բյուզանդական ձեռագրերում կա հույն ուղղափառ եկեղեցու թեմերի մի ցուցակ, որի մեջ հիշվում են Բերկրիի, Արճեշի, Ամյուկի և Արծկեի թեմերը[35]։ Հույն եկեղեցին առիթը չէր փախցնում չքացած արաբ մահմեդական տարրի ստեղծած դատարկությունից օգտվելու և ստեղծելու քաղկեդոնականության տարածման կայաններ։

Կայսրությանը միացված այս հայկական գավառներում անպակաս էին մահմեդականների ասպատակությունները։ Իբն ալ-Ասիրի վկայությամբ[36] հիջրի 420 թ. (1029) օղուզները Ատրպատականի կողմից ներխուժեցին Հայաստան, կողոպտեցին, գերեվարեցին և մեծ ավարով ետ դարձան։ Ասպատակություններով էին զբաղված նաև Մրվանյանները, որոնցից մեկը հիջրի 423 թ. (1031—1032) մոտավորապես տասը հազար հոգով Միջագետքի կողմից մտավ Հայաստան, ասպատա-

---

[34] Grousset, Histoire de l' Arménie, 564. Լաստիվերտցի, էջ 48—49։

[35] Markwart, Südarmenien 470.

[36] Ibn al-Athir, IX, 270.

կեց, գերեվարեց և ապա նորից վերադարձավ[37]։ Բնականաբար հայ իշխանները անգործ չէին կարող նստել այս անտերնչության ժամանակ։ Վասպուրականում մնացած Արծրունիների մնացորդները, ինչպես նաև Սասունի իշխանները իրենց ձեռքն են վերցնում հայրենի գավառների պաշտպանության գործը։ Ուռհայեցին[38] հաղորդում է մի վիպական պատմվածք, որը շատ հատկանշական է այս շրջանի համար։ Մոտավորապես 1042 թ. Հերի կողմից այլադիները ասպատակեցին Վասպուրականի Բռնավան գավառը, որի իշխանն էր Ծերունի Խաչիկը (հավանաբար Արծրունի)։ Սա դուրս եկավ պաշտպանելու իր գավառը, բայց սպանվեց իր որդու Իշխանիկի հետ։ Այդ ժամանակ տուն վերադարձան Բյուզանդիայում գտնվող նրա երկու որդիները՝ Հասանն ու Ճնհղուկը և վրեժ լուծեցին իրենց հորն ու եղբորը սպանողներից։ Այստեղ հիշված է նաև մի քուրդ ռայիս, որը սահմանակից էր Բռնավանին։ Սա ցույց է տալիս, որ Ժ—ԺԱ դարերում քուրդ տարրը ներթափանցել էր ոչ միայն Աղձնիքի կողմից, այլև Անձևացիքի ուղղությամբ դեպի հյուսիս։

Ինքնապաշտպանության մի նմանօրինակ դեպք է պատմում նաև Իբն ալ-Ասիրը հիջրի 427 թ. (1035—1036) տակ[39]։ Խորասանից, Թաբարիստանից և Ատրպատականից եկող մահմեդական «ուխտավորների» մի մեծ խումբ ինչ որ նպատակներով Հանապարհը թեքել էր և անցել Հայաստանի միջով։ Վանի և Ոստանի վրայով անցնելուց հետո հայերն ընդվզեցին նրանց դեմ։ Օգնության հասան Սասունցիք (ալ-Սանասինա), որոնք ըստ Իբն ալ-Ասիրի Խլաթի տիրոջ (Մրվանյան ամիրայի) հետ խաղաղության ուխտ ունեին։ Սասունցիք պայմանավորվելով այդ շրջանների (հավանաբար Վասպուրականի կամ Վանա լճի հյուսիսային և արևմտյան գավառների) հայերի հետ հարձակվեցին, կոտորեցին, գերեցին ու կողոպտեցին այս «ուխտավորներին»։ Մրվանյան Նասր ալ-Դաուլան զորք հավաքեց Սասունի վրա։ հարձակվելու նպատակով, բայց շուտով համա-

---

37 Ibn al-Athir, IX, 290.

38 Ուռհայեցի, էջ 90—92։

39 Ibn al-Athir, IX, 306.

ձայնություն կայացավ մահմեդական գնդիներին և նրանցից կողոպտված իրերը հանձնելու պայմանով։ Նասր ալ-Դաուլան չհարձակվեց Սասունի վրա, որովհետև ինչպես արաբ պատմիչն է նշում, Սասունն ուներ անառիկ ամրոցներ և բազմաթիվ կիրճեր։

Հայաստանի հարավային գավառների միջով 1046 թ. ճանապարհորդեց պարսիկ նշանավոր մատենագիր Նասիրի Խոսրովը, որն անցավ Թավրիզից Մարանդ ապա խոյի վրայով մտավ Հայաստան, եղավ Վանում, Ռստանում, Բերկրիում և վերջապես հասավ Խլաթ, որը նա համարում է հայերի և մահմեդականների սահմանագլուխը[40] այն իմաստով, որ մահմեդական տարրը մնացել էր միայն Խլաթում և նրանից հարավ՝ Բաղեշում, իսկ Հայաստանի մյուս մասերը, որոնց միջով նա անցել էր, ինչպես երևում է, գրեթե չունեին մահմեդական աղդաբնակչություն։ Խլաթում, ասում է նա, երեք լեզվով են խոսում՝ արաբերեն, պարսկերեն և հայերեն. ըստ նրա, հենց այս պատճառով էլ քաղաքը կոչվել է Ախլաթ (խառնուրդ)։

Մրվանյան Աբու Մանսուրի սպանությունից հետո իշխանությունը ժառանգել էր եղբայրը՝ Աբու Նասր Ահմադը, որը Նասր ալ-Դաուլա էր կոչվում։ Սրա իշխանության հիսուն տարիները (1011/1012—1061/1062) անցան համեմատաբար խաղաղ և բարգավաճ վիճակում[41]։ Նա օղուլների հարձակումները հաջողությամբ նա մղեց, երբեմն կաշառքով, երբեմն էլ դիվանագիտությամբ։ Նրա մոտ ծառայում էին հայտնի վեզիրներ, ինչպես օրինակ՝ Աբու Նասր Ահմադ իբն Յուսուֆ ալ-Մանազին (Մանազկերտցի)[42], որը միևնույն ժամանակ բանաստեղծ էր, և ուրիշներ։ Նասր ալ-Դաուլայի բարքերի մասին գաղափար կազմելու համար նշենք մի երևույթ, որի մասին մատենագիրները շատ են սիրում խոսել։ Նա իր կանանոցում ուներ երեք հարյուր վաթսուն հարճ, այնպես որ ամեն օր մի նոր

---

40 Նասիրի Խոսրով, Սաֆարնամե (պարսկերեն), 8։

41 Նրանից հասել են բազմաթիվ արձանագրություններ։ Տես՝ Max. van Berchem, Arabischen Inschriften aus Armenien und Diyarbekr, Mat. zur. Alt. Gesch. Arm. und Mes., Berlin, 1907.

42 Ibn Challican, I, 77.

հարճի հետ էր դիշերում[43]։ Սա ամուսնացավ նաև իր եղբայրի հետ, որն ըստ արաբ պատմիչի Սենեքերիմ (Սինհարիբ) իշխանի դուստրն էր[44]։ Նասիրի խոսքովը վկայում է, որ Նասր ալ-Դաուլան նստում էր խլաթում և հարյուր տարեկանից ավելի էր։ Ուներ բազմաթիվ որդիներ, որոնց ամեն մեկին որոշ գավառի կառավարիչ էր նշանակել[45]։ Ըստ երևույթին Մրվանյան ամիրան այդ ժամանակ (1046) սոսկ ժամանակավոր կերպով էր գտնվում խլաթում, քանի որ այդ ամիրայական տան նստավայրը Նփրկերան էր։

Այս տարիներին Վասպուրականի, Տարոնի և Վերին Միջագետքի կառավարիչ էր նշանակվել (1045—1058) Վասակ Ապուղամրենցի (Պահլավունի) որդին Գրիգորը, որն իր հայրենի գավառը և Բջնի ամրոցը Բյուզանդիային հանձնելուց հետո գնացել էր Բյուզանդիա և ստացել մագիստրոս տիտղոսը։ Մրվանյանները նրան ենթակա էին համարվում։ Ինչպես երևում է Գրիգոր Մագիստրոսի թղթերից, նա իր իշխանության տարիներին ավելի շատ զբաղված էր գրական գործունեությամբ, քան քաղաքական կամ ռազմական գործերով։ Մեզ հասել են նրա նամակները Սասունի Թոռնիկ Մամիկոնյանին, Սասունի Խնատի վանքի Սամվել վանահոր, Գրիգոր Հնձացուն (Կարնո գավառում), Մոկաց և Մանազկերտի Գրիգոր եպիսկոպոսին, ոմն Անանիա վարդապետին (Ծոփքում) և այլն, որոնց մեջ քաղաքականության մասին չի ակնարկում[46]։

Աբու Նասրի օրոք սկսվեց սելջուկների ավերիչ արշավանքը դեպի Հայաստան։ Նասր ալ-Դաուլան կարողացավ սիրաշահել նրանց և իր գոյությունը պահպանել, սակայն նրա հաջորդների՝ Նիզամ ալ-Դաուլա Նասրի (ամրացավ Նփրկերտում) և Սաիդի (Ամիդում) օրոք սելջուկյան հրոսակների ներխուժումն այլ կերպարանք ստացավ հակառակ այն բանին, որ

---

43 Sheref-Nameh ou Histoire des kourdes, I,20. Ibn Challican, I, 99.

44 H. F. Amedroz, The Marwanid dynasty at Mayyafariqin, 138; Markwart, Südarmenien, 464.

45 Նասիրի խոսքով, Սաֆարնամե (պարսկերեն), էջ 13։

46 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910 (թուղթ Լ—Լե, ԼԶ—ԼԹ, ԽԱ—ԽԲ, ՀԴ—ՀԷ և այլն)։

Նասրը անմիջապես հպատակություն հայանեց Մանազկերտի ճակատամարտում (1071) վճռական հաղթանակ տարած Ալփ Արսլանին։ 1090 թ. նրան հաջորդեց որդին՝ Մանսուրը, որը ազատվելով բոլոր կալվածներից, մեռավ 1095—1096 թթ. և Մրվանյանների տիրույթները սելջուկյան տարրերի ձեռքն անցան[47]։

4. ՇԱԴԴԱԴՅԱՆՆԵՐԸ ԴՎԻՆՈՒՄ

Մուհամմադ իբն Շադդադը Դվինում 954 թ. կրած պարտությունից հետո ապաստանեց Վասպուրական՝ Արծրունիների մոտ, ապա դիմեց արևմուտք և փորձեց Բյուզանդիայի օգնությամբ վերադրավել Դվինը, սակայն ոչ մի արդյունքի չհասնելով վերադարձավ Վասպուրական, որտեղ թողել էր իր տոհմը և մեռավ 955 թ.[48]։

Նրա երեք որդիներից ավագը՝ Լաշքարին, գնաց ծառայելու Դիր Զորի (ակներևորեն Վայոց Զորի աղավաղված ձևը) Հայազգի տիրոջ մոտ, իբրև վարձկան ռազմիկ։ Որպես տոհմի ավագը նրա մոտ էին գտնվում տոհմի մյուս անդամները, սակայն միշտ եղբայրը՝ Ֆադլը գնաց ծառայելու Համդանյաններին։ Նա սերտորեն կապված էր Սայֆ ալ-Դաուլայի անհանդիստ ծառայի՝ Նաջայի հետ, և հենց որ վերջինս ապըստամբվեց և ձերբակալվեց, ինքն էլ թողեց և նորից վերադարձավ իր եղբայրների՝ Լաշքարիի և Մարզուբանի մոտ։ Համդանյանների հակաքրիստոնեական (հակաբյուզանդական) տրամադրություններն այնքան ուժեղ էին ազդել այս արկածախնդրի վրա, որ բացեիբաց հայտարարեց թե ինքը չի կարող ծառայել կռապաշտներին (այսինքն քրիստոնյա հայերին), այլ ուզում է ծառայել միայն մահմեդական երկրում։ Մի քանի ընկերակիցների հետ նա դիմեց դեպի Սալարյանների տիրույթները և հասավ Գանձակ։ Տարբեր միջոցներով իր մոտ բերել տալով տոհմի մյուս անդամներին, նա կարողացավ տիրել Գանձակին, սպանելով նրա ամիրային, իսկ Գանձակի ամիրա դարձավ ավագության կարգով՝ Լաշքարին (971)։

[47] Marwanids, Enc. of Isl., III, 310.
[48] Minorsky, Studies (arab.), 6.

Շադդադյանները տեղավորվեցին Գանձակում, եւ մղելով նույնիսկ Սալարյան Իբրահիմի ուղարկած զորքը։ Լաշքարիին հաջորդեց Մարզուբանը, որին սպանեց եղբայրը՝ Ֆադլը և իշխանությունը վերցրեց իր ձեռքը (985—1031)[49]։

Այս դեպքերը, որոնց միակ մանրամասն աղբյուրը Մունաջջիմ Բաշիի աշխատությունն է, Վարդանի մոտ արտահայտվել են ամփոփ ձևով. «Ի սոյն աւուրս կին մի Մամ անուն դայ ի Պարսից երեք որդւովք ի գաւառն Փառիսոսոյ առ Գրիգոր Փառաւոր իշխանն։ Եւ տան որդիքն պատանդ զմայրն և առնուն զՇօթս և զբերդն Շամիրամայ և անտի ընտանեցնալ ընդ Ալազիզ ամիրայն Գանձակայ սպանին զնա և առին զԳանձակ և տիրեցին. երէց որդին Պարզուան մեռաւ կարճ և իշխանացաւ ի տեղին Լէշքարի միւս եղբայրն և առնու զՊարտաւ և զՇամքոր ի սալարէն։ Եւ եղբայր նորա կրտսեր որ Փաղլուն կոչիւր սպաննալ զնա յորսին առնու զիշխանութիւնն»[50]։

Բանի դեռ ողջ էր Գագիկ Ա-ն, Շադդադյանների համար անհնարին էր իրենց հարևան հայկական դավառների նկատմամբ որևէ ոտնձգություն ցուցաբերել։ Այս շրջանում Ֆադլը շարժվելով հասավ դրավեց Պարտավը[51], իսկ Փառիսոսի թագավորությունը բաժանվեց Գագիկի և Ֆադլի միջև[52]։

Գագիկ Ա-ի մահվամբ դրությունն արմատարար փոխվեց։ Նրա երկու որդիները՝ Հովհաննես Սմբատը և Աշոտը երկար վեճից հետո իրենց միջև բաժանեցին առանց այդ էլ փոքրացած Անիի թագավորությունը։ Աշոտն ստացավ արևելյան մասը, որի մեջ պետք է մտներ նաև Դվինը, սակայն դեռ երկու եղբայրների միջև դահակալական վեճի ժամանակ՝ 1020-ական թվականներին այս քաղաքն արդեն անցել էր Շադդադյան Աբու-լ-Ասուարին։

Հովհաննես Սմբատի դահակալման հենց հաջորդ տարում (1021) հարավային կողմից Հայաստանը հարձակման ենթարկվեց դայլամցի (դելմիկ) հրոսակների կողմից[53]։ Վարդա-

---

49 Minorsky, Studies (arab.) 10-11.

50 Վարդան, էջ 134։

51 Minorsky, Studies (arab.), II.

52 Ասողիկ, էջ 283։

53 Ուռհայեցի, էջ 11։

նը, որն այս արշավանքը սխալմամբ վերագրում է սելջուկ Տուղրիլ բեկին, վկայում է[54], որ առաջին դիմադրությունը ցուցաբերեց Նախճավանում Լիպարիտը իր հինգ հազար հեծյալներով։ Հարձակվող զորքը այս դիմադրությունը հաղթահարելուց հետո եկավ Դվին, գրավեց քաղաքը և այնտեղից շարժվեց դեպի հյուսիս («եւ ի գալ Թուրքին ի Դուին և սիւնեալ ասպատակս...»)։ Դվինից եկող ասպատակներին ուժեղ դիմադրություն ցույց տվեց Բջնիում նստող Վասակ Պահլավունին, որը թեև սպանվեց, այնուամենայնիվ նրա զորքը կարողացավ ետ շպրտել հրոսակներին։ Ուռհայեցին, որը մանրամասն և վիպական ձևով է նկարագրում Բջնիի ճակատամարտը, վկայում է, որ կորուստները խիստ շատ էին[55]։

Դայլամցիների նպատակն էր, ինչպես երևում է, լոկ ասպատակել և վերադառնալ, ուստի Դվինում չմնացին։ Սակայն նրանց արշավանքի անմիջական հետևանքն այն եղավ, որ Արաքսի հովտի Դվինից Դողթն ձգվող հատվածը նորից կորցրվեց Հայոց թագավորությունից։ Դողթան գավառն ու Նախճավանը դարձյալ մնացին ինքնիշխան իրենց նախկին տերերի ձեռքում, իսկ Դվինն ըստ երևույթին մնաց անտերունչ վիճակում, որից օգտվեցին Շադդադյանները։ Ինչպես տեսանք, առաջին Շադդադյանը՝ Մուհամմադը, Դվինին տիրացավ այն ժամանակ, երբ քաղաքն անիշխանության սպառնալիքի առջև էր կանգնած։ Հավանաբար նման դրությունից օգտվեց նաև նրա թոռը՝ Աբու-լ-Ասվարը և այս պատճառով է, որ նրա անազնիվ նվաճումը պատմական աղբյուրների մեջ արձագանք չի գտել։ Ոչ միայն հայ պատմիչները, այլև նույնիսկ Շադդադյանների վրա այնքան հիացող մահմեդական պատմիչը ռազմական նվաճման խոսք չի անում։ Վարդանը Ֆադլի մասին լակոնիկ կերպով ասում է. «տիրէր և Դունայ»[56], սակայն ավելի ճիշտ կլիներ ենթադրել, որ քաղաքի մեծամեծները (մանավանդ մահմեդականները) ինքնակամ կերպով հանձնվեցին

54 Վարդան, էջ 131։ Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը Թուրք-Թաթարական արշավանքների ժամանակ, Երևան, 1922, էջ 28։

55 Ուռհայեցի, էջ 14։

56 Վարդան, էջ 135։

Շադդադյաններին, քաղաքն անիշխանությունից փրկելու համար։

Մունաջջիմ Բաշիի մոտ հետևյալն է ասվում Աբու-լ-Ասվարի մահվան առթիվ. «նրա իշխանության տեղությունն էր ամբողջ Առանի և Հայաստանի մի մասի վրա 18 տարի, իսկ դրանից առաջ երկրի որոշ մասի վրա՝ 28 տարի։ Նրա ամբողջ իշխանությունը 46 տարի տևեց»[57]։ Պարզ է, որ հիշյալ 28 տարիները վերաբերում են Դվինի վրա նրա իշխանությանը, իսկ եթե նկատի ունենանք, որ Աբու-լ-Ասվարը մահացել է հիջրի 459 տարվա զու-լ-Հիջջա ամսին (1067 թ. նոյեմբեր), ուստի 46 տարի նա գնալով կստանանք մոտավորապես 1022 թ., որպես Դվինում նրա իշխանության սկիզբը։ Սա շատ հավանական է, քանի որ դրանից մոտավորապես մեկ տարի առաջ, Դվինը դայլամցիների արշավանքի հետևանքով ծանր դրության էր մատնվել։

Համենայն դեպս կասկածից վեր է, որ Դվինն ընկավ Շադդադյանների ձեռքը, դեռ այն ժամանակ, երբ Հովհաննես Սմբատի և Աշոտի վեճը չէր վերջացել։ Աշոտի կողմնակից իշխաններից Ապիրատը[58] վախենալով Հովհաննես Սմբատից, որը Անիի և նրա շրջակայքի թագավոր էր ճանաչվել, իր ընտանիքի և տասներկու հազար հեծյալ զորքի հետ դիմեց Դվին «Ապուսուար»-ի մոտ։ Սա նախ մեծարեց Ապիրատին, բայց հետո վախենալով, որ նրա հեղինակությունը կարող էր աճել և Շադդադյաններին վնասել, նենգությամբ սպանեց։ Ապիրատի զորավարը՝ Սարեն նրա զորքը և ընտանիքը հասցրեց Անի։

Աբու-լ-Ասվարին անմիջապես սահմանակից էր արքաեղբայր Աշոտը, որն իշխում էր Սևանա լճի ավազանում, Արագածոտն, Նիգ, Կոտայք և այլ գավառներում[59]։ Ապիրատի հետ պատահած դեպքը Դվինի ամիրայի՝ Աշոտին հպատակ լինելու հավանականության դեմ է խոսում։ Լաստիվերտցին վկայում

---

57 Minorsky, Studies (arab.), 16.

58 Ուռհայեցի, էջ 10—11։

59 Լաստիվերտցին այսպես է նկարագրում նրա տիրույթները՝ իսկ Աշոտոյ զներբին կողմն աշխարհին՝ որ հայի ի վերայ Պարսից և Վրաց (էջ 27)։

է[60], որ Դվինի ամիրան փնտայացել էր Աշոտին, ըստ երևույթին հայկական գավառներում իր իշխանությունն ամրապնդելու նպատակով։

Շադդադյանների ներկայությունը Դվինում է՛լ ավելի ամրապնդեց Նախճավանի և Գողթնի տերերի դիրքերը։ 1030-ական թթ. Նախճավանում նստում էր Աբու Դուլաֆը[61], որը հավանաբար նախկին Աբու Դուլաֆի (Աբու Տլուփի) շառավիղն էր։ Սրա մոտ որոշ ժամանակ ապրեց պարսիկ բանաստեղծ ներբողագիր Կաթրանը, որն իր գործունեությունն սկսել էր Գանձակի Շադդադյանների մոտ։

Ուռհայեցին վկայում է[62], որ ուժեղ բախում տեղի ունեցավ Աբու-լ-Ասվարի և Դավիթ Անհողինի միջև, ընդ որում պատերազմն սկսվեց նրանով, որ Դվինի ամիրան հարձակվեց և գրավեց Դավթի գավառները։ Ակներևորեն այս հարձակումը կատարվեց ոչ թե Դվինի կողմից դեպի հյուսիս, այլ Գանձակի վրայով՝ դեպի արևմուտք։ Հենց հարձակվող զորքի ուժեղ թափը վկայում է այն մասին, որ Շադդադյանների միացյալ ուժերն էին հարձակվում։ Այս բազմամարդ զորքի դեմ Դավիթն ստիպված եղավ կռվելու մի մեծ դաշնակցություն։ Նրան օգնական զորք ուղարկեցին Հայոց թագավոր Հովհաննես Սմբատը և Կապանի թագավորը։ Դավիթը դիմեց նաև Աղվանից կաթողիկոսին և հենց սա էլ մի փաստաթուղթ է ապացուցելու համար, որ հարձակումը գալիս էր Գանձակի կողմերից։ Դավիթը գրեց Աղվանից կաթողիկոսին, որ հավաքի եպիսկոպոսներին («Արդ ժողովեա զամենայն եպիսկոպոսունդ Հայոց աշխարհիդ որ յԱղուանսն են...»)։ Աղվանից Հովսեփ կաթողիկոսն իրոք եկավ երկու հարյուր եպիսկոպոսների հետ ոգևորելու մարտիկներին։ Օգնական զորք ուղարկեց նաև վրաց թագավորը (Ատիխազաց թագաւորն) և այսպիսով, երեք հարևան երկրների դաշնակից ուժերը կռվի դուրս եկան Շադդադյանների (հավանաբար և այլոց) միացյալ ուժերի դեմ ու ջախջախեցին նրանց։

60 Լաստիվերտցի, էջ 96։

61 Бертельс, Низами, Москва, 1956, стр. 40. Хаким Катран Табризи, Тавриз, 1947, стр. 11.

62 Ուռհայեցի, էջ 79—82։

Աշոտն ու Հովհաննես Սմբատը գրեթե միաժամանակ մահացան և հաջորդեց Աշոտի որդին՝ տասնութամյա Գագիկ Բ-ն[63]։ Սրան վիճակված էր դիմագրավել երկու վտանգ. մեկը՝ Բյուզանդիան, որը Հովհաննես Սմբատի տիրահռչակ կտակի հիման վրա պահանջում էր Անին, իսկ մյուսը՝ արևելյան սպառնալիքը, որը բաղկացած էր թուրք հրոսակներից, Շադդադյաններից և այլ ուժերից։ Բյուզանդիայի հարձակումները Դվինի վրա հաջող եղ մղեցուց հետո Գագիկն իր բանակի գլուխն անցած սկսեց անհնազանդ գավառները խաղաղեցնել։ Արարատյան նահանգում Հրազդան (Հուրասատան) գետի ափին Բջնիի մոտ Վասակ Պահլավունու որդի Գրիգորի հետ նա հաղթեց թշնամի ղորքերին, որոնց պատմիչը մերթ կոչում է «աղգն հարաւային», մերթ էլ պարսիկ և թուրք[64]։ Դրանք սելջուկյան թուրք հրոսակներ էին, որոնք հավանաբար հենց Աբու-լ-Ասվարի դրդմամբ գալիս էին ասպատակելու Այրարատյան գավառները։

Տեսնելով Գագիկ Բ-ի իշխանության ամրապնդումը, Բյուզանդիայի կայսր Կոստանդին Մոնոմախը (1042—1054) Դվինի ամիրային գրգռեց Բագրատունյաց թագավորության դեմ։ Երբ վերջինս նրաշխիք ուղեց, որ իր գրաված վայրերը Կայսրության կողմից ճանաչվեն որպես Շադդադյանների տիրույթներ, Մոնոմախը նրան կայսերական «խրիսովուլ» (ոսկեկնիք) հրովարտակ տվեց[65]։ Աբու-լ-Ասվարը իրոք նվաճեց որոշ հայկական ամրոցներ, որոնց մասին բյուզանդական պատմիչները խոսում են այդ ամրոցների Բյուզանդիայի կողմից վերագրավման առթիվ։ Գագիկ Բ-ն այս դժվարին կացության մեջ միակ ելքը գտավ այն բանում, որ մի կերպ կանգնեցրեց Շադդադյանների առաջխաղացումը։

Այս բոլորից հետո Մոնոմախը, այլ միջոց չգտնելով, Գագիկին խաբեությամբ հրավիրեց Կ. Պոլիս և այսպիսով, Անին մնաց անորոշ դրության մեջ, քանի որ Հայոց թագավորը փաստորեն գերության վիճակում էր։ Հուսահատության մատնված մայրաքաղաքը հանձնվեց կայսրությանը, որն այսպի-

63 Ուռհայեցի, էջ 86—87։

64 Նույն տեղում, էջ 88։

65 Grousset, Histoire de l'Arménie, 574.

սով, անմիջականորեն հարևան դարձավ Դվինի ամիրայությանը։

Անիի բյուզանդական կառավարիչ նշանակվեց Միքայել Ասիտը և զորահրամանատար՝ Նիկողայոս Ներքինին։ Մոռանալով իր հրովարտակը, Մոնոմախն անմիջապես Դվինի ամիրայից նա պահանջեց այն վայրերը, որոնք սրա կողմից գրավվել էին հենց իր դրդմամբ։ Աբու-լ-Ասվարի մերժման վրա Ասիտը մի մեծ արշավանք կազմակերպեց Դվինի դեմ, որին մասնակցեցին մագիստրոս Կոստանդին Ալանը, հայոց զորքը՝ Վահրամ Պահլավունու հրամանատարության տակ և Իսպարիտ Բագվիվաշին։ Այսպիսի միացյալ ուժերի առջև Աբու-լ-Ասվարը խորամանկության դիմեց և բաց անելով ոռոգման ջրանցքները ջրով ողողեց Դվինի պարիսպների շուրջը տարածված խաղողի այգիները։ Հարձակվողները ցեխի մեջ թաղվեցին և պարիսպներից տեղացող նետերի տարափի տակ ընկնելով պարտություն կրեցին։ Զոհերի մեջ էին նաև Վահրամ Պահլավունին և որդին՝ Գրիգորը։

Այս պարտությունից հետո Մոնոմախը Անիի կառավարիչ (փաստորեն հյուսիսային Հայաստանի կառավարիչ) նշանակեց Կատակալոն Կեկավմենոսին (հայ. Կամենաս)[66], իսկ զորահրամանատար՝ Կոստանդին Ներքինուն։ Վերջինս փոխեց քաղաքականությունը և փոխանակ անառիկ Դվինի վրա հարձակվելու գրավեց բոլոր այն վայրերը, որոնք Շադդադյանները Դագիկ Բ-ից էին խլել։ Դրանք էին՝ Սուրբ Մարին, հետագայում կոչված՝ Սուրմարի կամ Սուրմալու, Ամբերդը (Ամպիան), Սուրբ Գրիգորը, որի ճիշտ տեղն անորոշ է (գուցե Փարբիի կողմերում լինի) և Միծենակաբերդը (Խելիդոնիոն)[67] Երևանի մոտ։ Սակայն հենց այս ժամանակ Կ. Պոլսում ծագած Լևոն Բոռնիկիոսի (Տարոնի Բագրատունիներից) ապստամբությունը ստիպեց Կոստանդինին հաշտություն կնքել այն պայմանով, որ Դվինի ամիրան Կայսրության հպատակ համարվի[68]։ Դվինի հաջող դիմադրությունը փաստորեն կանգ-

---

66 Լաստիվերտցի, էջ 63։

67 Honigmann, Ostgrenze, 176.

68 Minorsky, Studies, 54.

նեցրեց Կայսրության առաջխաղացումը Հայաստանում, որովհետև այլ դեպքում Բյուզանդիան բնականաբար կշարունակեր իր հաղթական առաջընթացը դեպի Տաշիր-Զորագետ, Սյունիք և Խաչեն։

Սակայն բյուզանդական հետագա առաջխաղացման իսկական արգելքը եղան սելջուկները։ 1048 թ. սելջուկյան զորքերը Իբրահիմ Ինալի և Դթլմուշի գլխավորությամբ ասպատակեցին Հայաստանը հասնելով հյուսիսում՝ մինչև Արծն, իսկ հարավում՝ Տարոն[69]։ Շադդադյանները գրկաբաց ընդունեցին նրանց, որպես բյուզանդական սպառնալիքից ազատվելու մի ազդու միջոց։ Հենց այս ժամանակ Բյուզանդիան Աբու-լ-Ասվարի դեմ ուղղեց ևս մի արշավանք (մոտավորապես 1049 թ.) Նիկեփոր Ներքինու հրամանատարության ներքո[70]։ Է. Հոնիգմանը այս արշավանքը զետեղում է ավելի ուշ (մոտավորապես 1055—1056 թթ.)[71], որը հավանական չէ։

Այս խառն իրադարձությունների ժամանակ Աբու-լ-Ասվարը թողեց Դվինը և գնաց ստանձնելու Դանձակի տիրույթները, որոնք Շադդադյան ընտանիքի թույլ անդամների ձեռքում էին մնացել։ Հավանաբար նա վախեցավ նաև բյուզանդական իրար հաջորդող արշավանքներից, որոնք իսկական սպառնալիք էին նրա համար, մանավանդ որ Կարնո քաղաքի, Մանազկերտի և այլ ռազմական հենակետերի նվաճումից հետո Դվինի գրավումը մի անհրաժեշտություն էր Բյուզանդիայի համար։

Աբու-լ-Ասվարի Դանձակ[72] տեղափոխվելուց հետո Դվինը ինքնաբերաբար երկրորդական նշանակություն ունեցող տիրույթի վերածվեց, քանի որ Շադդադյանների իշխանության ծանրության կենտրոնն արդեն տեղափոխվեց Դանձակ։ Մինչև 1053 թ. Դվինը ըստ երևույթին կառավարվում էր Աբու-լ-Ասվարի կողմից նշանակված տեղական ձեռքով, իսկ այդ տարում նա Դվինի կառավարիչ նշանակեց իր որդուն՝ Աբու-նասր

---

69 Լաստիվերտցի, էջ 67։ Մանանդյան, Քննական տեսություն, Գ, 39—43։

70 Minorsky, Studies, 59-64.

71 Honigmann, Ostgrenze, 182.

72 М. Альтман, Исторический очерк города Ганджи, Баку, 1949, стр. 24-28.

Իսքանդարին, որին հանձնեց նաև Դվինին «ենթակա շրջանները»[73]։ Պատմիչի այս վերջին արտահայտությունը ցույց է տալիս, որ 1053 թ. արդեն Դվինի շուրջը Շադդադյանների տիրույթները որոշ չափով ընդարձակվել էին օգտվելով հավանաբար սելջուկյան արշավանքներից։

Աբու-լ-Ասվարը ոչ միայն հնազանդություն հայտնեց սելջուկներին, այլև գործոն մասնակցություն ունեցավ Հայաստանում կատարած նրանց արշավանքներին։ Ալփ Արսլանի 1064 թ. արշավանքի ժամանակ Աբու-լ-Ասվարը իր զորքով մասնակից էր Անիի դեմ կատարված ավերիչ արշավանքին[74]։

Սակայն Շադդադյանների այս ազնտարեր գործակցությունը սելջուկների հետ միայն ժամանակավոր օգուտներ տվեց, որովհետև նույն սելջուկներն էին, որ ոչնչացրեցին նրանց իշխանությունը թե՛ Գանձակում, թե՛ Դվինում։ 1067 թ. մահացավ Աբու-լ-Ասվարը, իսկ 1075 թ. արդեն նրանք կորցրեցին Գանձակն իրեն ենթակա բոլոր ազվանական և հայկական գավառներով։ Մահմեդական պատմիչը վկայում է, որ հենց այդ ժամանակ «տեղավորվեցին թուրքերը Առանի երկրում, նրա դաշտերում ու սարերում և նրա բոլոր գավառներում ու բերդերում։ Ջնջվեց Շադդադյանների տունը և թուրքերի ձեռքն ընկան նրանց բոլոր գանձերն ու պահեստները»[75]։

Գանձակի կորստից հետո Շադդադյանները մնացին միայն Դվինում և Անիում, ավելի մերձենալով հայերի հետ։ Աբու-լ-Ասվարի որդիներից մեկը հայկական Աշոտ (Աշութ) անունն էր կրում, իսկ մի ուրիշը՝ Մանուչեն 1072 թ. տիրանալով Անիին[76] իրեն շրջապատեց հայ իշխանական տների մնացորդներով։ Դվինում ևս նրանց իշխանությունը երկար չմնաց, քանի որ 1105 թ. սելջուկ ամիրա Կղբլը գրավեց Դվինը և սպանեց Աբու Նասր Իսքանդարին[77]։ Սակայն այս դեպքերն արդեն մտնում են Հայաստանի սելջուկյան և հետսելջուկյան շրջանի պատմության մեջ։

---

73 Minorsky, Studies (arab.), 13.

74 Լաստիվերտցի, էջ 96։

75 Minorsky, Studies (arab.) 18.

76 Վարդան, էջ 138։

77 Նույն տեղում, էջ 150։

* * *

Բյուզանդական առաջխաղացումը վերջ տվեց Հայաստանի ամիրայություններից շատերին և փաստորեն Մեծ Հայքում ԺԱ դարի կեսերին մնացին միայն Մրվանյանները Խլաթում ու Աղձնիքում և Շաղդադյանները՝ Դվինում։ Սակայն սրանից ոչինչ չօգտվեց Հայոց թագավորությունը, քանի որ հենց ինքը ևս գնաց Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությանը։ Աննվաճ մնացին միայն Տաշիր-Զորագետի և Սյունիքի մանր թագավորությունները, ինչպես նաև այլ փոքր իշխանություններ՝ որպես հայկական պետականության վերջին մնացորդներ։

Բյուզանդիան չլատեց Հայաստանի ռազմունակ ուժերը, որով ճանապարհ հարթեց սելջուկ նվաճողների առջև և հող նախապատրաստեց Մեծ Հայքում նոր մահմեդական ամիրայությունների ստեղծման համար, որոնց պատմությունը դուրս է գալիս ներկա ուսումնասիրության շրջանակներից։

ԳԼՈՒԽ Զ

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1. ՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բագրատունյաց Հայաստանի ամիրայությունները հիմնականում քաղաքային տիրույթներից էին բաղկացած, քանի որ արաբ տարրը և արաբ իշխողները քաղաքներում էին հաստատված, իսկ քաղաքից դուրս նրանց ունեցած հողային տարածությունը աննշան էր։

Դվինի ամիրայությունն ընդգրկում էր մոտավորապես Ոստան (Ոստան Դվնայ) գավառը, որն ինչպես գիտենք, եղել է Արշակունյաց արքունի կալվածների մեջ[1], իսկ մարզպանական և արաբական շրջաններում բնականաբար մնացել է Հայաստանի կառավարիչների տրամադրության տակ և չէր կարող ենթարկված լինել որևէ տեղական իշխանի։ Ինչպես տեսանք, խալիֆայության թուլացման ժամանակ՝ Թ դարում, Բագրատունիները իրենց Շիրակ-Արշարունիքի կալվածներին կցեցին նաև Այրարատի արևելյան կողմի գավառները, որոնց շարքում և Դվնա Ոստանը[2]։ Սակայն երբ կազմավորվեց Դվինի ամիրայությունը այս գավառը մեկուսացվեց Բագրատունիների բուն կալվածներից։

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 302. H. Hübschmann, Die altarmenischen Orstnamen, 365.

[2] Ibn Hauqal, II, 343.

Դվինի ամիրայության սահմանները կարելի է որոշել միայն ճշտելով հարևան իշխանությունների տարածությունը։ Նրան սահմանակից էին Արծրունի, Սյունի և Բագրատունի (հետագայում նաև Պահլավունի) իշխանների տիրույթները։ Որոշ տվյալներ ցույց են տալիս, որ Վասպուրականի կողմից նրա սահմանը հասնում էր մինչև Արաքս գետը։ Այսպես, Թովմա Արծրունին, երբ հաղորդում է Դվինին տիրած ումն արաբացու և Գագիկ Արծրունու միջև տեղի ունեցած ընդհարման մասին[3] նշում է, որ նրանք հանդիպեցին Արաքս գետի մոտ, Խոր-Վիրապի դիմաց։ Արաբացին անցել էր գետը, սակայն պարտվել և այս անգամ ինքը՝ Գագիկը գետն անցնելով սպառնում էր Դվինին։

Հյուսիսային կողմից Դվինի ամիրայության սահմանները կանգ էին առնում Կոտայք գավառի մոտ, որովհետև հայտնի է, որ Գառնի ամրոցը (նաև Երևանը) միշտ էլ պատկանել է Բագրատունիներին[4]։ Արևելյան կողմից, որտեղ սկսում են Սյունյաց նահանգի լեռնային շրջանները, պարզ է, որ Ոստան գավառի սահմանները պահպանված կլինեին։ Այս կողմից Դվինի ամիրայության անմիջականորեն սահմանակիցը Վայոց Ձորի իշխանությունն էր։ Ամենահետաքրքրությունը սակայն այն սահմաններն էին, որոնք ընկած էին Բագրատունիների բուն տիրույթների և այս փոքրիկ ամիրայության միջև։ Վերոհիշյալ ընդհարման մասին խոսելիս Թովմա Արծրունին նշում է, որ արաբացին ասպատակ սփռեց «յԱյրարատեան գաւառ և մինչև ցԱրագածն կոչեցեալ ոտն, որ է բաժին կալուածոց Աբասայ...»[5]։ Աբաս թագավորի կալվածների մեջ հիշված Արագածոտնը տարածվում էր գրեթե մինչև Ոստան գավառի մոտերքը, իսկ «Արարատյան գավառ»-ը այստեղ պետք է նշանակի Մասյացոտն գավառը, եթե դա ընդհանուր իմաստով չի ասված։ Ինչ վերաբերում է հարավային կողմին, ապա այստեղ սահմանը պետք է հասներ մինչև այսպես կոչված Գայլե դրունքը, որը մի բնական սահմանագիծ է։

---

3 Թովմա, էջ 299—302։

4 Б. Аракелян, Гарни, 1, Ереван, 1951, стр. 69-87.

3 Թովմա, էջ 299—302։

Այսպիսով, Դվինի ամիրայությունն ընդգրկում էր հիմնականում քաղաքը և մի քանի շրջակա գյուղեր, ընդհանուր գծերով չանցնելով Ռասան գավառի սահմանները: Նրանում ընդգրկված էր Արտաշատ գյուղը, որտեղ արտադրվում էր Դվինի գործվածքների համար այնքան անհրաժեշտ նյութը՝ որդան կարմիրը (արաբների մոտ կոչվում էր կիրմիզ) և դրա անունով Արտաշատը նույնիսկ ստացել էր որդան կարմրի գյուղ (ḳaryat al-kirmiz)[6] անունը: Դվինի մոտ կար նաև Ովայ գյուղը, որտեղ այժմ էլ գոյություն ունի Յուվա անվամբ գյուղ, և ծանոթ է խեցեղենի արտադրությամբ[7]: Այնտեղ է ծնվել Թ դարի հայտնի գեմքերից Հովհաննես կաթողիկոս Ովայեցին (833—855)[8]: Մունաջջիմ Բաշիի արաբերեն բնագրում հիշվում է մի աղավաղված տեղանուն «Նաուարդ», որտեղ Աշոտ Գ-ն կանգ առավ Դվինի վրա կատարած հարձակման ժամանակ: Համոզիչ չէ Մինորսկու առաջարկած Նորաբերդ[9] ստուգաբանությունը, թեև Հայաստանի տարբեր մասերում իրոք եղել են մի քանի նորաբերդեր[10]: Իբն Խալլիքանը (ԺԹ դ.) հիշում է, որ «Դաբիլի դռների մոտ կա մի գյուղ, որը կոչվում է «Աջդանիկան» և դրա բոլոր բնակիչները Ռավվադի (ցեղի) բրդեր են: Այնտեղ է ծնվել Սալահ ալ-Դինի հայրը Այյուբը»[11]: Նույն հեղինակը մի ուրիշ տեղում Այյուբի տոհմի մասին խոսելիս ասում է, որ Շադին Սալահ ալ-Դինի պապը «Դաուինի»[12] բնակիչներից էր: Այս շփոթությունը հատուկ է միայն ԺԳ դարի արաբ աշխարհագիրներին, որոնք Դաբիլ և Դաուին տեղանունները օգտագործում էին իբրև երկու տարբեր քաղաքների անուններ: Աջդանիկան անունը նման է Խորենացու հիշած Աժդանականին[13], որը մարերով էր բնակված և տեղադրված էր Աղատ գետի ակունքի մոտ:

---

6 Jacut, I, 199.

7 Կ. Դաֆթարյան, Դվին քաղաքը..., էջ 236։

8 Հ. Անասյան, «Հայոց Անձնանունների բառարան», Դ, 556։

9 Minorsky, Studies, 25.

10 Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, 455.

11 Ibn Challican, III, 470.

12 Ibn Challican, I, 449.

13 «Պատմութիւն Հայոց», էջ 83։ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 414։

Դվինից ոչ հեռու գտնվող Տիկնունի[14] ամրոցը հավանաբար հենց նույնն է ինչ որ Մունաջջիմ Բաշիի մոտ հիշված «Հասլի» բլուրը[15], որտեղ Մուհամմադ իբն Շադդադը ամրոց էր կառուցել։ Հավանական է, որ արաբական անունը հայկական Տիկնունի անվան հետ ինչ-որ կապ ունենա, բայց այդ բանը առայժմ չի հաջողվում վերականգնել։

Բացի Արաքս գետից Դվինի շուրջը հոսում էին նաև նրա երկու վտակները՝ Ազատը և Մեծամորը։ Սրանցից առաջինը դեռ հոսում է իր նախկին հունով, իսկ երկրորդը՝ Մեծամորը մի ստեղծվածային գետ է։ Ըստ Խորենացու Մեծամորը թափվում էր Արաքսի մեջ այնտեղ, ուր Արտաշատ քաղաքն էր կառուցված[16], սակայն այսօր նրա հունի հետքերը նույն տեղում գտնելն անհնարին է։ Կարծվում է, որ էջմիածնի շրջանում հոսող Սև ջուր կոչված գետակը Մեծամորի մնացորդն է և դարերի ընթացքում իր ուղղությունը փոխելով քաշվել է իր այժմյան հունի մեջ[17]։ Բայց կարելի է ենթադրել, որ Բագրատունիների օրոք նա դեռ հոսում էր իր հին ուղղությամբ և Բալազուրիի մոտ հիշված «քրդերի գետը» ակնհայտորեն հենց նույն Մեծամորն է, որովհետև վերջինիս վկայությամբ Հայաստանը նվաճող Հաբիբ իբն Մասլաման գրավեց Արտաշատը, ապա անցավ քրդերի գետը և դիմեց «Դվինի դաշտը»[18]։

Ոչ արաբ պատմիչները, ոչ էլ այս շրջանի հայ մատենագիրներն են որևէ բան հաղորդում Փավստոս Բուզանդի պատմած խոսրովակերտ անտառի մասին, որը տարածվում էր Մեծամորից մինչև Գառնի և Տիկնունի[19]։ Սա հնարավոր է բացատրել արաբների անտարբերությամբ դեպի որսորդությունը, որը և պատճառ է դառնում անտառի անխնամ մնալուն։

---

14 Դվին քաղաքը..., էջ 28։

15 Minorsky, Studies (arab.), 4.

16 «Պատմութիւն Հայոց», էջ 176։

17 Ան. Շահնազարյան. Սև ջրի (Մեծամոր) ստորին հոսանքի ուղղությունը նախկին դարերում, «Տեղեկագիր», 2(7), 1941, էջ 7—13։

18 Beladsori, 200.

19 Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 29—30։

Դվինի ավերակները, որոնց շուրջը այժմ գոյություն ունեն մի քանի գյուղեր (Ներքին Դվին, Հողաբերդ, Թորփախկալա, Այդեսատան, Բղուվան, Նորաշեն Վերին Արտաշատ և այլն)[20] վերջին տարիների ընթացքում Հայաստանի պատմական թանգարանի կողմից կանոնավոր կերպով պեղվեցին և պետք է ասել, որ հայտնաբերված շինությունները ու իրերը մեծ չափով լույս են սփռում քաղաքի պատմության վրա։ Թե նախորդ, թե վերջին պեղումների ժամանակ քաղաքի միջնաբերդում և կենտրոնական թաղամասում բացված շենքերը[21] սերտ կապ ունեն Բագրատունյաց շրջանի հետ։ Միջնաբերդը հենց նույն նստավայրն էր[22], որի մասին արաբ աշխարհագրիները խոսում են և պեղումների ընթացքում ավել է բազմաթիվ իրեր (խեցեղեն և այլն), որոնք շատ են օգնում ուսումնասիրելու այդ շրջանի արհեստների զարգացումը։ Միջնաբերդը կառուցված է մեծ մասամբ հում աղյուսով ի հակադրություն կենտրոնական թաղամասի շինությունների, որոնք քարաշեն են։ Այստեղ ս. Գրիգոր մայր տաճարի կողքին կան կաթողիկոսարանի ավերակները, որի մասին ենթադրություն կա, որ Ժ դարում կարող էր մզկիթի վերածված լինել[23]։ Իրոք, դժվար է այլ տեղ որոնել այն մզկիթը, որի մասին Ժ դարի արաբ ախարհագրիները վկայում են, որ տեղադրված էր եկեղեցու կողքին։ Հետաքրքրական է, որ քաղաքի հայկական քրիստոնեական հուշարձանները, որոնք շատ հին շրջանից են (Ե—Զ դդ.) ավելի լավ են պահպանվել, քան մահմեդական շրջանից մեզ հասած շինվածքները։ Քարի օգտագործումը հայերի կողմից մեծ նշանակություն է ունեցել այս հարցում և ինչպես երևում է, առաջիկա պեղումների ընթացքում կհայտնաբերվեն մարզպանական շրջանին վերաբերող նոր կառուցվածքներ։

Մյուս ամիրայությունների սահմանների մասին մեր տեղեկություններն էլ ավելի կցկտուր են։ Բագրատունյաց թագավորության կազմի մեջ որպես արաբների ձեռքում գտնվող

---

20 Դվին քաղաքը..., էջ 22—30։

21 Նույն տեղում, էջ 30—32, 88—122։

22 Istakhri, Bibl. Geogr. Arab., I, 188. Ibn Hauqal, II, 342.

23 Դվին քաղաքը..., էջ 120։

քաղաքներ կարելի է նշել հետևյալները՝ Դվին, Նախճավան, Կարնո քաղաք, Արճեշ, Բերկրի, Խլաթ, Արծկե, Մանազկերտ, իսկ Հայոց թագավորությունից դուրս գտնվող հայ-մահմեդական քաղաքներ էին՝ Նփրկերտ, Արզն, Բաղեշ, Սալմաստ և Հեր։ Այս բոլորը, լինեն ինքնուրույն իշխանություններ, թե որևէ այլ իշխանության մասեր, հիմնականում քաղաքային ամրություններ էին և իրենց շրջակա գավառների միայն որոշ մասն էր ենթակա, ճիշտ այնպես, ինչպիսին էր Դվինի ամիրայությունը։ Այստեղ, իհարկե, լինում էին փոքր բացառություններ, որոնց մեջ առաջին հերթին պետք է նշել Գողթնի ամիրայությունը, որի հողերի վրա նույնիսկ մի գյուղաքաղաք էլ չի նշվում և պարզ է, որ սա քաղաքային ամիրայություն չէր, այլ զբաղեցնում էր Արաքսի հովտում մի նեղ շերտ։ Սակայն նույնիսկ այս մեկը մինչև վերջը չի մնում որպես այդպիսին, քանի որ ինչպես տեսանք, Գողթնի ամիրաներից հայանի Աբու Դուլաֆը (Աբու Տլուի) ամեն կերպ ձգտում էր դեպի քաղաքները և առաջին հերթին՝ Դվին[24]։

Կարնո քաղաքի ամիրայությունը իր մեջ ընդգրկում էր Բարձր Հայքի սոսկ մի քանի գյուղերը և Մասսատոն ամրոցը[25]։ Նույնիսկ Ավնիկն (Հավնունիք) առանձին ամիրա ուներ։ Այս բոլորը Հավճիշի հետ կազմում էր մի ընդհանուր շրջան։

Բերկրիի ամիրայությունը այն աստիճանի էր սահմանափակվել քաղաքի սահմաններում, որ Թովմա Արծրունին այդ ամիրայության գլուխ կանգնած Օսմանիներին (Ոսմանիկներին) անվանում է «քաղաքացիքն Բերկրոյ»։ Նույն վիճակում էին նաև Սուլամիները (Կայսիկ), որոնք թեպետ և տիրում էին մի քանի քաղաքներում, այսուամենայնիվ նրանց հիմնական կենտրոնը միշտ քաղաքն էր և դրանից դուրս նրանք չունեին և չէին ձգտում ունենալ հողային մեծ տարածություններ։

Կայսիկների ամիրայությունը ընդհանուր գծերով[26] հարավից հասնում էր Վանա լճի ափերը և Շայբանիների (ապա և Համդանյանների) կալվածները։ Հարավ-արևմուտքից և ա-

---

24 Ասողիկ, *189, 198—199։*

25 Const. Porph., De adm. imp., c. 45, 213.

26 Canard, Histoire de la dynastie des Hamdanides, 473-475.

յանմուտքից նա սահմանակից էր Տարոնի Բագրատունիներին։ Թ դարում Հայաստանում թողարկված արաբական մի քանի դրամների վրա հանդիպած «Բաջունայսի հանքը» (ma'dan Bādjunays)[27] պետք է փնտրել հենց Ապահունիք գավառում կամ ծայրահեղ դեպքում մի քիչ հեռու՝ Հարք գավառում կամ Խլաթում։ Համենայն դեպս դա այն մասերում է, որոնք հետագայում մտան Կայսիկների տիրույթների մեջ։

Թ դարի արաբ աշխարհագրիների մոտ հիշվում է Սաֆուան իբն Մուաթալ Սուլամիի գերեզմանը, որը մարգարեի մերձավորն է եղել։ Իբն Խորդադբեհն[28] այն դնում է Աշմուշատ քաղաքում (արաբ. Շիմշաթ), իսկ իբն ալ-Ֆակիհը[29] պարզապես ասում է, որ Զորրորդ Արմինիայումն է, այսինքն Հայաստանի այն մասում, որի մեջ մտնում էին Ապահունիքը, Հարքը, Բարձր Հայքը, Շիմշաթը... և այլն։ Սա անկասկած որևէ կապ կունենա Ապահունիքի Սուլամիների (Կայսիկների) հետ, որպես նրանց նվիրական սրբավայրը։

Ամիրայությունների կազմում գտնվող հայկական քաղաքներում Բագրատունյաց շրջանից կամ էլ նրան մոտիկ դարերից մեծ մասամբ քիչ բան է մնալ հասել։ Դվինի վերջնական ավերման հետևանքով նրա հուշարձանների գոնե փլատակները որոշ դեպքերում անաղարտ են մնացել, իսկ, օրինակ, Կարնո քաղաքում, Խլաթում կամ մասամբ նաև Մանազկերտում կյանքը շարունակվել է շատ երկար ժամանակ, ուստի ապարդյուն կլիներ այնտեղ Բագրատունյաց շրջանից հասած հուշարձաններ որոնելը։ Բյուզանդիան ավերից այդ քաղաքներից շատերը, մանավանդ Կարնո քաղաքն ու Մանազկերտը, սակայն նրանք վերականգնվեցին, թեև ոչ բոլոր դեպքերում հենց միևնույն վայրում կամ նույն ձևով։

Տասներորդ դարից հետո Մանազկերտն այլևս երբեք չստացավ այն նշանակությունը, որն ուներ մինչև Բյուզանդիայի ավերիչ հարձակումների թիրախ դառնալը և մնաց մինչև մեր օրերը որպես մի փոքրիկ ամրացված քաղաք։ Անցյալ դա-

---

[27] Тизенгаузен, Монеты Восточного Халифата, стр. 338.
[28] Bibl. Geogr. Arab., VI, 123.
[29] Bibl. Geogr. Arab., V, 287.

ում[30] քաղաքն արդեն ուներ սոսկ փոքրաթիվ հայ ազդաբնակչություն, որն զբաղեցնում էր կիսավեր քաղաքի լոկ մի մասը։ Ուշադրության արժանի մնացորդներից են համարվում՝ մի լքված իջևան, նրա կողքին Երեք խորան Աստվածածին եկեղեցու ավերակները և Սուրբ Սարգիս եկեղեցին։ Կա նաև Արաբ բիլիսա (արաբների եկեղեցի) կոչված մի շինություն, որը կարծվում է թե ասորիների եկեղեցի է եղել, ինչպես նաև մի մզկիթ, շատ ուշ շրջանում կառուցված և պարիսպներ ու միջնաբերդ, որտեղ տեղական կայազորն էր տեղավորված։ Հայտնի չէ թե ո՞ր դարից է Երեք խորան Աստվածածին եկեղեցին, մի հուշարձան, որի նկարագրությունից երևում է, որ կրում է հայկական զարգացած միջնադարի կնիքը իր հետաքրքրական ճարտարապետությամբ և արժեքավոր որմնանկարներով[31]։ Միայն հնագիտական պեղումները կարող են բացահայտել Մանազկերտի անխոս ավերակների էությունը և որոշել թե ի՞նչ է մեզ հասել Բագրատունյաց շրջանի Մանազկերտից։

Ժ դարում Բագրատունյաց Հայաստանի ամիրայություններին զբաղեցրած տարածությունը հիմնականում ներկայացնում էր հետևյալ պատկերը (ըստ գավառների ու քաղաքների). Կայսիկներն ունեին՝ Ալիովիտ (Արճեշ), Խոռխորունիք (Արծկե), Բզնունիք (Խլաթ), Ապահունիք (Մանազկերտ), Կորի, Հարք և Վարաժնունիք (Խնուսիս և Սերմանց լեռն) գավառները, որոնց վրա ավելացավ նաև Ութմանիկների կալվածը՝ Առբերանին (Բերկրի). Կարին գավառը (Կարնո քաղաք և Մասատառն) Բասենի (Բասեն) և Հավնունիքի մի մասի (Ավնիկ) ու Մարդաղիի (Հավճիշ) հետ կազմում էր մի առանձին միավոր, իսկ Արաքսի հովտում ամիրաների ձեռքում էին՝ Գողթն, Նախճավան (Նախճավան), Շարուր, Ուրծ և Ոստան (Դվին) գավառները։

2. ԱԶԴԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի տարաբ գաղթականության հիմնական օջախները քաղաքներն էին, ուստի պարզ է, որ նրանք այդ քաղաքներում որոշ կշիռ պետք է ունենային, թեև այդ քաղաքների

[30] Lynch, Armenia, II, 269-275.

[31] Lynch, Armenia, II, 271.

բնակչության մեծամասնությունը միշտ հայերից էր բաղկացած։ Եթե որպես օրինակ վերցնենք Դվինը, ապա կտեսնենք, որ հենց արաբ աշխարհագրիների վկայությամբ քաղաքում հայերը մեծամասնություն էին կազմում։ Երբ Մուկադդասին ասում է[32], թե Դվինում քրիստոնյաները մեծամասնություն են կազմում, ապա պարզ է որ խոսքը հայերին է վերաբերում։ Նույն դարի աշխարհագիր Իբն Հաուկալը վկայում է[33], որ Դվինի և շրջակայքի (ինչպես նաև Նախճավանի) ժողովուրդը խոսում էին հայերեն, ճիշտ այնպես, ինչպես Պարսավում խոսում են ալվանները։

Սակայն Դվինում հայերի կողքին կային նաև այլազան մահմեդական տարրեր և առաջին հերթին արաբներ, որոնց գոյության մասին վկայություններ կան պատմիչների մոտ։ Ղևոնդ պատմիչը խոսելով 774—775 թթ. ապստամբության մասին, պատմում է որ երբ ապստամբ հայերից պարտված արաբ զինվորները ապաստանում են Դվինում, ապա նրանց դիմավորում են «համազգիքն արք և կանայք»[34]։ Սրանք, ինչպիսի, քաղաքի արաբ բնակիչներն էին, որոնք Թ դարի առաջին կիսում պետք է ավելի բազմամարդ դարձած լինեին։ Սակայն ժամանակի ընթացքում քաղաքում բազմացավ իրանական տարրը, որոնց մասին խոսվում է որպես ռազմիկ տարրի։ Մունաջջիմ Բաշիի մոտ հիշվում է, որ Սալարյանների ժամանակ Դվինի բերդում (իմա՝ միջնաբերդում) կար դայլամցիներից բաղկացած զորք, որը դավաճանեց Մուհամմադ իբն Շադդադին, երբ վերջինս դիմադրում էր Սալարյան Մարզուբանի հարձակումներին[35]։

Որպես իրանական տարր քաղաքում որոշակի տեղ էին գրավում քրդերը, որոնք ըստ Մուկադդասիի մասնակցում էին քաղաքի պաշտպանությանը։ Նա ընդհանուր բառով ասում է «այն պահպանում են քրդերը»[36], որը հստակ չէ որոշակիորեն ի՞նչ պետք է նշանակի և կամ Ժ դարի ո՞ր տասնամյակին

---

32 Bibl. Geogr. Arab., III, 377.

33 Ibn Hauqal, II, 349.

34 Ղևոնդ, էջ 172։

35 Minorsky, Studies (arab.), 6.

36 Bibl. Geogr. Arab., III, 377.

վերաբերի։ Դվինին մոտ կար նաև մի քրդական գյուղ, որը կոչվում էր Աջդանիկան[37]։ Ալիշանը[38], երեի նկատի ունենալով գոյություն ունեցող այն տեսակետը, որը քրդերին նույնացնում է մարերի հետ, այս անվան տակ ուղում է տեսնել Խորենացու մոտ հիշված Աժդանականը՝ մարերի բնակավայրը Արաքսի հովտի այս մասում։

Ահա այս բոլորը (արաբ, դայլամցի և քուրդ) մատենագիրների մոտ հիշվում են ընդհանուր բառով որպես մահմեդականներ և երբ նրանց մասին որևէ բան է ասվում, դժվար է ասել, թե դա ո՞ր մեկին է վերաբերում։ Օր. Մուկադդասին վկայում է[39], որ Դվինի մահմեդականները Հանիֆի աղանդին[40] են պատկանում, նույնիսկ ասում է որ ինքը Դվինում ներկա է եղել կրոնական հավաքույթների։ Դվինի մահմեդականները դեռ Թ դարում ունեին իրենց գերեզմանոցը, որտեղ թաղվել է, օրինակ, ոստիկան Խալիդ իբն Եզիդ ալ-Շայբանին[41]։ Մունաջջիմ Բաշիի մոտ հիշված «Գերեզմանների դուռը» (Բաբ ալ-մակաբիր), որը ըստ նրա շարադրանքի, միջնաբերդից հեռու չպետք է եղած լինի, գուցե հենց նման մի գերեզմանոցի անունով է այսպես կոչվել։

Արաբ աշխարհագրիչների մոտ ոչ մի ուղղակի ցուցմունք չենք գտնում Դվինի մահմեդականների թվի մասին, սակայն Մունաջջիմ Բաշիի մոտ կա մի վկայություն, որը որոշ դաղափար է տալիս։ Աշոտ Գ-ի՝ Դվինի վրա կատարած հարձակման մասին խոսելիս, նա պատմում է թե ինչպես Մուհամմադ իբն Շադդադը հակառակորդի բերած 30.000 զորքին հակազդելու համար դուրս է բերում քաղաքի մահմեդական բնակիչներին, որոնք թշնամու աչքին ավազի հատիկներից ավելի շատ են թվում։ Բնագրում պատմիչը ասում է, որ նա քաղաքից բոլորին դուրս բերեց[42] և պատվիրեց, որ Ալլահ Աքբար (Ալլահը մեծ է)

---

37 Ibn Challican, III, 470.

38 Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 414։

39 Bibl. Geogr. Arab., III, 378.

40 *Սա ավելի շատ ոչ թե աղանդ է, այլ իրավաբանական դպրոց, որը մահմեդական աշխարհում ծանոթ մյուս երեք դպրոցների հետ ամեն երկրում ուներ հետևորդներ։ Հիմնադիրն է Աբու Հանիֆան (699—767)։*

41 Ibn Challican, III, 298.

42 Minorsky, Studies (arab.), 6.

գոռան։ Կարիք չկա ապացուցելու, որ այստեղ խոսքը վերաբերում է քաղաքի մահմեդական աղգաբնակչությանը, որովհետև հայ քրիստոնյան տվյալ դեպքում, եթե նույնիսկ համաձայնվեր քաղաքից դուրս գալու, այնուամենայնիվ երբեք «Ալլահ Աքբար» չէր գոռա և այն էլ հայ թագավորի դեմ և հենց ինքը՝ Մուհամմադ իբն Շադդադը կղգուշանար նման դեպքում հայերին դուրս բերելու, վախենալով որ հայ թագավորի կողմը կանցնեն։

Մարզպանական շրջանում Դվինում եղել են ասորիներ և հրեաներ, որոնց մասին ուղղակի ցուցմունքներ կան, բայց թե արաբական և Բագրատունյաց շրջաններում նրանք ի՞նչ տեղ են գրավել քաղաքի կյանքում մեզ հայտնի չէ։ 554 թ. Դվինի ժողովը նեստորական ասորիների եկեղեցին քանդելու որոշում հանելուց[43] հետո նրանք դրեթե չեն հիշվում։ Հովհաննես կաթողիկոսը հիշում է մի ասորի դեսպանի[44], որին Յուսուֆը ուղարկել էր Սմբատ թագավորին, սակայն հայտնի չէ թե սա որտեղի՞ ասորիներից էր, թեև հավանական է, որ Դվինից եղած լիներ։ Այսօր էլ Դվինի ավերակների վայրում կա ասորի գյուղ (Վերին Դվին), սակայն պետք է ենթադրել, որ այս ասորիները ուշ շրջանի գաղթականներ են։

Դվինի հրեաները միայն մի անգամ են հիշվում մատենագրության մեջ, այն էլ Հաբիբ իբն Մասլամայի կողմից Դվինի բնակիչներին տրված ապահովության ուխտի մեջ, որտեղ քրիստոնյաների և զրադաշտականների կողքին հիշվում են նաև հրեաները[45]։ Նրանք ինչպես նաև զրադաշտականները այլևս չեն հիշվում և շատ հավանական է, որ այստեղից հեռացած լիներն։

Դվինի հետ սերտորեն կապված Նախճավան քաղաքում թեպետև մահմեդական տարրը պետք է որոշ դեր խաղացած լիներ, մանավանդ որ սա արաբական մատենագրության մեջ

---

43 Ս. Տեր-Մինասյան, Նեստորականությունը Հայաստանում 5—6 դարերում, Գրական բանասիրական հետազոտություններ, Երևան, 1946, էջ 210—228։

44 Դրասխանակերտցի, էջ 247։

45 Beladsori, 200.

հաճախ հիշատակված և ընդհանրապես արաբական տիրապետության շրջանում նույնիսկ վարչական նշանակություն ունեցող կենտրոն էր, այսուամենայնիվ, նույնիսկ Ժ դարում, Իբն Հաուկալը վկայում է[46], որ այստեղ խոսակցական լեզուն հայերենն էր։

Կարնո քաղաքը հենց սկզբից ղուտ հայկական քաղաք չի եղել և այդպիսին էլ նա մնաց մինչև կործանումը։ Բյուզանդական կայսրության համար որպես ռազմական հենակետ ծառայող այս քաղաքը հենց որ անցավ արաբների ձեռքը, նույն նպատակին ծառայեց։ Ըստ Բալազուրիի Հայաստանը նվաճող Հաբիբը դեռ 654 թ. Ասորիքից և Միջագետքից բերված երկու հազար արաբի բնակեցրեց Կարնո քաղաքում և նույնիսկ նրանց հողեր բաժանեց[47]։ Պարզ է, որ քաղաքի հույն ազգաբնակչությունը այս շրջանում պետք է պակասած լիներ, որովհետև նրա փոխարեն քաղաքում տիրապետող դարձավ արաբ տարրը։ Այսպիսով, Կարնո քաղաքը Մեծ Հայքի միակ քաղաքն էր, որն արաբական տիրապետության հենց սկզբնական շրջանից բնակեցվեց արաբներով, որովհետև որպես ռազմական հենարան նա ամենակարևոր կայանն էր Բյուզանդիայի դեմ մղվող պայքարում։

Այս քաղաքի արաբներով բնակեցվելը իր ժամանակին այնքան ուշադրություն էր գրավել, որ երբ Ը դարի կեսին քաղաքը ժամանակավոր նվաճվեց բյուզանդացիների կողմից, վերջիններս պարիսպները քանդելուց հետո առաջին հերթին իրենց հետ Բյուզանդիա են տանում ոչ միայն արաբ զորքը, այլև «զբնակեալսն ի նմա սարակինոսս նոցին ընտանեօքն»[48]։ սակայն տեղի բնակիչները (հավանաբար հայեր և հույներ) հաստատ իմանալով, որ բյուզանդական գրավումը ժամանակավոր է, իրենք էլ են արտագաղթի ձեռնարկում դեպի արևմուտք, մանավանդ որ ըստ Բալազուրիի քաղաքի նվաճումը իրագործվել էր շնորհիվ երկու հայ եղբայրների դավա-

---

[46] Ibn Hauqal, II, 249.
[47] Beladsori, 197.
[48] Ղևոնդ, էջ 123։

ճանության[49]։ Սակայն, հենց որ քաղաքը արաբների կողմից նորից նվաճվեց, վերաբնակեցվեց արաբներով, որոնց մեջ կային թե գերությունից ազատված նախկին բնակիչներ, թե Միջագետքից և այլ տեղերից բերվածներ։

Նույնիսկ Ժ դարում Կոստանդին Ծիրանածինը Կարնո քաղաքի բնակիչների մասին խոսում է որպես «թեոդուպոլսեցիք»[50] (կարծես ինչ-որ միաձույլ զանգվածի մասին), որոնք, ինչպես ինքը հաճախ է շեշտում, մահմեդականներ էին։ Իհարկե, սրանից չպետք է հետևցնել, թե քաղաքի բնակիչները բոլորը արաբներ էին, այլ պետք է նշել, որ խոսքը վերաբերում է քաղաքում տիրապետող արաբ տարրին, որի կողքին կար հայ ազգաբնակչություն։

ԺԱ դարում, երբ Կարնո քաղաքի փոխարեն ծաղկում է արդեն Արծնը, նոր քաղաքը, ըստ Բյուզանդացի պատմիչ Ատտալիատեսի վկայության, բնակեցվում է կիսավեր և լքված վիճակում գտնվող Կարնո քաղաքից գաղթած բնակիչներով[51], որոնք ամենայն հավանականությամբ պետք էր հայեր եղած լինեին, որովհետև Արծնը հայտնի է որպես հայկական քաղաք և խոսք չկա այնտեղ արաբների գոյության մասին[52]։ Ուստի պետք է ենթադրել, որ Կարնո քաղաքի արաբները ցրվել էին ապաստան գտնելով հավանաբար այլ քաղաքներում և նույնիսկ հեռավոր երկրներում։ Մանավանդ է Ժ դարի իսպանացի նշանավոր բանաստեղծ ալ-Կալին (այսինքն Կալիկալացի, Կարնեցի), որը թեև ծնվել է 901 թ. Մանազկերտում, բայց Կարնո քաղաքից եկած արաբների հետ Բաղդադ մտնելու պատճառով կոչվել է Կալի։ Նա 940-ական թթ. հաստատվել է Իսպանիայում, որտեղ կարևոր դեր է խաղացել մատենագրության զարգացման գործում (մեռ. 967 թ.)[53]։

Ծիրանածնի մոտ տեղեկություն կա նաև այն մասին, որ Ժ դարում աբաբներ կային Կարնո քաղաքից դեպի արևելք տարածվող գավառների որոշ բերդերում։ Նա հիշում է, որ Ժ դա-

---

[49] Beladsori, 199.

[50] Const. Porph·, De adm. imp., c. 45, p. 209. Ասողիկ, էջ 144։

[51] Ataliata, Bonnae, p. 148.

[52] Լաստիվերտցի, էջ 74—75։

[53] И Крачковский, Избранные сочинения 11, ,490.

ում բյուզանդացիք Բասեն գավառի արաբական ամիրայությունները (Ալնիկ և այլն) ասպատակելու նպատակով կազմակերպել էին ավերիչ արշավանքներ[54]։

Մեր տեղեկություններն ավելի մանրամասն չեն Հայաստանի հարավի ամիրայությունների քաղաքների բնակչության մասին։ Բերկրիում, որը մի փոքր բերդաքաղաք էր, տիրապետող էր արաբական մի ցեղ (Ութմանիկներ), որը և հիմնականում քաղաքում էր տեղավորվել և այդ պատճառով էլ Թովման, ինչպես տեսանք, նրանց անվանում է «քաղաքացիքն Բերկրոյ»։ Ութմանիկները հաստատվել էին նաև Ամյուկ բերդում (Վանա լճի ափին), սակայն Արծրունիները դրավելով այն, բոլորին կոտորեցին[55]։

Խլաթը արաբական տիրապետության հենց սկզբնական շրջանից արաբ ոստիկանների և զորավարների նախասիրած կայանն էր եղել, մանավանդ երբ գալիս էին Ասորիքի կողմից և ուղղվում դեպի Դվին։ Ոստիկանը, նախքան Դվին գնալը հաճախ այստեղ էր կանգ առնում և ձեռնարկում որոշ գործողությունների։ Խալիդ իբն Եզիդը այստեղ ընդունեց Սևադային և նրան ապահովության ուխտ տվեց[56], կամ, օրինակ, Բաղարատ Բագրատունին իրեն նստավայր էր ընտրել Խլաթը և հենց այստեղ էլ նա ձերբակալվեց[57]։ Բագրատունիների օրոք քաղաքում կային մեծ թվով մահմեդականներ։ Քաղաքի մահմեդականների մեջ բացի արաբներից եղել է նաև պարսկալեզու մի տարր, երևի հենց պարսիկներ, որովհետև Ատրպատականից եկող կարևոր մայրուղու վրա գտնվող Խլաթը կարող էր առևտրով կամ այլ գործերով զբաղվող պարսիկների կենտրոն հանդիսանալ։ 1046 թ. Խլաթում անձամբ գտնվող պարսիկ մատենագիր Նասիրի Խոսրովը (Խուսրաու) վկայում է,[58], որ այստեղ երեք լեզվով են խոսում՝ արաբերեն, պարսկերեն, հայերեն և հենց այդ պատճառով էլ քաղաքը կոչվել է Ախլաթ,

---

54 Const. Porph., De adm. imp., c. 45, p. 207

55 Թովմա, էջ 280—281։

56 Jaqubi, II, 565.

57 Beladsori 211.

58 Նասիրի Խոսրով (պարսկերեն), 8։

այսինքն՝ խառնուրդ։ Խլաթում հայոց եպիսկոպոսարանի, ինչպես նաև ս. Խաչ և ս. Գամպղիել եկեղեցիների պարապից դուրս լինելը[59] ցույց է տալիս, որ պարիսպներից ներս տեղավորված մահմեդական տարրը բավական տիրապետող դիրք ուներ։

Մանազկերտը բոլոր հայ-արաբական քաղաքների մեջ ամենից ավելի հայանի էր (Դվինից հետո) Բագրատունյաց շրջանում, որովհետև այնտեղ հաստատված էր Թ—Ժ դարերում Սուլամի (Կայսի) ամիրայական տունը։ Արաբական աղբյուրները, որոնք այնքան հաճախ են հիշում այս քաղաքը, ժամանակագրական նրա ներքին կյանքի մասին ոչինչ չեն հաղորդում։ Սրա պատճառն այն է, որ քաղաքը բացառիկ բարգավաճում չապրեց, այլ պարզապես քաղաքական հանգամանքներն էին, որ նրան հայանի դարձրին։ Համենայն դեպս գիտենք, որ քաղաքում մեծ թիվ էին կազմում արաբները, որոնք հավանաբար հենց Սուլայմ ցեղից էին։ Ժ դարի վերջին, երբ Մանազկերտն ընկավ Տայքի Դավիթ Կյուրապաղատի ձեռքը, քաղաքից հանվեցին արաբները («Հանեալ արձակեաց զՏաճկաստանեայսն»)[60] և նրանց փոխարեն տեղավորվեցին հայերը։ Հետագայում Մանազկերտն անցավ Բյուզանդիային և արար ազգաբնակչության մասին այլևս խոսք չի լինում[61]։ Թեպետ և Դավթի մահվանից անմիջապես հետո քաղաքն անցել էր Բատ քրդի ձեռքը և վերանորոգվել և եթե նույնիսկ նրա կողմից վերաբնակեցվեր, ապա պարզ է, որ այս դեպքում պետք է քրդերը տեղավորվեին որպես Մրվանյանների իշխանության հենարան։ Արճեշի բնակչության մասին ոչինչ հայանի չէ. միայն ԺԳ դարում Յակուտը հիշում է, որ նրա բնակիչները մեծ մասամբ հայեր են[62]։

Ահա այսպիսին էր ընդհանուր պատկերը Բագրատունյաց Հայաստանի ամիրայությունների մեջ գտնվող քաղաքներում։ Այդ քաղաքները սերտորեն կապված էին Հայաստանի մնաց-

59 Ասողիկ, էջ 268։

60 Նույն տեղում, էջ 266։

61 Յակուտը (ԺԳ դ.) նշում է, որ Մանազկերտի բնակիչները հայեր և հույներ (հունադավան հայեր) են։ Jaqut, IV, 648.

62 Jaqut, I, 196.

յալ քաղաքների հետ և իրենց ազգաբնակչության հիմնական զանգվածը միշտ էլ մնաց հայ։

Այլ էր դրությունը Հայոց թագավորությունից դուրս ընկած քաղաքներում՝ Բաղեշում, Արզնում և մանավանդ Նփրկերտում, որն արդեն արաբացած քաղաք էր։ Նախկին Տիգրանակերտի վայրում գտնվող Նփրկերտը արաբների համար մի կարևոր հենարան էր մանավանդ արաբա-բյուզանդական ընդհարման հիմնական շրջանները տանող ճանապարհի վրա։ Ոչ միայն քաղաքը, այլև ամբողջ Աղձնիքը ժամանակի ընթացքում դարձել էին Հյուսիսային Միջագետքի մի մասը և տեղի ազգաբնակչությունն ուներ մոտավորապես այն կազմը, ինչ-որ Միջագետքում և Ասորիքում էր։

Եթե ընդհանրապես վերցնենք Հայաստանի ամիրայությունների քաղաքների ազգաբնակչության կազմը, ապա կտեսնենք, որ այնտեղ տեղական՝ հիմնական զանգվածի կողքին որպես եկվոր տարր հիմնականում արաբներն էին։ Սակայն վերջիններս շատ շուտ սկսեցին ասպարեզից հեռանալ իրենց տեղը զիջելով քրդերին։ Արաբները զարմանալիորեն շուտ են չքանում Հայաստանից։ Արդեն ԺԱ դարում նրանց մասին գրեթե չի խոսվում։

Հայաստանի քաղաքների արաբ բնակիչները մեծ չափով տուժեցին բյուզանդական զորքերի կազմակերպած կոտորածներից։ Մեծ ավերումներ տեսան Կարնո քաղաքն ու Մանազկերտը, ինչպես նաև մասամբ Խլաթն ու Նփրկերտը (որոնք սակայն նորից լցվեցին մահմեդականներով)։

Կարնո քաղաքի, Մանազկերտի, Արծկեի, Արճեշի և Բերկրիի արաբներին մասամբ փոխարինելու եկան հույները[63] (հավանաբար հունադավան հայերը), բայց ահա վրա հասան սելջուկյան արշավանքները և դրությունն արմատապես փոխվեց։

Չքացող արաբ ազգաբնակչությանը ընդհանրապես փոխարինեցին քրդերը։ Դարեր շարունակ Մեծ Հայքից հարավ ապրող այս իրանական ցեղերը Ժ դարում աշխուժության նշաններ ցույց տվեցին[64], տարածվելով մի քանի ուղղություններով։

[63] Markwart, Sudarmenien, 470.

[64] Minorsky, Studies, 110-116.

Ամեն տեղ հանդես գալով որպես ռազմիկ տարր, քրդական ցեղերը կարողացան որոշ դեր խաղալ Միջին և Մերձավոր արևելքի երկրների քաղաքական կյանքում և սրա լավագույն ապացույցը Եգիպտոսի Այյուբյան սուլթանական տան բարձրացումն էր, որի հիմնադիր Սալահ ալ-Դինի պապը գաղթել էր հենց Դվինի շրջակայքից[65]։

Անկախ այն բանից, թե մեր ենթադրությունը Ջահհաֆյանների քրդական ծագման մասին ճիշտ է կամ ոչ, պարզ է, որ արաբական ամիրայությունների առաջացումը Հայաստանում և քրդերի ներթափանցումը Մեծ Հայք իրար հետ սերտորեն կապված հարցեր են։ Դեռ ավելին, Ժ դարի վերջում և ԺԱ դարերի սկզբում Բագրատունյաց Հայաստանի ամիրայություններն արդեն քրդական ծագմամբ իշխանություններ էին, սակայն որոշ պատճառներով արաբական են կոչվում։ Այս շրջանում ներթափանցող քրդական տարրն էլ, արաբականի նման, բաղկացած էր սոսկ փոքր զանգվածից, որը որպես ռազմիկ տարր, պայքարի միջոցով իր ձեռքն էր վերցրել այս կամ այն քաղաքի կամ գավառի իշխանությունը։ Քրդական տարրի զանգվածային ներթափանցումը Հայաստան միայն հետագա դարերում է տեղի ունեցել։

Շատ հատկանշական է Հայաստանի համար, որ այստեղ արաբները ոչ մի արաբական քաղաք չհիմնեցին։ Դրեթե բոլոր նվաճված երկրներում մանավանդ այնտեղ, ուր արաբական ցեղերը զիմեցին հոծ զանգվածներով, արաբները հիմնեցին զուտ արաբական քաղաքներ, օրինակ, Քուֆան և Բասրան Միջագետքում, Ֆուսթաթը՝ Եգիպտոսում կամ Կայրուանը՝ Թունիսում, որոնք արդեն սկիզբ դրեցին արաբական միջնադարյան քաղաքի զարգացմանը։ Այսպիսի քաղաքները արաբական իալիֆայության տիրապետության հուսալի հենարանները հանդիսացան և մեծապես նպաստեցին այնպիսի հեռավոր երկրների արաբացմանը, ինչպիսիք էին Հյուսիսային Աֆրիկայի երկրները։ Սակայն Հայաստանում արաբ ոստիկանները նման բայլի չդիմեցին և բավարարվեցին, որոշ քաղաքներում արաբ գաղթականներ տեղավորելով։ Այս քաղաքներում տե-

---

[65] Ibn Challican, I, 149.

ղական՝ հայ ազգաբնակչությունը մնաց, սակայն տիրապետող դիրք գրավեցին օտար գաղթականները։

Այսպիսին էր Հայաստանի արաբական ամիրայությունների քաղաքների ազգային կազմը, իսկ դասակարգային կառուցվածքի տեսակետից այդ քաղաքները հիմնականում չէին տարբերվում Հայաստանի մնացյալ քաղաքներից։ Վերնախավն էին կազմում քաղաքում հաստատված ավատատերերը, որոնց մասին է վկայում Դրասխանակերտցին, երբ Դվինում պատահած դեպքերի մասին խոսելիս հիշում է այդ խավի ներկայացուցիչներին, որպես «գլխաւոր գահերէցք և հոյակապ նահապետք և ազգատոհմք ի քաղաքին Դվնայ»[66]։ Սրանց է ակնարկում նաև Թովմա Արծրունին, երբ ասում է. «ծերք քաղաքին» (Դվինում)[67]։ Այս խավից էին ահա այդ քաղաքների ամիրաները։ Սակայն բոլոր քաղաքներում չէ, որ նրանք ժառանգաբար միևնույն ընտանիքից էին սերում։ Դվինում կամ Կարնո քաղաքում տիրող ամիրաները մեծ մասամբ պատահական մարդիկ էին և միայն ԺԱ դարում էր, որ Դվինում հաստատվեցին Շադդադյանները։ Ժառանգաբար իշխող ամիրայական տներն էին՝ Սուլամիները (Կայսիկ) Մանազկերտում, Խլաթում, Արճեշում և այլն, Օսմանիները (Ութմանիկ) Բերկրիում, Շայբանիներն ու Համդանյանները Նփրկերտում և Ջուրաբիկները՝ Արզնում։

Բագրատունյաց շրջանում վաճառականները որպես առանձին խավ արդեն որոշ դեր են խաղում Հայաստանի քաղաքներում, սակայն ամիրայությունների քաղաքներում նրանց ունեցած դիրքը որոշելու համար փաստերը պակասում են։ Նույնիսկ դժվար է ճշտել հայ և արաբ վաճառականների ունեցած դերը այդ քաղաքների առևտրական կյանքում։

Ամիրայությունների քաղաքների արհեստավորական խավի և ընդհանրապես հասարակ ժողովրդի կենցաղի մասին, շնորհիվ հնագիտական պեղումների, ձեռքի տակ ունենք որոշ

---

66 Դրասխանակերտցի. էջ 416։

67 Թովմա, էջ 491։

Ըստ Մուկադդասու Դվինի իշխանների (աղնվականների, մեծամասնությունը հայեր էին (Bibl. Geogr. Arab. III, 377)։

տվյալներ[68]։ Պարզ է, որ այս տեսակետից ոչ մի տարբերություն չպիտի դնել սրանց և Հայաստանի մյուս քաղաքների միջև։

Ավելորդ կլիներ նույնիսկ հայկական գավառներում որոնել արաբ գյուղացիության հետքեր։ Այդպիսին չկար ոչ միայն Հայաստանում, այլև դեռ երկար ժամանակ նույնիսկ արաբացած երկրներում (Ասորիք, Եգիպտոս և այլն), որտեղ գյուղական միջավայրը դարեր շարունակ պահեց տեղական լեզուները (ասորերեն, զոպտերեն և այլն) և տեղական կրոնը՝ քրիստոնեությունը։

3. ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Թոնդրակյան շարժումը առաջացավ Հայաստանի տարբեր մասերում, սակայն նրա գործունեության հիմնական կենտրոնները, որոնց անունները այս կամ այն չափով մեզ հասել են շնորհիվ մատենագիրների վկայությունների, ցույց են տալիս որ Թոնդրակյան աղանդի հետևորդները շատ հաճախ իրենց գործունեությունը ծավալել են Բագրատունյաց թագավորության հետ թույլ կապված մասերում և մանավանդ Հայաստանի արաբական ամիրայությունների զբաղեցրած գավառներում։

Սկզբնական շրջանում այս շարժումը կենտրոնացել էր Ապահունիքի և Հարքի կողմերում՝ Թոնդրակ գյուղում։ Աղանդի հիմնադիր Սմբատը ծնվել է Բագրատունյաց կալված Մաղկոտն գավառի Զարեհավան գյուղում, սակայն ինչպես վկայում են Ստեփաննոս Ասողիկն[69] ու Գրիգոր Մագիստրոսը[70] նա այնտեղից դուրս գալով հաստատվեց Թոնդրակ գյուղում, որը գտնվում էր արաբական ցեղերով բնակեցված գավառում։

Ըստ Մ. Չամչյանի[71] Թոնդրակյան շարժումը սկիզբ առավ Հովհաննես Ոսկեբերանի կաթողիկոսի (833—855) և Սմբատ սպարապետ խոստովանողի օրոք։ Թեև հետագայում շատ ուսումնասիրողներ Գրիգոր Մագիստրոսի անորոշ խոսքերից (յաւուրս

68 Դվին քաղաքը..., էջ 153—154։

69 Ասողիկ, էջ 160։

70 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 153—154։

71 Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 884։

տեսան Յովհաննիսի և Սմբատայ Բագրատունւոյ)[72] եղրակացրել էին, որ Սմբատ Զարեհավանցին երևան էր եկել Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի (898—929) և Սմբատ Ա. Թագավորի (890—913) իշխանության տարիներին[73], սակայն վերջերս վերահաստատվեց Մ. Զամշյանի տեսակետը[74]։

Ուստի եթե ընդունենք որ շարժման սկիզբը Թ դարի կեսերին էր, պետք է ենթադրել, որ Սմբատը քարոզել սկսեց այն ժամանակ, երբ Հայաստանը դեռ գտնվում էր արաբական տիրապետության տակ։ Աշոտ Բագրատունու իշխանապետության տարիներին (862—885) Աբու-լ-Վարդ Կայսիկը, որն արդեն տիրել էր Մանազկերտին, Գրիգոր Նարեկացու վկայությամբ[75] խիստ հալածանք սկսեց նոր աղանդի հիմնադրի դեմ։ Ապաստանելով այս կողմերը Սմբատն ակներևորեն հույս ուներ ազատ ասպարեզ գտնել, քանի որ հայ եկեղեցին հաղիվ թե կարողանար ստիպել որևէ արաբ ամիրայի հալածել այս նոր աղանդը։ Սակայն Կայսիկ բռնավորի իշխանության տակ Թոնդրակյան շարժումը, բացի իր դասակարգային բնույթից, ըստ երևույթին ստանում է նաև օտար նվաճողների դեմ ուղղված ազատագրական կերպարանք։

Աբու-լ-Վարդ Կայսիկը, ըստ Թովմա Արծրունու վկայության, շատ հանդուգն ծրագրեր էր մշակում, ձգտելով նույնիսկ Արմինիայի մահմեդական ամիրաների զինակցություն կազմել ուղղված հայ նախարարների և մանավանդ Աշոտ իշխանաց իշխանի դեմ[76]։ Նրան բնականաբար կիրտնեցներ այն, որ Մանազկերտից երեք ժամ հեռավորության վրա գտնվող Թոնդրակ գյուղում արդեն մի քանի տարիներ է որ բույն էր դրել մի քրիստոնեական աղանդ։ Աբու-լ-Վարդն անխնա կոտորեց Թոնդրակեցիներին, ոչնչանալով հենց Սմբատ Զարեհավանցուն[77]։

---

72 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 153։

73 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, 1067։

74 **А. Иоаннисян,** Движение тондракитов в Армении, Вопросы истории, X, 1954.

75 «Գիրք թղթոց», էջ 500։

76 Թովմա Արծրունի, էջ 219։

77 «Գիրք թղթոց», էջ 500։

Այս դեպքերից հետո անցնում է հարյուր տարուց ավելի մի ժամանակաշրջան, որի մասին մատենագիրները դրեթե լռում են։ Բայց քանի որ Ժ դարի վերջում Բոնդրակը նորից է հիշվում որպես Զարեհավանցու ուսմունքի հետևորդների հիմնական բույնը, կարելի է վստահ ասել, որ Արու-լ-Վարդի հալածանքները չկարողացան նրանց արմատախիլ անել այդ գյուղից։

Բոնդրակյան շարժման կրկին ծաղկման շրջանը սկսեց Ժ դարի երկրորդ կեսում։ Բագրատունի թագավորները բնականաբար պաշտպանում էին պաշտոնական եկեղեցու շահերը, քանի որ Ժ դարում տիրող քաղաքական մասնատվածության պայմաններում եկեղեցին նպաստում էր Բագրատունի թագավորների հեղինակության տարածմանն ամբողջ Մեծ Հայքում։ Երբ Աշոտ Գ-ն (953—977) միջոցառումներ ձեռք առավ Հայաստանի անկախացած գավառները իր հեղինակությանը ենթարկելու (Անի մայրաքաղաքի ընտրությամբ, բանակի վերակազմավորմամբ և այլն) շտապացավ նաև Անանիա Մոկացի կաթողիկոսին բերել տալ իր տիրույթները, որտեղ Անիից փոքր հեռավորության վրա հիմնադրվեց Արղինայի կաթողիկոսարանը։ Մեծ Հայքի բոլոր գավառները եկեղեցականորեն ճանաչելով կաթողիկոսի իշխանությունը, անուղղակիորեն ենթարկվում էին նաև թագավորի հեղինակությանը, քանի որ կաթողիկոսը փաստորեն նրան ենթակա էր։

Սարգիս Սևանցի կաթողիկոսի (992—1019) և Գագիկ Ա (990—1020) թագավորի իշխանության տարիներին կատարված դեպքերի մասին որոշ տեղեկություններ կան Լաստիվերտցու[78] և Մագիստրոսի[79] մոտ։ Դարձյալ Կայսիկների նախկին տիրույթների մեջ էր նրանց հիմնական կենտրոնը՝ Բոնդրակը, որտեղ նստում էր նոր աղանդապետ Հեսուն[80]։ Բոնդրակյաններին հարել էր նաև Հարք գավառի Հակոբ եպիսկոպոսը[81], որն արդեն սկսեց իր գավառում կիրառել նոր աղանդի սկզբունքները։ Եկեղեցական արարողությունները կրճատվեցին,

---

78 Լաստիվերտցի, էջ 119—133։

79 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, «առ կաթողիկոսն ասորոց» էջ 143—164։

80 Նույն տեղում, էջ 162։

81 Լաստիվերտցի, էջ 119—125։

տարաղը պարզեցվեց և քահանաների կողմից մեղքերի արձակումն ու մասաղի զոհաբերումը արգելվեց։ Կաթողիկոսը նրա ձակատին աղվեսադրոշմ խարանել տվեց և բանտարկեց, սակայն Հակոբ եպիսկոպոսը փախավ Բյուզանդիա։ Թեև այնտեղ նա ուղղափառ մկրտվեց, բայց հաջողություն չունենալով նորից վերադարձավ Ապահունիք։ Թոնդրակում նրան չընդունեցին հավանաբար ուղղափառությանը հարելու համար և բոլորից մերժված Հակոբը ապաստան գտավ Մրվանյանների տիրույթներում՝ Խլաթի կողմերում, որտեղ Թոնդրակյաններին հարած ագարակներ կային[82]։ Սրանց մոտ մի ժամանակ մնալուց հետո նորից դնաց հարավ և մեռավ Նփրկերտում։

Ժ դարում Թոնդրակյանների ուսմունքը տարածվել էր դեպի հյուսիս՝ Մարդաղի և Մանանաղի գավառները։ Մարդաղիում հիշվում է Խնունք գյուղը, իսկ Մանանաղիում՝ (և նրա մերձակայքում) Շիրի, Կաշե, Աղիս, Բազմաղբիւր[83] և Թուլայլ գյուղերը։ Այս բոլոր վայրերում ագարակի մշակները հարելով Թոնդրակից եկած քարոզիչների ուսմունքին համայնքներ էին կազմել։ Շիրի բերդաքաղաքի մերձակա ագարակում հաստատվել էր Կունծիկ աբեղան, որին հարել էր ոչ միայն Հրանուշ իշխանուհին և նրա երկու ազգականուհիները, այլև վերջիններիս եղբայրը՝ Վրվեռ իշխանը։ Հարաբերություններն աղանդավորների և եկեղեցական իշխանությունների միջև այնքան լարվեցին, որ կաշեցիք հարձակվեցին Պախրա լեռան շրջանում Բազմաղբյուր գյուղի վրա և փշրեցին այնտեղ գտնվող մի նշանավոր խաչ։ Մանանաղիի Սամվել եպիսկոպոսն իր հերթին հրկիզեց Կաշե գյուղը և ձերբակալված վեց վարդապետների դեմքին աղվեսադրոշմ խարանեց Ջերմ գյուղում։ Միջամտեց Եկեղյաց գավառապետը և Վրվեռ իշխանը կաշառք տալով և հունադավան դառնալ խոստանալով ազատվեց, իսկ կաշեցիք մեծ պատիժներ կրեցին։

Հաջորդ դարի կեսերին նորից բորբոքվեց պայքարը Թոնդրակեցիների դեմ, որոնք ըստ երևույթին որոշ չափով տարածվել էին դեպի հարավ՝ Մրվանյանների տիրույթները։ Հարա-

---

82 Լաստիվերտցի, էջ 125։

83 Նույն տեղում, էջ 128։

վային Հայաստանի և Վերին Միջագետքի բյուզանդական կառավարիչ Գրիգոր Մագիստրոսը խիստ հալածանք սկսեց նրանց դեմ։ Այդ ժամանակ նորից էր ծաղկել Թոնդրակի համայնքը, որտեղ նստում էր աղանդապետ Ղազարը։ Օգտագործելով Թոնդրակից փախած երկու մատնիչ քահանաների՝ Պողիկարպոսի և Նիկանորի ցուցմունքները Գրիգոր Մագիստրոսը զորքի գլուխն անցած եկավ Թոնդրակ, որը նա Շնավանք[84] էր կոչում ասորվոց կաթողիկոսին գրած իր նամակում։ Թոնդրակի համայնքից ավելի քան հազար հոգի հաղորդություն ընդունեցին և համայնքը ցրվեց։ Տեսնելով այս ողբալի վիճակը Ղազարը դիմել էր ասորիների կաթողիկոսին պաշտպանություն խնդրելով, բայց Գրիգոր Մագիստրոսը կարողացավ վերջինիս չեզոքացնել։

Թոնդրակում կատարված այս գործողությունների մասին խոսելիս Գրիգոր Մագիստրոսն իր նամակում հիշում է, որ այնտեղ նամակներ են գտնվել ուղղված նրանց առաջնորդ Հեսուին՝ ուղարկված Հայաստանի տարբեր գավառներից (եկեալ յիւրաքանչիւր գաւառաց)[85]։ Ուստի կարելի է եզրակացնել, որ բազի աղբյուրներում հիշված վայրերից՝ Ապահունիք (Թոնդրակ), Հարբ, Մարդաղի (Խնունք), Մանանաղի (Կաշն և այլն), Կարին, Բզնունիք (Խլաթ) կարող էին լինել նաև այլ գավառներ, որտեղ տարածվել էր Թոնդրակյանների ուսմունքը, մանավանդ որ Մագիստրոսի նամակներում ակնարկներ կան, որոնք վկայում են թե Անիում[86] ևս եղել են այդ ուսմունքի հետևորդներ։

4. ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Բագրատունյաց շրջանի Հայաստանի արհեստների ուսումնասիրման աղբյուրներն են՝ հնագիտական պեղումները (գլխավորապես Անիում և Դվինում) և արաբ աշխարհագիրների երկերը։ Դժբախտաբար հայ պատմիչները քիչ տեղեկություն-

84 «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», էջ 162։

85 Նույն տեղում։

86 Ա. Մնացականյան, Թոնդրակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին, «Տեղեկագիր» (հասար. գիտ.), 1954, № 3, էջ 66—70։

ներ են տալիս այդ շրջանի քաղաքների արդյունագործության մասին և այս բացը լրացվում է Ժ դարի մի քանի արաբ աշխարհագիրների հաղորդած տվյալներով։ Դրանք են հիմնականում Իսթախրին, Իբն Հաուկալը և Մուկադդասին, որոնք իրենց ուշադրությունը սևեռում են մեծ մասամբ Դվինի վրա։ Եթե աշխարհագիրները պատմում են գործվածքեղենի և դրա հետ կապված այլ ճյուղերի մասին, ապա հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված են խեցեղենի կամ մետաղյա իրերի արժեքավոր մնացորդներ, որոնք առատ նյութ են տալիս արհեստների վիճակի մասին։

Ժ դարի արաբ աշխարհագիրները մեծ տեղ են տալիս Դվինում պատրաստված տնային գործածության իրերին, ինչպես օրինակ՝ բարձերին, գորգերին, վարագույրներին, ծածկոցներին և այլն, որոնք բոլորն էլ կապ ունեն գործվածքեղենի արտադրության հետ։ Այս իրերը ներկվում էին որդան կարմիր ներկով, որն արաբների մոտ կիրմիզ էր կոչվում։ Հայտնի է, որ Դվինի մոտ գտնվող Արտաշատ գյուղը դրա արտադրության կենտրոնն էր և դրա շնորհիվ «որդան կարմրի գյուղ» անվանումն էր ստացել[87]։

Հետաքրքրական է նշել, որ որդան կարմրով ներկված այս տնային գործածության իրերը մեծ հռչակ էին ձեռք բերել խալիֆայության երկրներում և ընդհանուր անվամբ ծանոթ էին որպես «հայկական ապրանքներ» (տառացիորեն՝ հայկական տեսակներ, արաբ.՝ ասնաֆ ալ-արմանի)[88]։

Դվինի գործվածքեղենի արտադրության մեջ հայտնի էին թե բրդե, թե մետաքսե գործվածքներ։ Պարզ է, որ վերոհիշյալ հայկական կոչված ապրանքները պատրաստվում էին հենց Դվինում արտադրված գործվածքեղենից, ընդ որում բրդից կոշտ ապրանքներ էին պատրաստվում, իսկ մետաքսից՝ նուրբ տեսակը։

Հայկական տնային գործածության այս ապրանքներն այնքան հռչակված էին արաբական երկրներում, որ արաբ աշխարհագիրները այդպիսի ապրանքների մասին խոսելիս՝ նմանեցնում են հայկականի (արմանի) հետ։ Այսպես օրինակ,

[87] Jacut, I, 199.

[88] Ibn Hauqal, II, 342.

Յակուբին իր աշխարհագրական աշխատության մեջ Եգիպտոսի Ասիութ քաղաքի մասին խոսելիս, երբ հիշում է նրանում արտադրվող կարմիր գույնով (կիրմիզ) տնային գործածության իրերը (բարձեր, գորգեր և այլն), նշում է, որ դրանք նման են հայկականին[89]։

Դվինի արտադրանքի ամփոփ, բայց կուռ նկարագրություն տալիս է Բագրատունիներին ժամանակակից Իբն Հաուկալը։

«Այստեղ պատրաստվում են նուրբ բրդից և (սովորական) բրդից գործվածքներ, ինչպես օրինակ, գորգեր, բաղմոցներ, ծածկելու գորգեր, հենվելու բարձեր և այլ բաներ «հայկական» տեսակից, որոնք ներկվում են որդան կարմրով։ Սա մի ներկ է, որով ներկվում է նուրբ բուրդը և (սովորական) բուրդը և ստացվում է մի որդից, որն ինքն իրեն վրա է հյուսում, ինչպես շերամը, երբ ինքն իր վրա մետաքս է հյուսում։

Այստեղ արտադրվում է նաև մեծաքանակ մետաքսեղեն։ Նրանց մետաքսը իր նմանը շատ ունի Հռոմների երկրում թեև սա ավելի թանկարժեք է։ Իսկ հայկական անվամբ ծանոթ նրանց արտադրանքը ինչպես հատ գործվածքեղենը, նստարանները, գորգերը, վարագույրները, երկար գորգերը, կաշվի հենաբարձերը, բարձերը, ծածկելու գորգերը (ապա սրանք) ոչ մի տեսակետից իրենց նմանը չունեն աշխարհի որևէ մասում»[90]։

Ահա այս բոլոր նշված տեսակները դարձել էին Դվինի տեղական արտադրանքի մի կարևոր մասը, որի շնորհիվ քաղաքը իրոք որ համարվում է Բագրատունյաց Հայաստանի մեծագույն արհեստագործական կենտրոնը[91]։

Դվինի պեղումների արդյունքները վկայում են նաև արհեստների այլ ճյուղերի գոյության մասին։ Պեղումները ի հայտ բերեցին դարբինի, ջուլհակի, ոսկերչի արհեստանոցների մնացորդներ, ինչպես նաև բրուտի հնոց[92]։

---

[89] Bibl. Geogr. Arab., VII, 331.

[90] Ibn Hauqal, II, 342-343.

[91] Манандян, О торговле и городах Армении, стр. 212-213, 227-228.

[92] Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը...*, էջ 154, 170—172, 180—182, 236—237։

Գտնված իրերի մեջ կա երկու կարևոր խումբ՝ խեցեղեն իրեր և մետաղյա իրեր։ Եղել է հասարակ խեցեղեն, ջնարակած կավե ամանեղեն, հախճապակի և այլն։ Մետաղյա իրերի մեջ կան երկաթե, պղնձե առարկաներ և զենքեր։ Շատ հետաքրքրական են ոսկեղեն իրերը, որոնք հայ ոսկերչության պատմության համար արժեքավոր նյութ են տալիս։

Արհեստների մեջ իրենց տեղն ունեին նաև Հայաստանի մյուս քաղաքները։ Նույն իրն Հաուկալի վկայությամբ, հայկական բանվածքներ և այլ ապրանքներ պատրաստվում էին նաև հարավի քաղաքներում, որոնց մեջ հիշվում է Սալմաստը, Նփրկերտը, ինչպես նաև Ատրպատականից՝ Մարանդն ու Թավրիզը, որոնք նմանապես արտադրում էին այսպիսի գործվածքեղեն[93]։ Աշխարհագիրը հիշում է նույնիսկ Սալմաստում արտադրվող հայկական գոտու գինը, որը մեկ դինարից մինչև տասը դինարի էր ծախվում։ Հիշում է նաև գլխաշորերի և շալերի արտադրությունը Նփրկերտում և Հայաստանի որոշ քաղաքներում[94]։

Ահա այս բոլոր ապրանքները վաճառքի էին հանվում ոչ միայն Հայաստանի, այլև հարևան և հեռավոր երկրների շուկաներում, նպաստելով առևտրի զարգացմանը։

Արաբական տիրապետության շրջանում Բյուզանդիայի և այլոց հետ սահմանային անվերջ կռիվների, ծանր հարկերի և այլ պատճառներով Հայաստանում սկսված տնտեսական անկումը, որի մեջ իր մասն ունեցավ նաև առևտուրը, վերջ գտավ Թ դարում[95]։ Բագրատունյաց թագավորության մոտավորապես երկհարյուրամյա պատմության ընթացքում միայն Ատրպատականի Սաջյանների հետ էր, որ Հայաստանը երկարատև պատերազմի մեջ ներգրավվեց։ Երկարատև խաղաղությունը նպաստեց առաջին հերթին Հայաստանի քաղաքների զարգացմանը։

Ատրպատականից և Աղվանքից եկող և Հայաստանի միջով մինչև Փոքր Ասիա և Ասորիք երկարող առևտրական երկու հիմնական դծերի վրա գտնվող քաղաքները տարբեր ձևով զար-

---

[93] Ibn Hauqal, II, 344.

[94] Ibn Hauqal, II, 345

[95] Манандян, О торговле и городах Армении, стр. 200-201.

գացան։ Մինչև Ժ դարի կեսը հյուսիսային գիծը, որի վրա էին Նախճավանը, Դվինը, Անին և Կարնո քաղաքը (ապա նաև Արծնը) և հարավայինը, որի վրա էին Հերը, Վանը, Բերկրին, Արճեշը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշն ու Նփրկերտը—հավասարապես զարգանում էին։ Այդ ժամանակաշրջանի համար շատ հատկանշական է Հովհաննես Դրասխանակերտցու մոտ պահպանված Սմբատ Ա-ի մի նամակը (ավելի ճիշտ հատվածը), որը նա ուղարկել էր Աֆշին Սաջյանին ի հաստատումն այն սկզբունքի, թե Բյուզանդիայի հետ իր երկրի առևտրական կապերը օգտակար էին նույնիսկ խալիֆայության համար։ Նա ձգտում է համոզել Աֆշինին, որ իր դաշինքը Բյուզանդիայի հետ ոչ միայն հեշտացնում է հունական հանդերձների և զարդեղենի ներմուծումը, այլև ճանապարհը բաց է անում նաև մահմեդական վաճառականներին Փոքր Ասիա մուտք գործելու համար[96]։

Ատրպատականի Սաջյանների հետ սրյունահեղ պատերազմը թեև ժամանակավորապես կանգնեցրեց Հայաստանի քաղաքների զարգացումը, սակայն Ժ դարի կեսից արդեն սկսվում է Հայաստանի քաղաքների և առևտրի զարգացման մի նոր շրջան[97]։ Եթե առաջին Բագրատունիների օրոք զարգանում էին այնպիսի քաղաքներ, որոնք նախապես գոյություն են ունեցել, ինչպես օրինակ, Դվինը, Կարնո քաղաքը, Նփրկերտը, Նախճավանը, Արճեշը, Բերկրին, Մանազկերտը, Բաղեշը և այլն, ապա Ժ—ԺԱ դարերում բարգավաճման շրջան ապրող հին քաղաքներին զուգահեռ զարգանում են նոր ծնվող քաղաքներ, ինչպես Անին և Արծնը[98] և հետաքրքրականն այն է, որ այս երևույթը ավելի շեշտված ձևով տեղի է ունենում առևտրի հյուսիսային մայրուղու վրա, որը գտնվում էր հիմնականում Բագրատունյաց թագավորության անմիջական իշխանության տակ։

Պետք է նշել, որ հարավային մայրուղու վրա տեղավորված քաղաքների մեծամասնությունը ամիրայությունների հողերի

---

96 Դրասխանակերտցի, էջ 201։

97 Манандян, О торговле и городах Армении, стр. 200-201.

98 Ռ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ.*, էջ 75—80, 111—114։

վրա էին գտնվում։ Դեռ կարելի է նույնիսկ ասել, որ այդ գիծը ամբողջությամբ գտնվում էր ամիրաների ձեռքում։ Օրինակի համար Իբն Հաուկալը այսպես է նկարագրում այս հարավային մայրուղին. Մարաղայից Ուրմիա—Սալմաստ—Խոյ—Բերկրի—Արճեշ—Խլաթ—Բաղեշ—Արզն—Նփրկերտ...[99]։ Այստեղ եթե նկատի ունենանք, որ Խոյից Բերկրի ճանապարհը կարող էր գնալ նաև առանց Վանից անցնելու, ապա կտեսնենք, որ առևտրական ճանապարհն անցնում էր բացառապես ամիրաների ձեռքում գտնվող քաղաքներից։

Այդպես չէր սակայն հյուսիսային մայրուղին, որի վրա գտնված քաղաքների մեծամասնությունը հայոց ձեռքում էին, իսկ այն որ ամիրաների ձեռքում էր, ինչպես Դվինն ու Նախճավանը, ապա դա էլ Գագիկ Ա-ի օրոք նորից մտավ Հայոց թագավորության մեջ։ Բացի սրանից, ակներևորեն Դվինի առևտրի մեջ հիմնական դերը հայ վաճառականներն էին խաղում։ Առևտրական այս մայրուղին Ժ—ԺԱ դարերում զարգացման մի բուռն շրջան ապրեց և Հայաստանի քաղաքների պատմությանը նվիրված ուսումնասիրություններում հաճախ ընդգծված բարգավաճումը (Ժ—ԺԱ դդ.) առաջին հերթին հյուսիսային մայրուղու քաղաքներին է վերաբերում, որի լավագույն ապացույցը Անիի արագ և բուռն զարգացումն է[100]։ Այստեղ առաջացան նոր քաղաքներ իբրև արդյունք այս մայրուղու վրա գտնվող որոշ քաղաքների անկայուն վիճակի, ինչպես օրինակ՝ Դվինի օտար տարրի ձեռքում գտնվելը պատճառ դարձավ Անիի առաջացման և զարգացման, իսկ Կարնո քաղաքի անապահով վիճակը և կործանումը նպաստեց Արծնի առաջացմանն ու բարգավաճմանը։

Այսուհանդերձ հարավային մայրուղու քաղաքները ևս իրենց բաժինն ունեցան այս ընդհանուր բարգավաճման մեջ։ Հիշատ է, քաղաքական անկայուն դրությունը, ինչպես նաև բյուզանդական անվերջ ասպատակությունները, ստեղծել էին անապահով վիճակ, այսուամենայնիվ լինում էին ընդմիջումներ, որոնք նպաստում էին առևտրի որոշ աշխուժացմանը։

---

[99] Ibn Hauqal, II, 353.

[100] **Н. Марр,** Ани, стр. 22-25.

Հարավային մայրուղին սերտ առևտրական կապի մեջ էր Ասորիքի և Միջագետքի հետ և հենց դրանով էլ նպաստում էր Հայաստանի և այդ երկրների միջև գոյություն ունեցող առևտրական հարաբերությունների զարգացմանը: Դվինից և Անիից եկող ապրանքները տարվում էին Մանազկերտ, Խլաթ, Բաղեշ, Նփրկերտ և ապա Ամիդ: Վերջինս Հայաստանից եկող ապրանքների կուտակման կարևոր կայան էր, որտեղից արդեն առևտրական ճանապարհը երկճյուղվում էր. մի դիծը իջնում էր Միջագետք, իսկ մյուսը՝ Ասորիք: Շատ հետաքրքրական է Ամիդի բնորոշումը Իբն Հաուկալի մոտ. «Նրանում առևտուրը բոլոր ժամանակներում չի դադարել, որովհետև նա Հայաստանի, Հայոց երկրի (իմա՝ բյուզանդական Հայաստանի) և Մուփարկինի ու Արզնի կողմերի նավահանգիստն է: Այստեղից Մոսուլ են գնում նավերը՝ ապրանքներով բեռնված, ինչպես մեղրը, յուղը, այլևայլ բարիքները, պանիրը, ընկույզը, կաղինը, նուշը, պիստակը, թուղը և նման բաներ տարբեր տեսակների»[101]:

Գյուղատնտեսական մթերքներից բացի Հայաստանի Անձևացյաց գավառից արտածվում էին ջորիներ, որոնց մասին աշխարհագիրը գովասանքով է խոսում. «իսկ ալ-Ջաուազանից (Անձևացիք) և Հայաստանի ու Առանի (որոշ) մասերից Իրաք, Շամ (Սիրիա) և Խորասան են բերվում ընտիր ջորիներ, որոնք հայանի են իրենց տոկունությամբ, ուժով, ճկունությամբ ու համբերությամբ և նրանց հռչակը ավելորդ է դարձնում (ավելի նկարագրել)»[102]:

Հայաստանի համար գետային նավահանգիստ էր համարվում ոչ միայն Ամիդը, այլև Մոսուլը, որը Միջագետքում առևտրական կարևորագույն հանգուցակետ էր: Յակուբին վկայում է, որ Բաղդադ էին գալիս հայկական ապրանքներով լեցուն նավեր[103]: Հայաստանից եկող կարևորագույն վաճառքի առարկաները հայկական կոչված ապրանքներն էին: Դրանք հռչակված էին արաբական գրեթե բոլոր երկրներում, օրինակ

---

101 Bibl. Geogr. Arab., II, 153.
102 Ibn Hauqal, II, 346.
103 Bibl. Geogr. Arab., VII, 237.

Միջագետքում, Ասորիքում, Եգիպտոսում, ինչպես նաև Իրանում։ Իրանի Իսֆահան քաղաքի արտադրած գորգերի մասին խոսելիս Ժ դարի սկզբի աշխարհագիր իբն Ռուստան, ասում է, որ դրանք լավ էին միայն այն ժամանակ, երբ օգտագործվում էին «հայկական ընտիր տնային կահավորանքի հետ»[104]։

Դեռ Թ դարում Յակուբին վկայում է, որ Հայաստանի տնային կահավորանքի այս ապրանքների համար օգտագործվում էր նաև Միջագետքից ներմուծված հում նյութ։ Միջագետքի Վասիթ քաղաքի մոտ գտնված Նահրաբան քաղաքում «պատրաստվում էր հայկական կահավորանքի հենք, որը տարվում է Հայաստան, մանվում և հյուսվում»[105]։

Հայաստանից արտածվում էին նաև այլևայլ ապրանքներ, ինչպես հանքային նյութեր և այլն։ Վանա լճից հանված տառեխ ձուկը (արաբ. թիռիխ) աղվում էր և ապա արտահանվում Մոսուլ, Իրաքի տարբեր կողմերը և Սիրիա։ Վանա լճի ափերից հանվում էր նաև բորակ աղը, որը տարվում էր Իրաք և վաճառվում հայթուխներին[106]։

Հյուսիսային առևտրական մայրուղու վրա, որն անցնում էր հիմնականում Բագրատունյաց բուն թագավորության հողերի միջով, կային երկու կարևոր քաղաքներ, որոնք հաճախ դանվել են ամիրայությունների կազմում՝ Դվինն ու Կարնո քաղաքը։ Դվինը Բագրատունյաց թագավորության գրեթե ամբողջ տևողության ընթացքում մնաց որպես Հայաստանում արհեստների և առևտրի կարևորագույն կենտրոն և միայն Ժ դարի վերջին և ԺԱ դարում էր, որ Անին սկսեց մրցել նրա հետ, աստիճանաբար խլելով նրանից առաջնությունը։

Դվինն առևտրական ճանապարհների կարևորագույն հանգույց էր։ Նրանից առևտրական ճանապարհը գնում էր արևելք՝ Պարտավ և ապա Շամախի և այնտեղից Դերբենդ և խազարների երկիրը, մի ուրիշը գնում էր հյուսիս՝ Տփղիսի վրայով Սև ծովի ափը։ Կարևորագույն նշանակություն ուներ դեպի արևմուտք գնացող ուղին, որը Անիում երկճյուղվում էր, ընդ որում մեկը գնում էր Կարնո քաղաք և ապա Տրապիզոն, իսկ մյուսը

---

104 Bibl. Geogr. Arab., VII, 153.
105 Bibl. Geogr. Arab., VII, 322.
106 Ibn Hauqal, II, 346.

իջնում էր հարավ։ Դվինն առևտրական ճանապարհով կապված էր նաև Իրանի հետ Նախճավանի և Թավրիզի վրայով[107]։

Մոտավորապես այս չորս ուղղություններին համաձայն էլ Դվինն ուներ համապատասխան դռներ։ Մուկադդասին հիշելուց հետո, որ Դվինն ունի բազմաթիվ դռներ, հակառակ հանվանն հիշում է երեքը՝ Անվո դուռը (Բաբ Անի), Տփղիսի դուռը և «Բայդարի» դուռ[108]։ Առաջին երկուսի դիրքերը պարզ են, այսինքն Անվո դուռը պետք է մոտավորապես արևմտյան կողմում եղած լիներ, իսկ Տփղիսի դուռը՝ հյուսիսում։ Դժվար է սակայն որոշել երրորդ դռան տեղադրումը և միայն նկատի ունենալով Պարտավի հետ Դվինի սերտ առևտրական հարաբերությունները, կարելի է ենթադրել, որ սա կարող էր լինել արևելյան պարսպի վրա։ Բացի սրանցից, ինչպես գիտենք, Մունաջջիմ Բաշիի մոտ հիշված կա նաև «գերեզմանների դուռը»[109], որի միջով միջնաբերդից իջնող Շադդադյանները փախան Վասպուրական (այսինքն՝ հարավ արևմուտք), ուստի կարելի է ենթադրել, որ սա կարող էր քաղաքի մոտավորապես հարավային կողմում եղած լինել։

Քաղաքը հավանաբար ուներ նաև ուրիշ դռներ, բայց մասնավորական տեղեկություններից միայն այսքանն է մեզ հայտնի, իսկ հնագիտական պեղումները այս հարցում առայժմ դեռ չեն օգնել, որովհետև Դվինի կավակերտ պարիսպները ժամանակի ընթացքում վերածվել են հողակույտերի։

Ամիրայությունների կազմում գտնվող հայկական քաղաքներից շատերը (Կարնո քաղաք, Մանազկերտ, Խլաթ և այլն) մեծ ավերածությունների ենթարկվեցին Բյուզանդիայի առաջխաղացման հետևանքով, որը շատ վատ անդրադարձավ նրանց առևտրի վրա, իսկ սրան հաջորդող սելջուկյան ավերիչ արշավանքները էլ ավելի խորացրին առևտրի անկումը։

5. ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՎԱՏԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐ

Արաբական ամիրայությունները Հայաստանում որպես ավատական ինքնուրույն տիրույթներ շատ բնորոշ էին Բաղ-

---

107 Манандян, О торговле и городах Армении. стр. 237-239.

108 Bibl. Geogr. Arab., III, 377.

109 Minorsky, Studies, (arab.), 6.

բատունյաց ժամանակաշրջանին։ Սմբատ Ա-ի մահվանից հետո Բագրատունյաց թագավորությունն այլևս երբեք չվերստացավ իր նախկին ամբողջական ձևը, այլ վերածվեց իրար հետ թույլ կերպով կապված ավատական իշխանությունների, որոնց մի մասը գոյություն ունեցավ թագավորություն անվան տակ, մի ուրիշ մասը որպես իշխանություն, իսկ մի այլ մասն էլ՝ որպես ամիրայություն։ Սրանք բոլորն էլ Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի իշխանության տարիներին Բագրատունի թագավորներին ենթակա էին և հարկատու, իսկ հետո միայն թույլ կերպով էին կապված Բագրատունիների հետ։

Սակայն Հայաստանի ամիրայություններն ունեին առանձնահատուկ դեր, որոնցով նրանք տարբերվում էին Հայաստանի մանր թագավորություններից և իշխանություններից։ Գլխավոր հատկանիշը, որը նրանց տարբերիչ դիծն էր հանդիսանում, այն էր, որ ամիրայությունները քաղաքային տիրույթներից էին բաղկացած։ Արաբ (և այլ) ամիրաները ձգտում էին դեպի վաճառաշահ քաղաքները և հենց քաղաքի շուրջը գտնվող գյուղերից ավելին նրանց այնքան էլ չէր հրապուրում։ Ջահհաֆյանների հանդուգն փորձերի ձախողումից հետո արաբական բոլոր ամիրայությունները կծկվեցին որոշ կալվածների սահմաններում, բավարարվելով միայն քաղաքներով։ Ինչպես տեսանք հենց քաղաքներում էլ կենտրոնացել էր արաբ և այլ մահմեդական ազգաբնակչությունը, որն այդ ամիրայությունների գոյության հուսալի հենարանն էր։ Քաղաքն իր օրեցօր զարգացող առևտրով հրապուրիչ էր, մանավանդ, որ գավառներում արաբ գյուղացիություն բոլորովին չկար։

Արաբները դեռ խալիֆայության տիրապետության ժամանակ էլ հավաքվում էին Հայաստանի քաղաքներում, բայց այլ ձգտումներով, այսինքն քաղաքական և ռազմական նպատակներով։ Իրենց ձեռքում պահելով երկրի գլխավոր քաղաքները և մանավանդ Դվինը, նրանք բնականաբար կապահովեին իրենց իշխանությունը Հայաստանում, իսկ, օրինակ, Կարնո քաղաքը ուներ նաև ռազմական նշանակություն։ Սակայն Բագրատունյաց շրջանում արաբ ամիրաները երբեք չէին կարող ունենալ այն հավակնությունները, որոնք դայթակղեցրել էին դեռ Ջահհաֆին և նրա հետնորդներին։

Հայ նախարարները այս տեսակետից շատ էին տարբերվում ամիրաներից։ Բագրատունի, Արծրունի, Սյունի կամ Պահլավունի թագավորներն ու իշխանները թեև հաստատվում էին վաճառաշահ քաղաքներում, սակայն մենք նրանց հաճախ տեսնում ենք անառիկ ամրոցներում, որոնք հսկում էին իրենց ենթակա գավառների վրա։

Հայ նախարարները հաճախ կառչած էին մնում առևտրի գլխավոր մայրուղիներից մի քիչ դուրս գտնվող լեռնային ամրոցներին կամ էլ ամրոց-քաղաքներին։ Այսպես էին Պահլավունիները Բջնիում, Կյուրիկյանները՝ Լոռեում կամ էլ Սյունյաց տերերը Կապանում ու Եղեգիսում։

Բնականաբար հայ նախարարները նույնպես ձգտում էին դեպի առևտրի գլխավոր մայրուղիների վրա գտնվող քաղաքները, սակայն անհաջողության դեպքում հիմնում էին նոր քաղաքներ, որպեսզի այդպիսով իրենց բաժինն ունենան այդ ժամանակաշրջանի աճող առևտրի մեջ։ Հենց Դվինը գրավելու դժվարությունն էր, որ ստիպեց Աշոտ Գ-ին Անին վերածել մայրաքաղաքի և կամ Բերկրիի և Վանա լճի հյուսիսի վաճառաշահ քաղաքների հետ մրցելու տենչն էր, որ Արծրունիներին մղեց ամեն կերպ զարկ տալու Վանի և Ոստանի շինարարությանը։ Արծրունիները պայքար մղեցին դեպի Վանա լճի հյուսիսի քաղաքները տարածվելու համար, բայց միայն Ամյուկ բերդը կարողացան գրավել, իսկ Բերկրին և մյուս քաղաքները լոկ ժամանակավորապես ընկան նրանց տիրապետության տակ։

Ամիրայությունների և հայ նախարարների գլխավորած ավատական իշխանությունների միջև երկրորդ կարևոր տարբերիչ գիծն այն է, որ առաջինները սերտորեն կապված էին խալիֆայության երկրների հետ, ուստի և նրանց անջատողական ձգտումները չափազանց վատ էին անդրադառնում Հայոց թագավորության ճակատագրի վրա։ Որպես այդ շրջանին հատուկ անջատողական ձգտումներ ունեցող ավատատերեր, նրանք ձգտում էին ազատվել Հայոց թագավորների իշխանությունից, բայց լինելով օտար իշխանություններ նրանց այս ձգտումը այլ կերպ էր արտահայտվում, քան հայ ավատատերերի նման ձգտումները։ Սյունյաց կամ Տաշիր Զորագետի հայ

մանը թագավորները հիշում է, ամեն ձևով ջանում էին ազատվել Անիի թագավորների գերիշխանությունից, բայց արտաքին վտանգի ժամանակ նրանք բոլորը հավաքվում էին մի դրոշի տակ և մեծ մասամբ հենց Անիի թագավորների ղեկավարության ներքո։ Այսպես եղավ, օրինակ, Բյուզանդիայի կայսր Հովհան Չմշկիկի սպառնալի առաջխաղացման ժամանակ, երբ Աշոտ Գ-ի դրոշի ներքո հավաքվեցին Վասպուրականի, Տաշիր Զորագետի, Կարսի, Սյունյաց և Սասունի տիրակալները։

Հայկական իշխանությունների միջև գոյություն ունեցող այս համագործակցությունից բնականաբար դուրս էին մնում ամիրայությունները, որոնք նույնիսկ սիստեմատիկաբար պայքարում էին Հայոց թագավորության դեմ, դաշնակից լինելով հենց նրա թշնամիների հետ։ Իհարկե, բացառված չէր այն հանգամանքը, որ Հայոց թագավորի դեմ կռվի դուրս գար նաև հայ նախարարը, դաշնակցելով հենց թշնամու հետ, ինչպես օրինակ՝ Գագիկ Արծրունին Սմբատ Ա-ի դեմ կամ Աշոտ Շապուհյան Բագրատունին՝ Աշոտ Բ-ի դեմ, սակայն այստեղ սոսկ դահի նկատմամբ նրանց ունեցած հավակնություններն էին դրդապատճառը և նրանց թշնամին օրվա Բագրատունի թագավորն էր և ոչ թե Հայոց թագավորությունը։ Բավական է միայն նշել, որ հենց նույն Գագիկ Արծրունին որոշ ժամանակ անց ստիպված եղավ հրաժարվել իր նախկին դաշնակցից և նույնիսկ պայքարի դուրս գալ նրա դեմ, հօգուտ Հայոց թագավորության։

Հայաստանի ամիրաները ընդհանրապես Հայոց թագավորության թշնամիների դաշնակիցներն էին։ Այս տեսակետից խիստ բացասական դեր խաղաց Դվինի ամիրայությունը, որը երկար ժամանակ հենարան դարձավ Ատրպատականի կողմից դեպի Հայաստան ուղղված բոլոր արշավանքների համար։ Սաջյանների բոլոր ասպատակությունների ժամանակ Դվինը նրանց ռազմական գործողությունների կայանն էր։ Սալարյանները նույնպես քաջ գիտակցելով որ Հայաստանի և ընդհանրապես արևելյան Անդրկովկասի դեմ իրենց ոտնձգությունների համար Դվինը մեծ նշանակություն ունեցող քաղաք է, այն երբեք ձեռքից բաց չթողեցին։

Իրենց ձեռքում ունենալով հանգուցային նշանակություն

ունեցող քաղաքներ, ամիրայությունները նպաստեցին Հայոց թագավորության մասնատվածության էլ ավելի խորացմանը։ Քանի Դվինը անջատված էր և նույնիսկ թշնամի էր Հայոց թագավորությանը, պարզ է, որ Բագրատունի թագավորի իշխանությունը Սյունիքի և Արցախի վրա անվանական կլիներ և նույնիսկ բոլորովին կվերանար։ Դա որոշ չափով նպաստեց նաև Վասպուրականի մեկուսացմանը և անջատմանը։ Իսկ Մանազկերտի Կայսրի ամիրայությունը ուղղակի կտրեց կապը Բագրատունի թագավորների և Տարոնի Բագրատունիների միջև, դեռ նույնիսկ իր հերթին նպաստելով Վասպուրականի և Բագրատունյաց բուն թագավորության միջև հարաբերության խզվելուն։

Այսպիսով, ամիրայությունները էլ ավելի խորացրին այն մասնատվածությունը, որն այնքան հատուկ էր Բագրատունյաց թագավորությանը և նրանց դեմ պայքարը Բագրատունի թագավորներից պահանջում էր ավելի մեծ զոհողություններ և հեռանգ, քան հայ նախարարների դեմ պայքարելիս, որովհետև ամիրայությունների դեմ ամեն մի հարձակում կարող էր առիթ դառնալ հարևան մահմեդական պետությունների հետ հարաբերությունների վատացմանը։

Բագրատունյաց Հայաստանի ամիրայությունների մեջ ամենամեծը Կայսրիկների իշխանությունն էր Մանազկերտ կենտրոնով։ Սակայն բացի դրանից, նրանց իշխանությանն էին ենթարկվում մի քանի քաղաքներ՝ Խլաթ, Արճեշ, Բերկրի, Արծկե և այլն։ Մանազկերտի ամիրաների իշխանությունը ժառանգական էր Աբու-լ-Վարդ Կայսրիկի ընտանիքի մեջ, այնպես որ մեռնող ամիրային կարող էր հաջորդել կամ որդին կամ էլ ընտանիքի որևէ ավագ անդամը։ Լինում էր նաև այնպես, որ մեռնող ամիրայի մի քանի որդիները իրենց մեջ բաժանում էին հոր ժառանգությունը ստեղծելով փաստորեն մի քանի փոքր ամիրայություններ, որոնք սակայն կարող էին վերստին միավորվել։ Աբու-լ-Վարդից սերող այս բոլոր ամիրաների նստավայր էր հիմնականում հանդիսանում Մանազկերտը և կամ էլ Խլաթն ու մյուս հայտնի քաղաքները։

Ամիրայությունների քաղաքների ներքին կառավարման հարցը սերտորեն կապված է ընդհանրապես այդ ժամանակվա

հայկական քաղաքների վիճակի հետ։ Բագրատունյաց ժամանակաշրջանի հայկական քաղաքներն ունեին մեծ մասամբ արևելյան նկարագիր[110] և շատ ընդհանրություններ կային նրանց և Աբբասյան խալիֆայության այլ երկրների քաղաքների միջև. ինչպես հայտնի է արևելքի քաղաքները տարբերվում էին միջնադարյան Եվրոպայի քաղաքներից, որոնց հատուկ էր ինքնուրույնության ձգտումը և պայքարը սեփականների սանձարձակ իշխանության դեմ։ Միջնադարյան արևելքում անծանոթ երևույթ էր քաղաքային ինքնավարությունը և կամ այն ձեռք բերելու համար մղված պայքարը։

Արևելյան քաղաքի լիիրավ կառավարիչը նրա ամիրան էր (իշխանը), որը մեծ մասամբ իշխում էր ժառանգաբար և քաղաքի վրա նայում էր որպես իր սեփական տիրույթի։ Մահմեդական քաղաքներում ամիրայի կողքին կար նաև կրոնական համայնքի պետը, որը ծանոթ էր կադի՝ դատավոր անվամբ և վարում էր կրոնական ու դատական, ինչպես նաև «վակֆ» (կայունացված) կոչված անշարժացած նվիրատվությունների (մզկիթապատկան կամ այլ կալվածների) գործերը։ Թեև Անդալուզիայի (արաբական Իսպանիայի) քաղաքներում ամիրայի և կադիի միջև ծագում էին տարաձայնություններ, որոնք բանասերների կողմից համարվում են ամիրայի իշխանության դեմ որոշ ընդվզում[111], այնուամենայնիվ նման երևույթ երբեք չի նկատվել Արևելյան խալիֆայության քաղաքներում և ամիրան միշտ էլ եղել է իր քաղաքի լիիրավ իշխանը, որի իրավասությունները սահմանափակելու ձգտումներ չեն արձանագրվել պատմիչների մոտ։

Առևտրի զարգացումը Արևելքում ծնունդ տվեց նաև մի նոր պաշտոնի՝ մուհտասիբի[112], որը նշանակվում էր հենց ամիրայի կողմից և պարտականություն էր հսկել առևտրական գործարքների ճիշտ կատարման և չափերի ու կշիռների ճիշտ օգտագործման վրա։ Այս տեսակետից մուհտասիբն ուներ որոշ դատական իրավունքներ, թեև միայն առևտրական շրջանակներում, բայց նույնիսկ այստեղ, երբ գործը պահանջում էր

---

[110] Манандян, О торговле и городах Армении, стр. 220.

[111] Levi-Provencal, Histoire de l'Espagne musulmane, III, 136-141.

[112] Mawardi, al-Ahkam al-Sultaniyah, Bonn, 1853, p. 417-418, 431.

խորը քննարկում, նա պարտավոր էր այն հանձնել կադիին։ Մուհտասիբն իրավասու էր նաև հսկելու հանրային բարոյականության վրա, հասարակական վայրերում արգելելով գինի խմել կամ արգելված հավաքույթների մասնակցել։ Եթե օրվա կառավարչի դեմ որևէ կասկածելի տրամադրություններ հայտնաբերեր նա պարտավոր էր հայտնել իր տիրոջը։ Որպես առևտրի վերահսկիչ նա էր զանձում հարկերը։ Խալիֆայության որոշ քաղաքներում կար նաև ժամանակակից իմաստով ոստիկան (Սահիբ ալ-Շուրթա), որն օգնում էր մուհտասիբներին։

Հիմնականում նման վիճակ էր տիրում նաև Բագրատունյաց Հայաստանի քաղաքներում, ընդ որում նաև ամիրայությունների քաղաքներում։ Մանազկերտում, Խլաթում, Արճեշում և այլն ժառանգաբար իշխում էին Կայսիկները, իսկ Դվինում և Կարնո քաղաքում չկար այսպիսի ժառանգական իշխանություն, այլ քաղաքի ամիրաները, որոնք կամ Ատրպատականի տիրակալների կողմից նշանակված կառավարիչներ էին կամ էլ պատահական տիրողներ՝ ուղղակի իրար հաջորդում էին և ազգակցական ոչ մի կապ չունեին իրար հետ։ Մինչև Շադդադյանների հաստատվելը ոչ մի իշխանական տուն չկարողացավ ամրանալ Դվինում և տարբեր իշխողներ իրար էին հաջորդում ընդամենը մի քանի տարի միայն մնալուց հետո։ Դուցե սրանց մոտ էլ կլիներ սենեկապետ՝ հաջիբ, ինչպիսին կար, օրինակ, Գանձակում նույն ժամանակ[113]։ Հայաստանում սենեկապետներ՝ հեճուպներ կային Ջաքարյան շրջանում։

Աղբյուրների վկայությունն այն մասին, թե Դվինում եղել է մզկիթ և մահմեդական համայնք[114], կասկած չի թողնում, որ այնտեղ եղել է նաև «կադի», որը զբաղվել է մահմեդական համայնքի գործերով։ Հասկանալի է, որ քաղաքի հիմնական բնակչությունը՝ հայ տարրը, կրոնական գործերում ղեկավարվում էր, մինչև Ժ դարի առաջին քառորդը հենց կաթողիկոսների կողմից, իսկ դրանից հետո Դվինի արքեպիսկոպոսների ձեռքով։

---

[113] Minorsky, Studies (arab.), 12.
[114] Bibl. Geogr. Arab., III, 378.

Ամիրայությունների բոլոր քաղաքներում իրավական տեսակետից շարունակվում էր այն դոյավիճակը, որը կար դեռ արաբական տիրապետության տակ։ Արաբական տիրապետության տակ պարզ է, որ տիրողների իրավական կարգը՝ մահմեդական շարիաթը պետք էր տեսականորեն ընդունելի լիներ Հայաստանում, սակայն նրա կիրառության ոլորտները սահմանափակված էին միայն քաղաքական սահմաններով։ Հարկերի բաշխման կամ այլ նման գործերում մահմեդական շարիաթը, իհարկե, ոստիկանների բոլոր գործողությունների ելակետն էր, բայց հայ ժողովրդի կենցաղային կամ ընտանեկան վիճելի հարցերի համար, ինչ խոսք, որ հայ եկեղեցական կանոնները, որոնք ի դեպ հավաքվեցին և ձևավորվեցին հենց արաբական տիրապետության ժամանակ, ամեն մի դատաստանի հիմքն էին կազմում։ Հայ եկեղեցին ուներ իր եկեղեցական դատարանը, որն առաջնորդվում էր իր կանոններով։

Բագրատունյաց ժամանակաշրջանում այս վիճակը շարունակվեց վերոհիշյալ քաղաքներում, երբ ամիրան առաջնորդվում էր շարիաթի օրենքներով, որոնք կիրառվում էին այդ քաղաքների մահմեդական ազգաբնակչության մեջ, իսկ բուն ժողովուրդն առաջնորդվում էր իր վաղեմի կանոններով։ Այդ նույն կանոնները կիրառվում էին նաև Հայոց թագավորության քաղաքներում, որովհետև որևէ քաղաքացիական աշխարհիկ դատաստանագիրք չի եղել այս շրջանում, այլ կարծվում է, թե որոշ սահմաններում կիրառվել են բյուզանդական մի քանի նովելների և ասորա-հռոմեական դատաստանագրքի թարգմանությունները[115]։

Այսպիսով, մահմեդական շարիաթը նեղացնում էր հայ եկեղեցական կանոնների կիրառման ոլորտները, որը և անհանգստացնում էր հայ եկեղեցուն։ Հետագայում Մխիթար Գոշի դատաստանագրքում հատուկ գլուխ մտցվեց հետևյալ վերնագրով. «Յաղագս թէ ոչ է պարտ քրիստոնէի երթալ յատեան անօրինի զի բաղում է միջոցն, որպէս այժմ ցուցանէ

115 Ս. Սամվելյան, *Հին հայ իրավունքի պատմությունը*, Երևան, 1939, էջ 135—140։

բանս»[116] (այն մասին, թե քրիստոնյային անվայել է այլադավանների դատարանը դիմել, որովհետև ինչպես ներկա գլխում երևում է, մեր և նրանց միջև տարբերությունը մեծ է)։

Այս շրջանների հայկական քաղաքներում, բացի աշխարհիկ և հոգևոր զույգ պետերից, կար նաև Մուհտասիբը[117], որը առևտրի զարգացման հետ անխուսափելիորեն պետք է հանդես գար։ Հետագայում Մխիթար Գոշը խոսելով առևտրի մասին (Յաղագս դատաստանաց վաճառաց)[118], հիշում է, որ իշխանները պետք է կարգեն «կուփիչներ», որոնց պարտականությունն է հսկել, որ առևտրի մեջ խարդախություն չլինի (որոնել և տեսանել զի մի նենգութիւն ինչ արասցեն), չափերի և կշռի մեջ խախտում չլինի և այլն։

Բագրատունյաց որոշ քաղաքներում կային տեղական իշխանության մարմիններ՝ քաղաքային վարչություն, որը Դվինում այլ ձևով հանդես եկավ, քան Անիում։

Դվինի քաղաքային վարչությունը շատ յուրահատուկ դեր կատարեց նրա պատմության մեջ, ուստի և արժանի է հատուկ ուշադրության։ Ինչ խոսք, որ Դվինը, ինչպես նաև Հայաստանի այդ շրջանի քաղաքներն ընդհանրապես, չունեին քաղաքային ինքնավարություն, սակայն Դվինի անկայուն վիճակը, որը ոչ մի իշխանական տան հնարավորություն չտվեց ամուր կերպով իր տիրապետությունը հաստատելու, հաճախ էր առիթ տալիս Դվինի քաղաքային վարչությանը ինքնավար և ինքնուրույն ձևով գործելու։ Սաջյանների կողմից Դվինի գրավումից մինչև Գագիկ Ա-ի օրոք նրա միացումը Հայոց թագավորությանը, այսինքն՝ մոտավորապես մեկ դար, քաղաքը անիշխանության ոպառնալիքի առաջ էր կանգնած։

---

116 Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, նախադրություն, էջ Բ։

117 Манандян, О торговле и городах Армении, стр. 232.

118 «Դատաստանագիրք Հայոց», մասն Բ, գլ. ՃԻԳ։

Անիի մուհթասիբների մասին հիշվում է արձանագրություններում, տե՛ս В. Н. Бенешевич, Три анийские надписи XI в., Пб, 1921. Հ. Մ. Բարթիկյան, Ահարոն մագիստրոսի արձանագրության (1055—1056) մեջ հիշատակված հարկերի մասին, Պատմաբանասիրական հանդես, 4(7), 1959, էջ 168—173։

Հայ և արաբ աղբյուրներում որոշ վկայություններ կան Դվինի քաղաքային վարչության մասին, օրինակ, Բալազուրին Հայաստանի արաբական շրջանի անցքերի մասին խոսելիս վկայակոչում է Դվինի ծերերից (ավագներից) մեկին՝ Բարմաք իբն Աբդալլահ ալ-Դաբիլիին (Դվինեցի) կամ Կարնո քաղաքի ծերերին (մաշայիխ)[119]։ Նմանօրինակ տեղեկություններ հայ պատմիչների մոտ ավելի շատ են։ Թովմա Արծրունու շարունակողը Գագիկ Արծրունու և Դվինի վրա հարձակվող անանուն ամիրայի միջև տեղի ունեցած ճակատամարտի մասին պատմելիս հաղորդում է, որ Դվինը ավերումից փրկելու համար «ծերք քաղաքին անկեալ առ ոտս նորա խնդրեն զխաղաղութիւն տալով հարկս ու պատանդս»[120]։ Ավելի հստակ են Հովհաննես կաթողիկոսի մոտ «գլխաւոր գահերէցք և հոյակապ նահապետք և ազգատոհմք ի քաղաքին Դվնայ»[121] խոսքերը, որոնք վերաբերում են Ժ դարում Նասր ոստիկանի գալստյան առթիվ Դվինից գնացած պատվիրակության անդամներին։ Դրանք հենց Դվինի ճակատագրով անհանգստացած քաղաքային վարչության մեծամեծներն էին։

Սովորական պայմաններում այսինքն՝ ժառանգական կայուն իշխանության գոյության դեպքում քաղաքային վարչությունը Դվինում հազիվ թե որևէ կարևոր դեր խաղացած լիներ նրա կյանքում, սակայն այն պայմաններում, երբ քաղաքում ոչ միայն չկար ժառանգական իշխանություն, այլև ոչ մի իշխող չէր կարողանում ապահովել խաղաղությունը և անդորրությունը, այսպիսի վաճառաշահ կենտրոնի ճակատագիրը պիտի անհանգստացներ առաջին հերթին քաղաքի մեծամեծներին, որոնք պետք է քաղաքի իշխանությունը թեկուզ ժամանակավորապես իրենց ձեռքը վերցնեին։ Բնականաբար նրանց այս բացառիկ դերը վերջանում էր հենց այն րոպեին, երբ գալիս էր նոր իշխանը։ Նրանք միայն կարող էին նախապատվությունը տալ այս կամ այն իշխանին, նկատի ունենալով թե որը ավելի նպաստավոր էր իրենց համար։ Օրինակ,

---

119 Beladsori, 193-198.

120 Թովմա, էջ 302։

121 Դասխանակերտցի, էջ 416։

Մուհամմադ իբն Շադդադը, երբ տեսնելով Դվինեցոց դավաճանությունը լքեց քաղաքը և հեռացավ, Դվինի մեծամեծները[122] գնացին նրա հետևից խնդրելու համար, որ նա իրենց չթողնի դայլամցիների ձեռքում և դառնա քաղաքի տերը։

Սակայն գեղքերի բերումով ստացված այս ինքնուրույնությունը դեռ քաղաքային ինքնավարություն չէր։ Դվինը և ընդհանրապես Բագրատունյաց շրջանի քաղաքները մեծ մասամբ չունեին երիցանի և քաղաքային ինքնավարություն, մի բան, որի սաղմերը գտնում ենք միայն Անիում։ ԺԱ, ԺԲ դարերում Անիի երիցանին քաղաքական գործարքներ էր կնքում։ Այսպես, օրինակ, Գագիկ Բ-ի վերադարձից իր հույսը կտրելով երիցանին (քաղաքացի զլխաւորքն որ նստէին յԱնի)[123] իրեն իրավասու էր զգում ոչ միայն քաղաքի, այլև ամբողջ Բագրատունյաց թագավորության ճակատագիրը տնօրինելու, Հայոց գահն առաջարկելով տարբեր իշխաններին։ Հետագայում ԺԲ դարի սկզբին Շադդադյան մի ամիրա՝ Ֆադլունը, որը ձգտում էր վերականգնել իր տան իրավունքները Անիի վրա, զիմում է ոչ միայն Վրաց Բագրատունիներին, այլև հենց Անիի ավագներին, երիցանուն (գայ ի խնդիր Հայրենի քաղաքին Անւոյ և աղերսանաք խնդրէ յԱբուլնթէ և յաւագաց քաղաքին)[124]։

---

122 Minorsky, Studies, (arab.), 4.

123 Լաստիվերտցի, էջ 62։

124 Վարդան, էջ 157—158։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արաբական ամիրայությունների դերը որոշելու համար պետք է նկատի ունենալ նրանց գոյության երկու շրջանները՝ արաբական տիրապետության և Բագրատունյաց։

Թ դարի առաջին կեսում, երբ Հայաստանը դեռ արաբական լծի տակ էր, երկրում հաստատված արաբ ամիրաները երկսայրի սուր էին խալիֆայության համար։ Հայ նախարարների դեմ մղած նրանց պայքարը նպաստում էր խալիֆայության տիրապետության ամրապնդմանը, բայց մյուս կողմից դառնալով կենտրոնախույս ավատատերեր և հաճախ ըմբոստանալով Աբբասյանների իշխանության դեմ, նրանք որոշ չափով օգնում էին հայերի հակախալիֆայական պայքարի հաջող ելքին։

Սակայն Բագրատունյաց թագավորության ժամանակ Հայաստանի արաբական ամիրայությունները փոխեցին իրենց դիրքավորումը։ Շարունակելով հանդերձ հայ նախարարներից նոր հողեր խլելու իրենց հին ձգտումը, նրանք միաժամանակ ամեն կերպ աշխատում էին աղատվել Բագրատունի թագավորների գերիշխանությունից։ Բագրատունյաց թագավորության մոտավորապես երկհարյուրամյա գոյության ընթացքում նրանք սոսկ խոչընդոտ էին Հայոց թագավորության միասնականության դեմ։ Այս նույն բացասական դերը խաղացին արաբական շրջանից մնացած ամիրայությունները նաև Վրաստանում և Աղվանքում։

Բագրատունի թագավորների, Արծրունիների և այլոց պայքարը ամիրայությունների դեմ վերջ ի վերջո ձախողությամբ վերջացավ։ Ճիշտ է, Բյուզանդական կայսրությունը ոչնչացրեց

արաբների ամիրայությունները Կարնո քաղաքում, մաքրեց արևմտյան և այլ հայկական գավառները ամիրայություններից և իրեն ենթարկեց Մրվանյաններին, սակայն նրա նվաճումները ճակատագրական նշանակություն ունեցան Հայոց թագավորության համար։ Եթե ամիրայությունները սոսկ խանդարում էին Հայոց թագավորության միասնականությանը, ապա Բյուզանդիան ուղղակիորեն սպառնում էր նրա գոյությանը։ Դեռ ավելին, թուլացնելով հայ ռազմիկ տարրը Բյուզանդիան հող նախապատրաստեց նորանոր օտար տարրերի Հայաստան ներթափանցմանը։

Արաբ տարրը շուտ անհայտացավ Հայաստանից, բայց նա ճանապարհ հարթեց քրդերի ներթափանցման համար։ Շադդադյաններն ու Մրվանյանները առաջիններն էին, սակայն նրանց հաջորդեցին ամբողջ զանգվածներ, որոնք հետագայում հաստատվեցին մեծ մասամբ հարավային Հայաստանում։ Արաբական ամիրայությունները բաց արեցին մի ճեղքվածք, որը գնալով լայնացավ տեղ տալով ոչ միայն քրդերին, այլև սելջուկյան տարրերին, որոնց կազմած ամիրայությունները Մեծ Հայքում հայկական պետության գոյությունը անհնարին դարձնող կարևոր ազդակներից մեկը դարձան ԺԲ և ԺԴ դարերում։

Արաբական և այլ ամիրայությունների դեմ դարավոր պայքարի հիմնական կենտրոնները Հայաստանի հարավային գավառներն էին և նրանց երկարատև գոտեմարտն իր արտացոլումն է գտել Սասնա Ծռեր դյուցազնավեպի մեջ[1]։

Տարոնն ու Սասունը, Վասպուրականն ու Մոկքը կազմում էին մի ուրույն լեռնաշխարհ, որը, արաբական շրջանում, Բագրատունիների օրոք և հետագայում արյունալի պայքար մղեց նախ արաբական իշխանության և ապա նրա մնացորդը հանդիսացող՝ արաբական և այլ ամիրայությունների դեմ։

Դեռ արաբական առաջին արշավանքներին դիմադրող Թեոդորոս Ռշտունին ապրում է Սասնա Ծռերի մեջ իբրև քեռի Թորոս կամ Թևաթորոս, սակայն վեպի պատմական միջուկը

---

1 «Սասնա Ծռեր», խմբ. Մ. Արեղյան, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյան, Ա, Երևան, 1936, էջ ԺԴ—ԻԶ։

կազմում են Թ դարի դեպքերը Սասունում ու Տարոնում և ընդհանրապես հարավային Հայաստանում, Բագրատ Բագրատունու գերեվարության առթիվ բռնկված ապստամբությունը նրա որդու՝ Դավթի (վեպում՝ Սասունցի Դավիթ) և եղբորորդու՝ Հովնանի (վեպում՝ Ջենով Օհան) գլխավորությամբ Սասնա Ծռերի պատմական հիմքն են դառնում։ Հայերի ապստամբությունը ճնշող Բուղան վեպում ապրում է իբրև Մսրա Մելիքի փահլևան Բաթմանա Բուղա։

Բագրատունյաց Հայաստանի արաբական ամիրայությունների դեմ մղված կռիվները որոշ ատաղձ են տրամադրել Սասնա Ծռերի այս միջուկի վրա. մահմեդական ամիրայություններով շրջապատված Վասպուրականի տեր Գագիկ Արծրունին վեպում հանդես է գալիս իբրև Գագիկ Թագավոր, իսկ իբրև խիստ բացասական կերպար հանդես է գալիս Մրվանյան տան հիմնադիր Բատը, կուզ (կամ խոզ) Բադին անվան տակ։ Բադին-Կուզբադնի անձնավորությունն իր մեջ միավորում է բոլոր հարկահաններին և ավերողներին։

Հայաստանի հողի վրա հաստատված արաբական ամիրայությունները առաջին լուրջ ճեղքվածքը առաջացրին Մեծ Հայքում։ Նախքան արաբները այլ նվաճողներ եկել էին Հայաստան, սակայն հեռանալուց հետո ոչ մի հետք չէին թողել։ Մինչդեռ արաբները, հեռանալուց հետո, թողեցին արաբ գաղթականների զանգվածը և նրա վրա հենվող արաբական ամիրայությունները։ Այդ ժամանակվանից Մեծ Հայքում երկու զուգահեռ երևույթներ են նկատվում՝ իրար հաջորդող օտար (արաբական, քրդական, սելջուկյան և այլն) ամիրայությունների հաստատումը հայկական հողերի վրա և բնիկ հայ տարրի արտագաղթը։ Այս բոլորը ճակատագրական տխուր հետևանքներ ունեցան և ազդեցին հայ ժողովրդի պատմության ամբողջ հետագա ընթացքի վրա։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԴՎԻՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խոսրով Գ Կոտակի օրոք (330—338) Դվինը դարձավ Հայաստանի մայրաքաղաք։

470-ական թ. Դվինը Հայաստանի մարզպանների և կաթողիկոսների նստավայր։

506 և 554 Դվինի Ա և Բ եկեղեցական ժողովները։

571 ապստամբություն Դվինում պարսից դեմ։

607/608 Մայր տաճարի վերանորոգումը։

640 արաբների առաջին արշավանքը Դվին։

654 Հաբիբ իբն Մասլաման գրավում է Դվինը և քաղաքին տալիս է ապահովության ուխտ։

է դարի երկրորդ կեսում Դվինը մեծ մասամբ դադարել էր մայրաքաղաք (Հայոց իշխանի նստավայր) լինելուց։

690-ական թ.—701 Մուհամմադ իբն Մրվանը վերջնականապես նվաճեց Հայաստանը և նորաստեղծ Արմինիա ոստիկանության մայրաքաղաքը դարձավ Դվինը։

Ոստիկան Աբդ ալ-Ազիզը (706—709) վերանորոգեց Դվինի պարիսպները։

719 Դվինի եկեղեցական ժողովը։

774 ապստամբություն. իրարանցում Դվինում։

789 (մոտավորապես) Դվինի կողքին Արմինիայի մայրաքաղաք դարձավ նաև Պարտավը։

794 Արու Մուսլիմ ալ-Շարին չորս ամիս պաշարեց Դվինը և հեռացավ։

813 Դվինը գրավեցին Ջահհաֆն ու որդին Աբդ ալ-Մալիքը. Շապուհ Բագրատունին հաղթեց նրան. բնակիչներն սպանեցին Աբդ ալ-Մալիքին։

Աշոտ Բագրատունու իշխանապետության հենց սկզբից (862) Ոստան գավառը դարձավ Բագրատունիների կալվածը։ Երկրաշարժ Դվինում։

880-ական թվ. Դվինը դադարեց ոստիկանների նստավայր լինելուց, իսկ նոր թագավորը՝ Աշոտ Ա-ն օծվեց և նստեց Բագարանում։

890 (մոտավորապես) Դվինում հաստատվեցին Մուհամմադ և Ումայյա եղբայրները որպես Սմբատ Ա-ին ենթակա իշխողներ։ Նրանց ապստամբությունը և ճնշումը։

893/894 Դվինի մեծ երկրաշարժը։

894 Աֆշին Սաջյանը գրավեց քաղաքը։

900—901 նրա որդին՝ Դեղատը Դվինի կառավարիչ։

901—919 Դվինը դարձավ Յուսուֆի ռազմական գործողությունների հենարանը։

918—920 (մոտավորապես) Դվինում նստում էր Աշոտ Շապուհյանը։ Աշոտ Բ-ի հարձակումները Դվինի վրա և Դվինի ժամանակավոր նվաճումը։

922 Հովհան Կուրկուասի հարձակումը Դվինի վրա, որտեղ կար Սրուքը։

923—929 Դվինը կառավարում էին Յուսուֆի տեղապահ Նասր ալ-Սուրուքին և ապա Բշիրը։

927/28 բյուզանդացիների երկրորդ հարձակումը Դվինի վրա։

929—937 (մոտավորապես) Դվինը Ատրպատականի ամիրա Մուֆլիհի ձեռքում։

937—941 Դվինը Դայլամի իշխանության տակ։

941/942 (330 հիջրի) Դվինի փողերանոցից մեզ հասած վերջին դրամը։

941/42—948 Դվինը Ատրպատականի ամիրա Սալար Մարզուբանի ձեռքում։

948—951 Դվինում իշխում էին Ֆաղլ իբն Ջաֆար ալ-Համդանին և Իբրահիմ ալ-Դարբին, որոնց ձեռքից քաղաքը նվաճեց Դայլամը։

951—954 Մուհամմադ իբն Շադդադը Դվինում։

953 Աշոտ Գ-ի արշավանքը Դվինի վրա։

954—957 Դվինը նորից Սալար Մարզուբանի իշխանության ներքո։

957—966 Դվինը հավանաբար Աշոտ Գ-ին ենթակա վիճակում։

966—982 Դվինը Իբրահիմ իբն ալ-Մարզուբանին ենթակա։

982—987 Դվինը Արու-լ-Հայջա Սալարյանի ձեռքից խլում է Գողթնի Արու Դուլաֆը։

987 Դվինն անցավ Արու-լ-Հայջա Ռավադյանին։

989/90 Դվինը նորից գրավվեց Արու Դուլաֆի կողմից։

990-ական թվ.—1021 Դվինը մաս էր կազմում Հայոց թագավորության, որպես ենթակա քաղաք։ Քաղաքի կառավարիչ՝ Դավիթ Դվնա՛ցի։

1021 Դայլամցիների (դելմիկների) արշավանքը։

1022—1049 Արու-լ-Ասվար Շադդադյանը Դվինում։

1045—1049 բյուզանդական արշավանքները Դվինի վրա։

1053—1105 Արու-լ-Ասվարի որդու Արու Նասրի իշխանությունը Դվինում։

1105—1118 Դվինում տիրում է Կղըլ ամիրան։

1118—1130 Շադդադյանների իշխանության վերջին շրջանը Դվինում։

1130—1162 Դվինը Կուրտ ամիրայի ձեռքում։

1162—1163 Վրաց Դեորգի Գ-ի արշավանքը։

1163—1203 Դվինը Սելջուկյանների ձեռքում։ Ալի Շիրը՝ քաղաքի կառավարիչ։

1203 Դվինի աղատագրումը հայերի կողմից։

1203—1225 Իվանե Աթաբեկը Դվինում։

1225 Ջալալ ալ-Դինի արշավանքը։

1228 Պռոշ խաղբակյանն աղատեց քաղաքը։

1236 մոնղոլների արշավանքը և քաղաքի ավերումը։

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՄԻՐԱՅԱԿԱՆ ՏՆԵՐԸ

Ա. ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՄԲ ՏՆԵՐ

1. Շայբանյաններ

(Բաքր ցեղից)

Մաղյադ

Եզիդ

(787—801 երկու անգամ)

Ասադ *(809—811)*

Խալիդ (Հալլ) *(813—845 չորս անգամ)*

Մուհամմադ *(802—803)*

Մուհամմադ *(845—878 երեք անգամ)*

Հայսամ *(Շիրվանի ճյուղը)*

Իսա իբն ալ-Շայխ (Աղձնիքի ճյուղը)

Մանսուր

Ահմադ

Մուհամմադ

2. Զուրարիկներ

(Բաքր ցեղից)

(Թ դար)

Զուրարա

Մուսա (ամուսն. Բագարատ Բագրատուն. քրոջ հետ)

Աբու-լ-Մաղրա (ամուսն. Արծրունի իշխանուհու հետ)

3. Արմինիայի ոստիկան Սուլամիներ

Ուսայդ (ամուսն. Սիսականի պատրիկի դստեր հետ)

Եղիդ

Խալիդ — *Ահմադ*

Աբդ ալ-Ալա

Յակազան

4. Ջանհաֆյաններ

(Սուլայմ ցեղից)

(Թ. դ. սկզբից — 860-ական թթ.)

Ջահհաֆ (ամուսն. Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ)

Աբդ ալ-Համիդ — *Աբդ ալ-Մալիք*

Սեաղա (ամուսն. Արուսյակ Բագրատունու հետ)

Ջահհաֆ

5. Կայսիկներ

(Սուլայմ ցեղից)[1]

(860-ական թթ.—964)

Աբու-լ-Վարդ

Աբդ ալ-Համիդ — *Աբդ ալ-Ռահման*

Ահմադ

Աբու Սեաղա — *Աբու-լ-Ասվադ* — *Աբու Սալիմ*

Աբդ ալ-Ռահիմ — *Աբու-լ-Վարդ*

---

[1] *Հավանաբար սրանց ցեղակից էին նաև Բերկրիի Ութմանիկները (օսմանիներ), որոնցից ոչ մի անուն մեզ չի հասել։*

6. Համդանյաններ

(Տաղլիբ ցեղից)

Մոսուլում 929—991, Հալեպում 944—1003

Համդան

Աբու-լ-Հայջա

Նասիր ալ-Դաուլա (929—967)	Սայֆ ալ-Դաուլա (944—967)
Աբու Տաղլիբ (967—979)	Սաադ ալ-Դաուլա (967—991)

և այլն

Արաբական ցեղերի ավանդական տոհմաբանությունը[1]

(Հյուսիսային խումբը)

Ադնան

Մաադդ

Նիզար

Մուդար			Ռաբիա	
Քինանա	Կայս	Տամիմ և այլն	Վաիլ	Անալա
Կուրայշ	Սուլայմ		Բաքր	Տաղլիբ
			Շայբան և այլն	

[1] Արաբ մատենագրության միջոցով մեզ հասած այս տոհմաբանությունը դիտության կողմից չի ժխտվում։ Հյուսիսայինից և հարավայինից բացի հիշվում է նաև մի երրորդ խումբ՝ կորած ցեղերը, որոնք երբեմն միացվում են հարավայիններին։

Բ. ՔՐԴԱԿԱՆ ԾԱԳՄԱՄԲ ՏՆԵՐ

1. Մրվանյաններ

(990—1096)



2. Շադդադյաններ



ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԻՇԽՈՂ ՏՆԵՐԸ

1. Սաջյաններ (Թուրքական ծագմամբ)
   Մուհամմադ Աֆշին 889—901
   Աբու-լ-Կասիմ Յուսուֆ 901—928 (ընդմիջումով)
   Աբու-լ-Մուսաֆիր Ֆատհ 928—929

2. Սաջյանների հաջորդները
   Մուֆլիհ 931
   Դայսամ իբն Իբրահիմ ալ-բուրդի 934/38—941/42
   և 948/49—953/54

3. Սալարյաններ (Մուսաֆիրներ՝ իրանական ծագմամբ)
   Սալար Մարզուբան 941/42—957 (ընդմիջումով)
   Վահսուդան 957—966
   Իբրահիմ իբն ալ-Մարզուբան 966—983
   Աբու-լ-Հայջա իբն Իբրահիմ՝ Ատրպատականի որոշ մասերում

ԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա. հայկական

Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան. Տիֆլիս, 1913։

Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, (հրտ. Ա. Սուքրեան), Վենետիկ, 1881։

Սեբէոսի Եպիսկոպոսի Պատմութիւն, ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939։

Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, (հրտ. Կ. Եղեանց), Ս. Պետերբուրգ, 1887։

Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, ի լոյս էած Քերովբէ Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887։

Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի (Դրասխանակերտցի) Երուսաղէմ, 1867։

Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական (հրտ. Ստ. Մալխասեանց), Ս. Պետերբուրգ, 1885։

Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860։

Դրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910։

Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ աշխ. Կ. Յուղբաշյանի, Երևան, 1963։

Սամուել քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի զրոց պատմագրաց, հրտ. Արշակ Տէր Միքելեան, Վաղարշապատ, 1893։

Մատթէոս Ուռհայեցի ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898։

Կիրակոս Գանձակեցի Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961։

Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861։

Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, Վահան Ծ. վրդ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880։

Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց (Ղուկ. մատ. Դ), Թիֆլիս, 1910։

Յիշատակարանք Ձեռագրաց (Գարեգին Ա. կաթողիկոս), հ. Ա, Անթիլիաս, 1951։

Վիմական տարեգիր, կազմ. Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913։

Դիվան հայ վիմագրության, պրակ Բ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960։

Բ. ԱՐԱԲԱԿԱՆ

Bibliotheca Geographorum Arabicorum, ed. M. J. de Goeje,

I Viae regnorum, auctore al-Istakhri, Lugduni Bat., 1870.

II Viae et regna, auctore Ibn Hauqal. 1873.

III Descriptio imperii Moslemici auctore al-Mokaddasi, 1876.

V Compendium libri Kitab al-boldan auctore Ibn al-Fakih al-Hamadani, 1885.

VI Liber viarum et regnorum, auctore Ibn Khordadhbeh et excerpta e Kitab al-Kharadj auctore Kodama ibn Djafar, 1889.

VII Kitab al-Alak an-nafisa auctore ibn Rosteh et Kitab al-boldan auctore ibn Wadhih al-Jaqubi, 1892.

VIII Kitab at-tanbih w al-ischraf auctore al-Masudi. 1894.

Opus Geographicum auctore Ibn Hauqal, ed. Kramers, Lugduni Bat., 1938.

Jacut's Geographisches Wörterbuch, hrsg. von F. Wüstenfeld, 6 Bde, Leipzig, 1924.

Géographie d'Aboulféda, texte arabe par Reinaud et Mac G. de Slane, Paris, 1840.

Abu Dulaf Misar ibn Muhalhil's travels in Iran, ed. by V. Minorsky, Cairo, 1955.

Mappae Arabicae, von K. Miller, Stuttgart, 1926.

Liber expugnationis regionum auctore al-Beladsori. ed· M. J. de Goeje, Lugduni Batavorum, 1866.

Ibn Wadhih qui dicitur al Jaqubi, Historiae, ed. M. Th. Houtsma, Lugduni Batavorum, 1883.

Masudi, Murudj az Zahab, Le Caire, 1948.

Annales auctore Abu Djafar Mohammad Ibn Djarir at-Tabari, ed. J. Barth, Th. Nöldeke... et M. J. de Goeje, Lugduni Bat., 1879-1901.

The Tajarib al-Umam or History of Ibn Miskawayh in The eclipse of the Abbaside Caliphate, ed. by H. F. Amedroz and D. S. Margoliouth, London, 1920-1921.

Bab fi-l-Saddadiyyah of Munadjim Bashi in „Studies in Caucasian History" by V· Minorsky, London, 1953.

Recueil des textes relatifs à Sayf al Daulah, éd. par M. Canard, Paris, 1934.

Ibn al-Azraq al-Fariqi, ed. B' A. L. Awad, revised by M. Sh. Ghorbal, Cairo, 1959.

Ibn el-Athiri Chronicon quod perfectissimum inscribitur, ed. C. J. Tornberg, Lugduni Bat., 1851-1876.

Ibn Challican, Kitāb wafayāt al-Ayān wa anbā abnā al-zamān, al-Qāhira.

Al-Mawardi, al-Ahkām al-Sultāniyyah, (Maverdii constitutiones politicae) Bonn, 1853.

զ. Բյուզանդական

Constantine Porphyrogenitus, De administrando imperio, greek text edited by Moravcsik, english translation by R. Jenkins, I, Budapest, 1949, II, Commentary, London, 1962.

Constantine Porphyrogenitus, De Ceremoniis, Corp. Script. Hist. Byz., Bonnae, 1829.

Cecaumeni Strategicon, ed. B. Wassiliewsky, V. Jernstedt, Petropoli, 1896.

դ. պարսկական

Nasiri Khusraw, Safarnameh, Berlin, 1923.

Худуд ал-Алам, рукопись Туманского, Ленинград, 1930.

Scheref-Nameh ou histoire des kourdes par Scheref prince de Bidlis, par V. Veliaminof-Zernof, t. II, St. Peter. 1860-1862.

ե. ասորական

Chronique de Denis de Tell-Mahré, publ. et trad. par Chabot, Paris, 1895.

Chronique de Michel le Syrien, texte syrien et trad. franç. par Chabot, I, II, III, Paris, 1900-1910.

Сирийские источники по истории народов СССР, М-Л, 1941

զ. Վրացական

Histoire de la Géorgie, traduite du Georgien par M. Brosset. Ire partie, I et II livr., St. Peter., 1849-1850.

Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հրտկ. Լ. Մելիքսեթ-բեկ, հտ. Ա, Երևան, 1934։

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն. Ադոնց, *Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948։*

Ղ. Ալիշան, *Շիրակ, Վենետիկ, 1881,*

Այրարատ, Վենետիկ, 1890,

Սիսական, Վենետիկ, 1893։

Ա. Ալպոյաճյան, *Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, Պատմութիւն հայ դաղթականութեան, Գահիրե, Ա, 1941, Բ, 1955։*

Հ. Անանյան, *Հայոց լեզվի պատմություն, Բ, Երևան, 1952։*

Բ. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, I, Երևան, 1958։*

Քաղաքային վարչությունը և ինքնավարությունը միջնադարյան Հայաստանում, Պատմա-բանասիրական հանդես, 1961, 3—4, էջ 58—81։

Հ. Գելցեր, *Սկզբնաւորութիւնք Բիւզանդեան բանակաթիմերու դրութեան, Վիեննա, 1903։*

Ս. Երեմյան, *Լիպարիտ զորավարը և նրա նախնիները, Մառի անվ. կաբ. ի աշխատություններ, 2, Երևան, 1947, էջ 103—149,*

Ատլաս հայ ժողովրդի պատմության, Երևան, 1952,

Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963։

Հ. Զորյան, *Արաբների հարկային քաղաքականությունը ֆեոդալական Հայաստանում, Երևանի Պետ. Համալսարանի Տեղեկագիր, 2, 3, 1927։*

Ղ. Ինճիճեան, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Ա, Բ, Գ, Վենետիկ, 1835։*

Լեո, *Հայոց պատմություն, Բ, Երևան, 1946։*

Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1949։

Հ. Հիւբշման, *Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907։*

Կ. Ղաֆադարյան, *Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952։*

Հ. Մանանդյան, *Մանր հետազոտություններ, Երևան, 1932։*

Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Երևան, 1939։

Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940։

Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ա, Բ, Գ, 1944—1960։

Ղ. Մովսեսյան, *Լոռի կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923։*

Հ. Նալբանդյան, *Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, ԳԱ «Տեղեկագիր» (հասարակ. գիտ.), 12, 1956։*

Արաբ ոստիկանները Հայաստանում, ԳԱ «Տեղեկագիր» (հասարակ. գիտ.), 8, 1958։

Ս. Նալչյան, *Դելմիկները և նրանց արշավանքները դեպի Հայաստան, Արմֆանի «Տեղեկագիր» 5—6 (10—11), 1941, էջ 107—117։*

Վասպուրականի թագավորության պատմությունից, ԳԱ «Տեղեկագիր», (հասարակ. գիտ.), 4, 1949, էջ 47—79։

Հ. Շահխաթունյան, *Ստորագրություն կաթուղիկէ էջմիածնի և հինգ դաստառաց Այրարատայ, Ա—Բ, էջմիածին, 1842։*

Ա. Շահնազարյան, *Սև ջրի (Մեծամորի) ստորին հոսանքի ուղղությունը նախկին դարերում, Արմֆանի «Տեղեկագիր» 2 (7), 1941, էջ 7—13։*

Մ. Չամչյան, *Պատմություն Հայոց, Բ, Վենետիկ, 1785։*

Ե. Սամվելյան, *Հին հայ իրավունքի պատմությունը, Երևան, 1939։*

Սասնա Ծռեր, խմբ. Մ. Արեղյան, աշխատ. Կ. Մելիք-Օհանջանյան, հտ. 1, 2ա, 2բ, Երևան, 1936—1944։

Գ. Սրվանձտյան, *Բարոս աղբար, Կ. Պոլիս, Բ, 1884։*

Ա. Տեր-Ղևոնդյան, *Դվինը Սալարյանների ժամանակ, ԳԱ «Տեղեկագիր» (հասարակ. գիտ.), 12, 1956,*

Դվին քաղաքի ժամանակագրությունը 9—11 դդ., ԳԱ «Տեղեկագիր» (հասարակ. գիտ.), 10, 1957։

Վ. Տոմաշեկ, *Սասուն և Տիգրիսի աղբերակաց սահմանները, Ա, Վիեննա, 1896։*

Հ. Քյուրդյան, *Բարակ և Սահլ իպն Սնրատ, Բազմավեպ, 1958, էջ 9—22, 72—82, 132—139։*

Հ. Օրբելի, *Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956։*

Մ. Օրմանյան, *Ազգապատում, Ա, Կ. Պոլիս, 1912։*

Ռ. Ֆասմեր, *Ժամանակագրություն Հայաստանի ոստիկաններու առաջին Աբբասեանց օրով, Վիեննա, 1933։*

Адонц, Н., Армения в эпоху Юстиниана, СПб, 1908.

Бартольд, В., Персидская надпись на стене мечети Мануче, Анийская серия 5, СПб, 1911

Арабские известия о русах, Сов. Востоковедение, 1940.

Быков, А., Дайсам Ибн Ибрахим ал-Курди и его монеты, Эпиграфика Востока, XI, 1955.

Васильев, А., Византия и арабы (за время Македонской династии), СПб, 1900.

Васильевский, В., Советы и рассказы византийского боярина XI в., Журн. Мин. Нар. Просв., 1881.

Гюзальян, Л., Персидская надпись Кек Султана Шеддади в Ани, Сб. Акад. Марру. М.—Л., 1935.

Джавахишвили, И., История грузинского народа (на правах рукописи).

Еремян, С., Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Ал- Илитверу, Зап. Инст Вост., VII, 1939.

Жузе, Н., Мутагаллибы в Закавказье в IX-XI веках, Материалы по истории Грузии и Кавказа, Вып. III, Тифлис, 1937.

Крачковская, В., Печать Багратида Ашота с арабской надписью, КСИИМК, Вып. XII, М.-Л., 1946.

Крачковский, И., Избранные сочинения, IV, 1957.

Крымский, А., Страницы из истории северного или кавказского Азербайджана (Шаки). Сб. Памяти Марра, М.—Л., 1938.

Марр, Н., Ани, Ленинград, 1934

Минорский, В., Русь в Закавказье, Изв. Инст. Болг. Ист., София, 5, 1954.

Мушегян, Х., Денежное обращение Двина по нумизматическим данным, Ереван, 1962.

Очерки истории СССР, II (III-IX вв.), Москва, 1958, III (IX-XIII в.в.), 1953.

Пахомов, Е., Арабские прикаспийские феодалы в Азербайджане X-XI в.в., Сб. Памяти Марра, М.--Л., 1938.

Монеты Барды, Изв. АзФАН, 1944.

Розен, В., Император Василий Болгаробойца, Извлечения из Летописи Яхьи Антиохийского, Зап. Имп. Ак. Наук, приложение к т. XIV, 1883.

Ташчьян, М., Средневековая Барда в период расцвета, Изв. АН АзССР, 1946.

Тизенгаузен, В., Монеты Восточного Халифата, СПб, 1873.

Фасмер, Р., О монетах Саджидов, Изв. общ. обс. и изуч. Азерб., 1928.

Шахназарян, А., Двин, Ереван, 1940

Шелковников, Б., Художественная керамика двинских раскопок, Изв. АрмФАН, 4—5, 1940.

Якубовский, А., Ибн Мискавайх о походе русов в Бердаа в 332 г.—943/4 г., Византийский Временник, т. XXIV, 1926.

N. Adontz, Ašot Erkat ou le fer, Annuaire de l'Inst. de Phil. et d'Histoire Orient., III, Bruxelles, 1953.

Les Taronites en Arménie et à Byzance, Byzantion, IX, XI, XIV.

Notes arméno-byzantines, Byzantion, IX.

H. Amedroz, The Sallari and Rawwadi rulers of Aderbaidjan, Journ. of Royal Asiat. Soc., 1909.

Three arabic MSS on the history of the city of Mayyafariqin J. R. A. S., 1902.

Notes on two articles on Mayyafariqin, J. R. A. S., 1903.

The Marwanid dynasty at Mayyafariqin, J. R, A. S., 1909.

M. van Berchem, Matériaux pour l'épigraphie et l'histoire musulmanes du Diyar-Bekr, dans „Amida", Heidelberg, 1910.

M. Brosset, Les ruines d'Ani, St. Pb., 1860.

Notices sur l'historien arménien Thomas Ardzrouni, Melanges Asiatiques, IV, 1862.

M. Canard, Les Hamdanides et l'Arménie, Annales de l'Inst. d'études Orient. Alger, 1948, VII, 91

Histoire de la dynastie des Hamdanides de Jazirah et de Syrie, Alger, 1951.

A. Daghbaschean, Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Berlin, 1893.

C. Defrémery, Mémoires sur la famille des Sadjides, Journal Asiat., série 4, 1847.

R. Denisson, On three muhammedan dynasties in Northern Persia in the IOth and IIth centuries, Asia Major, 1925, vol. II, fasc. 2,

C. Dowsett, A neglected passage in the History of the Caucasian Albanians, Bull. of the Sch. of Orient. and Afr. St., XIX, 3, 1957.

Encyclopaedia of Islam, I edition, 4 vol. and Supplement, 1913-1942, II edition, I vol., Leyden, 1954.

G. Freytag, Geschichte der Hamdaniden von Mosul, Zeit. der Deutsch, Morg. Gesel., X.

L. Gardet, La cité musulmane, vie sociale et politique, Paris, 1954 (Etudes musulmanes, I)

M. Gaudefroy-Demombynes et Platonov, Le monde musulmanbyzantin jusqu' aux Croisades, Paris, 1931 (Histoire du monde, VIII) et

M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903.

R. Grousset, Histoire de l'Arménie des origines a 1071. Paris, 1947.

H. Hazard and H. Cook, Atlas of islamic history, Princetone, 1952.

W. Heyd, Histoire du commerce du Levant, Leipzig, 1923.

P. Hitti, History of the arabs, Princetone, 1946.

E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches. Corpus Brux. Hist. Byz., III, Bruxelles, 1935.

C. Huart, Histoire des Arabes, Paris, 1912.

Une razzia en Arménie au Xe siècle, Revue des études arméniennes, I, 1921, fasc. 4

Les Musafirides de l'Azerbaidjan, 1922.

H. Hübschmann, Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber. Aus dem Armenischen des Sebeos, Leipzig, 1875

Z. Khanzadian, Atlas de cartographie historique de l'Arménie. Paris, 1960.

J. Kramers, The military colonisation of the Caucasus and Armenia under the Sassanids, Bull. of the Sch. of Or. St., London. 1935.

Les Khazars, Analecta Orientalia, I, Leiden, 1954.

A. Kremer, Culturgeschichte des Orients under den Chalifen, 2 Bde, Wien, 1875-1877.

J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919

F. Loekkegaard, Islamic taxation in the classic period, Copenhague, 1950.

H. Lynch, Armenia, travels and studies, London, 1901.

J. Markwart, Osteuropäische und ostasiatische Streifzüge, Leipzig, 1903.

Eransahr, Berlin, 1901.

Südarmenien und die Tigrissquellen, Wien, 1930.

St. Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, 2 vol., Paris, 1818-1819.

A. Mez, The renaissance of Islam, London, 1937.

V. Minorsky, La domination des Dailamites, publ. de la Soc. des ét. iran., 3, Paris, 1932.

Hudud al-Alam, the regions of the world. with the preface by V. V. Barthold, London, 1937.

Caucasica in the History of Mayyafariqin, B. S. O. A. S., 1949.

Studies in Caucasian History, Cambridge Oriental Series, 6. London, 1953.

The Caucasian vassals of Marzuban, in 334/955, Caucasica IV, from B. S. O. A. S.. 1953.

W. Muir. The Caliphate, its rise, decline and fall. London. 1891

J. Muyldermans, La domination arabe en Arménie, Louvain-Paris, 1926.

J. H. Petermann, De Ostikanis, arabicis Armeniae gubernatoribus. Berolini, 1840.

Rambaud, L'Empire grec au X s., Paris, 1870.

R. Roolvink, Historical Atlas of the moslem peoples, Djambatan-Amsterdam, 1957.

G. Schlumberger, Un empereur byzantin au X s., Nicephor Phocas. Paris, 1890.

L'Epopée byzantine à la fin du X s., Paris, 1896.

G. le Strange, The lands of the Eastern Caliphate, London, 1930.

H. Thoptschian, Die inneren Zustände von Armenien unter Aschot I, Berlin, 1904.

Armenien vor und während der Araberzeit, Zeit. für arm. Phil., Bd. 2, H. I, Marburg, 1903.

Politische-und Kirchengeschichte Armeniens under Aschot I und Smbat I, Mitteil. des Seminar für orient. Spr. zu Berlin, 1905.

H. Thorosian, Grigor Magistros et ses rapports avec deux amirs musulmans Manuce et Ibrahim, Revue des études musulmanes, Paris, 1947.

A. S. Tritton, The Caliphs and their non-muslim subjects, London-Bombay, 1930.

A. Vasiliev, Byzance et les arabes, t. I, La dynastie d'Amorium, Bruxelles, 1935 (reimprimé en 1959), t. II, La dynastie Macédonienne, deux. partie, Bruxelles, 1950.

R, Vasmer, Zur Chronologie des Gastaniden und Sallariden, Islamica, III

G, Weil, Geschichte der Chalifen, 3 Bde, Mannheim, 1846-1851.

F. Wüstenfeld, Register zu den genealogischen Tabellen der Arabischen Stämme und Familien, Göttingen, 1853.

E. de Zambaur, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de l'Islam, Hannover. 1927.

S. A. Kasravi, Padshahan-i gum-nam, I, II, III. 1928-1930

Abd al-Djabbar al-Djumard, Ghurrat al-arab yazid ibn Mazyad al-Shaybani. Beyrouth, 1961.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբաս Ա՝ Վանանդի թագավոր—170, 195, 198
Աբաս Բագրատունի՝ թագավոր—139—141, 153, 165, 168, 174, 175, 217
Աբաս Բագրատունի՝ սպարապետ—86, 109, 112, 114
Աբբասյաններ—22, 41, 44, 46, 47, 55, 60, 65, 72, 76, 84, 90, 92, 95, 100, 101, 107, 112, 113, 140, 150
Աբգարյան Գ.—6
Աբդ ալ-Ազիզ՝ ոստիկան—64, 263
Աբդ ալ-Ալա իբն Ահմադ ալ-Սուլամի—61, 95, 266
Աբդ ալ-Բառ—97
Աբդ Ալլահ իբն ալ-Զուբայր—43, 46, 50
Աբդ ալ-Համիդ (Ջահհաֆյան)—266
Աբդ ալ-Համիդ (Կայսիկ)—120, 121, 154, 266
Աբդ ալ-Մալիք ալ-Հարաշի—94
Աբդ ալ-Մալիք՝ խալիֆա—43, 47, 88
Աբդ ալ-Մալիք՝ որդի Ջահհաֆի—69—71, 73, 74, 263, 266
Աբդ ալ-Ռահիմ՝ որդի Աբու-Սավադայի (Կայսիկ)—156, 266
Աբդ ալ-Ռահման՝ որդի Աբու-լ-Վարդի—266
Աբդ ալ-Քաբիր իբն Աբդ ալ-Համիդ՝ ոստիկան—62
Աբդուահման. տես՝ Աբդ ալ-Համիդ (Կայսիկ)
Աբեղյան Մ.—258
Աբլհաճ որդի Ռավդայ, տես՝ Աբու-լ-Հայջա (Ռավվադյան)
Աբլհերթ. տես՝ Աբու-լ-Հարիս
Աբու Ալի Հասան իբն Մրվան—195, 268
Աբու Դուլաֆ՝ մատենագիր—23
Աբու Դուլաֆ՝ ամիրա (Ժ դ.)—98, 177—179, 210, 221, 264
Աբու Դուլաֆ՝ ամիրա—179, 210
Աբու-լ-Աբբաս ալ-Սաֆֆահ—44
Աբու-լ-Ասվադ (Կայսիկ)—121, 144, 146, 154, 156, 266
Աբու-լ-Ասվար—268
Աբու-լ-Ասվար՝ Դվինի ամիրա—180, 181, 207—214, 264, 268
Աբուլեթ Օրբելյան—256
Աբու-լ-Կասիմ Ալի իբն Ջաֆար—165, 173

Աբու-լ-Կասիմ ալ-Վայկուրի (Վայոց Զորի իշխան)—173
Աբու-լ-Հայջա իբն Ռաբիբ ալ-Դաուլա—201
Աբու-լ-Հայջա (Համդանյան)—150, 267
Աբու-լ-Հայջա (Ռավվադյան)—178, 181, 264
Աբու-լ-Հայջա (Սալարյան)—177, 178, 264, 269
Աբու-լ-Հարիս (Ջահհաֆյան)—79
Աբու-լ-Մաղրա (Զուրարիկ)—92, 104, 105, 117, 265
Աբու-լ-Մուիզզ (Կայսիկ)—156
Աբու-լ-Մուսաֆիր ֆատհ—139, 269
Աբու-լ-Յակազան—154, 155
Աբու-լ-Վարդ (Ի դ.)—57, 97, 98, 107—111, 120, 155, 235, 236, 250, 266
Աբու-լ-Վարդ (ժ դ.)—156—158, 266
Աբու-լ-Վարդայն Սալամա—158
Աբու-լ-ֆարաջ (Բար Հեբրեոս)—11
Աբու-լ-ֆարիս իբն Աբու Մանսուր—111
Աբու Հանիֆա—225
Աբու Հաֆս—148, 162
Աբու Մանսուր Մուհամմադ ալ-Դաուլա—196, 198, 204, 268
Աբու Մուսլիմ ալ-Շարի—68, 73, 94, 263
Աբու Նասր Ահմադ—203—206, 268
Աբու Նասր Ահմադ իբն Յուսուֆ—204
Աբու Նասր Խաքանդար—213, 214, 264, 268
Աբու Ջաֆար ալ-Մանսուր՝ խալիֆա—44, 47, 55
Աբու Սաբահ—94
Աբու Սաիդ՝ ոստիկան—80—82
Աբու Սալիմ (Կայսիկ)—121, 144, 154, 156, 266
Աբուսահլ հայ—32
Աբու Սավադա—120, 144, 154, 156, 266
Աբուսեթ. տես՝ Աբու Սաիդ
Աբու Սեադա. տես՝ Աբու Սավադա
Աբու Տաղլիբ—185, 267
Աբու Տլուփ. տես՝ Աբու Դուլաֆ
Աբու ֆիրաս ալ-Համդանի—154, 155, 157
Ագաթանգեղոս—34
Ադամյան Հ. Ա.—14
Ադանա—48
Ադատա. տես՝ Հադաս
Ադնան ցեղեր—267
Ազատ գետ—218, 219
Ազ-Զաուազան. տես՝ Անձևացիք
Աթում իբն Զուրջին. տես՝ Ատում որդի Գուրգենի
Աժդանական—218, 225
Ալա իբն Ահմադ ալ-Սավաֆի—81—83

Ալա Մոլափի. տես՝ Ալա իբն Ահմադ
Ալազիզ—207
Ալանաց Դոտ—113
Ալի իբն Ջաֆար Դայլամցի—151
Ալի Շիր—264
Ալիմ—201
Ալիշան Ղ.—28, 30, 32, 130, 176, 180—182, 218, 225
Ալպոյաճյան Ա.—45, 65
Ալփ Արսլան—206, 214
Ախլաթ. տես՝ Խլաթ
Ակինյան Ն.—6, 8, 54
Ահարոն Մագիստրոս—254
Ահմադ (Զուրարիկ)—104
Ահմադ իբն Աբու Յակուբ. տես՝ Յակուբի
Ահմադ իբն Եզիդ իբն Ուսայդ (Սուլամի)—60—61, 266
Ահմադ իբն Խա ալ-Շայբանի—58, 116—118, 121—123, 128, 265
Ահմադ՝ որդի Աբդուահմանի (Կայսիկ)—144, 152—156, 266
Ահմաթ. տես՝ Մուհամմադ իբն Խալիդ
Ահմեդ Նեդիմ—18, 19
Ախթամար—106, 128
Աղիովիտ—65, 145, 146, 149, 223
Աղիս—237
Աղձնիք—12, 17, 29, 35, 37, 51, 52, 54, 57, 58, 62, 63, 81, 82, 86, 91, 93, 116, 118, 122, 128, 144, 148, 151, 154, 157, 178, 186, 193, 195, 199, 203, 215, 231, 265
Աղվաններ—93
Աղվանք—13, 22, 23, 25, 26, 41, 43, 51, 56, 68, 73, 95, 125, 170, 173, 183, 191, 210, 241, 257
Աճառյան Հ.—119, 181
Ամարա—50
Ամբերդ—212
Ամեդրող Հ. Ֆ.—18
Ամիդ—51—54, 58, 122, 148, 193, 195, 196, 205, 244
Ամին՝ խալիֆա—58, 68
Ամմուրիյյա. տես՝ Ամորիոն
Ամյուկ—85, 105, 106, 146, 154, 202, 229, 248
Ամորիոն—47, 50
Ամր իբն Իսմաիլ—45
Այգեստան—220
Այծյաց բերդ—186
Այյուր—218
Այյուբյաններ—232
Այն Զարբա. տես՝ Անարզարբա

Այրարատ—28, 38, 99, 102, 170, 176, 177, 181, 182, 216, 225
Այրարատյան գավառ—217
Անաղա ցեղ—267
Անանիա Մոկացի՝ կաթողիկոս—168, 236
Անանիա վարդապետ—205
Անանուն Արծրունի—7, 120, 139
Անարզարա—48
Անգլիա—18, 22
Անդղ—54
Անդալուզիա. տես՝ Անդալուս
Անդալուս—90, 251
Անդրկովկաս—18, 36
Անի—5, 28, 30, 31, 37, 164, 166, 171, 180, 183, 188, 200, 207, 209, 211, 212, 214, 236, 238, 242—246, 248, 249, 254, 256
Անհիլ. տես՝ Անդղ
Անձևացիք—52, 104, 105, 121, 125, 142, 150, 153, 170, 171, 203, 244
Անձիտ. տես՝ Հանձիթ
Անտիոք—46, 185
Անտիոք Պիսիդիայի—50
Անուշիրվան իբն Խաշքարի—268
Աշմուշատ—49, 60, 64, 222
Աշոտ Ա (իշխանաց իշխան և թագավոր)—29, 34, 38, 58, 86, 96, 97, 100—103, 107—112, 120, 124, 127, 149, 159, 160, 235, 247, 263
Աշոտ Արծրունի (Ի դ.)—79, 82, 103—108
Աշոտ Արծրունի (Ժ դ. վերջ)—178
Աշոտ Արծրունի՝ որդի Դերենիկի (Ժ դ.)—117, 120, 122, 131
Աշոտ Բ երկաթ—132—140, 144, 145, 170, 174, 175, 181, 249, 264
Աշոտ Գ Ողորմած—28, 164, 168—171, 173, 175, 176, 182, 185, 186, 192, 218, 225, 236, 248, 249, 264
Աշոտ Մսակեր—65, 68—70, 75, 76, 79, 101
Աշոտ՝ Կուրապաղատ Տարոնի—108, 109
Աշոտ Շապուհյան—131—135, 137, 181—182, 249, 264
Աշոտ՝ որդի Արու-լ-Ասվարի—181, 214, 268
Աշոտ՝ որդի Գագիկ Ա-ի—153, 181, 207, 209—211
Աշոտ Պատրիկ Տարոնի (Ժ դ.)—153, 185
Աշոթ իբն ալ-Արբաս. տես՝ Աշոտ Գ
Ապահունիք—29, 37, 57, 64, 71, 84, 85, 96, 99, 109, 120—122, 145, 146, 156, 194, 196, 199, 222, 223, 234, 237, 238
Ապիրատ—209
Ապլրաս. տես՝ Աբու-լ-Վարդ
Ապլբերս որդի Ապումսարի. տես՝ Աբու-լ-Ֆարիս իբն Աբու Մանսուր
Ապլմախրա. տես՝ Աբու-լ-Մաղրա
Ապուսահլ Համազասպ՝ որդի Գագիկ Արծրունու—171, 173

Ապուսահայ տուն. տես՝ Սաջյաններ
Աջդանիկան—218, 225
Առան—177, 209, 214, 244
Առաքելյան Բ.—36, 242
Առբերանի—145, 149, 223
Ասադ իբն Եզիդ (Շայբանի)—56, 265
Ասիուի—240
Ասպրականիա—200
Ասորեստան—16, 128
Ասորիներ—41, 50, 53
Ասորիք—12, 14, 15, 21, 37, 41, 46, 50, 51, 53, 58, 59, 63, 88, 90, 91, 127, 129, 148, 150, 158—160, 227, 229, 231, 241, 244, 245
Ասորիքի սահմանային գոտի—46, 48
Ասֆուրջան. տես՝ Վասպուրական
Ավասիմ—46
Ավնիկ—161, 162, 202, 221, 223, 229
Ատոմ որդի Անձևացյաց Գուրգենի—142, 151
Ատտալիատես—228
Ատրպատական—22, 23, 26, 28, 54, 56, 73, 77, 78, 82, 86, 94, 95, 112, 113, 115—117, 120, 123, 125, 127, 130, 132, 134, 138—144, 148, 149, 164—166, 172, 173, 175—178, 182, 191, 195, 196, 200—203, 229, 241, 242, 249, 252, 264, 269
Արաբա-բյուզանդական սահմանային գոտի—45, 50, 159
Արաբական ցեղեր—51, 53, 191
Արաբիա—21, 41, 87
Արարշահ—32
Արագած—115
Արագածոտն—209, 217
Արածանի—49
Արաքս—127, 130, 131, 138, 141, 167, 171, 172, 176—178, 191, 208, 217, 219, 221, 223, 225
Արզավան—50
Արգինա—168, 171, 236
Արդաբիլ—73, 142, 165, 167
Արզն—54, 58, 63, 81, 85, 91, 92, 104, 105, 117, 128, 148, 151, 193, 221, 231, 233, 243, 244
Արիր—15
Արիստակես Լաստիվերտցի—8, 100, 180, 181, 188, 199, 201, 202, 209, 210, 212—214, 228, 236, 237, 256
Արծկե—104, 144, 152, 154, 157, 185, 187, 202, 221, 223, 231, 250
Արծն—199, 213, 228, 242, 243
Արծրուններ—68, 75, 79, 92, 93, 100, 105—107, 111, 118, 122—124, 126, 131, 143, 154, 168, 172, 186, 187, 199, 203, 206, 217, 229, 248, 257

Արճակ—201
Արճեշ—64, 97, 144, 146, 152, 154, 156, 157, 185—187, 193, 196, 199, 200—202, 221, 223, 230, 231, 233, 242, 243, 250, 252
Արմենիակոն Բանակաթեմ—49, 161
Արշակունիներ—21, 41, 101
Արշամաշատ. տես՝ Աշմուշատ
Արշամունիք—198
Արշարունիք—68—70, 86, 102, 119, 127, 131—133, 138, 216
Արջիշ. տես՝ Արճեշ
Արտանուջ—183
Արտաշատ—218, 219, 239
Արտաշատ Վերին—220
Արտաշեսյաններ—191
Արցախ—38, 74, 127, 250
Արուսյակ Բագրատունի—75, 91, 266
Աւարանշան—67
Ափխազաց Թագավորություն—125
Աքաղայու կատար—107
Աֆշին՝ ոստիկան—80
Աֆշին (Սաջյան)—112, 113, 115—121, 242, 264, 269

Բար ալ-Արվար—51
Բաբեկ—73—75, 77, 78, 80, 94, 112
Բաբկին Սյունի—79
Բագարան—110, 114, 133, 135, 138, 168, 183, 263
Բագարատ Բագրատունի՝ իշխանաց իշխան—53, 79—83, 91, 101, 104, 117, 229, 258—259, 265
Բագարատ Դ Թագավոր վրաց—195, 198
Բագարատ Դ Թագավոր վրաց—180, 183
Բագարատ՝ որդի Տարոնի Աշոտ Պատրիկի—194
Բագրատունիներ—34, 67—70, 74, 79, 83, 86, 91, 93, 99—104, 107, 117—119, 126, 133, 134, 155, 164, 181—184, 186, 190, 192—194, 197, 200, 212, 216, 217, 219, 222, 226, 229, 230, 236, 238, 240, 242, 247, 248, 250, 257, 258
Բագրատունիներ վրաց—161, 182, 183, 190
Բագրևանդ—45, 68, 118, 199
Բաղմաղբիւր—237
Բաթմանա Բուղա—259
Բալազուրի—12, 13, 33, 48—50, 60, 75, 81, 92, 219, 227, 254
Բալամի—15
Բալխի—21
Բալկաններ—40
Բալու—196, 198

Բահունիս. տես՝ Ապահունիք
Բաղդադ—15, 22, 94, 100, 101, 123, 165, 172, 193, 228, 244
Բաղեշ—52, 54, 58, 59, 82, 91, 92, 104, 146, 148, 153, 154, 157, 185, 193, 202, 204, 221, 231, 242—244
Բալլական—125
Բայտ ալ-Մուկադդաս—22
Բաջունայս. տես՝ Ապահունիք
Բասեն գավառ—138, 145, 148, 161, 189, 190, 199, 223, 229
Բասեն—223
Բասպրականիա—200
Բասրա—232
Բատ—190, 193—195, 230, 259, 268
Բարթիկյան Հ.—254
Բարթոլդ Վ.—27, 30
Բարխուդարյան Ս.—29
Բարձր Հայք—12, 49, 159, 174, 188, 221, 222
Բարմակ իբն Արդալլահ ալ-Դաբիլի—255
Բաքր ցեղ—52, 55, 62, 63, 81, 265, 267
Բեհեսնա—49
Բերկրի—82, 84, 85, 93, 97, 101, 105, 122, 146, 148, 152, 154, 157, 185—187, 199—202, 204, 221, 223, 229, 233, 242, 243, 248, 250, 266
Բզնունիք—146, 149, 223, 238
Բզովան—220
Բիկով Ա.—143
Բյուզանդացի Ն.—7
Բյուզանդիա—28, 30, 35, 37, 40, 43, 45, 47—49, 51, 59, 60, 63, 65, 88, 97, 113, 114, 116, 124, 132, 137, 144—147, 149, 151, 152, 158—160, 162, 163, 170, 174, 177, 178, 180, 184, 186, 189, 190, 194—199, 203, 205, 206, 211, 213, 215, 222, 227, 230, 237, 241, 242, 246, 249, 258
Բյուրական—138
Բշիր (Դվինում)—138, 264
Բշիր—103, 160
Բջնի—205, 208, 211, 248
Բրոսե Մ.—6, 11, 33, 66
Բուայհիներ—165, 166
Բուխա. տես՝ Բուղա
Բուհա. տես՝ Բուղա
Բուղա—57, 79, 83—86, 95, 96, 99, 104, 105, 131, 259

Գաբաւնացիք—136
Գագիկ Ա Բագրատունի—177, 179—182, 190, 195, 196, 199, 200, 207, 236, 243, 254

Գագիկ Ապումրվան—117, 118
Գագիկ Արծրունի—108
Գագիկ Արծրունի թագավոր—6, 92, 117, 118, 123, 128, 129, 131, 132, 140—142, 146, 148, 149, 153—155, 165, 171, 217, 249, 255, 259
Գագիկ Բ Բագրատունի—180, 181, 211, 212, 256
Գագիկ վիսպական թագավոր—259
Գամրաց աշխարհ—137
Գանձակ—9, 37, 166, 177, 206, 207, 210, 213, 214, 252
Գանձի—201
Գայլն դրունք—217
Գառնի—217, 219
Գեորգի Դ թագավոր վրաց—264
Գեորգիոս Կեդրենաս—10
Գեղարդ—138
Գերեզմանների դուռ (Դվինում)—171
Գերմանիկե. տես՝ Մարաշ
Գիլմուշ—213
Գինո բլուր—141
Գնունիներ—65, 85, 122, 126
Գողթն—126, 127, 129—131, 135, 136, 141, 177—179, 181, 182, 190, 208, 210, 221, 223, 264
Գրիգոր Արծրունի—108
Գրիգոր Արծրունի (ժ դ.)—178
Գրիգոր եպիսկոպոս—205
Գրիգոր Հնձացի—205
Գրիգոր Մագիստրոս—205, 211, 234—236, 238
Գրիգոր Նարեկացի—97—99, 235
Գրիգոր՝ որդի Կատակալոնի—188
Գրիգոր՝ որդի Վահրամ Պահլավունու—212
Գրիգոր՝ որդի Տարոնի Աշոտ Պատրիկի—194
Գրիգոր Փառաւոր—207
Գրիգորիկիոս Տարոնի իշխան—123, 184
Գուգարք—38, 119
Գուրգեն. տես՝ Հովհան Կուրկուաս
Գուրգեն՝ Անձևացյաց տեր (ժ դ.)—170
Գուրգեն Ապուսելճ—84, 103, 105, 106
Գուրգեն Արծրունի՝ որդի Դերենիկի—117, 120
Գուրգեն Բագրատունի իշխան Տարոնի—117, 123
Գուրգեն՝ հայր վրաց Բագրատ Դ-ի—198
Գուրգեն վրաց իշխան—133
Գուրգեն Տաշիր-Զորագետի տեր—170
Գևորգ (մարզպետունի)—138
Գևորգ Դառնեցի կաթողիկոս—110, 115

Դարիլ. տես՝ Դվին
Դաղյան Խ.—31
Դայլամցիներ—164, 165, 167, 168, 171, 173, 179, 208, 209, 224, 256, 264.
Դայսամ իբն Իբրահիմ—142, 143, 165, 166, 171, 172, 174, 191, 264, 269
Դայրանի որդիներ. տես՝ Դերենիկի որդիներ
Դաշտ ալ-Ուարբ—152
Դավիթ Անհողին—180, 181
Դավիթ Բագրատունի (Տարոնի)—109, 117, 259
Դավիթ Դվնացի—180, 181, 264
Դավիթ կաթողիկոս—77
Դավիթ կյուրապաղատ Տայոց—189, 190, 195—199, 230
Դավիթ Շինարար թագավոր վրաց—17, 183
Դավիթ Սասունցի—259
Դատ ալ-Ջաուզ. տես՝ Արծկե
Դասվան—59, 85, 104, 108, 152
Դարա—51
Դարանաղի—49
Դարույնք—68, 142
Դաուին—218
Դեգիր—49, 188
Դե-Գույե Մ.—13, 22, 26
Դելմաստան—177
Դելմիկներ. տես՝ Դայլամցիներ
Դերբենդ—19, 51, 59, 93, 125, 245
Դերենիկ Արծրունի՝ որդի Գագիկ թագավորի—171, 173
Դերենիկ՝ որդի Աշոտ Արծրունու (Թ դ.)—103, 108—111, 117
Դերենիկի որդիներ—173
Դերջան—188
Դիար Բաքր—52, 54, 55, 57, 58, 150
Դիարբաքրյան սահմանային գոտի—55
Դիարբեքիր—52
Դիար Մուդար—53, 54, 61
Դիար Ռաբիա—52, 54, 63
Դիգենիս Ակրիտաս—49
Դիոնիսիոս Տելմահրացի—10
Դիր Զուր—206
Դիր Մուս—166, 169
Դլուք. տես՝ Տլուք
Դոզս—116, 119
Դովսեթ Զ.—8
Դվին—5, 22, 29—31, 37, 38, 43, 52, 57, 68—73, 75, 77—80, 94, 101—103, 108—117, 119, 123, 127—143, 147, 148, 160, 165—179, 181,

182, 187, 188, 192, 206—226, 229, 230, 232, 233, 238—240, 243—250, 252, 254—256, 263, 264
Դվին Ներքին—220
Դվին Վերին—226
Դվինի դաշտ—219
Դվնիք—188
Դրասխանակերտցի. տես՝ Հովհաննես Դրասխանակերտցի
Դրունք Կիլիկիոյ—48
Դևդատ—119, 123, 264
Դ'Օհսոն—32
Եղերաց աշխարհ—64
Եղիպտոս—14, 15, 20, 21, 25, 32, 41, 87, 90, 232, 234, 240, 245
Եղեսիա—51, 54, 198
Եղիպ իբն Հիսն—57, 79
Եղիպ իբն Մաղյաղ՝ ոստիկան (Շայբանի)—55, 56, 61, 62, 94, 265
Եղիպ իբն Ուսայդ (Սուլամի)—60, 61, 92, 266
Եկեղեցականներ—264
Եկեղյաց գավառ—49, 188, 237
Եղեգիս—248
Եմեն—55, 87
Եմենի ցեղեր—52, 53, 61, 62, 88
Եմեսա—129, 130
Եվրոպա—16, 17, 19, 24
Երազդավորս—119, 133, 168, 183
Երեմիա Չելեպի Քեոմյուրճյան—19
Երեմյան Ս.—167, 188
Երիզա—198
Երիկավ—122, 146
Երնջակ—126, 127, 130, 135
Երրորդ Հայք—48
Երուսաղեմ—32
Երևան—212, 217
Եփրատ—48, 50, 52—54, 60, 88
Զախդա (Շայբանի)—55
Զահարի—17
Զայդ իբն ալ-Խաթթաբ—62
Զանգիբար—15
Զարեհավան—99, 234
Զարևանդ—111
Զափրանիկ—194
Զաքարիա Հռետոր—10
Զիրաթիրա. տես՝ Սոզոպետրա
Զիբրի—103, 160

Զորյան Հ.—36
Զվարթնոց—29
Զութ—50
Զուրարա—265
Զուրարիկներ—33, 58, 63, 81, 91, 92, 104, 105, 117, 128, 154, 178, 233, 265

Էմին Մ.—8
Էջմիածին—6, 29, 176, 219

Թաբարի—13—16, 33, 83
Թաբարիստան—14, 20, 203
Թահիր իբն Մուհամմադ ալ-Սանանի՝ ոստիկան—69
Թահիրյաններ—13
Թայթուանա. տես՝ Դատվան
Թավրիզ—165, 204, 241, 246
Թարանդա. տես՝ Տերենտե—
Թարոմ—165
Թարսուս. տես՝ Տարսոն
Թեհրան. տես՝ Ռեյ
Թեոդորոս Արու Կուրրա—53
Թեոդորոս Ռշտունի—42, 258
Թեոփիլոս—161—163, 148
Թիրեաքյան Դ.—18, 19
Թոնդրակ—99, 234—238
Թոնդրակյաններ—98—100, 234—237
Թոռնավան—203
Թոռնիկ Մամիկոնյան—205
Թովմա Արծրունի—6, 7, 33, 57—59, 65, 71, 80—85, 97, 98, 103—111, 114—118, 120—122, 126, 128, 130, 131, 139—141, 145, 149, 160, 217, 221, 229, 233, 235, 255
Թորնբերդ Կ. Յ.—17
Թորոս—258
Թորփախկալա—220
Թուիչյան Հ.—33, 34
Թրակիա—50
Թուլայլ—237
Թուղխ—118
Թունիս—232
Թուր Աբդին—51, 194
Թուրքական ցեղեր—50
Թևաթորոս—258

Ժորեռ Ա.—24
Ժուլն Պ.—36

Իբն ալ-Ագրակ. տես՝ Ֆարիկի
Իբն ալ-Ասիր—13, 17, 33, 58, 104, 115, 128, 138, 140, 141, 157, 185, 193, 198, 201—203
Իբն ալ-Դայրանի. տես՝ Դավիթ Արծրունի Բագավոր
Իբն ալ-Մուկաֆֆա—12
Իբն ալ-Ֆակիհ—33, 222
Իբն Զաֆիր—17, 38, 152, 153, 155, 162
Իբն Իուանիկ—151 ,152
Իբն Խալլիքան—218
Իբն Խորդադբեհ—20, 21, 33, 64, 222
Իբն Հաուկալ—21, 22, 33, 73, 102, 129, 173—175, 224, 227, 239—241, 243, 244
Իբն Միսքավայհ—13, 16, 38, 142, 158, 175, 176, 197
Իբն Մուկլա—150
Իբն Ռուստա—245
Իբրահիմ-131
Իբրահիմ Սինան—213
Իբրահիմ իբն ալ-Դաբբի—166, 264
Իբրահիմ իբն ալ-Մարզուբան—166, 167, 169, 173, 175—177, 264, 269
Իդրիսի—23, 24
Իյաղ իբն Ղանմ—46, 51,52, 60
Ինդոս—88
Ինճիճյան Ղ.—31, 33
Իշխանիկ—203
Իշոխ—10
Իսա (Զուրարիկ)—104
Իսա իբն ալ-Շայխ—58, 104—107, 117, 265
Իսա իբն Մուհամմադ՝ ոստիկան—77, 78
Իսթախրի—21, 239
Իսհակ իբն Այյուբ—105
Իսհակ իբն Իսմաիլ—57, 95
Իսհակ իբն Կունդաջիկ՝ ոստիկան—104, 105, 110
Իսմաիլ—104
Իսմաիլ իբն Շուայբ—56
Իսպանիա—22, 88, 90, 228, 251
Իսֆահան—245
Իվանն Ամարնկ—264
Իրան—21, 23, 51, 89, 191, 245, 246
Իրաք—20, 52, 191, 244, 245
Իրթիճեան Կ.—32

Լալակոն—161
Լախմ ցեղ—52, 63
Լաշքարի Ալի (Շադդադյան)—268
Լաշքարի իբն Մարդի—142
Լաշքարի իբն Մուհամմադ (Շադդադյան)—192, 193, 206, 207, 268
Լեզգիներ—168, 169, 192
Լեյդեն—13
Լենինգրադ—143
Լենկթիմուր—32
Լեո—118
Լիկանդյանք՝ բանակաթեմ—159
Լիմ—6
Լիպարիտ—183
Լիպարիտ Բաղվիլաշի—208, 212
Լիպշից Ե.—49
Լոնդոն—17, 27
Լոռան Ժ.—35
Լոռե—248
Լևոն Զ կայսր—113, 114, 161
Լևոն Բոռնիկիոս—212
Լևոն Իսավրացի—6, 47
Լևոն Վերջին—19

Խաղարներ—51, 56, 59, 72, 93
Խալաթյանց Բ.—13, 14, 35
Խալիդ իբն ալ-Վալիդ—46
Խալիդ իբն Եզիդ (Շայբանի)—56, 57, 76, 78, 95, 225, 229, 265
Խալիդ իբն Եզիդ իբն Ուսայդ՝ Սուլամի ոստիկան—60, 94, 266
Խալիդիյա—153
Խաղտիք՝ բանակաթեմ—148, 155, 158, 161
Խաղտոյառիճ—190, 199
Խաչեն—125, 213
Խաչիկ—203
Խաչիկ կաթողիկոս—179
Խառան—54, 62
Խարբերդ—49, 158
Խելիոնիոն—212
Խիզան—54, 187, 193
Խլաթ. տես՝ Խլաթ
Խլաթ—64, 78, 79, 82, 97, 104, 141, 144, 148, 152, 154, 156, 157, 185—187, 193, 196, 199, 202—205, 215, 221—223, 229—231, 233, 237, 238, 242—244, 246
Խնտուի վանք—205

Խնունիս—223
Խնունք—237, 238
Խոյ—204, 243
Խոռխորունիք—146, 223
Խոսրով Գ Կոտակ—263
Խոսրով Գողթնացի—130
Խոսրովակերտ անտառ—219
Խոր Վիրապ—141, 217
Խորասան—13, 158, 203, 244
Խորձյանք—196
Խորիկ—201
Խուզայմա իբն Խազիմ՝ սատիկան—61
Խուլի—153
Խուշշեր (Շապղաղյան)—268

Ծաղկոտն—99, 195, 234
Ծանարներ—57
Ծերեթելի Գ.—18
Ծիծեռնակաբերդ—212
Ծղուկ—77
Ծովք լիճ—55
Ծուփք—196, 205

Կաթրան—210
Կալի—228
Կալիկալա. տես՝ Կարնո քաղաք
Կալինիկում. տես՝ Իակկա
Կախեթ—125
Կահիրե—23
Կամախ—49, 52, 60, 158
Կամենաս—188, 212
Կամսարականներ—65, 68, 126
Կայս ցեղ—49, 50, 53, 60, 62, 63, 88, 267
Կայս-այլան. տես՝ Կայս
Կայսիկներ—17, 33, 37, 38, 63, 67, 87, 92, 96, 99—101, 107, 110, 120—122, 126—128, 131, 134, 141, 143—148, 153, 156, 157, 178, 184—186, 189, 190, 195, 221—223, 236, 250, 252, 266
Կայրուան—232
Կանայանց Ս.—136
Կանար Մ.—18, 36—38, 153, 155
Կանդուար—105
Կաշե—237, 238
Կապան—170, 210, 248

Կասիմ—131
Կասպից ծով—20, 165
Կավակերտ—76—79
Կատա—188
Կատակալոն—188
Կատակալոն Մագիստրոս—161
Կատակալոն Կեկավմենոս—212
Կարաուլով Ն.—35, 102
Կարբեաս—50
Կարին—145, 161, 163, 189, 190, 199, 223, 238
Կարնո քաղաք—43, 46, 47, 49, 59, 60, 64, 65, 101, 103, 113, 116, 122, 128, 143—145, 149, 151, 158—163, 174, 184, 185, 189, 196, 199, 202, 205, 213, 221—223, 228, 231, 233, 242, 243, 245—247, 252, 257
Կարս—119, 125, 168, 170, 177, 183, 195, 249
Կեկավմենոս—187, 188
Կեղծ Վակիդի—12
Կեցան—187
Կեցեոն—161
Կղել—214, 264
Կիդնոս—48
Կիլիկիա—25, 46—49, 163
Կիննասրին—50
Կիրակոս Գանձակեցի—9
Կիրկեսիոն—54
Կիւռ ժան. տես՝ Հովհան Զմշկիկ
Կիֆա. տես՝ Հիսն Քայֆա
Կյուրիկյաններ—248
Կողոնիա՝ բանակաթեմ—49—50, 156, 161
Կոստանդին Ալան—212
Կոստանդին Ծիրանածին—9, 97, 101, 120, 121, 144, 145, 147, 153—156, 160—163, 184, 228
Կոստանդին կաթողիկոս—10
Կոստանդին Կավասիլաս—201
Կոստանդին Կոպրոնիմոս—47, 60
Կոստանդին Մոնոմախ—211, 212
Կոստանդին Նեբքինի—212
Կոստանյան Կ.—28
Կոստյանք—195
Կովկաս—35
Կոտայք—135, 209, 217
Կոտոմ—128
Կորդովա—22, 24

Կորդուբ—52, 54, 191
Կորի—144, 146, 156, 223
Կորճայք—51, 52, 54, 191, 193
Կ. Պոլիս—6, 15, 18, 22, 46—48, 194, 199, 201, 211, 212
Կրամերս Յ. Հ.—22
Կրետե—158
Կուբակիր գետ—48
Կուզ Բաղին—259
Կուլբ. տես՝ խուլփ
Կունծիկ—237
Կուրայշ ցեղ—62, 63, 267
Կուրկուասներ—163
Կուրտ—264

Հարիր իբն Մասլամա—43, 46, 52, 60, 219, 226, 227, 263
Հադաս—49
Հալեպ—15, 150, 194, 267
Հակոբ եպիսկոպոս—236, 237
Հաղացովիտ—122
Համադանի—15
Համդան իբն Համդուն—150, 267
Համդանյաններ—33, 37, 38, 63, 93, 149—151, 154—156, 184, 186, 193—195, 206, 221, 233, 267
Համդուն—156, 185, 186
Համիդ բերդ—153, 154
Հայկ—19
Հայկական լեռնաշխարհ—38
Հայկական հարստություն. տես՝ Մակեդոնական հարստություն
Հայոց դուռ (Ամիդում)—54
Հայսամ (Շայրանի)—57, 265
Հանի—54
Հանձիթ—19, 198
Հաշտյանք—196
Հասպոզյան Մ.—34
Հասան իբն Կահթաբա—45
Հասան որդի Խաչիկի—203
Հասանիկ Արծրունի—109
Հասանվեյհներ—191
Հավֆիշ—151, 162, 198, 221, 223
Հավնունիք—221, 223
Հատիմ իբն Հարսամա՝ ոստիկան—94
Հարուն (Զուլարիկ)—104
Հարուն ալ-Ռաշիդ—12, 47, 48, 55, 61, 62, 66—68, 85, 94, 96

Հարունիյյա—48
Հարք—144—146, 152, 156, 186, 190, 199, 222, 223, 234, 236, 238
Հաֆջիջ. տես՝ Հավհիշ
Հեսու—236, 238
Հեր—101, 111, 182, 196, 200, 201, 203, 221, 242
Հերոդոտոս—15
Հիզան. տես՝ Խիզան
Հիմս (Հոմս). տես՝ Եմեսա
Հիսն Զիյադ. տես՝ Խարբերդ
Հիսն Մանսուր—49, 60
Հիսն Քայֆա—54
Հիսուս—98
Հյուար Կ.—38
Հյուրշման Հ.—34
Հյուսիսային Ասորիք—122
Հյուսիսային Աֆրիկա—22, 63, 232
Հյուսիսային Կովկաս—29
Հնդկական ցեղեր—50
Հնդկաստան—15
Հնդկաց օվկիանոս—21
Հոլանդիա—13
Հողարերդ—220
Հոնիգման Է.—37, 144, 187, 213
Հովհան Առաքելիոս—162
Հովհան Կուրկուաս—136, 137, 147, 148, 160 161, 264
Հովհան Ցիմշկիկ—163, 170, 186, 249
Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի—7, 33, 55, 66, 74, 76—78, 103—105, 110—115, 117—120, 123, 127, 129—138, 144, 145, 160, 170, 174, 226, 233, 242, 255
Հովհաննես կաթողիկոս Ովայեցի—218, 234
Հովհաննես Վանական—8
Հովհաննես-Սմբատ Բագրատունի—179, 181, 200, 207, 209—211
Հովհաննիսյան Ա.—98
Հովնան—259
Հովնանյան Ղ.—33
Հովսեփ կաթողիկոս Աղվանից—210
Հովսեփ՝ հույն ներքինի—120
Հովսեփյան Դ.—176
Հռիփսիմե՝ դուստր Աշոտ Գ-ի—176
Հռիփսիմե՝ տիկին Արծրունյաց (Թ դ.)—82
Հոռոմ—24
Հրազդան—77, 211
Հրանուշ—237

Հույներ—93
Հուստինիանոս կայսր—174
Հարաստան. տես՝ Հրազդան
Հոլ. տես՝ Խալիպ իբն Եզիդ (Շայբանի)

Ձենով Օհան—259
Ձորա պահակ—52, 59

Ղազար—238
Ղազարյան Մ.—33, 35, 71
Ղասսան ցեղ—63
Ղաֆազարյան Կ.—31, 36, 115, 129, 218, 240
ղպտիներ—41
Ղևոնդ—6, 33, 43—45, 60, 64, 65, 72, 224, 227

Ճնճղուկ—203

Մաադդ—267
Մաան իբն Զաիդա (Շայբանի)—55
Մադինա—63
Մազյադ (Շայբանի)—265
Մազյադիներ (Շիրվանում)—57
Մալաթիա. տես՝ Մելիտինե
Մալխասյանց Ստ.—5, 7
Մակեդոնական հարստություն—48, 159, 189
Մակեդոնիա—200
Մահմետ. տես՝ Մուհամմադ Մարգարե
Մահմուդ (Շաղդադյան)—268
Մաղարթա վանք—28, 176
Մաղրիբ—21
Մամ—8, 207
Մամեստիա. տես՝ Մսիսուեստիա
Մամիկոնյաններ—45, 65, 66, 68, 91, 126
Մամլան Ռավվադյան—182, 195, 196
Մամմա—195
Մամուն՝ խալիֆա—12, 47, 56, 68, 69, 77, 80, 95
Մայաֆարիկին. տես՝ Նփրիկերտ
Մանազկերտ—17, 37, 38, 64, 71, 86, 92, 96—101, 110, 111, 120—122, 128, 143, 144, 151, 152, 154, 156, 157, 161, 185—187, 189, 193, 195, 199, 200, 202, 205, 206, 213, 221—223, 228—231, 233, 235, 242 244, 246, 250, 252
Մանանաղի—145, 237, 238
Մանանդյան Հ.—7, 36, 42, 44, 51, 208, 213

Մանավազյան—98
Մանբիջ—46
Մանծկերտ. տես՝ Մանազկերտ
Մանսամուն—167, 171
Մանսուր. տես՝ Աբու Ջաֆար ալ-Մանսուր
Մանսուր իբն Իսա (Շայբանի)—265
Մանսուր իբն Նասր (Մրվանյան)—206, 268
Մանսուր՝ Կայս ցեղից—49
Մանսուր իբն Ջաուանա—60
Մանուշ—30, 214, 268
Մառ Ն.—30, 31, 34
Մասիսա. տես՝ Մոփսուեստիա
Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք—47
Մասյացոտն—217
Մաստատոն—161, 163, 202, 221, 223
Մասուդի—15, 16, 20
Մավրիկ կայսր—40, 174
Մատթեոս Ուռհայեցի—8, 170, 171, 185, 186, 201, 203, 207—211
Մարանդ—204, 241
Մարաղա—176, 243
Մարաշ—47, 48
Մարդաղի—186, 190, 199, 223, 237, 238
Մարդին—151
Մարեր—191
Մարզուբան իբն Մուհամմադ (Շադդադյան)—206, 207, 268
Մարկվարտ Յ.—14, 33—35, 67, 97, 152, 154, 187, 202
Մարոկկո—23
Մաքին իբն Մուսա ալ-Բայլականի—93
Մելիտինե—47, 48, 50, 60, 87, 148, 162, 198
Մելիքսեթ Բեկ Լ.—11
Մելիք-Օհանջանյան Կ.—258
Մեծ Հայք—25, 26, 33, 40, 45, 46, 49, 51, 52, 58, 59, 62, 63, 68, 100, 140, 177, 187, 190, 191, 193, 214, 227, 231, 232, 236, 259, 265
Մեծամոր—167, 171, 218
Մեսոպոտամիա. տես՝ Միջագետք բանակաթեմ
Մեսրոպ եպս. Տեր Մովսեսյան—6, 29
Մերվ—25
Մեքքա—63
Միլլեր Կ.—24
Մինորսկի Վ.—18, 19, 23, 27, 36, 38, 167, 175, 218
Միջագետք—12, 14, 51, 63, 87, 90, 91, 120, 148, 150, 159, 160, 171, 202, 227, 228, 231, 232, 238, 244, 245
Միջագետք Ասորվոց—53

Միջագետք բանակաթիռ—158, 161
Միջերկրական ծով—149
Միջին Ասիա—21, 24, 88
Միքայել Ասիա—212
Միքայել Ասորի—10, 67
Միքայել Դ—202
Մխիթար Այրիվանեցի—182
Մխիթար Գոշ—8, 9, 253—254
Մխիթարյաններ—33
Մծբին—21, 51, 56, 151, 193
Մյուիր Վ.—38
Մյուլլեր Ա.—38
Մյունեջջիմ Բաշը. տես՝ Մունաջջիմ Բաշի
Մնացականյան Ա.—238
Մոզ—167
Մոկք—38, 121, 122, 125, 144, 205, 258
Մոսուլ—17, 52, 54, 56, 63, 104, 105, 150, 160, 172, 185, 193, 194, 244, 245, 267
Մովսես Դասխուրանցի—7—8
Մովսես Խորենացի—182, 191, 218, 219, 225
Մովսես Կաղանկատվացի—7
Մորթման—32
Մոփսուեստիա—48, 50
Մսրա Մելիք—259
Մրվան. տես՝ Սեադա իբն Արդ ալ-Համիդ
Մրվան (Բատի փեսան)—268
Մրվանյաններ—7, 18, 29, 35, 189, 190, 192, 193, 195, 199, 202, 203, 205, 215, 230, 237, 258, 268
Մուավիա—42
Մուղար ցեղախումբ—52, 53, 62, 63, 267
Մուղուր—49
Մութասիմ խալիֆա—79, 80
Մուիզզ ալ-Դաուլա (Բուայհի)—156
Մուկադդասի—21, 22, 224, 225, 233, 239, 246
Մուկտադիր՝ խալիֆա—170
Մուհալհիլ ալ-Տամիմի—94
Մուհամմադ (Զուրարիկ)—104
Մուհամմադ ալ-Յամանի—107, 108, 110
Մուհամմադ՝ Դվինի ամիրա—113, 263
Մուհամմադ իբն Արդ ալ-Ռաղզակ—166
Մուհամմադ իբն Ահմադ (Շայբանի)—265
Մուհամմադ իբն Ատտար—57, 94, 95
Մուհամմադ իբն Եզիդ (Շայբանի)—56, 265

Միջագետք բանակաթիռ—158, 161
Միջերկրական ծով—149
Միջին Ասիա—21, 24, 88
Միքայել Ասիա—212
Միքայել Ասորի—10, 67
Միքայել Դ—202
Մխիթար Այրիվանեցի—182
Մխիթար Դոշ—8, 9, 253—254
Մխիթարյաններ—33
Մծբին—21, 51, 56, 151, 193
Մյուիր Վ.—38
Մյուլլեր Ա.—38
Մյունեջջիմ Բաշը. տես՝ Մունաջջիմ Բաշի
Մնացականյան Ա.—238
Մոզ—167
Մոկք—38, 121, 122, 125, 144, 205, 258
Մոսուլ—17, 52, 54, 56, 63, 104, 105, 150, 160, 172, 185, 193, 194, 244, 245, 267
Մովսես Դասխուրանցի—7—8
Մովսես Խորենացի—182, 191, 218, 219, 225
Մովսես Կաղանկատվացի—7
Մորթման—32
Մոսիսուեստիա—48, 50
Մսրա Մելիք—259
Մրվան. տես՝ Սեադա իբն Աբդ ալ-Համիդ
Մրվան (Բատի փեսան)—268
Մրվանյաններ—7, 18, 29, 35, 189, 190, 192, 193, 195, 199, 202, 203, 205, 215, 230, 237, 258, 268
Մուավիա—42
Մուղար ցեղախումբ—52, 53, 62, 63, 267
Մուղուր—49
Մութասիմ խալիֆա—79, 80
Մուիզզ ալ-Դաուլա (Բուայհի)—156
Մուկադդասի—21, 22, 224, 225, 233, 239, 246
Մուկտադիր՝ խալիֆա—170
Մուհալհիլ ալ-Տամիմի—94
Մուհամմադ (Զուրարիկ)—104
Մուհամմադ ալ-Յամանի—107, 108, 110
Մուհամմադ՝ Դվինի ամիրա—113, 263
Մուհամմադ իբն Աբդ ալ-Ռազզակ—166
Մուհամմադ իբն Ահմադ (Շայբանի)—265
Մուհամմադ իբն Ատտար—57, 94, 95
Մուհամմադ իբն Եզիդ (Շայբանի)—56, 265

Մուհամմադ իբն Խալիդ (Շայբանի)—57, 58, 95, 107, 108, 110, 265
Մուհամմադ իբն Մրվան—43, 60, 92
Մուհամմադ իբն Նասր—160
Մուհամմադ իբն Շադդադ—166—173, 192, 206, 208, 219, 224—226, 256, 264, 268
Մուհամմադ Մարգարե—11—13, 62, 63, 138
Մուղան—142
Մունաջջիմ Բաշի—9, 18, 19, 38, 166, 168, 192, 207, 209, 219, 224, 225, 246
Մուշ—82, 152, 158, 194
Մուշեղ Բագրատունի (Կարսի)—177
Մուշեղ Մամիկոնյան—45, 65, 67, 266
Մուշեղ Մոկաց իշխան—108
Մուսա իբն Զուբարա—81, 83, 85, 91, 92, 104, 117, 265
Մուսա իբն Ֆադլ (Շադդադյան)—268
Մուսաննա իբն Հարիսա—54
Մուսաֆիրիններ. տես՝ Սալարյաններ
Մուսէ որդի Զօրահայի. տես՝ Մուսա իբն Զուբարա
Մուտաղալլիբներ—56, 57
Մուտադիդ՝ խալիֆա—150
Մուտամիդ՝ խալիֆա—20, 110
Մուտասիմ՝ խալիֆա—47, 57
Մուտավաքքիլ՝ խալիֆա—80, 83, 101, 194
Մուֆարկին (Մուֆարղին). տես՝ Նիրկերտ
Մուքտաֆի՝ խալիֆա—123
Մուֆլիհ—139—142, 148—149, 264, 269

Յակաղան (Սուլամի)—61, 266
Յակուբի—13, 14, 33, 34, 55, 60—62, 67, 74, 77—79, 239, 244, 245
Յակուտ—24, 25, 33, 230
Յահիա ալ-Հարաշի—94
Յահիա իբն Սաիդ—56
Յահիա իբն Սաիդ՝ պատմիչ—157, 163
Յամանիկ. տես՝ Մուհամմադ ալ-Յամանի
Յիսէ որդի Շեհի. տես՝ Իսա իբն ալ-Շայխ
Յուսուֆ (Սաջյան)—22, 120, 123, 126, 129—135, 137, 140, 226, 264, 269
Յուսուֆ ալ-Մարվազի՝ ոստիկան—78, 82—85, 104
Յուսուֆ իբն Ռաշիդ ալ-Սուլամի—61
Յուվա—218

Նալբանդյան Հ.—36, 44, 56, 76, 84, 90 101
Նախճավան—57, 79, 115, 123, 126, 130, 131, 136, 137, 141, 166, 174, 176—179, 181, 208, 210, 221, 223, 226, 242, 243, 246

Նախճավան գավառ—223
Նահրարան—245
Նանա—53
Նապոլեոն—24
Նաջա—156—158, 206
Նասիր ալ-Դաուլա (Համդանյան)—150, 151, 172, 267
Նասիրի խոսրով—26, 27, 204, 205, 229
Նասր (Մրվանյան)—205, 268
Նասր ալ-Դաուլա. տես՝ Աբու Նասր Ահմադ
Նասր ալ-Սուբուքի—137—139, 264
Նաուարդ—169, 218
Նեոլդեքե Թ.—14
Ներքին Հայաստան—174
Ներքսադոյն Հայք—174
Նբուան. տես՝ Նկան
Նիբուր—12
Նիդ—209
Նիզամ ալ-Դաուլա Նասր. տես՝ Նասր (Մրվանյան).
Նիզարի ցեղեր—61, 62, 267
Նիկետաս Պեգոնիտես—202
Նիկեփոր կայսր—185
Նիկեփոր Կոմնենոս—201
Նիկեփոր Ներքինի—213
Նիկողայոս Ներքինի—212
Նիկոմիդիա—199
Նիսիբին. տես՝ Մծբին
Նկան—187
Նոր քաղաք. տես՝ Վաղարշապատ
Նորարերդ—218
Նորաշեն—220
Նփրկերտ—17, 18, 35, 51, 54, 58, 148, 152, 157, 193, 195, 198, 202, 205, 221, 231, 233, 237, 241—244

Շաբո—10
Շադդադ իբն Կուրտուկ—268
Շադդադյաններ—8, 18, 37, 167, 169, 171, 173, 177, 192, 206—215, 233, 246, 252, 258, 264, 268
Շադի իբն Այյուբ—218
Շահանշահ—188
Շահանշահ (Շադդադյան)—268
Շահապ. տես՝ Ջահհաֆ
Շահխաթունյանց Հ.—176
Շահնազարյան Ա.—219

Շահրան բերդ—153, 154
Շաղատ—77
Շամ. տես՝ Ասորիք
Շամախի—56, 245
Շամիրամ—16
Շամիրամա բերդ—207
Շամքոր—113, 207
Շայբան. տես՝ Շայբանիներ
Շայբանիներ—35, 51, 54, 57—59, 62, 63, 68, 76, 81, 84, 85, 90—93, 95, 104—108, 116—118, 128, 146, 177, 184, 221, 233, 265, 267
Շապուհ Բագրատունի՝ Հզբայր Աշոտ Ա-ի—103
Շապուհ Բագրատունի՝ Հզբայր Աշոտ Մսակերի—70, 75, 76, 263
Շապուհ Բագրատունի՝ պատմիչ—6
Շարմուա Ֆ.—27
Շարուր—141, 223
Շաքե—125
Շերեֆ ադ-Դին—27
Շիններ—27
Շիմշաթ. տես՝ Աշմուշատ
Շիրակ—28, 30, 68, 79, 101, 119, 126, 127, 131, 168, 171, 216
Շիրակավան. տես՝ Երազգավորս
Շիրի—237
Շիրվան—18, 19, 55—57, 125, 265
Շոթ—207

Ողնուտ (Եղնուտ)—146
Ոսկյան Հ.—8
Ոստան (Ռշտունյաց)—106, 120, 187, 248
Ոստան գավառ—101, 176, 217, 218, 223, 263
Ոստան Դվնա—216
Ովայ—218

Չամչյան Մ.—9, 31, 71, 180, 234, 235
Չինական ծով—15
Չինաստան—19
Չորմայրի—190, 199
Չորրորդ Արմինիա—51, 64, 159, 222
Չորրորդ Հայք—49, 159, 188, 196, 198

Պալերմո—24
Պախրա—237
Պաղեստին—15, 53
Պաղնատուն—196

Պահլավունիներ—217, 248
Պանկրատիոս—163
Պավլիկյաններ—50, 100
Պատկանյան Ք.—5
Պարսուան—207
Պարսկաստան—14, 15, 21, 24, 41, 165, 207
Պարսավ—69, 71—73, 80, 94, 107, 110, 112, 118, 120, 125, 140, 173, 175, 177, 183, 207, 224, 245, 246, 263
Պետերբուրգ—27, 31
Պետերման Հ.—32—33
Պետրոնաս Բոյիլաս—163
Պիղուլևսկայա Ն.—10
Պիրամոս—48
Պողոսյան Ս.—99
Պոռշ խաղբակյան—264
Պրյուդոմ Է.—180

Ջազիրա—17, 37, 48, 50, 51, 53, 54, 59, 60, 62, 88, 95, 104, 105, 151, 158, 159, 191
Ջալալյանց Ս.—28
Ջահասպ. տես՝ Ջահհաֆ
Ջահհաֆ—65—69, 73—75, 91, 94, 247, 263, 266
Ջահհաֆ որդի Սևադայի—86, 87, 96, 266
Ջահհաֆյաններ—13, 61, 63, 66—71, 73, 79, 83, 87, 91—93, 96, 146, 154, 155, 232, 247, 266
Ջայհան. տես՝ Պիրամոս
Ջաստան իբն Շարամզան—176
Ջավիդան իբն Սահլ—67
Ջաֆր. տես՝ Մուտավաքքիլ
Ջաֆարյան ամիրաներ Տիզիսում—183
Ջերմ—237
Ջերմաձոր—144
Ջիբալ—20, 191
Ջիհան. տես՝ Պիրամոս
Ջղմաթ—187
Ջուլամերկ—187
Ջուստանիներ—165
Ջուրջան—95

Ռարիա ցեղախումբ—52, 55, 68, 62, 63, 267
Ռակկա—51
Ռավվադի քրդեր—218
Ռավվադյաններ—178, 182, 191

Ակ — 165, 197
Աշտանիներ — 126
Աշտանիր (գավառ) — 106
Աստեն Վ. — 102
Աստեր Բ — 24
Ատամանս Լեկապենոս — 136, 147, 148, 162
Ատամ Վարամնանի — 106
Ատտա. տես՝ Եղեսիա
Ատրն ալ-Դաուլա — 165

Ատաղ ալ-Դաուլա — 267
Ատիզ (Մրմանյան) — 205, 268
Ատյա՝ ալ-Գին — 218, 232
Ատյար Մարզուբան — 165, 166, 171—173, 175, 177, 224, 264, 269
Ատյարյաններ — 143, 164, 165, 172, 174—177, 206, 207, 224, 219, 269,
Ատմասա — 101, 172, 187, 221, 241, 243
Ատնակ Բագրատունի՝ Հայոց իշխան — 60
Ատնակ Գողթնացի — 130
Ատնակ Այանցաց իշխան — 77
Ատմարա — 83, 104
Ատմոսատ — 48, 50, 54
Ատմեկ — 205, 237
Ատմեկ Անեցի — 9
Ատմեկյան Ե. — 253
Ատյանն. տես՝ Սարոս գետ
Ատյֆ ալ-Դաուլա — 38, 150—158, 162, 172, 185, 186, 206, 267
Ատչյաններ — 22, 115, 119, 120, 123, 124, 127, 129, 130, 132, 133, 139, 140, 144, 164, 177, 249, 254, 269
Ատանյաններ — 40
Ատանա տուն. տես՝ Ատաուն
Ատաուն — 117, 153, 155, 170, 186—188, 203—205, 219, 258
Ատաղա իբն Աբդ ալ-Համիդ. տես՝ Ատաղա
Ատամակ — 188
Ատրդիս — 182
Ատրդիս Սեանցի — 236
Ատրգոյան Բ. — 98
Ատե — 209
Ատրոս — 48
Ատիլ — 120
Ատֆի. տես՝ Ատիլ
Ատֆուան իբն Մուսթիալ — 52, 60, 222
Ատուբ — 134, 136, 137, 264
Ատրեոս — 5, 6, 33, 49, 43, 46

Սենեքերիմ՝ Խաչենի տեր—173, 174
Սենեքերիմ՝ Սասունի իշխան—187
Սենեքերիմ՝ Վասպուրականի թագավոր—170, 187, 198, 200
Սերմանց լեռ—144, 155, 156, 186, 223
Սիկիլիա—24, 158
Սիհոն. տես՝ Սարոս
Սիմ լեռ—117
Սինբաթ իբն Աշոթ. տես՝ Սմբատ Ա.
Սինբաթի որդիներ. տես՝ Սմբատի որդիներ
Սինհարիբ.—205
Սինհարիբ. տես՝ Սենեքերիմ (Խաչենի)
Սիսական—28, 69, 176, 266
Սիրիա—245
Սկիթիցես—10, 201, 202
Սկիթացի թուր—136
Սկերդ—54, 193
Սմբատ Ա—22, 38, 97, 101, 103, 112—119, 121—129, 131—133, 140, 144—146, 149, 159, 160, 164, 174, 181, 184, 189, 199, 226, 235, 242, 247, 249, 263
Սմբատ Ապահունի—71
Սմբատ Բ—176—178, 182
Սմբատ Բագրատունի—235
Սմբատ Բագրատունի (մեռ. 726)—64
Սմբատ Բագրատունի (մեռ. 775)—45, 68
Սմբատ Բագրատունի (խոստովանող)—75—77, 79, 86, 234
Սմբատ Զարեհավանցի—98—100, 234—236
Սմբատ Սյունյաց իշխան (ժ դ.)—127, 136, 173
Սմբատի որդիներ—173—175
Սյունիք—38, 74, 77, 79, 125, 127, 136, 167, 173, 193, 200, 213, 217, 250
Սյունյաց իշխաններ—68, 75, 79, 100, 123, 126, 130, 131, 135—137, 153, 217, 248, 249
Սպասպետաբա—18, 61
Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ—7, 8, 68, 86, 99, 136, 156, 163, 168, 177—179, 182, 185, 190, 193—196, 198—200, 207, 221, 230, 233, 234
Ստեփանոս Օրբելյան—9, 66, 67, 74, 136
Ստեփանոսի նախավկայի վանք. տես՝ Մագարիա վանք
Սասրին Միջագեր—52
Սրվանձտյանց Գ.—188
Սուլամիներ. տես՝ Սուլթի ցեղ
Սուլթի ցեղ—52, 59, 60—63, 84, 85, 90, 96, 146, 155, 266, 267
Սուլթման (Զուբարիկ)—104
Սուլթման բերդ—153

Սուլայման սուլթան—72
Սումայրամ—165—166
Սուզուբ. տես՝ արաբա-բյուզանդական սահմանային գոտի
Սուզուբ Շամիյյա. տես՝ Ասորիքի սահմանային գոտի
Սուզուբ Ջազարիյյա. տես՝ Վերին Միջագետքի սահմանային գոտի
Սուրբ Գրիգոր՝—212
Սուրբ Կարապետ (Մշո)—152
Սուրբ Մարի—212
Սուրմալու (Սուրմարի)). տես՝ Սուրբ Մարի
Սև ծով—113
Սև ջուր՝ գետ—219
Սեղաթ իբն Աբդ ալ-Համիդ—57, 67, 74—79, 83, 86, 91, 99, 229, 266
Սևան (Վասպուրականում)—109, 187
Սևանա լիճ—138, 209
Սեուկ Բերդակ—190

Վարիհ՝ սուլթան—61
Վալիդ իբն Թարիբ Շայբանի—56
Վալիդ՝ խալիֆա—47, 88
Վակիդի—12, 42
Վահան Գողթնացի—130
Վահուսդան (Սալարյան)—166, 175, 269
Վահուսդան իբն Մամլան—201
Վահրամ Պահլավունի—212
Վաղարշակերտ—195, 199
Վաղարշապատ—116, 129
Վայկուր. տես՝ Վայոց Ձոր
Վայլ Գ.—38
Վայլ ցեղախումբ—63, 267
Վայոց Ձոր—167, 173, 206, 217
—Վան—85, 106, 107, 120, 187, 203, 204, 242, 243, 248
Վան Բերշեմ Մ.—30, 35
Վանա լիճ—59, 63, 65, 78, 85, 92, 101, 106, 118, 149, 150, 154, 186, 193, 199, 200, 203, 221, 229, 245, 248
Վանանդ—119, 198, 200
Վաշմգիր—142
Վասակ՝ իշխան Սյունյաց (Բ դ.)—77
Վասակ՝ որդի Սմբատի (Սյունյաց)—173
Վասակ Պահլավունի—205, 208, 211
Վասիթ—245
Վասիլ Ա՝ կայսր—159
Վասիլ Բ՝ կայսր—187, 189, 190, 193, 194, 197, 198—201
Վասիլև Ա.—37

Վասիլևսկի Վ.—102, 187
Վասիկ խալիֆա—57, 79, 80
Վասիֆ ներքինի—120
Վասպուրական—6, 16, 38, 79, 81, 82, 84, 85, 103, 105—107, 109—111, 117, 118, 121, 122, 125—127, 129—132, 134, 140—143, 149—151, 153, 165, 167, 168, 170—172, 176, 178, 182, 187, 198—201, 203; 205, 206, 217, 246, 247, 249, 250, 258
Վարազ—85, 105, 106
Վարամնանիր—146, 223
Վարդ Սկլերոս—190, 193, 194, 198
Վարդ Փոկաս—185, 194, 197
Վարդան Արևելցի—34
Վարդան պատմիչ—8, 19, 65, 66, 69, 70, 74—76, 79, 156, 174, 179, 207, 208, 214, 256
Վեղիամինով—Զևինով Վ.—27
Վեյնտագեն Յ.—38
Վերին Միջագետք—12, 17, 16, 18—54, 60, 91, 127, 150, 158, 205
Վերին Միջագետքի ասորական գրաբ—16, 18
Վժան—115
Վիրեն—188
Վիեննա—15, 33, 187
Վիրք—13, 26, 43, 95, 183
Վլիմ տես՝ Վալիդ
Վրաստան—23, 41, 56, 57, 61, 91, 125, 134, 168, 177, 183, 197, 257
Վրվեն—237

Տալլ Հալֆ—167, 219
Տաղիր գետ—52, 63, 150, 267
Տամիմ գետ—267
Տայք—65, 125, 161, 162, 189, 190, 195, 196, 230
Տանման գետ—52, 63
Տաշյան Հ.—181, 187
Տաշիր-Զորագետ—125, 170, 200, 213, 215, 218, 219
Տամրոս Հայկական—58
Տամրոսյան լեռնաշղթա—15, 47, 48
Տարան—38, 68—70, 79, 81, 82, 91, 93, 101, 105, 117, 118, 123, 125, 127, 134, 145—147, 150—153, 155, 184—186, 189—190, 194, 198, 205, 212, 213, 221, 250, 259
Տարան—46, 48
Տեվրիկ—50
Տեր-Ավետիսյան Ա.—31
Տերենտ—48
Տեր-Հովհաննիսյան Ա.—32

Տեր-Վեռնդյան Ա.—19, 117
Տեր-Մինասյան Ե.—226
Տեր-Մկրտչյան Գ.—6
Տիգրան Մարզպան Արծրունի—178
Տիգրանակերտ—231
Տիգրիս—35, 52, 54
Տիկնունի—167, 219
Տիվինիոն—187, 188
Տլուբ—55
Տմորիբ—52, 54, 191
Տրապիզոն—245
Տուզրիլ—208
Տումանսկի—27
Տուրուբերան—12, 146, 159, 186
Տփղիս—57, 73, 95, 125, 182, 183, 215, 246

Ցերմացու—144
Ցլիկ Ամրամ—137

Ուապիտ. տես՝ Վապիտ
Ուայլ. տես՝ Վայլ
Ուիմանիկներ—33, 63, 65, 82, 84, 85, 93, 97, 101, 105—107, 122, 126, 128, 146, 178, 221, 223, 229, 233, 266
Ուամայյա—113, 263
Ուամայր իբն Հուբար—60
Ուոնայեցի. տես՝ Մատթեոս Ուռհայեցի
Ուսայդ—266
Ուտիր—119, 137
Ուրարտու—16
Ուրծ—223
Ուրմիա—243
Ուրմիս լիճ—82
Ուփլիս-Ցեխե—183

Փայտակարան—125
Փասիսոս—8, 125, 207
Փավստոս Բուզանդ—219
Փատլան. տես՝ Ֆաղլ որդի Մուհամմադի (Ճապղաղյան)
Փարպի—212
Փարիզ—16, 24, 35
Փիլիպպե՝ թագավոր Կապանի—170
Փոզդ—187
Փոքր Ասիա—21, 25, 48, 158, 190, 194, 211, 212

Քալբ գեղ—53, 63
Քամախ. տես՝ Կամախ
Քայգաբի գաւ (Դվինում)—246
Քարիլի—25, 125
Քարունջ—137
Քաւբար ալ-Սարդ. տես՝ Յաֆիա իբն Սաիդ
Քեմբրիջ—14
Քեսրանիներ (Շիրվանում)—57
Քինանա գեղ—267
Քրդեր—66, 164, 168, 171, 190, 224, 258
Քրդերի գետ—219
Քաթայիսի—183
Քուսա իբ Կապիտ—26
Քարգիսատան—20, 191
Քուֆա—232

Օմայաններ—41, 43, 44, 47, 55, 60, 72, 81, 88, 90, 93
Օմար Ա՝ խալիֆա—88
Օմար Բ՝ Օմայան—6, 80
Օսմանիներ. տես՝ Ուսմանիներ
Օսրոյենե—53
Օրբելի Լ.—30
Օրմանյան Մ.—116, 129, 168, 235
Օրոֆորդ—15, 18

Ֆադլ իբն Աբու-լ-Աբբաս (Շապղաղյան)—268
Ֆադլ իբն Մուհամմադ (Շապղաղյան)—206—208, 268
Ֆադլ իբն Ջաֆար ալ-Համդանի—166, 264
Ֆադլան իբն Աբու-լ-Աբբաս—256, 268
Ֆադլան իբն Մուհամմադ—268
Ֆադլան իբն Ֆադլ (Շապղաղյան)—268
Ֆաթիմյաններ—22
Ֆախր ալ-Դին—268
Ֆասմեր Ռ.—30
Ֆարսդանի—14
Ֆարիկի—17, 38, 152, 154—157, 187
Ֆիրս. տես՝ Կարայշ
Ֆիրդուսի—11
Ֆուսիաթ—232
Ֆրանսիա—24
Ֆրեն Խ.—30, 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱԾՈՒԹՅՈՒՆ 1. Աղբյուրներ 5
2. Հարցի ուսումնասիրման պատմություն . 31

ԳԼՈՒԽ Ա. Առաջին արաբական ամիրայությունների գոյացումը Մեծ Հայքում

1. Արաբական իշխանության բնույթը Հայաստանում . . 40
2. Արաբա-բյուզանդական սահմանային գոտին (սուգար) . 45
3. Արաբական ցեղերը Վերին Միջագետքում։ Շայբանիները . 51
4. Արաբների գաղթը Հայաստան։ Սուլայմ ցեղը . . . 58
5. Ջահհաֆյանները 66
6. Բուղայի արշավանքի հետևանքները 79
7. Արաբ ամիրաների հարմարվելը հայ նախարարական կարգերին 87

ԳԼՈՒԽ Բ. Ամիրայությունները Բագրատունյաց թագավորության կազմում

1. Կայսիկների հաստատումը Մանազկերտում Աշոտ Ա-ի օրոք 96
2. Աշոտ Ա-ի և Մեծ Հայքի ամիրայությունների փոխհարաբերությունները 100
3. Սմբատ Ա-ի պայքարը Դվինի համար 112
4. Սմբատ թագավորի և Ամամադ Շայբանիի ընդհարումը . 116
5. Կայսիկների ապստամբության ճնշումը 120

ԳԼՈՒԽ Գ. Ամիրայությունները Հայաստանի մասնատվածության շրջանում 125

1. Դվինի և Գողթնի ամիրայությունների գոյացումը։ Սաջյանների իշխանության ներքո 129
2. Դվինը 929—941 թվականներին 139
3. Կայսիկները 143
4. Համդանյանները և Հայաստանի հարավային ու արևմտյան գավառները 149
5. Կարնո բաղաքը 158

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ

ԳԼՈՒԽ Դ. Ամիր Բագրատունիների պայքարը ամիրայությունների դեմ
1. Առաջին Շապղաղյանը Դվինում 164
2. Սալարյանները և Հայաստանը 172
3. Արաբի Հարավային Հովիտը Դավիթ Ա-ի օրոք . . 177
4. Հայաստանի արևմտյան գավառները 184

ԳԼՈՒԽ Ե. Բյուզանդիայի առաջխաղացումը և Հայաստանի ամիրայությունները 189
1. Քարդ տարրի ներթափանցումը Հարավային Հայաստան . 190
2. Սրխանյանները 193
3. Արևմտյան և Հարավային Հայաստանի նվաճումը Բյուզանդիայի կողմից 197
4. Շապղաղյանները Դվինում 206

ԳԼՈՒԽ Զ. Ներքին կյանքը Հայաստանի ամիրայություններում
1. Տարածությունը 216
2. Ազգաբնակչությունը 223
3. Քոնդրակյան շարժման կենտրոնները 234
4. Արհեստները և առևտուրը 238
5. Ամիրայությունները որպես ավատական տիրույթներ . . 246
Եզրակացություն 257

Հավելված 261
Դվին քաղաքի համառոտ ժամանակագրություն . . 263
Սև Հայքի արաբական ամիրայական տները . . . 265
Գրականության ցուցակ 270
Անվանացանկ 279

ԱՐԱՄ ՆԱՀԱՊԵՏԻ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
АРАМ НАГАПЕТОВИЧ ТЕР-ГЕВОНДЯН

Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ Ս. Տ. Երեմյան
Հրատ. խմբագիր՝ Ռ. Խ. Մանոյան
Նկարչական ձևավորումը՝ Հ. Ն. Տեր-Ղևոնդյանի
Տեխ. խմբագիր՝ Հ. Լ. Գորոյան
Սրբագրիչ՝ Լ. Ս. Սարաֆյան

ՎՖ 06778, հրատ. 2364, ԽՀԽ 882, պատվեր 62, տպաքանակ 1500

Հանձնված է արտադրության 8/IV 1964 թ.
Ստորագրված է տպագրության 11/XII 1964 թ.
Տպագր. 19,63 մամուլ, հրատ. 14,64 մամուլ, թուղթ 84 × 108¹/₃₂
Գինը 1 ռ. 08 կ.

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչության էջմիածնի տպարան

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
16	2 ն	Macond	Macoudi
101	3 ն	innere	inneren
184	2 ն	Arménie	en Arménie
269	5 ն	Մուսաֆիրներ	Մուսաֆիրիներ
276	20 վ	musulmanbyzantin	musulman et byzantin

2

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220036567

ЦЕНА
П
#36567